

Հարգելի՛ ընթերցող,

«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության յոթ տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:

Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 12.000-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 5.700-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱԲ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than four dozen programs during the seven years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 12.000, and the number of authors of materials - 5.700.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» (ОМУСА) в течение своей семилетней деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 12.000, а количество авторов материалов - 5.700.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



ISSN 2579-2652



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH



НАУЧНЫЙ АРЦАХ

№4(11), 2021



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№4(11), 2021

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ
№ 4(11), 2021

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրոյթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:
«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The journal **«Scientific Artsakh»** is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The journal **«Scientific Artsakh»** is posted on www.elibrary.ru website.

Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).
Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2021

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**ՆՎԻՐՎՈՒՄ Է ԱՐՑԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ
ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Ածրոն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒՉԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԽԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գայանե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ԶԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարել ԺԵՅՄՈՒ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլջտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ամիթ ԶԱԲՐԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Եյու Յորք, ԱՄՆ**)

Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր (**Եյուրթեբեդ, Գերմանիա**)

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Քրիստինա դը ՎԱՐՂԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Լոնդոն, Մեծ Բրիտանիա**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(11), 2021, Երևան, «ԱՐՑԱՍ» հրատարակչություն, 2021,
292 էջ:

ISSN 2579-2652 (Print)
ISSN 2738-2672 (Online)

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և
Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2018-2021

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the Journal «Scientific Artsakh»

**DEDICATED TO THE 30TH ANNIVERSARY OF INDEPENDENCE
OF THE REPUBLIC OF ARTSAKH AND THE REPUBLIC OF ARMENIA**

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D. in Philology, Associate Professor

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Amit CHHABRA, Doctor of Law, Professor (**New York, USA**)

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Irina HAYUK, Ph.D. in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor

Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) (**Nuremberg, Germany**)

Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor

Christian de VARTAVAN, Doctor of History (**London, Great Britain**)

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor

Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor

Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor

Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (**Geneva, Switzerland**)

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 4(11), 2021, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2021, 290 pages.

**ПОСВЯЩАЕТСЯ 30-ЛЕТИЮ ПРОВОЗГЛАШЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ
РЕСПУБЛИКИ АРЦАХ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор

Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук (Лондон, Великобритания)

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор

Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор

Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)

Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук (Нюрнберг, Германия)

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Рубен САФРАСЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор

Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор (Нью-Йорк, США)

Научный Арцах, № 4(11), 2021, Ереван, Издательство «АРЦАХ», 2021, 290 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2021թ. 4-րդ (11-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Լիբանանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի կողմից 2021թ. սեպտեմբերի 10-12-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային 5-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածների մի մասը:

In the 4th (11th) issue 2021 of the Journal **«Scientific Artsakh»** the papers of about thirty prominent and young scientists representing the Republic of Armenia, the Republic of Artsakh, the United States of America, Lebanon and the Russian Federation devoted to topical issues of social science are published.

The scientific publication also contains some of the best scholarly of the 5th International Conference «Past, Present and Future of Armenian Statehood», organized on 10-12 September, 2021 in Stepanakert by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and the «Artsakh» Research Institute.

В № 4 (11) за 2021 год журнала **«Научный Арцах»** опубликованы научные статьи около трех десятков именитых и молодых ученых из Республики Армения, Республики Арцах, Соединенных Штатов Америки, Ливана и Российской Федерации, посвященные актуальным проблемам общественных наук.

В научном журнале опубликована также часть работ, представленных на организованной Объединением молодых ученых и специалистов Арцаха и научно-исследовательским институтом «Арцах» 10-12 сентября 2021 года в Степанакерте 5-ой международной научной конференции «Прошлое, настоящее и будущее армянской государственности».



«Գիտական Արցախ» պարբերականի 2021թ. 4-րդ (11-րդ) համարի տպագրությանն աջակցել է «Hi-Am» բարեգործական հիմնադրամը:

The publication of the 4th (11th) 2021 Journal «Scientific Artsakh» was supported by «Hi-Am» Charity Foundation.

Публикация 4(11) номера 2021 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии благотворительного фонда «Hi-Am».

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ  CONTENTS  СОДЕРЖАНИЕ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արման Եղիազարյան. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների գործոնը Հայաստանի Հանրապետության պատմության պարբերացման համատեքստում (հայերեն).....10
Arman Yeghiazaryan. The Factor of Homeland-Diaspora Relations in the Context of the Republic of Armenia History Periodization (in Armenian)

Арман Егиазарян. Фактор взаимоотношений Родина-Диаспора в контексте периодизации истории Республики Армения (на армянском)

Գևորգ Ստեփանյան. Հայերի Էթնիկ գտնումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI-XX ԴԴ.) (Բ մասի շարունակություն) (հայերեն).....19
Gevorg Stepanyan. The Stages of Implementation of the Policy of Ethnic Cleansing and Genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus (11th-20th cc.) (Continuation of the Second Part) (in Armenian)

Геворг Степанян. Этапы осуществления этнических чисток армян и геноцидальной политики в Восточном Закавказье (XI-XX вв.) (продолжение второй части) (на армянском)

Նաիրա Համբարձումյան. Կ. Պոլսի հայոց բարեգործական ընկերությունների և վարժարանների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում 19-րդ դարի երկրորդ կեսին (հայերեն).....35
Naira Hambardzumyan. The Role of Armenian Charities and Colleges in the Process of Women's Emancipation in the Second Half of the 19th Century in Constantinople (in Armenian)

Наира Амбарцумян. Роль армянских национальных благотворительных обществ и гимназий в процессе эмансипации армянских женщин во второй половине 19 века в Константинополе (на армянском)

Նելլի Մինասյան. Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցության պանթյուրկիզական դրսևորումները (անգլերեն).....44
Nelli Minasyan. Pan-Turkism Manifestations of Turkey-Azerbaijan Military-Political Cooperation (in English)

Нелли Минасян. Пантюркистские проявления военно-политического сотрудничества Турции и Азербайджана (на английском)

Մանե Կոնինյան. Հայկական մշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի «մշակութային ցեղասպանության» քաղաքականության շարունակությունը քեմալականների կողմից 1920-ական թվականներին (հայերեն).....54
Mane Koninyan. Young Turks' Ongoing Policy of «Cultural Genocide» against Armenian Cultural Heritage by the Kemalists in 1920s (in Armenian)

Манэ Конинян. Продолжение политики «культурного геноцида» младотурок в отношении армянского культурного наследия кемалистами в 1920-е годы (на армянском)

Էդգար Վարշամյան. Մեծ Հայքի Թագավորությունը Տիրան Արշակունու օրոք (հայերեն).....64
Edgar Varshamyan. The Kingdom of Greater Armenia during the Reign of Tiran Arsacid (in Armenian)

Эдгар Варшамян. Царство Великая Армения в период правления Тирана Аршакуни (на армянском)

Էդգար Վարշամյան. Մեծ Հայքի Թագավորությունը Տիրան Արշակունու օրոք (հայերեն).....64
Edgar Varshamyan. The Kingdom of Greater Armenia during the Reign of Tiran Arsacid (in Armenian)

Эдгар Варшамян. Царство Великая Армения в период правления Тирана Аршакуни (на армянском)

Эдгар Варшамян. Царство Великая Армения в период правления Тирана Аршакуни (на армянском)

Эдгар Варшамян. Царство Великая Армения в период правления Тирана Аршакуни (на армянском)

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ**

Նարինե Միրզոյան. Պատերազմի և գերության թեմատիկան Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկում (հայերեն).....78

Narine Mirzoyan. War and Captivity Themes in the «Lawcode» by Mkhitar Gosh (in Armenian)

Наринэ Мирзоян. Тематика войны и пленения в «Судебнике» Мхитара Гоша (на армянском)

Հայարփի Չարգարյան. Երեխայի բնակության վայրը դատական կարգով որոշելը (հայերեն).....95

Hayarpi Zargaryan. Determining the Child's Place of Residence in Court (in Armenian)

Айарпи Заргарян. Определение места пребывания ребенка в судебном порядке (на армянском)

Էլինա Մխիթարյան. Փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձի խնդիրը Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում միջազգային իրավունքի հոլովույթում (հայերեն).....104

Elina Mkhitaryan. The Problem of Return of Refugees and Internally Displaced Persons in the Evolution of International Law within the Framework of the Karabakh Conflict (in Armenian)

Элина Мхитарян. Проблема возвращения беженцев и внутренне перемещенных лиц в рамках Карабахского конфликта в эволюции международного права (на армянском)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Մարտին Վասկով. Միջազգային քաղաքական պայմաններում սպառնալիքների և հնարավորությունների վերափոխումը հայոց պետականության համար ներկա փուլում (ռուսերեն).....116

Maksim Vaskov. International Political Conditions for the Transformation of Threats and Opportunities for the Armenian Statehood at the Present Stage (in Russian)

Максим Васков. Международные политические условия трансформации угроз и возможностей для армянской государственности на современном этапе (на русском)

Կատերինա Ալթունյան. Հանրային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում. վերազնահատում երեսուն տարի անց (անգլերեն).....125

Katerina Altunyan. Public Administration in the Republic of Armenia: Reassessment after Thirty Years (in English)

Катерина Алтунян. Государственное управление в Республике Армения: переоценка тридцать лет спустя (на английском)

Հայկարամ Նահապետյան. ԱՄՆ ադրբեջանական լոբբիի գործունեությունը (2000-2020թթ.) (հայերեն).....137

Haykaram Nahapetyan. Azerbaijan's Lobby Activities in the United States (2000-2020) (in Armenian)

Айкарам Наапетян. Деятельность лоббистов Азербайджана в США (2000-2020гг.) (на армянском)

Մարինե Մովսիսյան. Վարձկանների մասնակցությունը 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմին և դրա ազդեցությունը միջազգային անվտանգության համակարգի վրա (հայերեն).....153

Marine Movsisyan. Mercenary Participation in the 2020 44-Day War in Artsakh and Its Impact on the International Security System (in Armenian)

Марине Мовсисян. Участие наемников в 44-дневной 2020 г. войне в Арцахе и его влияние на систему международной безопасности (на армянском)

Նարեկ Սուքիասյան. ԶԶ-ՌԴ հարաբերություններում Հայաստանի արտաքին քաղաքականությունը պայմանավորող Նորմերի և ինքնության ձևավորումը. կոնստրուկտիվիստական հայացք (հայերեն).....169

Narek Sukiasyan. The Formation of Norms and Identity Conditioning the Foreign Policy of the Armenian Ruling Elites in the Relations of the Republic of Armenia and Russian Federation: a Constructivist Look (in Armenian)

Нарек Сукиасян. Формирование норм и идентичности, обуславливающих внешнюю политику армянских правящих элит в отношениях Республики Армения и Российской Федерации: конструктивистский взгляд (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան. Պատերազմի տնտեսական հետևանքները և դրանց չեզոքացման հիմնական միջոցառումների բովանդակությունը (հայերեն).....185

Ashot Markosyan, Elyanora Matevosyan. Economic Consequences of War and Content of the Main Measures for Their Neutralization (in Armenian)

Ашот Маркосян, Элянора Матевосян. Экономические последствия войны и содержание основных мероприятий по их нейтрализации (на армянском)

Վարեն Խոջոյան, Սուսաննա Սարգսյան. ԶԶ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակի վերլուծությունը և բարելավման ուղիները (հայերեն).....200

Karen Khojoyan, Susanna Sargsyan. Current Analysis of the State Financing of the RA Cultural Sphere and Ways of Improvement (in Armenian)

Карен Ходжоян, Сусанна Саргсян. Анализ текущего состояния государственного финансирования в сфере культуры Республики Армения и пути его совершенствования (на армянском)

Հակոբ Թարփոշյան. Ձեռնարկատիրական ինստիտուտը Հայաստանում. ձևավորում և առանձնահատկություններ (հայերեն).....216

Hakob Tarposhyan. An Overview of Armenian Entrepreneurship: its Formation and Description (in Armenian)

Акоб Тарпошян. Обзор предпринимательства в Армении: его формирование и описание (на армянском)

Տիգրան Զարամյան. Բնական լեզվի մշակման կիրառությունները տնտեսագիտության մեջ և ֆինանսներում (անգլերեն).....231

Tigran Karamyán. Applications of Natural Language Processing in Economics and Finance (in English)

Тигран Карамян. Применение обработки естественного языка в экономике и финансах (на английском)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Գրիգոր Վարդանյան. Հայաստանի Հանրապետություն-Եգիպտոսի Արաբական Հանրապետություն հարաբերությունները 1991-2020 թթ.-ին (հայերեն).....237
Grigor Vardanyan. Relations between the Republic of Armenia and the Arab Republic of Egypt from 1991 to 2020 (in Armenian)
Григор Варданян. Отношения между Республикой Армения и Арабской Республикой Египет с 1991 по 2020 гг. (на армянском)

Արարս Փաշայան. Իսլամական գործոնը Արցախյան 2020 թ. պատերազմի համատեքստում. հայկական աշխարհի դեմ Ադրբեջանի քարոզչության գործիքակազմը (հայերեն).....250
Araks Pashayan. Islamic Factor in the Context of 2020 Artsakh War: the Azerbaijani Propaga Toolkit against the Armenian World (in Armenian)
Аракс Пашаян. Исламский фактор в контексте Арцахской войны 2020 г.: пропандистский инструментарий Азербайджана против армянского мира (на армянском)

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

Քնարիկ Առաքելյան, Ալլա Շաբոլտաս. Հայաստանի հատուկ հաստատությունների սաների սուբյեկտիվ վերահսկման և գոհային վարքի դրսևորման հակվածության առանձնահատկությունները (ռուսերեն).....260
Knarik Arakelyan, Alla Shabolts. Peculiarities of Subjective Control and Predisposition to the Manifestation of Victim Behavior in Children of Specialized Institutions of Armenia (in Russian)
Кнарлик Аракелян, Алла Шаболтас. Особенности субъективного контроля и предрасположенности к проявлению виктимного поведения у воспитанников специализированных учреждений Армении (на русском)

ԱՐՎԵՍ, ИСКУССТВО, ART

Կարապետ Ավեսյան. Պողոս Զելայան. «Յոթ սեկվենցիաներ» (հայերեն).....270
Karabet Avessian. Boghos Gelalian: «Seven Sequences» (in Armenian)
Карапет Авесян. Погос Джелаян: «Семь секвенций» (на армянском)

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները
283
The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»285
Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»286

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ



ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ՀՏԴ 93/94:32

DOI: 10.52063/25792652-2021.4-10

ԱՐՄԱՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ,
«Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի
հոգաբարձուների խորհրդի անդամ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armanyeghiazaryan@ysu.am

Հոդվածի նպատակը հայրենիք-սփյուռք հարաբերությունների գործոնի հիման վրա Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացման նոր մոտեցում առաջադրելն է: Խնդիր է դրվել ներկայացնել պարբերացման էությունը և հանրապետության պատմության պարբերացման հիմնական գործոններն ու սկզբունքները:

Հոդվածի մեթոդաբանության առումով նշելի է, որ պատմության պարբերացումը պատմական գործընթացների՝ ըստ ժամանակային ու բովանդակային փուլերի և ենթափուլերի համակարգման ձև է: Այն իրականացվում է նախապես ընտրված սկզբունքներով ու չափանիշներով, որոնցով պատմափուլերը ստանում են տարբերակիչ յուրահատկություններ: Արդյունքում ստացվում է պատմության՝ համեմատաբար կայուն բնութագրիչներով ժամանակաշրջանային բաժանում: Պարբերացման նպատակը պատմության առանձին՝ ինքնուրույն շրջափուլերի բովանդակության խորքային քննությունն է՝ հիմնված բաժանման չափանիշների այնպիսի ընտրության վրա, որը հնարավորություն է տալիս լավագույնս հասկանալու պատմության տրամաբանությունն ու օրինաչափությունները:

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացման խնդրում հայրենիք-սփյուռք հարաբերությունների գործոնի, ավելի որոշակի՝ դրանց զարգացման առանձնահատկությունների՝ որպես չափանիշ ընդունումն այդ պարբերացումը նորովի իրականացնելու մի փորձ է:

Սույն ուսումնասիրությունը միտված է հնարավորինս խորությամբ և բազմակողմանիորեն գնահատելու հայրենիք-սփյուռք հարաբերությունների դերը Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ընթացքում, որով մեր նորօրյա պետականության ընթացքի ճանաչողությունը առաջարկվում է կառուցել նաև այդ հարաբերությունների հիմնական դրսևորումները հաշվի առնելով: Արդյունքում ըստ արժանվույն գնահատվում են հայրենիք-սփյուռք կապերի ազդեցությունն ու նշանակությունը հայրենի պետության կայացման գործում:

* Հոդվածը ներկայացվել է 15.10.2021թ., գրախոսվել՝ 15.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հիմնաբառեր՝ Հայաստանի երրորդ Հանրապետություն, պատմություն, պարբերացում, հայրենիք-սփյուռք հարաբերություններ, Արցախյան գոյապայքար, խորհրդածողով, գործոն:

Մուտք. Հայաստանի երրորդ Հանրապետության 1991-2017 թթ. պատմության պարբերացման փորձերը

Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին 30-ամյակի պատմության պարբերացումը հայ պատմագիտության կարևոր առաջնահերթություններից մեկն է: Խնդիրն այն է, որ հայոց պատմության 1991-2021 թթ. փուլը լի է կարևոր ու շրջադարձային իրադարձություններով, որոնց՝ ժամանակաբովանդակային փուլերի բաժանումը հայոց արդի շրջանի պատմության ուսումնասիրությունը կդարձնի ավելի համակարգված ու ամբողջական: Չնայած ասվածին՝ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացումը հայ գիտնականներին առանձնապես չի մտահոգել:

2017 թ.-ին Երևանում տեղի ունեցավ «Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները» խորագրով գիտաժողովը, որի ընթացքում հանրապետության առաջատար գիտնականները ներկայացրեցին հայոց պատմության տարբեր դարաշրջանների պարբերացման իրենց տեսլականները: Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացման հայեցակարգը ներկայացրեց Է. Մինասյանը: Գիտաժողովի հիմնական կյուբերը հրատարակվեցին «Հայագիտության հարցեր» գիտական պարբերականում («Հայագիտության հարցեր» 194-239): Է. Մինասյանի զեկուցումը որպես առանձին հոդված հրատարակվեց այլ հանդեսում (Մինասյան 75-79):

Է. Մինասյանը ներկայացնում է այն հիմնական գործոնները, որոնց հիմամբ կատարել է պարբերացումը: Դրանք են՝ ազգային- ազատագրական պայքարը (իմա՝ Արցախյան համաժողովրդական պայքարը), «սոցիալ-տնտեսական համակարգային արմատական փոփոխությունների գործոնը» և անկախ պետականության վերականգնման փաստը (Մինասյան 76): Հեղինակը սկզբում 1990 թ.-ի օգոստոսի 23-ից մինչև 1991 թ.-ի սեպտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածը համարում է Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացման սկիզբ («1990 թ.-ի օգոստոսի 23-ից մինչև 1991 թ.-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեն Հայաստանը խորհրդարանական հանրապետություն էր ԽՍՀՄ կազմում, և ահա այս բաժինն ուղղակի կարելի է անվանել Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբ: Այն որպես պարբերացման սկիզբ ընդունելով՝ մենք կարծում ենք, որ այս շրջանը կարելի է անվանել Հայաստանի անկախության հռչակում և ապա դրա պարբերացման հենց առաջին մասը՝ անկախացման գործընթացի սկիզբ, մինչև 1991 թ.-ի խորհրդային պետության լուծարումը և անկախության հանրաքվեն սեպտեմբերի 21-ին») (Մինասյան 76), իսկ այնուհետև, երբ ներկայացնում է պարբերացման իր համակարգը, այն սկսում է 1991 թ.-ի սեպտեմբերի 21-ից (Մինասյան 78): Կարելի է ենթադրել, որ «Հայաստանի անկախության հռչակումը և պետականության կայացումը (1991-2000 թթ.)» պարբերափուլի ներքո հեղինակը իրավամբ նկատի ունի նաև 1990 թվականից սկզբանավորված անկախության վերականգնման գործընթացը: Դատելով հետագա շարադրանքից՝ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության 1991-2017 թթ. շրջափուլը հեղինակը բաժանում է երկու ժամանակագրական շրջանների՝ 1991-1998 թթ. («մինչև 1998 թ. իշխանափոխությունը») և 1999-2016 թթ.՝ ներկայացնելով ուսումնասիրության բովանդակային ուղղությունները՝ սահմանադրության ընդունում, բանակի ստեղծում, ներքաղաքական զարգացումներ, հայ առաքելական եկեղեցու գործունեություն, ՀՀ միջազգային դրություն և արտաքին քաղաքականություն և այլն (Մինասյան 77):

Ի վերջո, ներկայացնելով պարբերացման սեփական ձևաչափը՝ Է. Մինասյանը որոշակիորեն սրբագրում է նախապես ներկայացրած պարբերացման

Ժամանակագրական շրջանակները՝ առաջարկելով 1991-2000 թթ. և 2001-2017 թթ. ենթափուլերը և որպես սահմանագիծ ընդունելով նոր հազարամյակը (Մինասյան 78): Նշված ձևաչափում պարբերացման ներքո հեղինակը հիմնականում ներկայացնում է Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությունը՝ ըստ բովանդակային ուղղությունների, որոնց մեջ առանձնացված են հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները՝ նկատի ունենալով կրթամշակութային, արվեստի ոլորտի և գիտական կապերը, սփյուռքի սոցիալ-տնտեսական աջակցությունը հայրենիքին, ինչպես նաև հայկական համայնքներն արդի փուլում (Մինասյան 78-79):

Կարևոր է նաև, որ անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում 1990-2001 թվականներով է թվագրում Է. Պողոսյանը (Պողոսյան 2013): Նշվածին գրեթե համահունչ է Է. Չոհրաբյանի տեսակետը (Չոհրաբյան 359-374):

Ներկայացվածից անկհայտ է, որ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացումը վերջնական չէ և կարող է ու պետք է կատարվի հավելյալ գործոններ հաշվի առնելով: Դա հնարավորություն կտա հայոց պատմության հույժ էական պատմաշրջանի ուսումնասիրությունը դարձնել ավելի բազմակողմանի ու խորքային:

Հայրենիք-սփյուռք 100-ամյա հարաբերությունների պատմության պարբերացումը

Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին 30-ամյակի պատմության պարբերացման համար էական գործոններից մեկն էլ հայրենիք-սփյուռք հարաբերություններն են, որոնց հաշվառումը պարբերացումն իրականացնելիս Հայաստանի արդի Հանրապետության պատմության մի շարք զարգացումներ դարձնում է առավել հստակ ու բացատրելի:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացման վերաբերյալ կարծիք են հայտնել մի քանի հետազոտողներ, որոնք, ի դեպ, փոխկապակցվածություն են տեսնում ՀՀ զարգացումների և հայրենիք-սփյուռք հարաբերությունների միջև: Մասնավորապես Կ. Դալլաբյանը հայրենիք-սփյուռք հարաբերությունները բաժանել է չորս փուլի՝ ելնելով դրանցում գոյություն ունեցող սկզբունքներից ու կապերի ընդլայնման գործընթացից.

1. 1921 թվականից մինչև 1920-ական թթ.-ի կեսերն ընդգրկող ժամանակաշրջան, երբ հայրենիք-սփյուռք կապերի հիմքում ազգային միասնության սկզբունքն էր և շեշտադրումը կատարվում էր Եթնիկ նույնության վրա,

2. 1920-ական թթ.-ի երկրորդ կեսից մինչև 1960-ական թթ.-ի սկիզբն ընդգրկող ժամանակաշրջան, երբ հայրենիք-սփյուռք կապերի հիմքում դրվեց դասակարգային շերտավորման սկզբունքը և թշնամանք ձևավորվեց սփյուռքի հայկական կուսակցությունների նկատմամբ: Սկսվեց սփյուռքի հիմնական հատվածի օտարման գործընթացը հայրենիքից,

3. 1960-ական թթ.-ի սկզբից մինչև 1988 թվականն ընդգրկող ժամանակաշրջան, երբ հայրենիք-սփյուռք կապերի հիմքում դրված էր քաղաքական շերտավորման սկզբունքը: Այս ժամանակաշրջանում խորհրդային Հայաստանի իշխանությունները հարաբերություններ են հաստատում Ռամկավար ազատական և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունների հետ՝ թշնամանք տածելով միայն Հայ հեղափոխական դաշնակցության նկատմամբ: Սփյուռքի հետ աշխատանքները լավագույնս համակարգելու համար 1964 թ.-ին ստեղծվում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն,

4. 1988 թվականից մինչև մեր օրերն ընդգրկող ժամանակաշրջան, հայրենիք-սփյուռք կապերում աստիճանաբար վերացվում են բոլոր տեսակի շերտավորումները և ազատ հարաբերություններ են հաստատվում հայրենիքի ու սփյուռքի միջև (Դալլաբյան 23-51):

Կ. Դալլաքյանը հայրենիք-սփյուռք հարաբերությունների 1918-1920 թթ. ժամանակաշրջանը չի ընդգրկել իր կազմած պարբերացման մեջ՝ այն ներկայացնելով ներածության կարգով: Խնդիրն այն է, որ ըստ նրա՝ Նորանկախ Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարությունը ժամանակ չի ունեցել ծավալուն կապեր հաստատելու ափյուռքի հետ՝ բավարարվելով միայն դժվարին դրության մեջ հայտնված հանրապետությանը սփյուռքի օժանդակությունն ապահովելուն ուղղված քայլեր ձեռնարկելով (Դալլաքյան 22-23): Կարևոր է նաև, որ Կ. Դալլաքյանը որևէ պարբերացման չի ենթարկել հայրենիք-սփյուռք հարաբերությունների՝ 1988 թվականից սկիզբ առած փուլը:

Ներկայումս, սակայն, հայրենիք-սփյուռք հարաբերությունների սկիզբ է համարվում 1918 թվականը, երբ Հայաստանի Հանրապետության հիմնադրումով սկզբնավորվեցին հարաբերությունները նաև արտասահմանի հայության հետ (Եղիազարյան Ա. և այլք 7-8): Խնդիրն այն է, որ իրականում 1918-1920 թթ. կարճատև ժամանակաշրջանում հայրենիք-սփյուռք կապերը էապես ընդլայնվել են և զարկ է տրվել ներգաղթին (Եղիազարյան Ա. և այլք 43-62):

Խ. Թուրյանը սփյուռքի պատմությունը պարբերացնելիս 1965 թվականից սկիզբ առած փուլում փոխկապակցված է ներկայացնում սփյուռքյան զարգացումները և Հայաստանում առկա իրողությունները: Ըստ նրա՝ մասնավորապես 1965-1988 թթ. փուլում սփյուռքում առկա էին ազգային արժեքների ու լեզվի պահպանության մարտահրավերներ, սակայն Խորհրդային Հայաստանի հետ կապերի միջոցով դրանք մասամբ հաղթահարվեցին: Այս փուլում սփյուռքում էական էին Խորհրդային Հայաստանի իշխանությունների նկատմամբ թշնամական կամ բարեկամական մոտեցումները: Իսկ 1988 թվականից սկիզբ առած փուլը Խ. Թուրյանը բնորոշում է մի կողմից Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով, իսկ մյուս կողմից սփյուռքի էլիտաների միջև պայքարով (Tölölyan 107-136):

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների և

հայաստանյան զարգացումների փոխկապակցվածությունը

Հարկ է ընդգծել, որ 1918 թ.-ին ծնունդ առած Հայաստանի Հանրապետությունը, որը խորհրդայնացվեց 1920 թ.-ին, իսկ 1991 թ.-ին վերականգնեց քաղաքական անկախությունը, իր գոյության ավելի քան 100-ամյա պատմափուլում միշտ էլ ուղեկցվել է քիչ թե շատ համախմբված սփյուռքով, ուստի հայրենիք-սփյուռք հարաբերությունները ստացել են էական նշանակություն: Վերջինս հատկապես շեշտվել է այն ժամանակ, երբ Հայաստանը վերակառուցման ու զարգացման համար կարիք է ունեցել սփյուռքի աջակցության: 1918-1920 թթ., 1921-1937 թթ., 1944-1988 թթ. և այնուհետև մինչև մեր օրերը գրեթե մշտապես սփյուռքի աջակցությունը համարվել է խիստ անհրաժեշտ հանրապետության առաջ ծառայած խնդիրների լուծման համար:

Այն իրողությունը, որ հայրենիք-սփյուռք հարաբերությունները, դրանց որակն ու բովանդակությունը ուղղակիորեն կախյալ փոփոխական են ՀՀ-ում տեղի ունեցող գործընթացներից, հստակ է: Մասնավորապես, «Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը» աշխատության հեղինակներն այդ հարաբերությունները բաժանում են երեք հիմնական ժամանակաշրջանների՝ դրանք կապելով Հայաստանի առաջին, խորհրդային և երրորդ Հանրապետությունների՝ սփյուռքի նկատմամբ քաղաքականության հետ (Եղիազարյան Ա. և այլք 28-31): Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում կարիք կար «Հայ գաղութների վիճակը ուսումնասիրելու, նրանց մայր երկրի հետ կապելու և նրանց նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու» («Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.» 546), Հայաստանի խորհրդային Հանրապետության շրջանում անհրաժեշտ էր հայթայթել ժողովրդին սովից ու համաճարակից փրկելու

միջոցներ առաջին հերթին հայկական սփյուռքում («Հրավիրակ» 1), 1941-1945 թթ.-ին պետք էր համախմբել սփյուռքահայությանը՝ նացիզմի դեմ մաքառող հայրենակիցներին աջակցելու համար (Մելիքսեթյան 170-171, Դավաքյան 41), իսկ 1988 թվականից հրամայական էր դարձել հնարավորությունները ներդնելը բնական աղետի ենթարկված, ազատագրական պայքարի դրոշակ բարձրացրած և անկախ պետականություն կերտող հայրենիքին հնարավորինս սատարելու համար: Աշխատության հեղինակները թերևս առաջին անգամ փորձ են կատարել պարբերացնելու հայրենիք-սփյուռք հարաբերությունների 1991-2018 թթ. պարբերաշրջանը, ըստ որում՝ դարձյալ կապելով հայաստանյան իրողությունների հետ: Նրանք տարբերակիչ յուրահատկություններ են բացահայտել ՀՀ երեք նախագահների ղեկավարման շրջաններում, ուստի հայրենիք-սփյուռք հարաբերություններում առաջարկել են առանձնացնել երեք ենթափուլ՝ 1991-1998 թթ., 1998-2008 թթ. և 2008-2018 թթ.: 1991 թ.-ին Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով փաստացիորեն ճանաչվեց դեռևս 70 տարի առաջ հայրենիքից հարկադրաբար հեռացած կազմակերպությունների վերադարձի իրավունքը: Ցավոք, 1991-1998 թթ.-ին հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացումը կասեցվեց մասնակի բախմամբ, որն իր հիմնական դրսևորումը ստացավ 1994 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում ՀՀԴ-ի գործունեության ժամանակավոր կասեցմանը վերաբերող՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագրով: Բացի այդ, խնդիրներ առաջացան սփյուռքի մյուս կուսակցությունների և նրանց հայաստանյան մասնաճյուղերի միջև: Այդ շրջափուլի հիմնական ձեռքբերումը եղավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումը 1992 թ.-ին: Հայրենիք-սփյուռք հարաբերություններում կարևոր փուլ էր 1998-2008 թթ. միջակայքը: Այդ տարիներին ակտիվանում էին հայրենիք-սփյուռք հարաբերությունները հատկապես Հայաստան-սփյուռք 1999, 2002, 2006 թթ.-ի խորհրդածողովների միջոցով (Եղիազարյան և այլք 185-202): Մյուս կողմից հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման նոր փուլը նշանավորվեց քաղաքական ընդհանուր օրակարգի հստակեցմամբ: Հայաստանի Հանրապետության իշխանությունները քաղաքական օրակարգի մաս դարձրին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, իսկ սփյուռքյան կուսակցությունները աստիճանաբար դարձան ՀՀ քաղաքական համակարգի մաս: Հայրենիք-սփյուռք հարաբերությունների հաջորդ ենթաշրջափուլը սկսվեց 2008 թ.-ին և նշանավորվեց ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումով, նրա ավելի քան 10-ամյա արդյունավետ գործունեությամբ (Եղիազարյան Ա. և այլք 40-42):

Այժմ արդեն հնարավոր է խոսել հայրենիք-սփյուռք հարաբերությունների՝ 2018 թվականից սկիզբ առած փուլի մասին, որի գնահատականը տայը, սակայն, դեռևս վաղ է:

Դատելով Հայաստանի երրորդ Հանրապետության համար վերոհիշյալ հույժ եական իրողություններից՝ ակնհայտ է, որ Հայաստանի երրորդ Հանրապետության 30-ամյա պատմության պարբերացումը անհրաժեշտ է կատարել՝ ելնելով հիմնականում հայաստանյան զարգացումներից, սակայն պարբերացման համար ազդեցիկ գործոնների շարքում ընդգրկելով հայրենիք-սփյուռք հարաբերությունները:

Եզրակացություն

Հայաստանի երրորդ Հանրապետության՝ 1991-2021 թթ.-ի պատմության պարբերացումը, փաստորեն, հաշվառելով հայրենիք-սփյուռք հարաբերությունների գործոնը, կարելի է ներկայացնել նոր համակարգմամբ.

1. 1991-1998 թթ.-ի շրջափուլ, երբ ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի օրոք ձևավորվում էին մի կողմից՝ պետական կառույցն իր բաղադրիչներով, մյուս կողմից՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր մոտեցումներն ու մեխանիզմները: Այս փուլում պետությունը մեծապես զգում էր սփյուռքի աջակցության

կարիքը, ինչն ապահովելու համար ստեղծեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Վերջինս հետագա տասնամյակներին մեծ ներդրում ունեցավ պետության կայացման գործում: Մյուս կողմից հայրենիքում սկսեցին գործունեություն ծավալել սփյուռքահայ կազմակերպությունները՝ ներգրավվելով պետության հասարակական-քաղաքական կյանքում, երբեմն-երբեմն մաս կազմելով քաղաքական իշխանությանը և մասնակցություն բերելով Արցախյան գոյապայքարին (Եղիազարյան և այլք 145-158, 173-184):

2. 1998-2008 թթ.-ի շրջափուլ, երբ ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունը հանգեցրեց ինչպես պետական կառավարման համակարգի հետագա հասունացմանն ու կայացմանը, այնպես էլ հայրենիք-սփյուռք հարաբերությունների ու հայրենիքում սփյուռքի ներկայության ապահովման նոր ձևաչափերի ներդրմանը: Ռ. Քոչարյանի նախագահության շրջանում փորձ արվեց հասնել ինչպես հայրենիք-սփյուռք ընդհանուր օրակարգի ձևավորմանը (օրինակ՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ներառելը), այնպես էլ առավել խորը ինտեգրման: Այդ նպատակն էին հետապնդում Հայաստան-սփյուռք երեք խորհրդատուները: 2005 թ.-ին սահմանադրական հանրաքվեի արդյունքում ՀՀ-ում ներդրվեց նաև երկքաղաքացիության ինստիտուտը, որը հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացման և հայրենիքում սփյուռքահայության ինտեգրման կարևոր միջոց էր (Եղիազարյան և այլք 197-198):

3. 2008-2018 թթ.-ի շրջափուլ, երբ ձևավորված աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային իրողությունների պայմաններում Հայաստանը դիմագրավում էր լուրջ մարտահրավերների, իսկ պետական ապարատը կարիք ուներ նշանակալից արդիականացման, փորձ կատարվեց ավելի սերտացնելու հայրենիք-սփյուռք հարաբերությունները: Այդ նպատակով Ս. Սարգսյանի նախագահության շրջանում 2008 թ.-ին, ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որի ավելի քան 10-ամյա գործունեությունը նկարագրելի է որպես հայրենիք-սփյուռք հարաբերությունների աննախադեպ աշխուժացման և ՀՀ կյանքում սփյուռքի բազմակողմ ինտեգրման ժամանակաշրջան (Եղիազարյան և այլք 203-213):

4. 2018 թվականից սկիզբ առած փուլը, երբ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը խնդիր դրեց վերափոխելու ՀՀ պետական ապարատը և բարձրացնելու սփյուռքի հետ հարաբերությունների արդյունավետությունը [Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (1 հունիսի 2018 թվականի N 581 - Ա): Սփյուռքի հետ կապերը, որոնք հույժ էական են ՀՀ զարգացման ու կայացման տեսանկյունից, 2019 թվականից սկսվեցին համակարգվել ոչ թե պատկան նախարարության (դադարեցվեց 2008 թվականից հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման գործում մեծ ներդրում ունեցած ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունը), այլ նրա փոխարեն ստեղծված՝ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հայրենիք-սփյուռք հարաբերությունների գործոնը էապես նպաստում է Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության պարբերացման գործին՝ հնարավորություն տալով առաջարկել պարբերացման ավելի բազմակողմանի ու ամբողջական տարբերակ:

Օգտագործված Գրականություն

1. «ԱրԴՀ գիտական ընթերցումներ», Ստեփանակերտ, 2017:
2. Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Երևան, 2004:
3. Եղիազարյան Ա. և այլք, Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017:
4. Չոհրաբյան Է., Պետության սոցիալական քաղաքականությունը Հայաստանում (1990-2005), «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2007:

5. «Հայագիտության հարցեր», Երևան, 2017, թիվ 3:
6. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (1 հունիսի 2018 թվականի N 581 - Ա) // <https://www.gov.am/am/gov-program/> /մուտք՝ 11.10.2021 թ./:
7. «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.», Երևան, 2010:
8. «Հրավիրակ». պարբերաթերթ Հայաստանի ոգնության կոմիտեի կենտրոնական վարչության, Երևան, 1925, № 1:
9. Մելիքետյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:
10. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմության պարբերացման հարցի շուրջ, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ», Ստեփանակերտ, 2017:
11. Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013:
12. Tölölyan Kh., Elites and Institutions in the Armenian Transnation // Diaspora, A Journal of Transnational Studies, vol. 9, N 1, spring, 2000.

Works Cited

1. «ArPH gitakan y'nt'ercumner», Step'anakert, [Scientific Readings of ArSU] 2017. (in Armenian)
2. Dallaqyan K., Hay Sp'yur'qi patmut'yun, ErevanErevan, [History of Armenian Diaspora, Yerevan] 2004. (in Armenian)
3. Yeghiazaryan A. ev aylq, Hayreniq-sp'yur'q haraberut'yunnery' 1918 t'vakanic minchev mer o'rery', Erevan, [Homeland-Diaspora Relations from 1918 to the Present Day, Yerevan] 2017. (in Armenian)
4. Zohrabyan E'., Petut'yan socialakan qaghaqakanut'yuny' Hayastanum (1990-2005), «Hayoc patmut'yan harcer», ErevanErevan, [State Social Policy in Armenia (1990-2005), Yerevan] 2007. (in Armenian)
5. «Hayagitut'yan harcer», ErevanErevan, [Armenological issues, Yerevan] 2017, t'iv 3. (in Armenian)
6. Hayastani Hanrapetut'yan kar'avarut'yan c'ragri masin Hayastani Hanrapetut'yan kar'avarut'yan oroshum (1 hunisi 2018 t'vakani N 581 - A) // <https://www.gov.am/am/gov-program/> [Decision of the Government of the Republic of Armenia on the program of the Government of the Republic of Armenia]. (in Armenian)
7. «Hayastani Hanrapetut'yan kar'avarut'yan nisteri ard'anagrut'yunner 1918-1920 t't'», Erevan, [Documents of the sittings of the Government of the Republic of Armenia (1918-1920), Yerevan] 2010. (in Armenian)
8. «Hvavirak» (journal of Relief Committee of Armenia), Erevan, 1925, № 1. (in Armenian)
9. Meliqset'yan, Hayreniq-Sp'yur'q ar'nchut'yunnery' ev hayrenadard'ut'yuny' (1920-1980 t't'), Erevan, [Homeland-Diaspora Relations and Repatriation in 1920-1980s, Yerevan] 1985. (in Armenian)
10. Minasyan E'., Hayastani errord hanrapetut'yan patmut'yan parberacman harci shurj, «ArPH gitakan y'nt'ercumner», Step'anakert, [On the Periodization Issue of the Third Republic of Armenia, Stepanakert] 2017. (in Armenian)
11. Poghosyan E'., Ankax petakanut'yan hastatman gorc'y'nt'acy' Hayastanum (1990-2001 t't')., Erevan, [The Process of Establishing an Independent Statehood in Armenia, Yerevan] 2013. (in Armenian)
12. Tölölyan Kh., Elites and Institutions in the Armenian Transnation // Diaspora, A Journal of Transnational Studies, vol. 9, N 1, spring, 2000. (in English)

THE FACTOR OF HOMELAND-DIASPORA RELATIONS IN THE CONTEXT OF THE REPUBLIC OF ARMENIA HISTORY PERIODIZATION

ARMAN YEGHIAZARYAN

*Yerevan State University, Chair of Diaspora Studies, Head;
«Artsakh» Research Institute, Board of Trustees of the, Member;
Doctor of History, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to develop a new approach to the periodization of the history of the Third Republic of Armenia, based on the factor of Armenia-Diaspora relations. The task is to present the essence of periodization, as well as the main factors and principles of periodization of the history of the Third Republic.

From the point of view of the methodology of the article, it should be noted that the periodization of history is a way of systematizing historical processes in terms of time and content. Periodization is carried out according to pre-selected principles and criteria, on the basis of which the historical stages acquire their distinctive features. The result is a periodic section of history with relatively stable characteristics. The purpose of periodization is an in-depth study of the content of separate, independent cycles of history based on the choice of classification criteria that make it possible to better understand the logic and laws of history.

As for the periodization of the history of the Third Republic of Armenia, the adoption as a criterion of the factor of the relationship between the Homeland and the Diaspora, or rather the peculiarities of their development, is an attempt to periodize the history of the Third Republic of Armenia in the light of new realities.

This study is aimed at the most profound and comprehensive assessment of the role of relations between the Homeland and the Diaspora in the history of the Third Republic of Armenia, which allows substantiating knowledge about the development of Armenian modern statehood at the stages of development of these relations. This serves as a basis for assessing the role and significance of relations between the Homeland and the Diaspora in strengthening the Homeland.

Keywords: *Third Republic of Armenia, history, periodization, Homeland-Diaspora relations, Artsakh struggle for existence, conference, factor.*

ФАКТОР ВЗАИМООТНОШЕНИЙ РОДИНА-ДИАСПОРА В КОНТЕКСТЕ ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АРМАН ЕГИАЗАРЯН

*заведующий кафедрой диаспороведения
Ереванского государственного университета,
член совета попечителей
научно-исследовательского института «Арцах»,
доктор исторических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – разработать новый подход к периодизации истории Третьей Республики Армения, основанный на факторе отношений Армения-Диаспора. Задача – представить суть периодизации, а также основные факторы и принципы периодизации истории Третьей республики.

С точки зрения методологии статьи следует отметить, что периодизация истории – это способ систематизации исторических процессов в контексте времени и содержания. Периодизация проводится по заранее выбранным принципам и критериям, на основе которых исторические этапы приобретают отличительные черты. В результате получается периодический раздел истории с относительно стабильными характеристиками. Целью периодизации является углубленное изучение содержания отдельных, независимых циклов истории на основе выбора критериев классификации, позволяющих лучше понять логику и закономерности истории.

Что касается периодизации истории Третьей Республики Армения, то принятие в качестве критерия фактора взаимоотношений Родины и диаспоры, а точнее, особенностей их развития, является попыткой периодизации истории Третьей республики Армения в свете новых реалий.

Данное исследование направлено на максимально глубокую и всестороннюю оценку роли отношений между родиной и диаспорой в истории Третьей Республики Армения, что позволяет обосновать знания о развитии современной армянской государственности на этапах развития этих отношений. Это служит основой для оценки роли и значения связей между родиной и диаспорой для укрепления Родины.

Ключевые слова: *Третья Республика Армении, история, периодизация, отношения Родина-Диаспора, борьба Арцаха за существование, конференция, фактор.*

**ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ՉՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XI-XX ԴԴ.)
(Բ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) * 1**

ՀՏԴ 94 (479.25); 343.412

DOI: 10.52063/25792652-2021.4-19

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և
Սփյուռքի պատմության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sasun-07@mail.ru

Հոդվածի նպատակն է տարաբնույթ սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, թեմային առնչվող գրականություն) հենքի վրա ներկայացնել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, XI-XX դարերի ընթացքում տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված Էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության պատճառներն ու իրագործման փուլերը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով:

Փաստերի համադրմամբ տրվում է հիմնահարցի պատմության հետևյալ փուլայնացումը. Արևելյան Այսրկովկասում տեղաբնիկ հայերի Էթնիկ զտումներն ու կոտորածները տակավին իրականացվել են XI-XVIII դարերում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվում էր այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների արշավանքների և տիրապետության տակ (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թեմուր, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղեր և ղզլբաշների արշավանքներ, դրանց հաջորդած թուրք-պարսկական պատերազմներ, սուննի լեզգիներ, Նադիր շահի ու Աղա Մուհամմադ խանի արշավանքներ): Դրա հետևանքով հայ բնակչության մի որոշ մասը բռնատեղափոխվեց և լքեց հայրենի տարածքները կամ հարկադրաբար ընդունեց նվաճողների մահմեդական դավանանքը: Էթնիկ զտումների ու կոտորածների հաջորդ փուլը հայ-թաթարական ընդհարումների շրջանն էր (1905-1906 թթ.): Հետագայում ցեղասպանական քաղաքականությունը պետական մակարդակով է իրականացվել՝ արդեն արհեստածին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական (1918-1920 թթ.) և վերջում՝ Ադրբեջանի խորհրդային վարչակարգերի ժամանակաշրջաններում (1920-1990 թթ.):

Հոդվածում հիմնավորված է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը Էթնիկ զտումների ու ցեղասպանության

* Հոդվածը ներկայացվել է 02.03.2021թ., գրախոսվել՝ 10.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

1 Հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 21T-6A163 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ.-ին Արևմտյան Հայաստանում: Հետևաբար այդ քաղաքականությունը պետք է որակել որպես հայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Պատմագիտական գրականության մեջ թեև խնդրո առարկա հարցի վերաբերյալ անդրադարձները բազմաթիվ են, սակայն առանձին քննության առարկա չի դարձել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, հայերի Էթնիկ գտումների ու ցեղասպանական քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը:

Հիմնաբառեր՝ Արևելյան Այսրկովկաս, Բաքվի նահանգ, Կուրի ձախափնյակ, համաթուրքականություն, Էթնիկ գտումներ, այլատյացություն, ցեղասպանություն, բռնագաղթ:

Ընդամին, կովկասյան թաթարներին հայերի դեմ լարելու նպատակով Բաքվում ցարական գործակալները տարածում էին այն սադրիչ լուրերը, թե իբր «հայերը որոշել են «կոտորել» բոլոր մուսուլմաններին» (Անանուն 81, Վարանդեան 299; Ketibian 10): - Հայ ազգաբնակչության դեմ ուղղված նողկալի գործողություններն արդարացնելու համար հայահալած չարակամությամբ ցարական գործակալները հատկապես մահմեդաբնակ բնակավայրերում տարածեցին այն ստահող լուրերը, թե իբր «Հայերը Կովկասի մահմեդական ժողովուրդը նուաճելու պատրաստութիւններ կը տեսնան, որպէսզի, յետոյ Կովկասը անջատելով Ռուս. պետութիւնից, վերականգնեն Հայկական հին թագաւորութիւնը...» (Փարսաստ 9): Իսկ Մոսկվայում լույս տեսնող միապետության ջերմ պաշտպան «Московские ведомости» լրագիրը (խմբ. Վ. Գրինգմուտ) հակահայ ձևակերպումներով լեխ-լեցուն պրովոկացիոն առաջնորդողում հայերին անհիմ կերպով մեղադրում էր «սեպարատիզմի» մեջ. «Թուրքերը տառապող կողմն են... Խաբեբայ ու վաճառուած ձայները (ակնարկած են հայ յեղափոխականները – Միք. Յովհաննիսեան) ցեխոտել են ուզում Ռուսաստանի աւանդականօրէն հաւատարիմ հպատակ՝ երեք ու կես միլիօն թուրք ազգաբնակութիւնը, խրախուսելով նրա մեջ գաղտագողի մարդասպանների անջատական հակումներ, ի վնաս ռուս կայսրութեան անդորրութեան ու ամբողջութեան» (Յովհաննիսեան 9):

Փաստերն աներկբա վկայում են, որ Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինը հակահայ գործողություններին նախապատրաստվել էր վաղուց: Ըստ Եղիշե ավ. քին. Գեղամյանցի՝ «Գոլիցին անմիջապէս Պետերբուրգ հրաւիրեց գեներալ Նակաշի-ձէին, որին նոր էր Նշանակել Բազլի նահանգապետ, եւ յատկապէս հայ-թրքական կոտորած յառաջացնելու համար, հրահանգներ տուեց եւ վերադարձրեց Բազու արեան բաղնիսներն կազմակերպելու» (Գեղամեանց 80): Միաժամանակ, Գ. Գոլիցինի թողտվությամբ գրեթէ բոլոր կովկասյան թաթարները նախապէս զինված էին: Ինչպէս գրում է իրադարձություններին ականատես Ա. Գյուլխանդանյանը. «Անդրկովկասի ոստիկանութիւնը... գործիք դարձրեց իր ձեռքը թաթար ժողովրդի տականքներին, քաջալերեց եւ զինեց որոշ տարրերի եւ դուրս բերեց իր դարաւոր հարեւան հայերի դեմ» (Գյուլխանդանեան, Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, քարտեզ եւ բազմաթիւ վիճակագրական տւեալներ 210):

Հիրավի, ընդհարումների առաջին իսկ օրվանից ակնհայտ էր իշխանությունների և ջարդարարների թաքուն ու բացահայտ դաշինքը (Վարանդեան 297): Որ ընդհարումների ժամանակ ռուսական իշխանությունները սատարում էին կովկասյան թաթար հրոսակախմբերին (Оганесян 151), վկայում է հայերի սպանութ-

յան դեպքերի անմիջական ականատես, բրիտանական «Daily Mail» հայտնի պարբերականի թղթակից Ֆրեդերիկ Արթուր Մաքքենզին: Լոնդոնում 1905 թ.-ին հրատարակած «Տոկիոյից Թիֆլիս» գրքում անդրադառնալով այդ իրադարձություններին՝ գրում է, որ Կովկասյան թաթարներից շատերը զինված էին ռուսական բանակի «Սմիթ-Ուետըն» ատրճանակներով (McKenzie 309): «Тифлисский листок» լրագրում այդ մասին ասվում է. «Բոլոր թուրքերը (իմա՝ Բաքվի նահանգի - Գ. Ս.) զինված են բերդանակներով, և նրանք մեծ քանակի փամփուշտ ունեն» (Г. Е., К бакинскимъ событиямъ):

Կովկասյան թաթարների զինվելուն նպաստում էր այն հանգամանքը, որ վերջիններս մեծ թիվ էին կազմում ոստիկանական համակարգում: Պատճառն այն էր, որ ցարական կառավարության աչքում նրանք, չլինելով հեղափոխական տարր, իշխանությունների կողմից առավել մեծ վստահության էին արժանացել, հատկապես հակացարական ելույթները ճշելու գործում (Սիմոնյան 55): «Կոչնակ» շաբաթաթերթում «Կ. Ս. Մ.» ստորագրությամբ հեղինակը, հանգամանորեն քննելով ցարիզմի հակահայ քաղաքականությունը, գրում է. «Երկար ատեն է վեր է Կովկասի մեջ տեղական պաշտօնեաներ ազգաւեր ընթացքներու կը հետեւէին: Յեղ ցեղի դէմ կը գրգռէին, եւ որովհետեւ քաջ գիտէին որ հացի պայքարի մեջ, եւ կէանքի միջոցներու մեջ Կովկասի Հայն է, որ գերազանց պիտի գտնուի, սկսան Հայուն դէմ շարժել տարբեր ցեղեր և ազգայնութիւններ: Չէք միկնէ անգամ տուին Թաթարին եւ Մահմետականին...» (Կ. Ս. Մ., Կովկասի վիճակը 378):

Կովկասյան թաթարներին զինելու գործում մեծ աշխատանք էր տարել հատկապես Օսմանյան կայսրությունը՝ Բաթումիի վրայով մեծ քանակությամբ գնք ու զինամթերք տեղափոխելով Բաքու: Բոստոնում հրատարակվող «Կոչնակ» շաբաթաթերթում այդ մասին ասվում է, որ «Daily Mail»-ի թղթակիցը 1905 թ.-ին հեռագրել էր հետևյալը. «Բաթումից ոչ շատ հեռու յայտնել է մի շոգեխառ, լի ամեն տեսակ ռազմամթերքով, որ նշանակուած է հասցնել Կովկասում կռուող կողմերից մեկին: Շոգեխառի բոլոր ծառայողները բացառապես թուրքեր են» (Վարդանյան 91):

Հարկ է նշել, որ հայ-թաթարական ընդհարումների կազմակերպման մեջ իր բացասական դերակատարությունն ուներ հատկապես Բաքվի նահանգապետ հայատյաց իշխան Սիխալի Նակաշիճեն (Государственный архив Российской Федерации, Ф. 102, Д.П. (О.О.), 1905, оп. 233, д. 1350, ч. 72, л. 78), որի թողտվությամբ ու հրահրմամբ կովկասյան թաթար ոստիկանները հայերի դեմ նյութում էին բազմաթիվ սադրանքներ: ՌՄԴԲԿ-ի օրգան «Вперед» լրագիրը, անդրադառնալով Նակաշիճեի հակահայկական գործողություններին, այդ օրերին գրում էր. «Տուրք տալով թաթարական պրովակացիային և ուժեղացնելով ազգային ճնշման քաղաքականությունը՝ Նակաշիճեն աչք էր փակում թաթարների կողմից իրականացվող ամեն մի հակահայ գործողության առջև» (Исаакян 43): Փաստերը վկայում են, որ ընդհարումների ողջ ընթացքում հակահայկական կեցվածք էին ընդունել նաև քաղաքագլուխ Կ. Իրեցկուն փոխարինած Գանեցկին, որը հրաժարվել էր օգնել նույնիսկ քաղաքային վարչության հայազգի ծառայողներին, ոստիկանապետ Դեմինսկին, նրա օգնական Բորոդինը, նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկին, նրա օգնական Սապիլվենկոն, պետական ապահովության տնօրեն իշխան Թավքարաձեն, պրիստավ կապիտան Մամեդբեկովը և թաղային վերակացուները, որոնք, տուրք տալով թաթարների՝ հայերի դեմ ուղղված սադրիչ գործողություններին, նրանց հրահրում էին խաղաղ հայ բնակչության դեմ (Апаратский 5-6):

Այսպիսով՝ ժամանակի իշխանությունների և ռեակցիոն մամուլի բացահայտ հակահայկական տրամադրություններն ու կեցվածքը, հայերի հանդեպ Բաքվի ոստիկանության գրգռիչ արարքները կովկասյան թաթարներին համոզեցին, որ հայերը հայտարարված են օրենքից դուրս և նրանց հետ կարելի է վարվել անպատիժ կերպով (Գիլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, Ա: 299; Վարանդեան 299):

Ինչպես գրում է Միք. Վարանդյանը. «Անզօր՝ մղելու կուլտուրական օրինաւոր

մրցումը հայ տարրի դեմ, անզոր՝ կասեցնելու հայութեան տնտեսական ու մտաւոր յառաջխաղացումը, թաթար դեկավարները, հայերու երևակայական ճնշումներն ու ծրագիրները խափանելու համար, որդեգրեցին իրենց ստամբուլեան ցեղակիցներու սիրած մեթոդը – հակառակորդի ֆիզիքական բնաջնջումը...» (Վարանդեան 299): Հայերի նկատմամբ ցարիզմի խտրական վերաբերմունքի պայմաններում հորացող լարվածությունն ու ոչ հայանպաստ զարգացումները հանգեցրին զինված բախման:

Հայ-թաթարական ընդհարումներն առաջին անգամ սկսվեցին Բաքվում՝ 1905 թ.-ի փետրվարի 6-ին, երբ կովկասյան թաթար հրոսակախմբերը այս ու այն տեղերից վայրագորեն հանկարծակի հարձակվեցին քաղաքի հայ բնակիչների վրա: Բաքվում ծայր առած ընդհարումներն արագորեն տարածվեցին այսրկովկասյան գավառների վրա: Գրեթե միաժամանակ, Բաքվի Նահանգի¹ Բաքվի, Շամախիի, Գյոքչայի, Ղուբայի, Լենքորանի, Ջավադի, ինչպես նաև Գանձակ-Ելիզավետպոլի Նահանգի մաս կազմող Կուրի ձախափայլակի հայահոծ Նուխի և Արեշի գավառները² վերածվեցին ռազմաբեմի: Հայ-թաթարական ընդհարումների շրջանում կովկասյան թաթարներն ամենադաժան ձևերով կոտորեցին հարյուրավոր հայերի, կողոպտեցին նրանց ունեցվածքը (Գիլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, Ա; Ա-Դօ 14-42, 386-387):

Հայերին սպառնացող վտանգների ու կոտորածի մասին լուրերը տազնապալի արձագանք էին գտնում հայկական մամուլի էջերում: Արևմտահայերի դառը ճակատագիրն այժի առաջ ունենալով՝ ՀՀԴ պաշտոնաթերթ «Դրօշակը» առաջնորդողում գրում էր.

«Ձարդամ՛ճ, մի՛շտ ջարդւած...»

Համերաշխութեան ու սիրոյ անտարանը քարոզեցինք դարերից ի վեր և անխնայ կոտորեցինք մեզ շրջապատողներից: Քրիստոնեայ, խաղաղ ժողովուրդ հռչակեցինք Փոքր-Ասիայում - և կոտորեցինք: Խաչ ու խաչվառով դիմաւորեցինք քրիստոնեայ պետութեան դրօշակակիրներին - և կոտորեցինք: Եղբայրական մեր ձեռքը մեկնեցինք մահմետական մեր դրացիներին Անդրկովկասում - և կոտորեցինք: Ե՛րբ արդեօք կը խրատուինք, ե՛րբ արդեօք կը հասկանանք, որ այդ արիւնոտ, աղէխարշ պատմութիւնը իր որբերգական փիլիսոփայութեան հետ՝ իր ստիպողական **հրահանգներն** ունի, որոնց անպայման պետք է համակերպել, եթէ ձգտում ենք պատուաւոր գոյութեան ու առաջադիմութեան:... Ժամանակ է, որ մենք ևս ըմբռնենք այդ ճշմարտութիւնը - և ըմբռնենք **ազգովին** ոչ սահմանափակ փոքրամասնութեամբ: Բազմի հսկայական որբերգութիւնը միանգամ ևս այդ պահանջն է դնում մշտահալած ու բազմաչարչար հայութեան առջև» (Ե՛րբ արդեօք կը խրատուենք 33): Ուստի հայության գոյությանը սպառնացող վտանգի գիտակցումով «Դրօշակը» կոչ էր անում. «Չինւել՛ ամէն տեղ, - ահա փետուրեան արիւնոտ օրերի հրամայական պահանջը» (Ե՛րբ արդեօք կը խրատուենք 33):

Այսպիսի հանգամանքներում, իսկապես, անխուսափելի էր զենքի դիմելը, որը ինքնապաշտպանության միակ միջոցն էր: Հայերի կորուստները շատ ավելին կլինեին, եթէ նրանք արագ չկազմակերպվեին և արժանի հակահարված չտային կովկասյան թաթար հրոսակներին: Ուստի միանգամայն արդարացված են հայությանը

¹ Նախքան կոտորածները, 1904 թ. դրությամբ Բաքվի Նահանգում հայ բնակչության թիվը 87.682 էր, որից 51.340-ը Բաքու քաղաքում, 17.215-ը՝ Շամախիի գավառում, 16.022-ը՝ Գյոքչայի գավառում, 1498-ը՝ Ղուբայի գավառում, 607-ը՝ Լենքորանի գավառում (Ведомость количества посемения Кавказского края съ показанием %-ного содержания армянъ, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 2, գ. 94, թ. 1; Кавказский календарь на 1907 г., Тифлис, 1906, отд. II, 320-321).

² Ա-Դոյի վկայակոչած տվյալների համաձայն՝ նախքան կոտորածները Նուխիի և Արեշի գավառների հայ բնակչության թիվը 34.000 էր, որից 20.000-ը՝ Նուխիի գավառում, 14.000-ը՝ Արեշի գավառում (Ա-Դօ 380, 386):

սպառնացող վտանգը կանխելու համար հայկական կազմակերպությունների՝ ինքնապաշտպանության նպատակով ձեռնարկած միջոցառումները:

Ահա այդ տազնապայից օրերին ՀՀ Բաքվի Ոսկանապատի Կ.Կ.-ն, անտարբեր չմնալով հայրությանը սպառնացող վտանգի նկատմամբ, արագորեն ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության գործի կազմակերպմանը և անհուսափելիորեն մտավ այդ կռվի մեջ: Այս շրջանակում պետք է դիտել Բաքվի ՀՀ Ոսկանապատի Կ.Կ.-ին կից ստեղծված «Չինվորական մարմին»¹, «Չինական ֆոնդի» (Չիֆոնի), ինչպես և մյուս ինքնապաշտպանական մարմինների գործունեությունը: Անդրադառնալով ՀՀ-ի՝ հայրության ինքնապաշտպանության գործի կազմակերպմանն ուղղված մեծածավալ ձեռնարկներին՝ ակադեմիկոս Յ. Սիմոնյան իրավամբ գրում է. «Հայ ժողովրդի համար բախտորոշ բարեպատեհություն էր, որ նա իր ծոցում ուներ հեղափոխական մի կազմակերպություն, որ ահավոր դժբախտության առաջին իսկ օրից ըմբռնեց կացությունը, գիտակցեց իր անելիքը, և իր ամբողջ մեքենան զարմանալի արագությամբ հարմարեցրեց և ի սպաս դրեց կովկասահայ ժողովրդի փրկության գործին» (Սիմոնյան 312):

Իրադարձությունները աղետալի կերպարանք ստացան հատկապես հայահոծ Բաքու քաղաքում: Կովկասյան թաթար ավարառու հրոսակախմբերի կողմից իրականացվող սպանություններն ուղեկցվում էին նաև հայապատկան տասնյակ առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների, նավթահանքերի ու նավթագործարանների հրդեհումով, թալանով ու ավերումով (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25; Նաւթարդիւնաբերութեան աշխարհից; Обзорь бакинскої нефтяной промышленности за 1905 I, II): Իսկ ոստիկանությունը, ինչպես և զորքը չտեսնելու էին տալիս հայերի հանդեպ գործադրվող բռնությունները և ավելի քան կասկածելի վերաբերմունք էին ցուցադրում: Դեպքերին ականատես անգլիացի Էդուարտ Մըք Զալմը, վկայակոչելով հայերի նկատմամբ իրականացվող մի շարք զարհուրելի տեսարանների փաստեր, գրում է. «...երբ Թաթարները Հայերը կը ջարդէին՝ դազախներ (իմա՛ կազակներ – Գ. Ս.) վրայ հասան բայց բան մըն ալ չըրին» (Ընդհանուր լուրեր. Բազու 399): Ավելին՝ հայերից բռնագրավվում էր ինքնապաշտպանության նպատակով ձեռք բերված զենքը (Կովկասի աղետը 369-370; К баинскимъ событиямъ): «Արշալոյս» լրագրի հաղորդմամբ՝ զենք կրելու համար «Բազուի ոստիկանական պրիստանները... բանտարկում էին միմիայն հայերին...: ...Եւ ոչ մի թուրք» (Վերջին տեղեկություններ: Հետաքրքիր է, որ Բազուի...):

Ջարդերի հետևանքով զգալիորեն նվազեց Բաքու քաղաքի հայ բնակչության թիվը: 1905 թ.-ի սեպտեմբերի սկզբներին Բաքու այցելած ֆրանսիացի նշանավոր գրող ու լրագրող, «Le Matin» թերթի հատուկ թղթակից Գաստոն Լերուն, «Ցարական Ռուսաստանի հոգևարքը» (Խարկով, 1928) փաստագրական գրքում ականատեսի աչքերով ներկայացնելով Բաքվի հայերի ջարդը, գրում է, որ կոտորածի էին ենթարկվել հազարավոր հայեր (Леру 79; Леру 93; Г. Е., К баинскимъ событиямъ): Ա-Դոյի կազմած վիճակագրության համաձայն՝ հայերի զոհերի թիվը ոչ լրիվ տվյալներով կազմում էր 1200 հոգի (Ա-Դո 423-427): Անկասկած, այդ թիվն արտահայտում է իրողության ոչ լրիվ պատկերը: Ի դեպ, նշենք, որ Բաքվում միայն 1905 թ.-ի փետրվար-օգոստոս ամիսների ընթացքում կոտորածի ենթարկված հայերի շրջանում մեծ թիվ էին կազմում Գյոքչայի ու Շամախիի հայկական գյուղերից (Վանք, Գյուրջևան, Մեյսարի, Շուբուրչի, Մատրասա, Թուբիշեն և այլն) արտագնա աշխատանքի մեկնած երիտասարդները (Ա-Դո 423-427):

¹ Անդամներն էին Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Յովհաննիսյան), Հովհանես Զաջազունին, Աբրահամ Գյուլխանդանյանը, Ստեփան Տեր-Սկրտչյանը, Տիգրան Աղամայանը, Գևորգ Վարշամյանը և Համբարձում Աղաջանյանը (Գիւլխանդանեան «Հայ-թաթարական ընդհարումները Բազուի մէջ», 11: 156-158):

Չարիքը միայն Բաքվով չսահմանափակվեց¹: Քաղաքից հետո ջարդերը տարածվեցին նաև հայաշատ գավառներում: Բանն այն էր, որ գավառների երիտասարդության գերակշիռ մասը աշխատանքի բերումով գտնվում էր Բաքվում և գյուղերում մնացել էին հիմնականում կանայք, ծերեր ու երեխաներ: Կովկասյան թաթար ավազակախմբերը, օգտվելով այդ հանգամանքից, ոգեշնչված իրենց Էմիսարների հակահայ կոչերով, սկսեցին հարձակումներ գործել, սպանել ու կողոպտել Արեշի, Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների՝ կատարելապես անպաշտպան մնացած հայկական գյուղերի անգն բնակչությանը:

Շարունակելով հակահայ քաղաքականությունը՝ թաթարական գյուղերի հրոսակախմբերը շուրջկալներ էին կազմակերպում և առանց սեռի ու տարիքի խտրության սպանում ու կողոպտում Բաքվի դեպքերից հետո գյուղեր վերադարձած հայ ընտանիքներին (Վերջին տեղեկություններ): Հայերի սպանությունների կապակցությամբ «Արշալույսը» փաստում էր. «Գեօքչայի գաւառը, որ գտնուում է Բագուի նահանգում, շատ էլ բաղդաւոր վիճակի մէջ չէ գտնուում: Ամսոյս 5-ին (սեպտեմբերի – Գ. Ս.) Բագուից իր ընտանիքով վերադարձող Գիրք գիւղացի Մարտիրոս Մայիլեանը, որ մի աչքի ընկնող երիտասարդ է, Միւսեօյի կայարանից 5 վերստի վրայ, Արփաւուղ թուրք գիւղի մօտ ընկնում է աւազակների ձեռքը: Սպանւում է ինքը, նրա մայրը և նորահարսը ու տասնամեայ Դաւիթ ազգականը և կառապանը: Վերջնոյս վիզը կտրուած է: Մնացեալները ամեն մէկը ունին իրենց վրայ 7 և ավելի գնդակների հետքեր: Չարագործները սպանելով կողոպտել են նրանց իրեղենները և կառապանի երկու ձիաները» (Տեղացի):

Ընդհարումների ժամանակ թեև Շամախի քաղաքի հայերը զերծ էին մնացել հարձակումներից, այսուհանդերձ այդտեղ ևս հրահրումներ սկսելու նպատակով համաթուրքական քարոզիչները մեծ աշխատանք էին տանում: Շամախիից «Սշակ»-ին հղած թղթակցությունում ասվում էր. «Քաղաքումս յաճախ երևացող օտարեկրեայ կասկածելի թուրքերի պրօպագանդան արել է իր գործը: Քաղաքիս և շրջակայ թուրքերը բոլորովին այլ աչքով են նայում մեզ վրա» (Թու.եան]; Վերջին տեղեկություններ: Սեպտեմբերի 6 ին Շամախիում...): Սեպտեմբերի 6-ին քաղաքի թաթարները հարձակվում են հայերի վրա: Բարեբախտաբար, ոստիկաններին հաջողվում է կանխել սպասվող ընդհարումները: Շամախիի և շրջակա հայկական գյուղերի (Խասիշեն, Դարա-Քարքանց և այլն) վրա հարձակում սկսելու նպատակով թյուրք շահսևանները² հերթական փորձը կատարեցին սեպտեմբերի կեսերին: «Ամսիս 12-ին,- գրում է «Սշակը»,- ամբողջ գաւառում կայծակի արագութեամբ լուր տարածուեց, որ Արաքսի ափերից 4-6 հարիւր Շահսօվանի թուրք ձիաւորներ սպառազինված գայիս բարձրանում են դէպի սարը՝ հայ գիւղերը բնաջինջ անելու» (Թու.եան]): Կոտորածից փրկվելու նպատակով վերոհիշյալ գյուղերի հայերը պատսպարվում են Մատրասա գյուղում (Թու.եան]): Բարեբախտաբար, Գյոքչայի ու Շամախիի գավառները չդարձան ընդհարումների լայնամասշտաբ թատերաբեմ:

¹ Բաքվում 1905 թ. տեղի ունեցած հայ-թաթարական առաջին ընդհարումներից հետո 1905 թ. մարտի 2-ին Նիկոլայ 2-րդը սենատոր Կուզմինսկուն հանձնարարում է կատարել Բաքու քաղաքի և նահանգի փետրվարյան դեպքերի քննությունը: Կուզմինսկու գլխավորած հանձնաժողովը Բաքու է գալիս 1905 թ. ապրիլի 3-ին: Հանձնաժողովի աշխատանքները տևում են շուրջ 5 ամիս: Այդ ուսումնասիրությունը, որպես 680 տպագրական էջ ծավալով գեկուցագիր, ներկայացվել է սենատին: Չեկույցում քննության են առնված նահանգի ժողովուրդների սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նավթային արդյունաբերության, կրթության հարցերը և այլն (Всеподданнейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению сенатором Кузьминским. Ревизии города Баку и Бакинской губернии, (б. м. и г.).

² Արևելյան Այսրկովկասի էթնիկ և քաղաքական գործընթացներում մեծ դեր է ունեցել պարսկական տերության տարբեր նահանգներից վերաբնակված վաչկատուն շահսևան ցեղամիավորումը: Թյուրքական ծագմամբ այս բառը նշանակում է «շահին սիրող» (Балаян 331-378; Գալստյան 39-43):

Պատճառներից մեկն այն էր, որ հայերի դեմ կոիվները վարում էին առավելապես շիա դավանանքին պատկանող կովկասյան թաթարները (Վարանդեան 297), իսկ այդ գավառներում «...սիևի մահմետականները խոշոր թիվ էին կազմում եի իրենց թուով, ինչպես եւ ազդեցութեամբ գերազանցում էին շիա թաթարներին» (Գիւլխանդանեան, «Յայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ», 11: 155): Ա. Գյուլխանդանյանի պարզաբանմամբ՝ «...մահմետական սիւնիիները բոլորովին հակառակ էին Բագուի դէկավարներին եւ այն՝ ինչ որ անում էին Բագուի շիաները, սրանց համար միանգամայն անընդունելի էր: Այդ ժամանակները դեռ եւս շիաների եւ սիւնիիների մէջ կրօնական մեծ հակամարտութիւն գոյութիւն ուներ եւ դեռ եւս չէր վերացած փոխադարձ ատելութիւնը» (Գիւլխանդանեան, «Յայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ», 3: 136):

Ղուբա քաղաքում հրահրումներ կազմակերպելու նպատակով Բաքվից այդտեղ եկած կովկասյան թաթար Էմիսարները տարածեցին այն ստահող լուրը, թէ իբր հայերը սպանել են մահմեդականների մուֆթիին: Այնուամենայնիվ, սև ուժերին չհաջողվեց իրականացնել իրենց մտադրությունը: Ընդհարումները կանխվեցին հայերի ու թաթարների միջև խաղաղություն պահպանելու նպատակով Զաղաքային վարչությունում կայացած ժողովից հետո («Ղուբա, 21 յունիսի»):

Գրեթէ միաժամանակ հակահայկական գործողություններ ծավալվեցին նաև Զավաթի գավառում: Թաթար հրոսակների հարձակումների հետևանքով սեպտեմբերի 12-ին գավառակենտրոն Սալիան ավանում դաժանաբար սպանվում են Ասլանյան ամուսինները, կողոպտվում և հրո ճարակ են դառնում Բաղդասարյանների ու Ասլանյանների տները (Վերջին տեղեկություններ; Վերջին տեղեկություններ, «Кавказъ» լրագրին հեռագրում են Երևանից սեպտ. 19 ին):

Բաքվի կոտորածներն անմիջական արձագանք ունեցան Գանձակ-Ելիզավետպոլի նահանգում: Կուրի ձախափնյակի Նուխի ու Արեշ գավառները ևս այդ ժամանակ ապրում էին դժվարին օրեր. ռազմական գործողությունները տեղի էին ունենում նրանց սահմանների մոտ ու սպառնում հայահոծ այդ գավառներին ևս: Բաքվում 1905 թ.-ի առաջին կոտորածների օրերին հարձակման թիրախ դարձավ նաև Նուխի քաղաքի հայկական թաղամասը¹: Կովկասյան թաթար Էմիսարները, շրջելով հայկական թաղամասում, «...որտեղ հայ տեսանք պիտի սպանենք...», հակահայկական կոչերով ու սադրիչ գործողություններով թաթար խուժանին հրահրում էին հայ խաղաղ ազգաբնակչության դեմ (Պ. 2.): Կովկասյան թաթար հրոսակները փետրվարի 17-18-ին ավերեցին քաղաքի հայապատկան խանութներն ու արհեստանոցները, հրդեհեցին մի քանի տուն (Յայաստանի ազգային արխիվ, ֆ. 227, ց. 1, գ. 395, թ. 6): Ի դեպ, Նշենք, որ ի տարբերություն Նուխի քաղաքի՝ գավառը գերծ մնաց ընդհարումներից: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ ինչպես Գյոքչա ու Շամախի գավառներում, Նուխիի գավառում ևս թաթար բնակչության մեջ մեծ տոկոս էին կազմում ուղղադավան սունիիները (Գիւլխանդանեան, «Յայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ», 11: 155; Սիմոնյան 472): Նշենք, որ Նույն հանգամանքով պայմանավորված՝ ընդհարումներից գերծ մնաց նաև Ղուբայի գավառի թաթախոս հայերի Զիվար գյուղը (Յայաստանի ազգային արխիվ, 3ԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 136, թ. 162-164; Յակոբյան 110):

Կովկասյան թաթար հրոսակախմբերի ոճրագործություններից հատկապես տուժեցին Կուրի առափնյա թաթարական գյուղերով շրջապատված Արեշի գավառի հայկական Մազրղու, Մամաթավա (Նեմեթաբատ), Յավարիկ, Զանդակ, Արեշավան և Խանաբաղ գյուղերը: 1905 թ.-ի նոյեմբերի 29-ին պրիստավ Մահմադ բեկ-Կալաբեկովի գլխավորած 100 հոգանոց ավազակախումբը հարձակվում է Մազրղու գյուղի վրա:

¹ Զաղաքի հայկական թաղամասը բաժանված էր երկու մասի՝ արևմտյան և արևելյան, որոնց նուխեցիներն անվանում էին «Էն դոլի գեղ» և «Էս դոլի գեղ» (Ստեփանյան 29): 1904 թ. տվյալներով քաղաքն ուներ 5749 հայ բնակիչ (Кавказский календарь на 1907 г., отд. II, 322).

Գյուղացիները դիմում են ինքնապաշտպանության, նրանց օգնության են հասնում հարևան Հավարիկ ու Քանդակ գյուղերի երիտասարդները: Սակայն մեծաթիվ ուժերի դեմ անհավասար մարտում ինքնապաշտպանները թողնում են դիրքերը և նահանջում: Նրանց են հետևում նաև վերոհիշյալ գյուղերի բնակիչները, որոնք ապաստանում են հարևան հայկական Ղայբաբաշի գյուղում, որտեղից մի մասը հետագայում տեղափոխվում է Դաշբուլաղ, Մեծ և Փոքր Սոկոլություն, Չառափ, Տուշամիշ, Սաբաթուն և այլ հայկական գյուղեր: Ավագակախումը, ստեղծած շարժական ու անշարժ գույքը, որը մեկ-երկու օրում անցնում է տեղացի կովկասյան թաթարների ձեռքը (Հայաստանի ազգային արխիվ, ՀՆԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1851, թ. 9; Սեյրանեան; Սարգսեան; Գիլխանդանեան, «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ», 3: 136-137; Ա-Դօ 182-185):

Ստեղծված իրավիճակի թելադրանքով՝ ՀՀԴ Բաքվի Ոսկանապատի Կ.Կ.-ն, Բաքու քաղաքից բացի ամրապնդելով ու ավելացնելով իր զինված խմբերը, շտապ կարգով ձեռնամուխ եղավ նաև գավառների հայության ինքնապաշտպանության գործի կազմակերպմանը (Ռոստոմ 399-400): Ա. Գյուլխանդանյանի վկայությամբ՝ «Ամենադժուարին հարցը սակայն, որ գոյութիւն ունէր Բագուի Չինուորական Մարմնի համար Բագուի նահանգի Գեօքչայի եւ Շամախու գաւառների, ինչպէս եւ Գանձակի նահանգի Նուխուայ եւ Արեշի գաւառների հայութեան խնդիրն էր» (Գիլխանդանեան, «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ», 3: 135): Կարճ ժամանակում ՀՀԴ Ոսկանապատի Կ.Կ.-ի ձեռնարկած միջոցների շնորհիվ երիտասարդությունը շտապ կարգով մեկնեց գավառներ և ձեռնամուխ եղավ հայրենի գյուղերի պաշտպանության կազմակերպման գործին (Գիլխանդանեան, «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ», 3: 136):

Աներկբա պետք է հաստատել, որ Բաքվի նահանգի և Կուրի ձախափնյակում գտնվող Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի ու Արեշ գավառների հայության զանգվածային կոտորածների ծրագիրը թանկագին զոհերի գնով խափանվեց ՀՀԴ-ի, հատկապես ինքնապաշտպանության գործի գլխավոր կազմակերպիչ, հին հայրուկ, անվեհեր Նիկոլ Դումանի կազմակերպած հերոսական դիմադրության շնորհիվ: Նա իր շուրջն էր հավաքել հայրենասեր հերոս մարտիկներին (Վարդան Մեհրաբյան (խանասորի Վարդան), Համագասպ Սրվանձոյանց, Դաշնակցական Խեչո (խաչատուր Գևորգյան), Զեռի (Արշակ Գավաֆյան), Դրաստամատ Կանայան (Դրո), Սեբաստացի Մուրադ (Մուրադ Խրիմյան), Սեպուհ (Արշակ Ներսիսյան), Կայծակ Առաքել (Տիգրան Աբաջյան) և շատ ուրիշներ), ինքն էլ, նրանց առաջնորդելով, քաջին հատուկ հերոսությամբ դիմել էր դեպի թշնամին՝ պաշտպանելու իր քույրերի ու եղբայրների պատիվը, հայությանը զերծ պահելով թաթար հրոսակների հարձակումներից (Արամայիս 87-90, Վարանդեան 317, Գևորգյան): Իսկ ինքնապաշտպանության կազմակերպման կենտրոնական դեմքը ՀՀԴ հիմնադիր երրորդության անդամ Ստեփան Չորյանն (Ռոստոմ) էր:

Հայ-թաթարական ընդհարումների ավարտից հետո ցարական կառավարության կազմակերպած արյունալի խրախճանքի դեմ հասարակական-քաղաքական շրջանակներում ծավալվեցին թեժ քննարկումներ, որոնք միտված էին ընդհարումների պատճառները պարզելուն և նոր բախումները կանխելուն: Այդ նպատակով Թիֆլիսում փոխարքայի պալատում, 1906 թ.-ի փետրվարի 20-ից մարտի 6-ը հրավիրվեց հայերի ու կովկասյան թաթարների համագումարը, որին մասնակցում էին երկու կողմերից ընտրված 30 պատգամավոր (Ներքին տեսութիւն. հայ-թուրքական համաժողով): Սակայն համագումարի աշխատանքների ավարտից և «հաշտության» կայացումից հետո էլ հայ-թաթարական հարաբերությունները դեռ շարունակվում էին մնալ լարված. կանխատեսվում էին դրանց հետևանքները:

Այսպիսով՝ արձանագրենք, որ տակավին XVIII դարի վերջերից արցախահայերի, այնուհետև XIX դարի սկզբներին պարսկահայերի ներգաղթը էական նշանակություն

ունեցավ ոչ միայն երկրամասի տեղաբնիկ հայ բնակչության էթնիկական նախկին կազմի վերականգման համար, այլև փոփոխության ենթարկեց հայաբնակ գոտու գյուղերի խմբավորումը՝ ըստ բնակչության թվի: Երկրամասում հաստատված արցախահայերն ու պարսկահայերը բնավորվեցին նոսր բնակեցված հայկական կամ նախկինում հայաբնակ, ապա ամայացած գյուղերում, ինչի արդյունքում զգալիորեն ընդլայնվեց հայ բնակչության էթնոտարածքը: Սակայն երկրամասի հայ բնակչության խաղաղ գոյակցությունը, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքը առժամանակ խաթարվեց 1905-1906 թթ.-ին ցարական վարչակարգի քստմնելի դավերով հրահրված հայ-թաթարական ընդհարումներով:

Կոտորածների հետևանքով զգալիորեն տուժեց հատկապես Բաքու քաղաքի հայ բնակչությունը: Մարդկային կորուստներից զատ, ավերվեցին, հրդեհվեցին ու կողոպտվեցին հայապատկան մի շարք տներ, առևտրաարդյունաբերական ձեռնարկություններ ու խանութներ: Կոտորածի, ավերի ու թալանի հետևանքով հայաբնակ գավառների երբեմնի շեն ու ծաղկուն մի շարք գյուղեր դարձան սակավամարդ, տեղահանված բնակչությունը լքեց պապենական բնօրրանը: Ըստ Էուբայան, Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության նկատմամբ անսքող կերպով շարունակվեց իրականացվել տակավին XI-XVIII դարերից սկզբնավորված էթնիկ զտումների, հայրենիքից վտարելու և զանգվածային ջարդերի քաղաքականությունը: Տարբերությունը միայն այն էր, որ այս փուլն իրականացվում էր ցարիզմի բացահայտ հակահայկական քաղաքականության և փաստորեն համաթուրքականության գաղափարաբանության գործնական ընթացքով՝ զուգորդված համախլամականության մեթոդով: Իսկ վերջինիս գաղափարախոսներն այդ ծրագրերի իրականացումն անզուսպ ձգտումով կապում էին Օսմանյան կայսրության հետ: Բոստոնի «Կոչնակ» շաբաթաթերթը, որը արձարծում էր նաև համազգային նշանակություն ունեցող խնդիրներ, ուշի ուշով հետևելով Կովկասում տեղի ունեցող իրադարձություններին, «Կովկասի աղետը» առաջնորդող հոդվածում անարգանքի սյունին գամելով վերջիններիս՝ հայության դեմ սանձազերծած ոճրագործությունների համար, գրում էր. «Կովկասահայը կը ջնջուի: Կովկասահայու ջնջումը կը նշանակէ ամբողջ Հայկթեան ջնջում: Ձեռքը ջնջող սուրին երկնցնող թշնամիներ այս անգամ երեք են - Թուրքը, Թաթարը և Ռուսը» (Կովկասի աղետը 369): Թերթը չի մոռանում մերկացնել նաև եվրոպական տերությունների անտարբեր վերաբերմունքը՝ այդ ոճրագործության նկատմամբ դրսևորած քար լռության համար: Ընդամին, մի շարք զարգացումներով պայմանավորված՝ հայ-թաթարական ընդհարումները կովկասյան թաթարների շրջանում մեծապես խթանեցին նաև նոր ձևավորվող էթնոգավանական ինքնագիտակցությունը՝ իրեն ներհատուկ և ավանդականություն ենթադրող հակահայկական ուղղվածությամբ:

Բայց դրա կողքին անժխտելի է, որ 1905-1906 թթ. խռովահույզ իրադարձությունների մթնոլորտում որոշակի փոփոխություններ կրեց նաև կովկասահայության կյանքը. հայությունը սթափվեց ու գոտեալոպեց: Ինչպես իրավամբ նշել է ՀԶԴ անվանի գործիչ և գրող Արտաշես Հովսեփյանը (Մալխաս). «...կասկածե դուրս է, որ այդ կռիւները, որ մօտ երկու տարի տեւեցին, զարմանալի կերպով ուղղեցին հայու կորացած մէջքը եւ ուժգին թափով մը նպաստեցին ազգային գիտակցութեան արթնացման Կովկասի մէջ: Կառավարութենէն լքուած, նոյնիսկ անոր անբարեացակամ չէզոքութեան ենթարկուած՝ հայ ժողովուրդը հարկադրուեցաւ այդ անակնկալ վտանգի դէմ կանգնիլ՝ ապաւինելով միմիայն ինքն իր ուժերուն» (Մալխաս 84): Բոստոնի «Կոչնակ» շաբաթաթերթն այդ օրերին գրում էր. «Հայերը գովելի քաջասրտութիւն եւ հաւաքական ոյժ ցուցուցած են, եւ ընդհանուր կոտորած մը անկարելի ըրած են» (Ազգային լուրեր. Ռուսահայկական 365): Իրողություն, որ ստիպված էին խոստովանել հենց այդ դավադիր ծրագրի որոշ հեղինակներ: Ինչպես, օրինակ, Մահմեդ-աղա Շահթախտինսկին «Кавказъ» լրագրում գրում էր. «...հայերը այժմ մտել են պատմական զարգացման մի նոր շրջանի մէջ, և թէ նրանք

կազմակերպվել են իբրև քաղաքական մի ոյժ: Մինչև այժմ կարելի էր հաշուի չառնել հայերի կարծիքը Անդրկովկասի քաղաքական քարտեզը վերակազմելու ժամանակ, իսկ այժմ այդ անկարելի է» (Զալանթար):

Հիրավի, հայ ժողովրդի ինքնակազմակերպման, սեփական ուժերին ապավինած հուժկու դիմադրության շնորհիվ մեծ հաշվով հաղթահարվեց համաթուրքական ու համախլամական գաղափարախոսությամբ առաջնորդվող թուրք-թաթարական ցեղասպանական դաշինքի ծանր մարտահրավերը՝ արևելահայերի բնաջնջման առաջին լուրջ փորձը:

Օգտագործված գրականություն

1. Անանուն, Դավիթ. *Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի զարգացումը (1901-1918)*, հ. Գ, Վենետիկ, 1926:
2. Արամայիս. Մի քանի գլուխ հայ-թաթարական ընդհարումներից: Ա մաս, Թիֆլիզ, 1907:
3. Տեղացի, Դրուբինը Գեօքչայի գաւառում, «Արշալոյս», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 14, № 12:
4. Վերջին տեղեկություններ: Զետաքրքիր է, որ Բագուի..., «Արշալոյս», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 9, № 9:
5. Վերջին տեղեկություններ: Սեպտեմբերի 6 ին Շամախիում..., «Արշալոյս», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 9, № 9:
6. Գալստյան, Վարդան. *Արևելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ժԹ դարում*: Գարդմանի ու Շիրվանի հայության պատմամշակութային ավանդները (պատմություն եւ արդիականություն): Հանրապետական գիտաժողով: Չեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Երևան, 2016, էջ 39-43:
7. Գեղամեանց, Եղիշե. *Ստորումներ*, Թիֆլիս, 1907:
8. Գևորգյան, Համլետ. *Նիկոլ Դուման*, Երևան, 2013:
9. Գիլխանդանեան, Աբրահամ. *Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, քարտեզ եւ բազմաթիւ վիճակագրական տւեալներ*: Ա մաս. Փարիզ, 1943:
10. ---. *Հայ-թաթարական ընդհարումները*. հ. Ա (Բագուի առաջին ընդհարումները), Փարիզ, 1933:
11. ---. «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ». «Հայրենիք», Պոսթըն, 1933, ԺԱ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 156-158:
12. ---. «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ». «Հայրենիք», Պոսթըն, 1934, ԺԲ տարի, յունուար, № 3, էջ 136-137:
13. Ե՞րբ արդեօք կը խրատուենք, «Դրօշակ», Ժնեւ, 1905, XV տարի, մարտ, № 2, էջ 33-34:
14. Ազգային լուրեր. Ռուսահայկական, «Կոչնակ», Պոստոն, 1905, Ե տարի, սեպտեմբերի 16, № 37:
15. Կովկասի աղետը, «Կոչնակ», Պոստոն, 1905, Ե տարի, սեպտեմբերի 16, № 38:
16. Կ. Մ. Մ., Կովկասի վիճակը, «Կոչնակ», Պոստոն, 1905, Ե տարի, սեպտեմբերի 16, № 38:
17. Ընդհանուր լուրեր. Բագու, «Կոչնակ», Պոստոն, 1905, Ե տարի, սեպտեմբերի 30, № 39:
18. Հակոբյան, Արսեն. Թաթախոս հայերի պատմական որոշ դրվագներ 20-րդ դ. սկզբի ազգամիջյան հարաբերությունների համատեքստում, «Մերձավոր Արևելք», հ. II, Երևան, 2005, էջ 110:
19. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25:
20. ---. ֆ. 227, ց. 1, գ. 395, թ. 6:
21. ---. ֆ. 56, ց. 16, գ. 136, թ. 162-164:

22. Մալխաս. Ապրումներ, «Հայրենիք», Պոսթըն, 1930, Ը տարի, յունիս, № 8, էջ 84:
23. Ղուբա, 21 յունիսի, «Մշակ», Թիֆլիս, 1905, հուլիսի 6, № 129:
24. Վերջին տեղեկութիւններ, «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 15, № 185:
25. Վերջին տեղեկութիւններ: «Кавказъ» լրագրին հեռագրում են Երևանից սեպտ. 19 ին «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 21, № 190:
26. Սարգսեան, Երուանդ. Չեկուցում Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովին Արեշ գաւառի 5 վնասված հայ գիւղերի մասին, «Մշակ», Թիֆլիս, 1906, ապրիլի 26, № 88:
27. Նաւթարդիւնաբերութեան աշխարհից, «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 103:
28. Ներքին տեսութիւն. Հայ-թուրքական համաժողով, «Մուրճ», Թիֆլիս, 1906, № 2, էջ 135:
29. Յովհաննիսեան [Վարանդեան], Միքայել. *Կովկասեան Վանդեան (թուրք-հայկական ընդհարումները, նրանց պատճառները)*. Թիֆլիս, 1907:
30. Պ. Չ. Նամակ Նուխուց, «Մշակ», Թիֆլիս, 1906, փետրվարի 11, № 31:
31. Ռոստոմ [Ստեփան Չորյան]. *Նամակակնի* (մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրուք, 1999:
32. Սէրանեան, Գրիգոր. Արեշի գաւառի վերջին աղետների մասին (I), «Արեւ», Բագու, 1918, յունիսի 1 (19) մայիսի, № 102:
33. Սիմոնյան, Հրաչիկ. *Ազատագրական պայքարի ուղիներում: Գիրք Ա*. Երևան, 2003:
34. Ստեփանյան, Գևորգ. «Նուխի և Արեշ գավառների հայերի պատմական անցյալից». «Իրան-Նամէ», Երեւան, 1997, № 4-5-6, էջ 29:
35. Վարանդեան, Միքայել. Հ.Յ. Ղաշնակցութեան պատմութիւն. Երևան, 1992:
36. Վարդանյան, Թամարա. Թաթարական ազգայնամոլութեան դրսևորումներն Անդրկովկասում 20-րդ դ. առաջին տասնամյակում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2000, № 3 (102), էջ 89-97:
37. Փարսաստ, Արսէն. *Արեան ճանապարհով: Կովկ. Հայ-թաթ. Արիւնահեղ ընդհարումները*, Կ. Պոլիս, 1910:
38. Զալանթար, Ալեքսանդր. Շարժառիթների արժէքը (II), «Մշակ», Թիֆլիս, 1906, փետրվարի 12, № 32:
39. Զու. [եան], Յովհանես. «Նամակ Շամախուց», «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 20, № 189:
40. Араратский (Лункевич), Валериан. *Подвиги царизма. Кровавые февральские дни в Баку*, Женева, 1905.
41. Балаян, Борис. К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, «Արևելագիտական ժողովածու», հ. I, Երևան, 1960, էջ 331-378.
42. Ведомость количества посемена Кавказского края съ показаниемъ %-ного содержания армянъ, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 2, գ. 94, թ. 1:
43. Всеподданнейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению сенатором Кузьминским. Ревизии города Баку и Бакинской губернии, (б. м. и г.).
44. Государственный архив Российской Федерации, Ф. 102, Д.П. (О.О.), 1905, оп. 233, д. 1350, ч. 72, л. 78.
45. Г. Е., К бакинскимъ событиямъ (рассказы очевидцевъ), «Тифлисский листок», Тифлис, 1905, 11 февраля, № 23.
46. Кавказский календарь на 1907 г., Тифлис, 1906, отд. II, с. 320-321.
47. Леру, Гастон. *Агония царской России*. Перевод И. Контунова и О. Гессена, Харьков, 1928.

48. Леру, Гастон. *Агония царской России*. Перевела с французского Ирина Ольтециан, «Литературная Армения», Ереван, 1991, № 7, с. 93.
49. Оганесян, Эдуард. *Век борьбы*, т. I, Мюнхен-Москва, 1991.
50. Обзоры бакинской нефтяной промышленности за 1905, Баку, 1906.
51. Центральные газеты РСДРП о Закавказье 1905 г.: (Сборник). Сост., автор предисловия и примечаний Г. А. Исаакян, Ереван, 1965.
52. Ketibian, Ara. *Azeri Aggression Against Armenians in Transcaucasia (1905-1921)*. Reports From the U.S. Press, Yerevan, 2020.
53. Mckenzie, Fredrick Arthur. *From Tokyo to Tiflis, uncensored letters from the war*. London, 1905.

Works Cited

1. Ananun, Davit'. R'usahayoc hasarakakan-qaghaqakan mtqi zargacumy' (1901-1918), [The Development of the Socio-Political Thought of the Armenians of Russia (1901-1918)] h. G, Venetik, 1926:
2. Aramayis. Mi qani glux hay-t'at'arakan y'ndharumneric: A mas, [Several Chapters of the Armenian-Tatar Clashes. Part 1] T'iflitz, 1907:
3. Teghaci, Drut'iwny' Geo'qchayi gawar'um, [The Situation in the Province of Geokcha] «Arshaloys», T'iflis, 1905, septemberi 14, № 12:
4. Verjin teghekut'iwnner: Hetaqrqir e', or Bagui..., [The Latest information: it is interesting that Baku...] «Arshaloys», T'iflis, 1905, septemberi 9, № 9:
5. Verjin teghekut'iwnner: Septemberi 6 in Shamaxium..., [The Latest information: On September 6 in Shamakhi...] «Arshaloys», T'iflis, 1905, septemberi 9, № 9:
6. Galstyan, Vardan. Arevelyan Aysrkvokasi t'yurqakan ceghery' JhT' darum: Gardmani r'w Shirvani hayut'yan patmamshakut'ayin avandnery' (patmut'yun ew ardiakanut'yun): Hanrapetakan gitajhoghov: Zekucumner ew zekucumneri druyt'ner, [Turkic tribes of eastern Aisrakovkas in the XVIII century. Historical and cultural traditions of the Armenians of the Gardman district of Shirvan (history and modernity). Reports and provisions of reports] Erevan, 2016, e'j 39-43:
7. Geghameanc, Eghishe. Mtorumner, [Reflections] T'iflis, 1907:
8. Gevorgyan, Hamlet. Nikol Duman, Erevan, 2013:
9. Giwixandanean, Abraham. Kovkas erkiry', jhoghovurdy', patmut'iwny', qarte'z ew bazmat'iw vitwakagrakan twealner: A mas. [The country of the Caucasus, people, history, maps and numerous statistics. Part 1] P'ariz, 1943:
10. ---. Hay-t'at'arakan y'ndharumneriy'. h. A (Bagui ar'ajin y'ndharumneriy'), [Armenian-Tatar clashes. v. A (the first collisions of the Baku)]
52. P'ariz, 1933:
11. ---. «Hay-t'at'arakan y'ndharumneriy' Bagui me'j». [Armenian-Tatar clashes in Baku] «Hayreniq», Po'st'y'n, 1933, JhA tari, september, № 11, e'j 156-158:
12. ---. «Hay-t'at'arakan y'ndharumneriy' Bagui me'j». [[Armenian-Tatar clashes in Baku] «Hayreniq», Po'st'y'n, 1934, JhB tari, yunuar, № 3, e'j 136-137:
13. E'rb ardeo'q ky' xratwenq, [When will we Preach] «Dro'shak», Jhnew, 1905, XV tari, mart, № 2, e'j 33-34:
14. Azgayin lurer. R'usahaykakan, [National news. Russian-Armenian] «Kochnak», Posdon, 1905, E tari, septemberi 16, № 37:
15. Kovkasi aghe'ty', [Caucasian disaster] «Kochnak», Posdon, 1905, E tari, septemberi 16, № 38:
16. K. M. M., Kovkasi vitwaky', [The State of the Caucasus] «Kochnak», Posdon, 1905, E tari, septemberi 16, № 38:
17. Y'ndhanur lurer. Bagu, [General News: Baku] «Kochnak», Posdon, 1905, E tari, septemberi 30, № 39:

18. Hakobyan, Arsen. T'at'axos hayeri patmakan orosh drvagner 20-rd d. skzbi azgamijyan haraberut'yunneri hamateqstum, [Some Historical Fragments of the Tata-speaking Armenians in the Context of Interethnic Relations of the beginning of the 20th Century] «Merd'avor Arevelq», h. II, Erevan, 2005, e'j 110:
19. Hayastani azgayin arxiv, [National Archive of Armenia] f. 1022, c. 2, g. 187, t'. 25:
20. ---. f. 227, c. 1, g. 395, t'. 6:
21. ---. f. 56, c. 16, g. 136, t'. 162-164:
22. Malxas. Aprumner, [Experiences] «Hayreniq», Po'st'y'n, 1930, Y' tari, yunis, № 8, e'j 84:
23. Ghuba, 21 yunisi, [June 21] «Mshak», T'iflis, 1905, hulisi 6, № 129:
24. Verjin teghecut'iwnner, [The Latest Informaton] «Mshak», T'iflis, 1905, septemberi 15, № 185:
25. Verjin teghecut'iwnner: «Кавказъ» Iragrin her'agrum en Erevanic sept. 19 in , [Latest Information: "Kavkaz" is being telegraphed from Yerevan on September. 19] «Mshak», T'iflis, 1905, septemberi 21, № 190:
26. Sargsean, Eruand. Zekucum T'iflisi npastamatoyc yand'najhoghovin Are'sh gawar'i 5 vnasvac' hay giwgheri masin, [Report of the Tiflis Assistance Commission on 5 damaged Armenian villages of Aresh district] «Mshak», T'iflis, 1906, aprili 26, № 88:
27. Nawt'ardiwnaberut'ean ashxarhic, [From the World of Oil Industry] «Murtw», T'iflis, 1905, № 11-12, e'j 103:
28. Nerqin tesut'iwn. Hay-t'urqakan hamajhoghov, [Internal theory: the Armenian-Turkish forum] «Murtw», T'iflis, 1906, № 2, e'j 135:
29. Yovhannisean [Varandean], Miqaye'l. Kovkasean Vande'an (t'urq-haykakan y'ndharumneri', nranc pattwar'neri'). [Caucasian Vendee (Turkish-Armenian clashes, their causes)] T'iflis, 1907:
30. P. Z. Namak Nuxuc, [Letter from Nuhuts] «Mshak», T'iflis, 1906, p'etrvari 11, № 31:
31. R'ostom [Step'an Zoryan]. Namakani (mahuan ut'sunameakin ar't'iw), [Collection of letters (On the Occasion of the Eightieth Anniversary of his Death)] Pe'yurut', 1999:
32. Se'yranean, Grigor. Are'shi gawar'i verjin aghe'tneri masin (I), [About the latest Disasters in the Province of Aresh] «Arew», Bagu, 1918, yunisi 1 (19) mayisi, № 102:
33. Simonyan, Hrachik. Azatagrakan payqari ughinerum: [On the paths of the liberation struggle] Girq A. Erevan, 2003:
34. Step'anyan, Gevorg. «Nuxi ev Aresh gavar'neri hayeri patmakan ancyalic». [From the Historical Past of the Armenians of the Provinces of Nuhi and Aresh] «Iran-name'», Erevan, 1997, № 4-5-6, e'j 29:
35. Varandean, Miqaye'l. H.Y. Dashnakcut'ean patmut'iwn. [The history of Dashnaksutyun] Erevan, 1992:
36. Vardanyan, T'amara. T'at'arakan azgaynamolut'yan drsevorumnern Andrkovkasum 20-rd d. ar'ajin tasnamyakum, [Manifestations of Tatar Nationalism in Transcaucasia in the XX century in the First Decade] «Banber Erevani hamalsarani», Erevan, 2000, № 3 (102), e'j 89-97:
37. P'arsant, Arse'n. Aream twanaparhov: Kovk. Hay-t'at'. Ariwnahegh y'ndharumneri', [Along the Path of Blood. Caucasian Armenian-tatar bloody clashes] K. Polis, 1910:
38. Qalant'ar, Aleqsandr. Sharjharit'neri arjhe'qy' (II), [The Value of Motivation] «Mshak», T'iflis, 1906, p'etrvari 12, № 32:
39. Qo's.[ean], Yovhane's. «Namak Shamaxuc», [A Letter from Shamakhi] «Mshak», T'iflis, 1905, Septemberi 20, № 189:
40. Araratskij (Lunkevich), Valerian. Podvigi carizma. Krovavye fevral'skoe dni v Baku, [The exploits of tsarism. Bloody February days in Baku] Zhenev, 1905.

41. Balajan, Boris. K voprosu ob obshhnosti jetnogeneza shahseven i kashkajcev, [To the question about the unity of ethnogenesis of Shahseven and kaskazi] «Arelagitakan jhoghovac'ow», h. I, Erevan, 1960, e'j 331-378.

42. Vedemost' kolichestva posemenija Kavkazskogo kraja s" pokazaniem' %-nogo sodержanija armjan", [Statement of the number of settlements of the Caucasus region with the indication of the percentage content of the Armenians] Hayastani azgayin arxiv, f. 57, c. 2, g. 94, t'. 1:

43. Vsepoddannejšij otchet o proizvedennoj v 1905 godu po Vysochajšemu poveleniju senatorom Kuz'minskim. Revizii goroda Baku i Bakinskoj gubernii, [Humbly report, produced in 1905, by Imperial order, a Senator Kuzminsky. Revisions of the city of Baku and the Baku province] (b. m. i g.).

44. Gosudarstvennyj arhiv Rossijskoj Federacii, [State archive of the Russian Federation] F. 102, D.P. (O.O.), 1905, op. 233, d. 1350, ch. 72, l. 78.

45. G. E., K bainskim" sobytijam" (raskazy ochevidcev"), [The Baku events (stories of the witnesses)] «Tifliskij listok», Tiflis, 1905, 11 fevralja, № 23.

46. Kavkazskij kalendar' na 1907 g., [Caucasian calendar for 1907.] Tiflis, 1906, otd, II, s. 320-321.

47. Leru, Gaston. Agonija carskoj Rossii. [The Agony of Tsarist Russia] Perevod I. Kontunova i O. Gessena, Har'kov, 1928.

48. Leru, Gaston. Agonija carskoj Rossii. Perevela s francuzskogo Irina Ol'tecian, [The Agony of Tsarist Russia] «Literaturnaja Armenija», Erevan, 1991, № 7, s. 93.

49. Oganessian, Jeduard. Vek bor'by, [The Century of Struggle] t. I, Mjunhen-Moskva, 1991.

50. Obzory bakinskoj neftjanoj promyšlennosti za 1905, [Reviews of the Baku oil industry for 1905] Baku, 1906.

51. Central'nye gazety RSDRP o Zakavkazye 1905 g.: [Central newspapers of the RSDLP about the Transcaucasians of 1905] (Sbornik). Sost., avtor predslovija i primechanij G. A. Isaakjan, Erevan, 1965.

52. Ketibian, Ara. Azeri Aggression Againsts Armenians in Transcaucasia (1905-1921). Reports From the U.S. Press, Yerevan, 2020.

53. Mckenzie, Fredrick Arthur. From Tokyo to Tiflis, uncensored letters from the war. London, 1905.

THE STAGES OF IMPLEMENTATION OF THE POLICY OF ETHNIC CLEANSING AND GENOCIDE OF ARMENIANS IN THE EASTERN CIS- CAUCASUS (11TH-20TH CC.) (CONTINUATION OF THE SECOND PART)

GEVORG STEPANYAN

*Institute of History NAS RA, the Department of History of
Armenian Colonies and Diaspora, Head,
Doctor of History, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to present the motives and implementation stages of ethnic cleansing and genocidal policy perpetrated towards the indigenous Armenian population during the 11th-20th centuries in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, on the basis of various primary sources (archival documents, statistical materials, periodical press, theme related literature).

The work is written by a combined examination of facts, applying the principles of historical investigation and historical-comparative analysis. The level of reliability and validity of the sources through their comprehensive study has been verified.

Through the combination of facts the following phases of the history of the main issue are presented: the policy of ethnic cleansing and genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus were still implemented in the 11th-18th centuries when the region regularly appeared under the invasions and dominion of various conquering nomadic tribes (Turk-Seljuks, Mongol-Tatars, Tamerlane, nomadic Turkmen tribes of Kara-Koyunlu and Ak-Koyunlu, Kizilbash invasions followed by the Turkish-Persian wars, Sunni Lezgins, invasions of Nader Shah and Agha Mohammad Khan). As a result, some part of the Armenian population was deported and left native lands or forcedly accepted the Muslim religion of the conquerers. The next phase of ethnic cleansing and atrocities was the period of the Armenian-Tatar clashes (1905-1906). Later, the policy of ethnic cleansing and genocide was implemented at state level already during the Musavat regime of the artificial “Azerbaijan” formation (1918-1920), and finally during the Soviet regime (1920-1990).

The article substantiates the fact that the indigenous Armenian population of the region was subjected to ethnic cleansing and genocide in its cradle, just as the Young Turks carried out the extermination of the Western Armenians in 1915-1916 in Western Armenia. Therefore, this policy should be described as a continuation and an integral part of the Genocide of Armenians, as the Armenian Genocide with its geographical coverage (from Cilicia to Baku), was a consequence of the implementation of a comprehensive pan-Turkic program.

There are numerous references to the issue in the historical literature, though the comprehensive study of ethnic cleansing and genocidal policies of Armenians in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, has not been the subject of a separate study.

Key words: *Eastern Cis-Caucasus, Baku province, left bank of Kur, Pan-Turkism, ethnic cleansing, xenophobia, genocide, deportation.*

ЭТАПЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ЭТНИЧЕСКИХ ЧИСТОК АРМЯН И ГЕНОЦИДАЛЬНОЙ ПОЛИТИКИ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ (XI-XX ВВ.) (ПРОДОЛЖЕНИЕ ВТОРОЙ ЧАСТИ)

ГЕВОРГ СТЕПАНЯН

*заведующий отделом истории армянских колоний и
Дiasпоры Института истории НАН РА,
доктор исторических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – на основе разнообразных источников (архивные документы, статистические материалы, периодическая печать, тематическая литература) представить причины и этапы осуществления этнических чисток и геноцидальной политики по отношению к коренному армянскому населению Восточного Закавказья в течение XI-XX вв. на территории, простирающейся от долины р. Куры до Апшеронского полуострова.

Работа изложена с применением принципов сравнительно-исторического анализа, сопоставительного изучения фактов. Степень достоверности и подлинности источников уточнена нами путем их всестороннего исследования.

На основе сопоставления фактов история проблемы представляется следующими этапами: политика этнических чистки и погромы по отношению к армянам Восточного Закавказья в XI-XVIII вв., когда регион подвергался захватническим набегам и установлению господства турок-сельджуков, монголо-татар, Тамерлана, кочевых туркменских племен кара-коюнлу и ак-коюнлу, кзлбашей, а также последовавшими за всем этим турецко-персидским войнам, походам суннитов лезгинов, Надир-шаха и Ага Могамед хана. Вследствие всего этого определенная часть армянского населения была насильственно депортирована из родных очагов или вынужденно приняла веру мусульманских захватчиков. Следующий этап этнических чисток и погромов армянского населения происходил в период армяно-татарских столкновений 1905-1906 гг. Затем политика этнических чисток и геноцида осуществлялась уже на государственном уровне мусаватистским режимом искусственного образования, именуемом «Азербайджан», в 1918-1920 гг., и наконец – в период советского власти в 1920-1990 гг.

В статье обосновывается факт, что коренное армянское население края было подвергнуто этническим чисткам и геноциду на своей родине, также, как младотурки осуществили геноцид западных армян в 1915-1916 гг. в Западной Армении. Следовательно, эту политику следует квалифицировать как продолжение и составную часть политики геноцида армян, так как Геноцид армян в своем географическом охвате (от Киликии до Баку) был следствием реализации единой программы пантюркизма.

Хотя в исторической литературе есть неоднократные обращения к рассматриваемой проблеме, однако она не становилась предметом отдельного всеобъемлющего исследования.

Ключевые слова: *Восточное Закавказье, Бакинская губерния, левобережье Куры, пантюркизм, этнические чистки, геноцид, депортация.*

**Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ
ԱՁԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ***

ՀՏԴ 36:373:94(479.25):396:80

DOI: 10.52063/25792652-2021.4-35

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
nairahambardzumyan@yahoo.com

Ուսումնասիրության նպատակն է քննել 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում ձևավորված հայոց ազգային, խնամակալական-հումանիտար ընկերությունների ու վարժարանների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում:

Մեր խնդիրն է բարեգործական ընկերությունները ըստ գործունեության բնույթի (խնամակալական-բարեգործական հարցեր լուծելը, որբախնամության ու աղքատախնամության, այրիներին և որբերին աշխատանքով, աղքատներին հազուստով ու սննդով ապահովելն ու օգնելը, պատերազմում վիրավորված զինվորներին բժշկական ու դեղորայքային օգնություններ ցուցաբերելը) դիտարկելը:

Կիրառել ենք ֆենոմենոլոգիական (իմաստաբանական և տիպաբանական ընթացակարգը, առանձնահատկությունները, դերը, նշանակությունը և ազդեցության ոլորտները սոցիալ-հասարակական ու քաղաքական կյանքում, հասկացման մեթոդաբանությունը) և պատմահամեմատական (ավանդական արժեքների և կողմնորոշումների վերանայումը, գրական զարգացումների հետագիծը) մեթոդները:

Կանանց սոցիալական դերակատարության շուրջ դատողությունները ըմբռնելի են հատկապես կանանց կողմից հիմնադրված ազգային-բարեգործական միությունների ու ընկերությունների միջոցով իրականացվող աղքատախնամ ու բարեգործական աշխատանքների դիտարկման, կրթական ու դաստիարակչական գործունեության ծավալման համատեքստում:

Համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվում է գաղափարը, թե վերոնշյալ ընկերությունների գերնպատակը սոցիումի բարենորոգությունն էր: Ուսումնասիրությունը կարևոր է և արդիական ոչ միայն բարեգործական ընկերությունների ու վարժարանների համակարգման, այլև հայագիտության մեջ կանանց հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ բարեգործական ընկերություններ, Կ. Պոլիս, սոցիալական դերակատարում, կանանց հիմնախնդիր, միություններ, ազատագրություն, սահմանադրություն, իրավահավասարություն:

* Հոդվածը ներկայացվել է 26.11.2021թ., գրախոսվել՝ 11.12.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ներածություն

Կանանց շարժումը 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում եղել և մնում է քիչ ուսումնասիրված, թեպետ պետք է խոստովանել, որ կանանց թեման հետաքրքրում է ուսումնասիրողներին: Մամուլում տպագրվում էին եվրոպացի կանանց ճաշակի, նորաձևության, էթիկայի, բարեվարքության, գեղագիտության հիմնախնդիրները ամփոփող առանձին կյուլթեր ու բանախոսություններ, որոնք հետապնդում էին արևմուտքի կանանց շարժման օրինակով սոցիումը բարեփոխելու, առողջացնելու և օսմանյան կայսրության հայրիշխանական սոցիումում կանանց և աղջիկների կրթության և դաստիարակության, իրավունքի, հասարակական գործունեություն ծավալելու հիմնախնդիրները, ինչպես նաև *կին-տղամարդ իրավահավասարությունը* (առաջին հերթին՝ խոսքի, ձայնի իրավունքը) վերականգնելու և կանանց ազատագրման գործընթացները կարգավորելու նպատակները:

Մամուլում տպագրվում էին ոչ միայն արևմուտքում (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ևն) բնակվող կանանց իրավունքները հստակեցնող հոդվածներ, այլև լրջորեն քննարկվում էին Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Կ. Պոլսում բնակվող հայ կանանց հիմնախնդիրները: Արևմտահայ կանայք տեղեկացված էին եվրոպացի կանանց իրավունքների շուրջ տեղի ունեցող շարժումների մասին, սակայն դեռևս 1850-ական թվականներին որևէ հասարակական կազմակերպության շուրջ համախմբվելու հայտ չէին ներկայացրել:

19-րդ դարի առաջին կեսին Կ. Պոլսում հիմնված հասարակական ընկերությունների ու միությունների հիմնադիրները տղամարդիկ էին, ինչը պայմանավորված էր օսմանյան հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց իրավունքների անհավասարությամբ: Այդ ընկերությունների ու միությունների կանոնադրությունների միջոցով սահմանվում էին նաև գործունեության բնույթը և անդամագրության պայմանները, ըստ որոնց՝ ընկերության անդամ կարող էին դառնալ միայն չափահաս տղամարդիկ, որոնք հնարավորություն ունեին վճարելու սահմանված ամսական անդամավճարը: Կանայք կարող էին անդամագրվել, սակայն առանց ընկերության կամ միության ժողովներին մասնակցելու իրավունքի: Այդօրինակ կարգ էր գործում մասնավորապես 1846 թվականի մարտի մեկին Կ. Պոլսի Բերա թաղամասում Ռափայեյան և Մուրադյան վարժարանի «Հայ կաթողիկե երիտասարդներու» շարժման հիմնադրած «Համագգեաց ընկերությունում» (Պողոսեան 55), որի կանոնադրությունը սահմանում էր՝ «Ընկերութեան անդամ կրնային ըլլալ նաեւ տիկիներ՝ առանց ժողովքներու մասնակից ըլլալու իրավունքի (կանոն 6)» (Պողոսեան) կամ 1846 թվականի մայիսի մեկին հիմնադրված «Նարեկեան Ընկերութիւնում», որի ջանքերով «Բերայի մեջ կը կառուցուի Նարեկեան վարժարանը» (Պողոսեան 56-57):

Արևմտահայության ներքին կյանքը կանոնակարգող սահմանադրության¹՝ 1863 թվականի մարտի տասնյոթի վավերացումից և նույն թվականի մարտի քսանի

¹ 1863 թվականին Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներից ընտրված մարմինների՝ Ազգային, Հոգևոր և Գերագույն ժողովների համաձայնությամբ կազմվում է Ուսումնական խորհուրդ, որի անդամներ Նահապետ Ռուսիյանը, Գրիգոր Օտյանը, Նիկողայոս Պայլանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Կարապետ Ութունյանը, Գրիգոր և Մկրտիչ Աղաթոն եղբայրները 1857 թվականին մշակում են կրոնական, ազգային, մշակութային, հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն, որը Նահապետ Ռուսիյանի առաջարկով կոչվում է Սահմանադրություն, քանի որ գրվել էր բեզիական սահմանադրության գլխավոր սկզբունքների հիմքով և կրում էր 1848 թվականի Ֆրանսիական հեղափոխության գաղափարական ազդեցությունը: Ազգային Սահմանադրությունը, որպես քաղաքական փաստաթուղթ, կարգավորում էր հայոց ազգային, հոգևոր, կրթական գործընթացները: 1860 թվականի մայիսի քսանչորսին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ընդունում և վավերացնում է Սահմանադրությունը, քանի որ Կ. Պոլսի հայոց պատրիարքը հայտարարվում էր *ազգի գլուխը*,

ընդունումից հետո հասարակական-քաղաքական, կրոնական և մի շարք այլ խնդիրներից բացի, սահմանվեցին նաև կանանց իրավունքները՝ տղամարդկանց հավասար կրթություն ստանալու, մշակութային կյանքում ակտիվ դերակատարում և սոցիալական ապահովություն ունենալու, ինչպես նաև կրթական, հասարակական, բարեգործական, դաստիարակչական, խնամակալական, հովանավորչական և այլ գործունեություններ ծավալելու ուղղություններով՝ «Ուսումնական խորհրդոյն պաշտոնն է՝ Յայոց Ազգին դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնքն են Ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած Ընկերութիւններուն խրախոյս տալ և ձեռննտու ըլլալ, դպրատանց դաստիարակներուն կացութիւնը լաւցունելու և ապագայն անդորրելու ինձամ տանել, Ազգին մէջ յաջողակ և քաջահմուտ դասատուներ հասցունելու, և դպրոցական դասագիրքեր պատրաստելու ջանք և փոյթ ունենալ» (Ազգային Սահմանադրութիւն Յայոց 29-30):

Ազգային Սահմանադրութեան գոյությունը, թեպետ թվացյալ, բայց և այնպես առաջընթացի հույսեր և զարգացման հնարավորություն էր արթնացնում հատկապես կանանց շրջանում, քանի որ կայսրության հայաշատ քաղաքներում սկսեցին բացվել աղքատ կամ ոչ պատշաճ հնարավորություններ ունեցող ընտանիքների աղջիկների համար օրիորդաց կամ սանուհյաց վարժարաններ ու դպրոցներ: Արդեն գործող կամ նորաստեղծ այդ վարժարաններին ու դպրոցներին կից արագորեն ստեղծվեցին հասարակական նոր ընկերություններ ու բարեգործական միություններ, որոնց հիմնական նպատակը հայ կանանց ու աղջիկների կրթադաստիարակչական գործն էր, հագուստի, գրեմական պիտույքների հոգածությունը, ֆինանսական միջոցներով ապահովելը, աղքատներին բժշկական և հումանիտար օգնություններ ցուցաբերելը, թեպետ ինչպես վերը նշվեց, սկզբնական շրջանում հայ կանանց կրթական, դաստիարակչական, բարեխնամական գործունեություններին նպաստող ընկերությունները և դրանց բարերարները տղամարդիկ էին: Չնայած այս ամենին՝ հայ մտավորականությունը արագորեն ըմբռնել էր հարցի ձևական բնույթը և գիտակցում էր, որ այն առավելապես պատրանք է, քան իրականություն:

19-րդ դարի երկրորդ կեսին օսմանյան բռնատիրության ժամանակաշրջանում կանանց ներգրավումը իրավունքների ու ազատագրության համար մղվող պայքարում և սոցիոմի գարգացման հիմնախնդիրներում ընթանում էր երեք ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրում հայ կանայք առաջնորդող դերակատարություն ունեին. **ա) սոցիալ-հասարակական և հումանիտար-մեկենասական** (դերակատարությունը սոցիոմի գարգացման գործընթացներում, հայկական ընկերությունների և հասարակական կազմակերպությունների ձևավորումը, դրանորումները և աստիճանական զարգացումները, դրանց դերն ու նշանակությունը), **բ) կրթադաստիարակչական և գրական-մշակութային** (դերակատարությունը սոցիոմի կրթության և դաստիարակության ոլորտներում, գրական ընթացքը, գրական ամսագրերը), **գ) ազգային-ազատագրական և քաղաքական** (հայդուկային շարժումը):

Իսկ մասնավոր պարագաներում *միջևորդ* օսմանյան պետության և արևմտահայության փոխհարաբերություններում: Սուլթանական կառավարությունը, սակայն, չի շտապում վավերացնելու այն և աստիճանաբար, հետագա երեք տարիների ընթացքում հասնում է էական կրճատումների (հողվածների թիվը, երեսփոխան-պատգամավորների, հատկապես՝ գավառները ներկայացնողների քանակը), որից հետո միայն վավերացնում է 1863 թվականի մարտի տասնյոթին: Վերաքննված սահմանադրությունը Ազգային ընդհանուր ժողովն ընդունում է 1863 թվականի մարտի քսանին:

Ազգային, ինսամակալական-հումանիտար ընկերությունների և վարժարանների դերակատարությունը 19-րդ դարի երկրորդ կեսի Կ. Պոլսում

Հայ կանանց գործունեությունը սոցիալ-հասարակական տիրույթում և դրանով վերոնշյալ հարցի բարձրաձայնումը սկզբնավորվեց 1860-70-ական թվականներին, որին նպաստում էին Եվրոպայից ներթափանցող կին-տղամարդ իրավունքների հավասարության գաղափարները: Կանայք սկսեցին ներգրավվել հասարակական գործընթացներում՝ միաժամանակ շարունակելով աշխատել կանանց ազատագրման հիմնախնդիրների վրա, թեպետ կնոջ սոցիալական դերակատարությունը ըմբռնելի էր նրանց առաջադիմական հայացքների և ժամանակի քաղաքական ու գրական-մշակութային երկխոսությունների համատեքստում, հետևաբար բարոյական սկզբունքները նույնպես դիտարկելի են ժամանակի քաղաքական իրադարձությունների գնահատման տիրույթում: Վերը նշված գաղափարները առաջին կին խմբագիր, գրող Էլպիս Կեսարացյանը առնչում է կանանց կողմից հիմնադրվող ազգային-բարեգործական միություններին և ընկերություններին և դրանց միջոցով իրականացվող բարեգործական աշխատանքներին՝ «Այժմ ուրախությամբ սրտի կը ցանկամ յիշել մեր այժմեան մեկ քանի Ազնվաշուք եւ Ազատամիտ Տիկնանց գովելի օրինակը, որք իրենց քաջարթուն մտօք ընկերութեան կարեւորութիւնը ճանչելով յօժարեցան նոյն գեղեցիկ պաշտօսին առաջնորդ ըլլալ, որոց վսեմ Ազգասիրութեան շարժառիթ համարելով արժանապէս գովեստից նպատակ հանդիսացած են: Նոքա իրենց ջանքերը կամեցան երկու կերպ կարօտելոց նուիրել որք նոցին գթասեր ինամոց եւ քաջութիւն պաշտպանութեան կարօտ էին, մէկն է Հիւանդանոցի խղճալի անձինք եւ միւսը Խասիգիւղի եւ Միջագիւղի դպրոցի աշակերտուհիք, որք բաւական ժամանակ է նոյն Ազնուուհեաց ինամքին տակ պաշտպանելով իրենց կարեւոր շահերը կը վայելեն» («Կիրթառ» 7-8):

Ընկերություններ, որոնց նպատակը ինսամակալական-բարեգործական բնույթի հարցերի լուծման, որբախնամության ու աղքատախնամության, այրիներին ու որբերին աշխատանքով, աղքատներին հագուստով ու սննդով ապահովելու և օգնելու ազգանվեր քաղաքականության իրականացումն էր:

1859 թվականին *Օրթագլուղի Հռիփսիմյան վարժարանի* հիմնադրմանը զուգահեռ տեղի հայ կանայք, վարժարանի կարիքները հոգալու նպատակով հիմնում են «Խնամակալուհի Տիկնայք» ընկերությունը, որը, ըստ Հայր Եփրեմ Պողոսյանի (Պողոսեան 189-190), ունեցել է տարբեր անվանումներ՝ «Տիկնայք Խնամակալութիւն», «Խնամակալ Տիկնայք» («Մուսայք Մասեաց») կամ «Խնամակալուհի Տիկնայք»: Ուշագրավ են այս ընկերության հաջողությունների և ազգանվեր գործունեության մասին Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» թերթի արձագանքները՝ «...Օրթագլուղի Հռիփսիմեանց վարժարանին ...աղջկանց դաստիարակութեան սկզբունքը լրջարար 'ի գործ դնելու ձեռնարկուեր է: Վարժարանն՝ ինչպես յայտնի է, տիկնայց ինսամակալութեան մը հոգաբարձութեանը յանձնուած է, որ իր պարտքը խղճի մտօք կատարեր և իր տեսչութեան ներքև եղած հաստատութիւնն ազգերնուս մէջ գրեթէ աղջկանց վարժարաններուն առաջինն ըրեր է: Խնամակալ տիկնայք՝ ըստ մեծի մասին կրնանք ըսել նաև բոլորովին իրենց անձնական ջանիքը նոր շէնք մը կանգնել և գայն բարոյապէս և նիւթապէս զարգացնելու յաջողեր են» («Մասիս» 811, 3): Սույնը ապացուց է, որ կանայք ոչ միայն իրենց գործունեությամբ օգնում էին ուրիշներին, այլև զարգացնում էին սեփական գործարարական որակները և ձեռք էին բերում տնտեսություն վարելու հմտություններ: Բարեգործական ընկերությունների հիմնադիրները հիմնականում գրագետ կանայք էին, որոնք իրենց գործունեությունը սկսելիս հույսը դնում էին բարի համբավի և հասարակության մեջ ունեցած ազդեցության վրա:

«Խնամակալուհի Տիկնայք» ընկերությունը 1867 թվականից գլխավորում էր Վահանեան Նազը¹ տիկինը՝ «Գոհութիւն և շնորհակալութիւն ուրեմն Օրթագիւղի ինամակալ տիկնանց և մանավանդ Վահանեան Նազը (Նազը Վահան) տիկնոջ, որ իր ուսումնասէր բարուքը Հռիփսիմեանց վարժարանին Մեկենասն եղած է» («Մասիս» 811, 3), որ բացի մեկենասական ու ինամակալական գործունեությունից վարում էր նաև բարեկորոզչական ու կրթադաստիարակչական աշխատանքներ, որոնք տեսանելի էին Հռիփսիմեանց վարժարանի սաների ուսումնառության մակարդակով՝ «առաջին դասու աշակերտակցաց (Օրիորդք Տիրուհի Արզուման, Վիրգինէ Աշնան, Էլպիս Ագարեան, Սաթենիկ Պետան, Թագուհի Յովակիմեան, Նելտար Կարմիրեան, Սոփիա Փանոսեան, Սոփիա Ճանիկեան)»: Ասոնք իրենց մրցանակներու հետ դափնի պսակներ ալ առնելու արժանացան» («Մասիս» 3), հանդեսի հաջողված ելույթն էր, որից այնքան տպավորված է հողվածի հեղինակ Պ.Վ. Պառնասեանը, որ, համեմատության մեջ դնելով տղաների վարժարանի անբարեկարգ վիճակը, նկատում է՝ «Ասոր թէև նախ հաւատալիս չեկաւ, սակայն երբ հրապարակաւ խոստովանուեցաւ մանչերու դպրոցին ետ մնալուն պատճառները՝ պատճառներ որք թաղեցուց և մանաւանդ ծնողաց խորին ուշադրութեան արժանի են, ալ տարակոյս չի մնաց: Ուրեմն յամենայն սրտէ կը բաղձանք որ այս բարեկարգութիւնն օր յառաջ կատարի, ապա թէ ոչ՝ հարկ կըլլայ ենթադրել որ Օրթագիւղի մէջ դաստիարակութիւնը խոտորակ կերպիւ կը մատակարարուի և թէ քիչ ատենէն օրիորդները մանչերէն աւելի ուսումնական պիտի ըլլան: Եթէ այրերը ինամակալ տիկնանց չափ ալ չեն կրնար բարեկարգ վարժարան մը պահել, ինչո՞ւ համար տեղերին տիկիններ դնելով իրենք ետ չեն քաշուիր» («Մասիս» 3): 1864 թվականի մարտի 20-ին Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասի հայ տիկնայք հիմնում են «Աղքատախնամ տիկնանց ընկերությունը», որը զբաղվում էր համայնքի աղքատ անդամներին ու հիվանդներին բժշկական ու սոցիալական աջակցություն ցուցաբերելով: Հիմնական նպատակն էր՝ «Անօգնական հիւանդ տառապելոց բժիշկ հոգալ, չքաւոր եւ անկարող ծերերը նիւթապէս մխիթարել, բազմաթիւ մանր տղայոց մայր եղող այրի տառապեալ եւ անօգնական կանանց նպաստամատոյց ըլլալ, վերջապէս հոգ տանիլ ըստ իւր կարողութեան աղքատին թշուառ վիճակը լավացնելու» («Մասիս» 636, 2): Այդ մասին մասնավորապէս կարդում ենք Կ. Պոլսի «Մասիս» թերթի 636-րդ համարում՝ «...ուրախութեամբ սրտի բոլոր ազգայնոց կը փութամ հաղորդել «Աղքատախնամ Ընկերութիւն Տիկնանց» կազմուիլը, որ գիւղիս ազգասէր Տիկնայք հաստատեցին՝ իրենց դիտաւորութեան նպատակ ունենալով աղքատը իւր թշուառ վիճակէն ազատել: Արդարեւ չնաշխարհիկ ձեռնարկութիւն մը, որուն դրօշակիրը զթոյ եւ ողորմութեան ազնուական զգացումն է» («Մասիս» 2): Այնուհետև աղքատախնամ ընկերության հայտարարության մեջ պարզում ենք՝ «ընկերութիւնը իւր բոլոր գործողութիւնները 12 տիկիններէ բաղկացեալ Տնօրէն ժողովոյ մ' անմիջական հսկողութեանն յանձնած է: Յիշեալ Տնօրէն ժողովը Սահմանադրապէս կազմեալ է իրեն մէջ ունենալով ատենապետ, տնօրէն, գանձապետ եւ ատենադպիր: Ահաւասիկ անդամակից ազնիւ Տիկնանց անունները՝ Տիկին Ազապի Եուսուֆեան, Ալլէմ Չայեան, Ալլէմ Պահիկեան (տնօրէն), Աննիկ Ճանըմեան, Բուբուլ Երլորդեան, Եղիսաբէթ Եուսուֆեան (գանձապետ), Էֆտիկ Սինանեան, Իսկուհի

¹ Նազը Վահանը (1814-1884) ոչ միայն «մայր էր եզական. մայր պաշտելի և փարելի», այլև ժամանակի ամենազարգացած և հարգված հայ կանացից մեկը: Նա կեսարացի էր, Արզումանյան ամիրայի դուստրը: Տիրապետելով ֆրանսերեն ու հունարեն լեզուներին և ծանոթ լինելով եվրոպական գրականությանը՝ Նազը Վահանը շատ լավ գիտեր նաև հայերենը, ինչպես Մ. Օրմանյանն է պատմում, «կարող կը լինէր իբրև ընտիր ոք հայկաբան դասախոս յուր սիրասունը թռնեկաց ոսկեղեն դարուն լեզվային գանձուց գեղեցկությունները հաղորդել և գաղտնիքները բացատրել»: Նազը Վահանը մեծ ջանքեր է գործադրել արևմտահայ կրթական-լուսավորական շարժումը ծավալելու գործում. նա է հիմնել Միջագյուղի «Ս. Հռիփսիմյանց» (Ս. Տյուսաբը գրում է, թէ իր մայրը Հռիփսիմյան վարժարանի սանուհիներին սիրել է «անհուն սիրով»՝ «բազում տարիներ դառնալով նրանց վահանը») իգական նշանավոր վարժարանը (1859) և Աղքատախնամ տիկնանց ընկերությունը (1864), մեծ օգնություն է ցուցաբերել նաև Գալֆայան որբանոցին, Նարեկյան և Համազգյաց վարժարաններին:

Գաբրիելեան, Նազը Վահանեան (ատենապետ), Նեմգար Պուլկուրեան, Նունեա Կարմիրեանն, Տիրուհի Փափագեան, օրիորդ Սրբուհի Վահանեան ((Տյուսաբ) օգնական ատենադպիր)» («Մասիս», 2): Այս ժողովի տիկիներից ոմանք «Սրբոց Հռիփսիմեանց» վարժարանի ինսամակալներն էին, որոնք հանձն էին առել «աղքատաց թիւն օր աւուր» կրճատելու: Հռիփսիմյան վարժարանը նաև ընկերության կենտրոնատեղին էր: Ընկերությունն ուներ տասնվեց կետերից կազմված «Հիմնական Կանոնք» («Մասիս» 640, 2), ըստ որի՝ ընկերությունը ղեկավարում էր տնօրենների խորհուրդը, որի իրավասության տիրույթում էր տարին մեկ անգամ ընդհանուր ժողով հրավիրելը:

Ընկերությունների գործունեությունը բաց էր ինչպես հասարակության, այնպես էլ իշխանությունների համար, մամուլում հաճախ են հանդիպում որևէ ընկերության գործունեության մասին հայտարարություններ, տարեկան հաշվետվություններ, կանոնագրեր, խնդրագրեր ևն: Այդպես՝ «Աղքատախնամ տիկնանց ընկերությունը» մեծ օգնություն է ցուցաբերել «Գալֆայան» որբանոցին, «Նարեկյան» և «Համազգայաց» վարժարաններին: Այդօրինակ գործունեություն ծավալելու համար է, որ ազգասեր ու բարեգործ Նազը Վահանը և մյուս տիկիները վայելել են ժամանակակիցների սերն ու հարգանքը: Սույն ժամանակահատվածում կարելի է միանգամայն հստակ տեսնել ինքնագիտակցության զարթոնքը կանանց մեջ, որոնք այժի են ընկնում իրենց մտածողությամբ, խելքով, աշխարհը ըմբռնելու և փոխելու ունակությամբ, քանի որ իսկական մտավորականներ էին: «Աղքատախնամ տիկնանց ընկերությունը» իր գործունեության ընթացքում ձեռք բերած անդամավճարներից ու բարեգործական միջոցառումներից հավաքած միջոցներով բնակարաններ է հատկացրել ինը աղքատ ընտանիքների, բժշկական օգնություն է ցուցաբերել բոլոր կարիքավոր հիվանդներին, աղքատության նպաստ հատկացրել ութ ընտանիքի, վերանորոգել է երեք աղքատաբնակ տուն, շատ կարիքավորների հատկացրել է հագուստներ, բաժանել է հունանկիտար օգնություն (բրինձ, կարագ, հավկիթ), ամուսնացրել է կարիքավոր ընտանիքների աղջիկներին և այլն (Պողոսեան 195): Ընկերության գոյության ընթացքում հաջողվել է նաև սեփական միջոցներով Հռիփսիմյան օրիորդանց վարժարանի համար նոր շենք կառուցել և ֆինանսական ու բարոյական աջակցություն ցուցաբերել վարժարանի աշակերտուհիներին: 1866 թվականի Բարեկենդանի տոներին Օրթագյուղի մի խումբ երիտասարդներ ինը թատերական ներկայացումներ են բեմադրել և խաղացել ի նպաստ «Աղքատախնամ տիկնանց ընկերութեան», որոնցից վերջինի ժամանակ ազգասիրական ճառով ելույթ է ունեցել Մկրտիչ Պեշկոթաշյանը՝ ոգևորելով ներկաներին: Ընկերության հիմնադրման առաջնայնության առիթով գոյություն ունեն որոշակի տարակարծություններ. Արշակ Ալպոյաճյանը գրում է, թե սույն ընկերությունը «կանանց ձեռքով հիմնուած առաջին Ընկերութիւնն» է, սակայն Վիեննայի Մխիթարյան միաբանության Հայր Եփրեմ Պողոսյանը պնդում է՝ «Ինչպես այլուր («Յառաջ») ապացուցած ենք՝ Օրթագիւղի «Աղքատախնամ Ընկերութիւն Կանանց»-ը՝ Կանանց ձեռքով հիմնուած առաջին Ընկերութիւնը չէ: Առկէ 17 տարի առաջ Խասգիւղի մէջ հայ տիկիներէ կազմուած Ընկերութիւն մը կայ» (Պողոսեան 196):

1881թվականի հուլիսի 24-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքի հորդորով «Հայ Կաթողիկէ Տիկնանց» միությունը ստեղծել է «Գթասեր տիկնանց ընկերությունը», որի նախագահ է ընտրվել տիկին Տիրուհի Մարյանը: Ընկերությունը զբաղվել է Բանկայթիի Սուրբ Հակոբ հիվանդանոցի աղքատ, այրի ու որբ հիվանդներին խնամելով, նախատեսել է որբանոցներ և արհեստանոցներ բացել հայաշատ գավառներում («Թերճեմանը Էֆքեար»):

1892 թվականին «Գթասեր տիկնանց ընկերության» ֆինանսական աջակցությամբ Խարբերդում բացվել է օրիորդաց վարժարան: Ընկերության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը տարին մեկ անգամ Կ. Պոլսում կազմակերպվող ընդունելություն-համերգից ստացած հասույթն էր («Հայրենիք»): Հայ

կանանցից ոչ բոլորն են գործել հասարակության կողմից սահմանված վարքագծի մոդելներով, յուրացրել են նոր սոցիալ-հասարակական դերեր, ստեղծել անհատականության նոր տեսակ:

Եզրակացություն

Հայ կանանց հասարակական-քաղաքական, կրթական, գրական-մշակութային դերի ակտիվացումը սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, որին Էապես Նպաստում էին հայաշատ քաղաքներում (հատկապես՝ Կ. Պոլսում) կրթական բարեգործական խնամակալական, հումանիտար, աղքատախնամ միությունների և օրիորդաց դպրոցների ու վարժարանների հիմնումը, որոնք գործում էին ուսյալ և կրթյալ կանանց կողմից (Նազլը Վահան, Սրբուհի Տյունաթ, Չապել Ասատուր, Արշակունիի Թեոդիկ) ստեղծված հասարակական կազմակերպությունների ազգօգուտ գործունեության արդյունքում:

Այդ հաստատությունների շրջանավարտները հետագայում դառնում էին առաջադեմ գաղափարների տարածողները: Հայ մտավորական կանայք ստեղծում էին նորանոր բարեգործական, կրթական, աղքատախնամ ու բարեխնամ, նպաստամատույց ընկերություններ, որոնք առավել նպատակաուղղված էին, կանոնակարգված, թեպետ իրենց գործունեությամբ քիչ էին տարբերվում միմյանցից: Վերոնշյալ գործընթացները կարևորվում են պոլսահայ հասարակության սոցիալ-քաղաքական, գրական-մշակութային և կանանց Էմանսիպացիայի հիմնախնդիրները ըմբռնելու տեսանկյունից: Այս և նման իրողությունները մեծապես նպաստում էին սոցիումում կանանց իրավունքների ձեռքբերման, ազատագրության, կրթության և դաստիարակության հիմնախնդիրները լուծելուն: Համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվում է գաղափարը, որ վերոնշյալ ընկերությունների գերնպատակը *սոցիումի բարենորոգությունն* էր: Կանանց սոցիալական դերակատարության շուրջ դատողությունները ըմբռնելի են հատկապես կանանց կողմից հիմնադրվող ազգային-բարեգործական միությունների և ընկերությունների միջոցով իրականացվող աղքատախնամ ու բարեգործական աշխատանքների դիտարկման, կրթական ու դաստիարակչական գործունեության ծավալման համատեքստում:

Օգտագործված գրականություն

1. Ազգային Սահմանադրութիւն Հայոց (Նիզամնամէի Միլլէթի Էրմէնիան), Կ. Պոլիս-Սթանպոլ, Ի տպարանի Յ. Միլիհէնտիսեան, 1863:
2. «Թերճէմանը Էֆքեար», 1880, թիւ 854:
3. Խառնատյան Ալբերտ, Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 2008, թիվ 2(187):
4. Կեսարացեան Էլպիս., «Ընկերութ. օգտակարութիւնը», «Կիթառ», 1862:
5. «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892 մարտի 7, թիվ 165:
6. «Մասիս», Կ. Պոլիս, 1867, թիւ 811:
7. «Մասիս», 1864, Կ. Պոլիս, թիւ 636:
8. «Մասիս», 1864, Կ. Պոլիս, թիւ 640:
9. «Մասիս», 1873, Կ. Պոլիս, թիւ 1374:
10. «Մուսայք Մատեաց», Կ. Պոլիս, թիւ 1858:
11. «Յառաջ», Պարիս, 1952, թիւ 2129:
12. Պողոսեան Յ. Եփրեմ Վ., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հ. Ա, 1957:
13. Պողոսեան Յ. Եփրեմ Վ., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հ. Բ. 1963:
14. Պողոսեան Յ. Եփրեմ Վ., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հ. Գ. 1969:

Works Cited

1. Azgayin Sahmanadrut'iun Hayoc (Nizamname'i Mille'ti E'rme'nian), K. Po'lis-St'anpo'l, I tparani Y. Miwhe'ntisean, 1863: [Armenian National Constitution. Under the Patriarchate of T. T. Matteos A, the Catholicos of All Armenians. Under the substitution of Patriarchal See of Constantinople Archbishop Stepannos Nikomedi. Publ. House: Y. Myuhntesean, Constantinople. 1863. [In Armenian].
2. «T'e'rtwe'many' E'fqear», 1880, t'iv 854
3. Xar'atyan Albert, Dard'yal arevmtahayeri azgayin sahmanadrowt'yan masin, Patmabanasirakan handes, HH GAA hrat., E., 2008, t'iv 2(187): [Kharatyan A, Again on the Western Armenian National Constitution, Historical-philological Journal, NASRA, Y, 2008, no 2(187)], p 87(81-93):
4. Kesaracean E'lpis., «Y'nkerowt'. o'gtakarowt'iwny'», «Kit'ar'», 1862: [Kesaracean Elpis, «The Benefits of Friendship», «The Gitar'», 1862, no 2.
5. «Hayrenik», 1892, Constantinople, no 165.
6. «Masis», 1864, Constantinople, no 636. (In Western Armenian)
7. «Masis», 1864, Constantinople, no 640
8. «Masis», 1867, Constantinople, no 811.
9. «Masis», 1873, Constantinople, no 1374.
10. «Musayq Masyac», Constantinople, 1858.
11. «Yaraj», 1952, Paris, no 2129.
12. Poghosean, F. Eprem V., Patmut'iun hay mshakout'ayin y'nkerout'iunnerou [History of Armenian cultural societies], Vienna, vol. A, 1957.
13. Poghosean, F. Eprem V., Patmut'iun hay mshakout'ayin y'nkerout'iunnerou [History of Armenian cultural societies], Vienna, vol. B, 1963.
14. Poghosean, F. Eprem V., Patmut'iun hay mshakout'ayin y'nkerout'iunnerou [History of Armenian cultural societies], Vienna, vol. G, 1969.

THE ROLE OF ARMENIAN CHARITIES AND COLLEGES IN THE PROCESS OF WOMEN'S EMANCIPATION IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY IN CONSTANTINOPLE

NAIRA HAMBARDZUMYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Literature after Manuk Abeghian, Senior Researcher,
Ph.D. in Philology, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the study is to examine the role of Armenian national, guardianship, and humanitarian societies and colleges established in Constantinople in the process of women's emancipation in the second half of the 19th century.

In this study societies were viewed according to the *nature* of their activities (solving guardianship and charitable problems, orphanage and poverty care, helping the orphans and widows with work, providing food and clothing to the poor and helping them, providing medicine and medical assistance to soldiers wounded in war).

In this study phenomenology (semantic and typological procedure, peculiarities, role, significance and spheres of influence in socio-political life, methodology of understanding), and historical-comparative (traditional revision of values and orientations, trajectory of literary developments) methods were used.

Conclusions: Judgments about the social role of women are understandable, especially in the context of monitoring of charitable work, educational and upbringing activities carried out by women-based national-charitable associations and companies. A comprehensive study confirms the thesis that the main goal of the above companies was to reform society. The study is important and relevant not only in terms of systematizing charities and colleges, but also in terms of examining women's issues in Armenology.

Keywords: *charitable organizations, Constantinople, social role, second half of the 19th century, companies, emansipation, constitution, equality.*

РОЛЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОБЩЕСТВ И ГИМНАЗИЙ В ПРОЦЕССЕ ЭМАНСИПАЦИИ АРМЯНСКИХ ЖЕНЩИН ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 19 ВЕКА В КОНСТАНТИНОПОЛЕ

НАИРА АМБАРЦУМЯН

старший научный сотрудник

*Института литературы имени Манука Абеяна
Национальной Академии наук Республики Армения,
кандидат филологических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Цель исследования – проанализировать роль армянских национальных филантропических попечительских организаций и гимназий в процессе эмансипации армянских женщин во второй половине 19 века в Константинополе.

Наша задача – рассмотреть организации по *роду их деятельности* (решение вопросов опеки и благотворительности, призрения сирот и ухода за бедными, обеспечение вдов и сирот работой, снабжение неимущих одеждой и продуктами питания, предоставление лекарств и медицинской помощи солдатам, раненым в ходе военных действий).

Для достижения поставленной цели нами были применены следующие методы: феноменологический метод (регламентация, специфика, роль, значение и сферы влияния семасиологии и типологии на социально-общественную и политическую жизнь; методология понятий) и сравнительно-исторический метод (пересмотр традиционных ценностей и ориентиров; траектория литературного развития).

В результате исследования мы пришли к следующему выводу: суждения о социальной роли женщин разъясняются в контексте мониторинга благотворительной, образовательной и воспитательной деятельности женских национально-благотворительных объединений и компаний. Комплексное исследование подтверждает тезис о том, что основной целью вышеперечисленных компаний было реформирование общества. Исследование актуально не только с точки зрения систематизации благотворительных организаций и гимназий, но и с позиции изучения «женского вопроса» в арменоведении.

Ключевые слова: *благотворительные организации, Константинополь, социальная роль, женский вопрос, компаний, эмансипация, конституция, равенство.*

PAN-TURKISM MANIFESTATIONS OF TURKEY-AZERBAIJAN MILITARY-POLITICAL COOPERATION*

UDC 93/94: 560

DOI: 10.52063/25792652-2021.4-44

NELLI MINASYAN

ASPU, Chair of the World History and its Teaching Methods,
Ph.D. in History, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia
minasyan.nelli@yahoo.com

The purpose of this article is to show the dynamics, main goals and objectives of the establishment of military-political relations between Turkey and Azerbaijan. On the other hand, an attempt is made to present the Pan-Turkism manifestations of Turkish-Azerbaijani military-political cooperation, which became more obvious with the signing of the Shushi Declaration.

The issue of the work is to present the process of development of military-political cooperation between Turkey and Azerbaijan and to consider it as a part of the integration programs of the Turkic world, the ideological basis of which is Pan-Turkism. From this point of view, parallels are drawn between the 1996 and 2010 military-political agreements and Shushi Declaration (actually agreement), which were signed between Turkey and Azerbaijan.

This work is written by a combined examination of the facts, applying the principles of historical analysis and comparison.

As a result of the study, it can be argued that the military-political cooperation established between Turkey and Azerbaijan is gradually becoming part of the Turkic integration program. The above-mentioned two military-political agreements represented military-political cooperation between the two countries, as a result of which Turkey managed to establish its full influence in Azerbaijan. But in the Shushi Declaration mentions about the Turkic world, in particular in the name of communications, an attempt is made to ensure the land connection between Turkey and Azerbaijan through the so-called "Zangezur" corridor. The Shushi Declaration signed after the Second Artsakh War, in fact, plans harmonization of the two countries' actions in the spheres of military, security and foreign policy. On the other hand, Turkish-Azerbaijani cooperation is presented to Turkic countries as a successful attempt at integration.

Keywords: Turkey, Azerbaijan, military-political cooperation, Shushi Declaration, Pan-Turkism, Turkic integration, communication.

Introduction

The collapse of the USSR and the emergence of sovereign states in the South Caucasus fundamentally changed Turkey's policy. The South Caucasus was of great economic, strategic and security importance for Turkey. Therefore, Turkey began to take active steps to gain influence in the South Caucasus which he also needed to gain influence in Central Asia. One of his first steps in that direction was the policy of establishing close relations between Azerbaijan and Georgia. However, in the South

* Հոդվածը ներկայացվել է 25.10.2021թ., գրախոսվել՝ 24.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Caucasus, from the very beginning, Turkey preferred Azerbaijan, for obvious reasons. During this period, pan-Turkic programs were again discussed at the state level in Turkey, in which Azerbaijan was given a big place. In fact, it was due to the geographical location of Azerbaijan, as she was the closest of the Turkic countries to Turkey. From the beginning of 1990s, Turkey began to establish relations with Azerbaijan in various spheres, which turned into military-political cooperation.

The Establishment and Strengthening of Turkey-Azerbaijan Military-Political Cooperation

Turkey began to pay close attention to the events in Azerbaijan in the late 1980s, when the collapse of the USSR was obvious. Azerbaijan was characterized by the difficulties of the post-Soviet period, but the Artsakh conflict and the situation around it were a big problem which directly affected on domestic political sentiments. Immediately after independence, Azerbaijan was interested in establishing relations with Turkey. Pan-Turkic discussions took place in Azerbaijan when the National People's Front came to power led by Abulfaz Elchibey. In general the National People's Front established priority relations with the Turkic nations, especially Turkey and she aspired to develop ties with Muslim countries (Cafersoy 70). After the National People's Front comes to power, official Baku declared that Turkey is her main strategic ally and the Turkish and Azerbaijani peoples are one and they are only divided into two different states. The slogan "One Nation - Two States" becomes the main course of Azerbaijan's foreign policy connected with Turkey (Чернявский 227). During Elchibey period the Turkish-Azerbaijani relations entered a qualitatively new phase, based mainly on military cooperation. During this time the First Artsakh war was continuing, and the Azerbaijani detachments launched attacks on the borders of Armenia. As a result, based on the Kars agreement, Baku turned to Turkey for help, by which was launched active cooperation between the sides. In fact, since this period, the Turkish factor has been strengthening in Azerbaijan, both in domestic and foreign policy. This line is further strengthened by the coming to power of Heydar Aliyev in 1993. Aliyev balanced relations between Turkey and Russia, which was conditioned by the defeat in the Artsakh war. The difference of Aliyev and Elchibey in foreign policy realities was in style and strategy, not direction. In fact, the Turkish factor beginning to play a significant role in Azerbaijan since the beginning of 1990's and later it strengthened its position.

Turkey launches new foreign policy strategy called "New Activism" in 1995 (Makovsky 97). Baku also responded to the activity undertaken by Turkey and as a result, the Turkish-Azerbaijani military-political relations began to develop intensively from the second half of 1990's, which was also conditioned by the closer Armenian-Russian relations. Both sides considered military-political cooperation a priority. For the development of military cooperation between Turkey and Azerbaijan was signed Turkish-Azerbaijani military agreement on June 11 1996, according to which the two countries would cooperate in the fields of military training of officer personnel, military industry and technologies. In addition, an agreement was reached on the exchange of military experience and joint military exercises (Шорухов 49) and Turkish Chief of General Staff General İsmail Hakkı Karadayı describes the Turkish-Azerbaijani military cooperation as "new military union" (Արշակյան և Եղիազարյան, «Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունները» 42).

The president of Azerbaijan H. Aliyev went to Turkey by official visit on May 5-8 1997. As a result of the meeting with the President of Turkey, the Presidents of two countries signed a "Strategic Cooperation Agreement", according to which, the existing cooperation in the political, economic, and military and security spheres would gain new

momentum. In the late of 1990s, there were serious tendencies to expand military cooperation between Baku and Ankara. An example of this was the fact that more than 400 Azerbaijani servicemen studied in Turkish educational institutions, and about 70 Turkish officers served in the Azerbaijani army (Гаджиев 354). The military cooperation between the two countries was given the form of a military alliance, which had a clearly anti-Armenian orientation. During this period, Azerbaijan was implementing large-scale military reform programs, in which Turkey's role was enormous.

A new stage of military-political cooperation between Turkey and Azerbaijan began from 1999, when in April Aliyev visit to Ankara. At the end of the visit, Turkey and Azerbaijan signed an agreement on strategic cooperation. The agreement on military cooperation signed between Azerbaijani President Heydar Aliyev and Turkish President Suleyman Demirel stated in particular: Azerbaijan can't make a decision to start hostilities without Turkey's consent; Turkey guaranteed the security of Azerbaijan in case of any aggression and was ready to provide military and political assistance to the latter (Демоян 133). The Turkish-Azerbaijani side in the context of this strategic cooperation was meant three possible enemies: Armenia, Russia and Iran.

The military-political cooperation with Azerbaijan continued and deepened, when came to power Justice and Development Party in Turkey. Commander-in-Chief of the Turkish Armed Forces Ilker Başbuğ made official visit to Azerbaijan in the spring of 2005 where he declared that Turkey will provide serious assistance in the reorganization of the Azerbaijani army (Արշակյան և Եղիազարյան, «Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում» 39).

Between 2008 and 2010 dozens of documents have been signed between the two countries. In November of 2010 when the Turkish Defense Minister was on an official visit to Azerbaijan an agreement on the production of unmanned aerial vehicles was signed, along with a number of other documents (Արշակյան և Եղիազարյան, «Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում» 40).

On August 16, 2010 Turkey and Azerbaijan signed a strategic most important agreement. Under the agreement, Azerbaijan and Turkey were to support each other in "using every opportunity" in the event of a military attack or aggression against any of this countries. It was planned to develop joint military operations plans, to cooperate in the "military-technical" sphere, and conduct joint military exercises and trainings (Abbasov). This pact was signed for 10 years and it would be terminated at the request of one of the sides. It should be noted that on September 15, 2010 "The Declaration on the Establishment of the Strategic Cooperation Council between the Republic of Turkey and the Republic of Azerbaijan" was signed between Ilham Aliyev and Recep Tayyip Erdoğan. In fact, the signing of such an agreement wasn't a surprise moreover it became a logical continuation of the previously signed documents regulating the relations between the two countries in various spheres. On the other hand NATO member Turkey has been a key strategic ally of Baku since her independence and helping her to rebuild and equip the Azerbaijani army.

In April-May of 2011 Turkey and Azerbaijan have signed two important military agreements. The first agreement was signed by Azerbaijani Minister of Defense Industry Yaver Jamalov and Turkish Defense Minister Mehmet Vecdi Gönül. The agreement provided that Azerbaijan will participate in joint producing of "MODERN" rifles and of 105 mm caliber cannons in Turkey. The second agreement was signed by Unal Onsipahioğlu, General Director of the Turkish "MKEK" Company, and Faruh Vezirov, Head of the Military-Technical Cooperation Department of the Ministry of Defense Industry of Azerbaijan (Овсеян и Иванов 71-73). It was intended that the sides would jointly produce 120 mm caliber grenade launchers (Азербайджан и Турция договорились продолжить сотрудничество в области вооружений). On March 10, 2011 the Turkish

Parliament ratified the "Turkish-Azerbaijani Agreement on Strategic Cooperation and Mutual Assistance", and on December 21 of the same year it was ratified by the Azerbaijani Parliament.

Thus, the relations established between Turkey and Azerbaijan gradually turned into military-political cooperation. The military-political agreements increased Turkey's influence in Azerbaijan. On the other hand, Turkey started the reconstruction of the Azerbaijani army and in the context of which attention was also paid to the organization of the military industry.

The Shushi Declaration and the Manifestations of Pan-Turkism

On September 27, 2020 Azerbaijan launched a large-scale war against the Artsakh Republic. Turkey provided great military and political support to Azerbaijan during the war and even transporting mercenaries from Syria and other places to Artsakh (Butler). The Turkish-Azerbaijani tandem was able to succeed in this war and the Artsakh Republic was forced to sign a capitulation agreement on November 9, 2020. During the war, Turkey stood out with military rhetoric, showing unconditional military support to Azerbaijan. This rhetoric of Turkey continues even after the war. The victory of Azerbaijan in the war with the support of Turkey finally strengthens her position in this country especially in the military sphere. Turkey has turned Pan-Turkism plans into integration programs, whose goal is to unite the Turkic world through political, economic and cultural integration programs. In this context, Turkey at first fully implemented the integration programs towards Azerbaijan and actually succeeded. On the other hand, the Pan-Turkic circles began to present the success in Artsakh as an important achievement. Based on this events, the integration of the Turkic world is again widely discussed which initiating by Turkey and as a best example was mentioning Turkey-Azerbaijan relations. It is important to note that Turkey intends to turn the Turkic Cooperation Council into a Turkic Union, in connection with which work is being carried out (it is expected to take place in November of this year). On the other hand, Turkey President Erdoğan stated that the slogan "one nation-two states" was fully implemented, and put forward the slogan "one nation - six states" about which he talked during the summit in 2019 (Mirzayev).

Turkey and Azerbaijan have expressed their success and deepened strategic cooperation through the Shushi Declaration. On June 15, 2021 Erdoğan visited occupied Armenian city Shushi and the sides signed this document which represents the Turkish aspirations towards the South Caucasus (Tashjian). With the Shushi Declaration, Erdogan once again demonstrated his imperial ambitions, which are based on the ideology of Pan-Turkism.

The Shushi Declaration mentions the main areas where the two countries should act together, in particular, it relates to military-political cooperation and foreign policy. The sides "consider it possible to combine the potential and opportunities of the two countries in the political, economic, cultural, educational, social, youth and sports spheres to protect common interests". The declaration states that the two countries will coordinate actions on regional and international strategic issues, which are of mutual interest. The following provision of the declaration is interesting: "to join the efforts to develop regional and international cooperation aimed at the sustainable development of the Turkic world" (Şuşa Beyannamesi). This means combining the potential of the two countries for the development of the Turkic world. In other words, Turkey and Azerbaijan are the basis for the establishment of the Turkic world or the Turkic Union, as in the case of the EU, when France and Germany established the Union.

Turkey and Azerbaijan emphasize the importance of developing and implementing a joint foreign policy in the declaration. The sides will continue their efforts to strengthen stability and security in the Caucasus region including to restore all economic and transport ties, to normalize relations with the countries of the region and to "ensure lasting" peace. In this context, special attention is paid to the geographical location of the Nakhchivan Autonomous Republic. The sides emphasize the need to coordinate regular bilateral consultations in the field of foreign policy, as they emphasize the actions in this direction within the framework of the Strategic Cooperation Council. The two sides note that they will deepen bilateral cooperation on the basis of solidarity and mutual support, which are related to current international issues and are of mutual interest. Assist each other within international and regional organizations, including the UN, the OSCE, the Council of Europe, the Cooperation Council of Turkic Speaking States and the Organization of Islamic Cooperation (Şuşa Beyannamesi).

The Shushi Declaration also mentions military cooperation and military assistance. Thus, "in the opinion of one of the sides, if there is a danger of aggression or aggression by a third state, which is directed against the independence, sovereignty, territorial integrity, inviolability of internationally recognized borders or security of that state then the parties will hold comprehensive consultations to eliminate that danger or aggression" (Şuşa Beyannamesi). It is also mentioned that the parties will hold regular meetings of the Security Council, which will be related to national security issues.

The Shushi Declaration also mentions the continuation and development of military cooperation. The sides will continue to work together for the modernization of the armed forces of the two brotherly peoples in accordance with modern requirements (İddon). The two sides will encourage the exchange of specialists, which will be aimed at strengthening defense and military security. The sides mentioned to work closely with each other, to increase the military potential of the two countries in the field of weapons and military equipment, as well as modern technologies. The sides declare that the developing military-political cooperation programs between the two countries are not directed against a third country. It should be noted that the military potential of the Turkish-Azerbaijani tandem is directed against specific countries, first of all the Republic of Armenia.

The Shushi Declaration pays special attention to the issue of communications, which is more of a political issue than an economic one. To direct the efforts of the sides to increase the competitiveness of the East-West/Center transport corridor which will pass through the territories of the two countries (Evstratov). The sides notes the opening of a corridor (they mean the Meghri or the so-called "Zangezur" corridor) between the Nakhichevan Autonomous Republic and the western regions of the Republic of Azerbaijan as well as the construction of the Nakhichevan-Kars railway as a continuation of this corridor, which will have a great contribution to the activation of transport and communication between the two countries (Şuşa Beyannamesi). This section states that the sides want to communicate with each other through the so-called "Zangezur" corridor, which is part of the sovereign territory of Armenia. The sides do not take into account the interests of the Armenian side and they try to get a corridor under pressure, which will essentially unite the Turkic world, as Turkey will be able to establish a land connection with Azerbaijan, and through the latter with Turkic-speaking countries. During a joint press conference with Aliyev Erdoğan expressed his support for the "Zangezur Corridor" project submitted by Azerbaijan and he is noting: "With putting into practice of this project, a new middle corridor will be opened that everyone can benefit from east to west; this is very important" (Sevencan and Zorlu). During the same press conference "Ankara plans to open consulate general in Azerbaijan's recently liberated city of Shusha as soon as possible", Erdogan says (Sevencan and Zorlu).

Thus, the Shushi Declaration essentially shows the deep integration of the two countries, and it reflects three main areas: military, foreign policy and communications. This integration is already being presented by Turkey as a successful example to other Turkic countries.

Conclusion

From the beginning of 1990s, Turkey started cooperation with Azerbaijan in various spheres. Relations with Turkey were strengthened in Azerbaijan, which was further strengthened in the context of the Artsakh conflict. Turkey signed military-political cooperation agreements with Azerbaijan, according to which she began to provide political and military assistance to Azerbaijan. Most important was the reconstruction and armament of the Azerbaijani army and the organization of the military industry in Azerbaijan. As a result, Turkey gained great influence in Azerbaijan.

After the second Artsakh war in 2020, when Azerbaijan succeeded with the support of Turkey, they signed the Shushi Declaration, which is a new military-political alliance, most likely having a secret part. If we compare the Shushi declaration with the previous military-political agreements, we will see some peculiarities. The previous agreements presented the cooperation between the two countries but the Shushi Declaration clearly states the harmonization of general policy in the spheres of military, political and foreign policy. In fact, this document proves that Turkey has gained full influence in Azerbaijan. Here was talking about the communications, particularly about so-called "Zangezur" corridor which in addition to being part of a major economic project, also has a political context. In this case, Turkey by land will join Azerbaijan and then with other Turkic countries. The previous agreements didn't mention the Turkic world, and this declaration clearly states the coordination of forces between the two countries for the development of the Turkic world. On the other hand, Turkish-Azerbaijani cooperation is currently presented to Turkic countries as a successful integration attempt, thus making obvious the Pan-Turkism manifestations of Turkish-Azerbaijani military-political cooperation.

Օգտագործված գրականություն

1. Արշակյան, Գրիգոր, և Եղիազարյան, Արման. «Թուրք-ադրբեջանական ազգայնաբանական հարաբերությունները 1991-2001 թթ.», *21-րդ դար*, թիվ 5 N 45, 2012, էջ 34-49:

2. Արշակյան, Գրիգոր և Եղիազարյան, Արման. «Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ.», *21-րդ դար*, թիվ 6, N 46, 2012, էջ 35-54:

3. *Азербайджан и Турция договорились продолжить сотрудничество в области вооружений*. 12 Май 2011. <https://www.kavkaz-uzel.eu/articles/185285/>
Доступно: 10.09.2021.

4. Гаджиев, Камалудин. *Геополитика Кавказа*. Международные отношения, Москва, 2003.

5. Демоян, Гайк. *Турция и Карабахский конфликт в конце XX - начале XXI века*. Авторское издание, Ереван, 2006.

6. Овсепян, Левон, и Иванов, Владимир. *Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии*. Институт политических исследований, Ереван, 2010.

7. Чернявский, Станислав. *Новый путь Азербайджана*. Азер-Медиа, Москва, 2002.
8. Шорохов, Владислав. «Политика Турции в Закавказье и национальные интересы России». *Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию*, вып. 14 1997, стр. 46-67.
9. Abbasov, Shahin. "Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks". *Eurasianet*, 18 Jan 2011. <https://eurasianet.org/azerbaijan-turkey-military-pact-signals-impatience-with-minsk-talks-analysts>. Accessed: 15 Sept 2021.
10. Butler, Ed. "The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh." *BBC News*, 10 December 2020: <https://www.bbc.com/news/stories-55238803>. Accessed: 1 Sept 2021.
11. Evstratov, Anton. "Penetrating Armenia and Displacing Russia: Strategic Perspectives of the Shushi Declaration." *World Geostrategic Insights*, 24 Jun 2021: <https://wgi.world/strategic-perspectives-on-the-shushi-declaration/>. Accessed: 10 Sept 2021.
12. Iddon, Paul. "The Growing Military Cooperation Between Turkey And Azerbaijan." *Forbes*, 27 Jul 2021: <https://www.forbes.com/sites/pauliddon/2021/07/27/the-growing-military-cooperation-between-turkey-and-azerbaijan/?sh=3310d6561b3b>. Accessed: 15 Oct 2021.
13. Makovsky, Alan. "The New Activism in Turkish Foreign Policy." *SAIS Review*, Vol. 19 Issue 1. 1999. pp. 92-113.
14. Mirzayev, Farid. Erdogan: "We will be more powerful by being one nation, six states". *Baku*, 16 October 2019.
15. Sevencan, Seda and Zorlu, Faruk. "Turkey, Azerbaijan sign "Shusha Declaration" to boost defense." *Anadolu Agency*, 15 Jun 2021: <https://www.aa.com.tr/en/asia-pacific/turkey-azerbaijan-sign-shusha-declaration-to-boost-defense-cooperation/2274968>. Accessed: 30 Aug 2021.
16. Tashjian, Yeghia. "'Shushi Declaration' and its Implications on the South Caucasus and Beyond." *The Armenian Weekly* 29 June 2021: <https://armenianweekly.com/2021/06/29/shushi-declaration-and-its-implications-on-the-south-caucasus-and-beyond/>. Accessed: 30 Aug 2021.
17. Şuşa Beyannamesi. "Türkiye ve Azerbaycan arasında Şuşa Beyannamesi imzalandı! İşte beyannamenin tam metni." *Haber Global* 15 Jun 2021: <https://haberglobal.com.tr/dunya/turkiye-ve-azerbaycan-arasinda-susa-beyannamesi-imzalandi-iste-beyannamenin-tam-metni-115805>. Accessed: 12 Sep 2021.
18. Cafersoy, Nazim. *Elçibey Dönemi Azerbaycan Dış Politikası (Haziran 1992- Haziran 1993). Bir Bağımsızlık Mücadelesinin Diplomatik Öyküsü*. Ankara. 2001.

Works Cited

1. Arshakyan, Grigor, ev Eghiazaryan, Arman. T'urk-adrbejanakanrazmak'akhak'ak'anharaberut'yunnery 1991-2001 t't'. 21-rd Dar t'iv 5, No 45. 2012. edj 34-49. [Turkish-Azerbaijani military-political relations in 1991-2001, 21st Century Vol. 5, No 45. 2012, pp. 34-49]. (In Armenian).
2. Arshakyan, Grigor, ev Eghiazaryan, Arman. T'urk'iayi k'akha'ak'anut'yuny Andrkovkasum ev t'urk'-adrbejanakan haraberut'yunnery 2002-2008 t't'. 21-rd Dar t'iv 6, No 46. 2012. edj 35-54 [Turkey's policy in the Transcaucasus and the Turkish-Azerbaijani relations in 2002-2008, 21st Century Vol. 6, No. 46. 2012. pp. 35-54]. (In Armenian).
3. Azerbajdzhan i Turciya dogovorilis prodolzhit sotrudnichestvo v oblasti vooruzhenij. 12 Maj 2011. Dostupno: 10.09.2021. [Azerbaijan and Turkey agreed to continue cooperation in the sphere of armaments 12 May 2011. Available: 10.09.2021. <https://www.kavkaz-uzel.eu/articles/185285/>]. (In Russian).

4. Gadzhiev, Kamaludin. Geopolitika Kavkaza. Mezhdunarodnye otnosheniya, Avtorskoe izdanie, Moskva, 2003. [Geopolitics of the Caucasus. International Relations, Moscow. 2003]. (In Russian).
5. Demoyan, Gayk. Turciya i Karabaxskij konflikt v konce XX – nachale XXI veka. Avtorskoe izdanie, Erevan. 2006. [Turkey and the Karabakh conflict in the late XX - early XXI century. Author's edition, Yerevan. 2006]. (In Russian).
6. Ovsepyan, Levon, i Ivanov, Vladimir. Voenno-politicheskie aspekty sotrudnichestva Turcii so stranamy Yuzhnogo Kavkaza (Azerbajdzhan, Gruzija) i Centralmijznoj Azii. Institut politicheskix issledovanij, Erevan. 2010 [The MilitaryPolitical Cooperation of Turkey with the Countries of South Caucasus (Azerbaijan, Georgia) and Central Asia, Institute of Political Research, Yerevan, 2010]. (In Russian).
7. Chernyavskij, Stanislav. Novyj putmiz Azerbajdana. Azer-Media, Moskva. 2002 [New way of Azerbaijan. Azer-Media, Moscow. 2002]. (In Russian).
8. Shoroxov, Vladislav. Politika Turcii v Zakavkazmje i nacionalmiznye interesy Rossii. Rossiya i Turciya na poroge XXI veka: na puti v Evropu ili v Evraziyu, vyp. 14 1997, str. 46-67 [Turkey's Policy in the Transcaucasus and Russia's National Interests. Russia and Turkey on the Threshold of the 21st Century: Towards Europe or Eurasia, vol. 14 1997, pp. 46-67.]. (In Russian).
9. Abbasov, Shahin. "Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks". *Eurasianet*, 18 Jan 2011. <https://eurasianet.org/azerbaijan-turkey-military-pact-signals-impatience-with-minsk-talks-analysts>. Accessed: 15 Sept 2021.
10. Butler, Ed. "The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh." *BBC News*, 10 December 2020: <https://www.bbc.com/news/stories-55238803>. Accessed: 1 Sept 2021.
11. Evstratov, Anton. "Penetrating Armenia and Displacing Russia: Strategic Perspectives of the Shushi Declaration." *World Geostrategic Insights*, 24 Jun 2021: <https://wgi.world/strategic-perspectives-on-the-shushi-declaration/>. Accessed: 10 Sept 2021.
12. Iddon, Paul. "The Growing Military Cooperation Between Turkey And Azerbaijan." *Forbes*, 27 Jul 2021: <https://www.forbes.com/sites/pauliddon/2021/07/27/the-growing-military-cooperation-between-turkey-and-azerbaijan/?sh=3310d6561b3b>. Accessed: 15 Oct 2021.
13. Makovsky, Alan. "The New Activism in Turkish Foreign Policy." *SAIS Review*, Vol. 19 Issue 1. 1999. pp. 92-113.
14. Mirzayev, Farid. Erdogan: "We will be more powerful by being one nation, six states". *Baku*, 16 October 2019.
15. Sevenscan, Seda and Zorlu, Faruk. "Turkey, Azerbaijan sign "Shusha Declaration" to boost defense." *Anadolu Agency*, 15 Jun 2021: <https://www.aa.com.tr/en/asia-pacific/turkey-azerbaijan-sign-shusha-declaration-to-boost-defense-cooperation/2274968>. Accessed: 30 Aug 2021.
16. Tashjian, Yeghia. "'Shushi Declaration" and its Implications on the South Caucasus and Beyond." *The Armenian Weekly* 29 June 2021: <https://armenianweekly.com/2021/06/29/shushi-declaration-and-its-implications-on-the-south-caucasus-and-beyond/>. Accessed: 30 Aug 2021.
17. Şuşa Beyannamesi. "Türkiye ve Azerbaycan arasında Şuşa Beyannamesi imzalandı! İşte beyannamenin tam metni." *Haber Global* 15 Jun 2021: <https://haberglobal.com.tr/dunya/turkiye-ve-azerbaycan-arasinda-susa-beyannamesi-imzalandi-iste-beyannamenin-tam-metni-115805>. Accessed: 12 Sep 2021.
18. Cafersoy, Nazim. *Elçibey Dönemi Azerbaycan Dış Politikası (Haziran 1992- Haziran 1993). Bir Bağımsızlık Mücadelesinin Diplomatik Öyküsü*. Ankara. 2001.

ԹՈՒՐԵՔԻԱ-ԱՂՐԲԵՋԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԳՑՈՒԹՅԱՆ ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՆԵՐԱԿԱՅԱՆ

ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասականության մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական հարաբերությունների հաստատման դինամիկան, հիմնական նպատակներն ու խնդիրները: Մյուս կողմից փորձ է արվում ներկայացնել թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության պանթյուրքական դրսևորումները, որոնք առավել ակնառու են դարձել Շուշիի հռչակագրի ստորագրումից:

Աշխատանքի խնդիրն է ներկայացնել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական համագործակցության զարգացման գործընթացը և այն դիտարկել որպես թուրքական աշխարհի ինտեգրացիոն ծրագրերի մի մասը, որի գաղափարական հիմքում դրված է պանթյուրքիզմը: Մասնավորապես զուգահեռներ են անցկացվում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև 1996 թ.-ին և 2010 թ.-ին ստորագրված ռազմաքաղաքական պայմանագրերի և Շուշիի հռչակագրի (իրականում՝ պայմանագիր) միջև:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական վերլուծության և համադրման սկզբունքների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև հաստատված ռազմաքաղաքական համագործակցությունը աստիճանաբար վերածվում է թյուրքական ինտեգրացիոն ծրագրի մասի: Վերոնշյալ երկու ռազմաքաղաքական պայմանագրերը ներկայացնում էին ռազմա-քաղաքական համագործակցությունը երկու պետությունների միջև, որոնց արդյունքում Թուրքիային հաջողվեց իր լիակատար ռազմա-քաղաքական վերահսկողությունը հաստատել Ադրբեջանում: Իսկ Շուշիի դեկլարացիայում նշվում է թյուրքական աշխարհի մասին, մասնավորապես կոմունիկացիաների անվան տակ փորձ է արվում ապահովել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ցամաքային կապը այսպես կոչված «Չանգեզուրի» միջանցքի միջոցով: Արցախյան երկրորդ պատերազմից հետո ստորագրված Շուշիի հռչակագրով ըստ էության նախատեսվում է ներդաշնակել երկու երկրների գործողությունները ռազմական, անվտանգային ու արտաքին քաղաքականության ոլորտներում: Մյուս կողմից թուրք-ադրբեջանական համագործակցությունը որպես հաջողված ինտեգրման փորձ է ներկայացվում թյուրքական երկրներին:

Հիմնաբառեր՝ Թուրքիա, Ադրբեջան, ռազմա-քաղաքական համագործակցություն, Շուշիի դեկլարացիա, պանթյուրքիզմ, թյուրքական ինտեգրացիա, կոմունիկացիա:

ПАНТЮРКИСТСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА

НЕЛЛИ МИНАСЯН

*доцент кафедры всемирной истории и методики ее преподавания
Армянского государственного педагогического университета,
кандидат исторических наук,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является демонстрация динамики, а также основных целей и задач установления военно-политических отношений между Турцией и Азербайджаном. С другой стороны, делается попытка представить пантюркистские проявления турецко-азербайджанского военно-политического сотрудничества, которые стали более очевидными с подписанием Шушинской декларации.

Задача работы – представить процесс развития военно-политического сотрудничества между Турцией и Азербайджаном, рассмотреть его как часть интеграционных программ тюркского мира, идеологической основой которого является пантюркизм. В частности, проводятся параллели между подписанными Турцией и Азербайджаном в 1996 и 2010гг. военно-политическими соглашениями и Шушинской декларацией (фактически соглашением).

Работа написана путем комбинированного исследования фактов с применением исторического анализа и принципов сравнения.

В результате исследования можно утверждать, что военно-политическое сотрудничество, установившееся между Турцией и Азербайджаном, постепенно становится частью тюркской интеграционной программы. Вышеупомянутые два военно-политических соглашения представляют собой военно-политическое сотрудничество между двумя странами, в результате чего Турции удалось установить полный военно-политический контроль в Азербайджане. А в Шушинской декларации упоминается тюркский мир, в частности, под видом коммуникаций делается попытка обеспечить сухопутное сообщение между Турцией и Азербайджаном через так называемый «Зангезурский» коридор. Шушинская декларация, подписанная после второй Арцахской войны, по сути, предусматривает гармонизацию действий двух стран в сфере вооруженных сил, безопасности и внешней политики. С другой стороны, турецко-азербайджанское сотрудничество преподносится тюркским странам как успешная попытка интеграции.

Ключевые слова: *Турция, Азербайджан, военно-политическое сотрудничество, Шушинская декларация, пантюркизм, тюркская интеграция, коммуникация.*

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ»
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ***

ՀՏԴ 93/94:008

DOI: 10.52063/25792652-2021.4-54

ՄԱՆԵ ԿՈՆԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և
Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ լաբորանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Koninyan.mane@yandex.ru

Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ երիտթուրքական ու քեմալական վարչակարգերի շրջաններում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում ցեղասպան քաղաքականության զոհ դարձավ ոչ միայն հայ ժողովուրդը, այլև վերջինիս հոգևոր-մշակութային ժառանգությունը:

Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ ներկայացնել ու վերլուծել Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում երիտթուրքերի և այնուհետև Թուրքիայի Հանրապետության շրջանում քեմալականների կողմից իրականացվող մշակութային ցեղասպանության քաղաքականության փուլերն ու դրսևորումները:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառել ենք պատմահամեմատական, պատմաքննական մեթոդները:

Հետազոտության ընթացքում հանգել ենք այն եզրակացության, որ ազգի ու մշակույթի ոչնչացման քաղաքականությունը կարմիր թելի պես միշտ առաջնային տեղ է զբաղեցրել թուրքական պաշտոնական քաղաքականության մեջ և այսօր էլ, երբ Թուրքիան իր պատմական անցյալի նկատմամբ որդեգրել է բացահայտ ժխտողական քաղաքականություն, պատեհ առիթի դեպքում ոչնչացնում է մեր մշակութային ժառանգությունը:

Թուրքիայի անպատժելիության օրինակից ոգևորված՝ հայ պատմամշակութային ժառանգության նկատմամբ «մշակութային ցեղասպանության» նույն քաղաքականությունն է այսօր իրականացնում վերջինիս կրտսեր եղբայրը՝ Ադրբեջանի Հանրապետությունը, ինչի վառ դրսևորումներից մեկը Նախիջևանում Ջուղայի հայկական խաչքարերի ոչնչացումն էր:

Հիմնաբառեր՝ Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, հայոց ցեղասպանություն, մշակութային եղեռն, Լոզանի պայմանագիր, Ազգերի լիգա:

Ներածություն

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպան քաղաքականությունը, որը սկսվել էր դեռևս 1890-ական թվականներից և շարունակվել էրիտթուրքական ու քեմալական

* Հոդվածը ներկայացվել է 07.11.2021թ., գրախոսվել՝ 26.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

վարչակարգերի շրջաններում, հայութանը մարդկային կորուստներից զատ ահռելի վնաս պատճառեց՝ վերջինիս զրկելով հոգևոր-մշակութային արժեքներից:

Պատմական փաստերի ու իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ թուրքական կառավարությունները ծրագրել էին ինչպես հայ էթնոսի իսպառ բնաջնջումը, այնպես էլ հայ մշակութային ժառանգության ոչնչացումը: Հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ ոչնչացման քաղաքականության՝ «մշակութային ցեղասպանության» կամ «մշակութային վանդալիզմի» (Հովհաննիսյան 5) առաջին դրսևորումների մասին հիշատակվում են դեռևս 16-17-րդ դարերի վկայություններում, սակայն նման գործելաոճն ավելի ընդգծված բնույթ ստացավ 19-րդ դարի վերջերից (Պարսամյան 351):

Աբդուլհամիդյան ցեղասպան քաղաքականությունից սկսած, երբ թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանությունը, որպես այդպիսին, դարձավ ընդգծված քաղաքականություն, «մշակութային ցեղասպանությունը» կազմեց այդ քաղաքականության բաղկացուցիչ մասը: Զանի որ հայկական հուշարձանները դիտարկվում էին որպես թուրքերի կողմից ժխտված պատմական իրականությունը մատնող անշունչ, սակայն չափազանց խոսուն վկաներ («Վարձք» 3), ուստի այդ արժեքների ոչնչացումը թուրքական վարչակարգերի համար դարձել էր գերինդիր՝ հայկական ինքնությունը կորցնելու և մոռացության մատնելու լավագույն ճանապարհ:

Հայ պատմամշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի «մշակութային ցեղասպանության» քաղաքականությունը

Ցեղասպանության հետևանքով նախ արևմտահայությունը կոտորվեց իր բնօրրանում, կենդանի մնացածները (հիմնականում կանայք և երեխաները) բռնի ուժացվեցին, ապա հայ անունը հիշատակող հուշարձանները ոչնչացվեցին, անգամ հայկական գերեզմանաքարերը քարուքանդ արվեցին, ինչն էլ, ըստ թուրքական իշխանությունների, հետզհետե պետք է հանգեցներ հիշողության մոռացման՝ չկա հայ, չկան հայկական մշակութային արժեքներ, հետևաբար չի լինի նաև հիշողություն:

Բարբարոսության առաջնային թիրախ էին ընտրվում հատկապես այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն կերպով էին մատնանշում տեղաբնիկ հայ ժողովրդի ներկայությունն իրենց պատմական հայրենիքում: Առաջին հերթին ոչնչացվեցին վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու հայկական գերեզմանոցները: Մինչդեռ հայկական կամուրջներից, աղբյուրներից ու հասարակական այլ կառույցներից անհետանում էին միայն հայերեն արձանագրությունները, քանի որ այդ կառույցները հետո էլ կարող էին շահագործվել («Վարձք» 3-4):

Անհերքելի է այն փաստը, որ դեռևս 1894-1896 թթ.-ի աբդուլհամիդյան կոտորածների ժամանակ թալանվել ու քանդվել են հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր, իսկ հայ մշակույթի անբաժան մասը կազմող ձեռագրերը՝ այրվել: Այդ մասին են վկայում 1896 թ.-ի տեղեկագրերը. «Մահմետական խուժանը իր կատաղութիւնը ամենէն անելի թափեց հայ վանորէից, եկեղեցեաց, դպրոցաց եւ մատենադարանաց վրայ: Առնք, այսօր, առհասարակ աներակաց կոյտեր դարձած են, մանաւանդ գիւղերուն եւ գաւառներուն մէջ» (Եարտըմեան 20):

Այն, որ թուրքական իշխանություններն ամենախիստ հսկողության տակ են պահել հատկապես հայկական եկեղեցիներն ու վանքերը, վկայում են նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնական գրությունները՝ թաքրիրները, որոնցից տեղեկանում ենք, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1912-1913 թթ.-ին, թուրքական կառավարող շրջանները հատուկ «հետաքրքրություն» են ցուցաբերել հատկապես կայսրության տարածքում գտնվող բոլոր հայկական

վանքերի ու եկեղեցիների սկատմամբ: Ինչպես ցույց տվեցին հետագա պատմական դեպքերը, այդ հատուկ «հետաքրքրությունը» որոշակի կապ ունեցավ Հայոց ցեղասպանության հետ (Սաֆրաստյան 42):

Հայ ժողովուրդը պատմամշակութային արժեքների մեծ կորուստ ունեցավ հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին: Ըստ Մ. Օրմանյանի՝ Արևմտյան Հայաստանում 1912 թ.-ին եղել են 2200 վանք ու եկեղեցի, որոնցից մեծագույն մասը ոչնչացվել են: Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի կողմից Փարիզի խաղաղության վեհաժողովին 1919 թ.-ին ներկայացված հուշագրի համաձայն՝ Օսմանյան կայսրության տարածքում նշվում են լրիվ կամ մասամբ կործանված 83 եպիսկոպոսանիստ առաջնորդարաններ, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանք (Քեշիշյան 125-126): Տարբեր հետազոտողներ Արևմտյան Հայաստանի վանքերի ու եկեղեցիների վերաբերյալ թեև միմյանցից տարբերվող ու մոտավոր թվեր են ներկայացնում, սակայն մի բան ակնհայտ է՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում և արդեն հանրապետական Թուրքիայի շրջանում հայերը շարունակել են կրել մշակութային մեծ կորուստներ: Հարցն այն է, որ վանքերն ու եկեղեցիները հոգևոր կենտրոններ լինելուց զատ եղել են նաև կրթական կենտրոններ՝ կից ունենալով տպարաններ, մատենադարաններ, թանգարաններ, այսինքն՝ հանդիսացել են քաղաքակրթական օրրաններ և հայի ինքնության պահպանման գերազանց լծակներ (Գեորգ Մեսրոպ 776-777):

Պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացումը զուգորդվում էր արժեքավոր ձեռագրերի կորուստով, որոնցում ամփոփված էր հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը, որոնք որևէ կյուլթական հատուցմամբ չեն կարող վերականգնվել (Մարուքյան 8-9): Եթե քանդված, թալանված ու այրված հայկական վանքերի, եկեղեցիների ու ճարտարապետական այլ շինությունների մասին մոտավոր պատկերացում ունենք՝ համաձայն պատրիարքարանի թաքրիրների, ապա դժվար է ստույգ նշել, թե որքան ձեռագրային կորուստներ ունեցանք, քանի որ թե՛ 1894-1896 թթ.-ի համիդյան կոտորածների, թե՛ 1909 թ.-ի Կիլիկիայի ջարդերի և թե՛ 1915 թ.-ի Մեծ եղեռնի տարիներին Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում գտնվող հայերեն ձեռագրերի մասին ընդհանուր ցուցակ չունենք, իսկ եղած գեկուցագրերում այդ մասին տեղեկությունները կցկտուր են և հիմնականում դրանք վերաբերում են մարդկային կորուստներին: Սակայն այն փաստը, որ ոչնչացվել, այրվել ու կողոպտվել են հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, ինքնուստինքյան վկայում է այն մասին, որ շատ վայրերում մեր ձեռագիր գանձերը ևս ոչնչացվել են (Զոլանջյան 98):

«Մշակութային ցեղասպանության» քաղաքականությունը քեմալականների կողմից

Եթե համիդյան և երիտթուրքական վարչակարգերի համար առաջնային ինդիքը հայերի ֆիզիկական բնաջնջումն էր, և մշակութային ցեղասպանությունը ինչ-որ տեղ մղվում էր երկրորդական պլան, ապա քեմալական-հանրապետական վարչակարգի համար ուղղակի հրամայական դարձավ շարունակել և ավարտին հասցնել հայերի պատմական տարածքներում նրանց՝ որպես տեղաբնիկի հանգամանքը փաստող ցանկացած մշակութային հետքի անխնա ոչնչացումը (Պարսամյան 350-351):

Հարկ է նշել, որ քեմալականների կողմից հայ մշակութային արժեքների ոչնչացումը շարունակվում էր արևմտահայ բեկորների հալածանքի, կոտորածի, բռնի թալանի ու կողոպուտի հետ զուգահեռ: Փաստորեն քեմալականները կանգնեցին Թուրքիայում փրկված ազգային փոքրամասնությունների գազանային ոչնչացման ուղու վրա (Կիրակոսյան 242):

Եթե ցեղասպանության տարիներին երիտթուրքական վարչակարգի կողմից մշակութային արժեքների ոչնչացումը իրականացվում էր այնքանով, որքանով անհրաժեշտ էր՝ ելնելով ցեղասպանական գործողությունն իրականացնելու անհրաժեշտությունից¹, ապա քեմալական շրջանում մշակութային արժեքների ոչնչացումը, հայկական բնակավայրերի, անգամ քրիստոնեական սրբավայրերի տեղանունները փոփոխելու պետական քաղաքականությունը դարձավ պարտադիր հրամայական:

Քեմալականների կողմից հայկական դարավոր հուշարձանները կանխամտածված ու հետևողականորեն ոչնչացնելու առնչությամբ լուրջ քայլեր ձեռնարկվեցին: Ուշագրավ է Ռիզա Նուրի բեյի՝ 1921 թ.-ի մայիսի 25-ի նամակը՝ ուղղված արևելյան ճակատի հրամանատար Ջյազիմ Կարաբեքիրին, որում մասնավորապես ասվում էր. «Անի քաղաքին հուշարձաններու մնացորդներն ու հետքերը երկրագունտի երեսէն պետք է ջնջուին: Դուք մեծ ծառայություն մը մատուցած պիտի ըլլաք Թուրքիոյ՝ այս նպատակը իրագործելու գիծով» (Եարտըմեան 29-30): Հարկ է նշել, որ 1920-ական թվականներից սկզբնավորված թուրքական քաղաքականության այս գիծը շարունակվել և շարունակվում է նաև մեր օրերում:

Գործադրելով մշակութային ցեղասպանության քաղաքականությունը՝ քեմալական վարչակարգը վերջնական ավարտին հասցրած էր համարում հայության դեմ գործադրած ցեղասպանության քաղաքականությունը, քանի որ արդեն իր բնօրրանից վերացվել էր հայ տարրը, որի պատմական հայրենիքը լիովին գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ, որտեղ բնակություն էին հաստատել թուրքեր ու մահմեդական այլ ժողովուրդներ: Քեմալականների վերջնական նպատակը հայությանը հայրենիք ունենալու իրավունքից զրկելն էր, մի բան, որ իր արտաքին քաղաքականության մեջ ճարպիկ ձևով իրականացնում էր Մ. Քեմալը:

Հարկ է նշել, որ հայկական բնակավայրերը մահմեդականներով բնակեցնելու քաղաքականությունը թուրքական իշխանություններն անում էին աներևակայելիորեն արագ ու կատաղի մոլագարությամբ, որովհետև փախստական հայերի վերադարձը կարող էր փոխել հայաթափված հայկական տարածքների ժողովրդագրական պատկերը (Հակոբյան 220): Տարածքները յուրացնելուց զատ, թուրքական իշխանություններն անցան հայկական տեղանունների փոփոխման՝ թուրքացման քաղաքականությանը: Անվանափոխվում էին ոչ միայն նահանգի, գավառի, գյուղերի, սարի, գետի, այլև քրիստոնեական սրբավայրերի անունները (Սահակյան 29):

Այսպիսով՝ մշակութային ժառանգության ոչնչացմանը զուգահեռ՝ իրականացվում է հայկական բնակավայրերի անվանումների վերանվանման՝ թուրքացման կամ քրդացման գործընթացը: 1928 թ.-ից սկսվում է Արևմտյան Հայաստանի բնակավայրերի զանգվածային անվանափոխության շրջանը, անգամ ստեղծվում է հատուկ կազմակերպություն, որը զբաղվում է այդ գործով (Հովհաննիսյան 9): Քանի որ հայկական բնակավայրերի հայեցի անվանումը թուրքական կողմի համար կարող էր խոցելի լինել, ուստի հանրապետական Թուրքիան հետևողական և ընդգծված քաղաքականություն է տարել այդ ուղղությամբ՝ ձևախեղելով հայկական բնակավայրերի անվանումները: Այդ քաղաքականությունը պետք է նպաստեր նաև միատարր թուրքական պետության ստեղծմանը:

Հարկ է նշել, որ հայկական տեղանունները ձևախեղելու և հիմնովին անվանափոխելու այդ քաղաքականությունը քեմալականների նորամուծությունը չէր: Օսմանյան կայսրությունում հայկական տեղանուններն անվանափոխելու քաղաքականությունը ունի դարերի պատմություն: Դա ընդգծված քաղաքականություն դարձավ դեռ արդուլիամիոյան ժամանակաշրջանից սկսած: Հենց այդ

¹ Խոսքն այն մասին է, որ վանքերն ու եկեղեցիները դառնում էին պահեստներ, զոմեր, հատկապես հայ կանանց և երեխաների հավաքատեղի, որտեղ վերջիններիս կարող էին ուղղակի այրել և այլն:

ժամանակաշրջանում էր, որ փորձելով ոչնչացնել «Հայաստան» անվանումը՝ այն փոխարինվեց հնարովի «Քրդստան» կամ արիեստական «Անատոլիա» հասկացություններով, որոնցով Բարձր դուռը ձգտում էր արևմտյան տերություններին հավաստիացնել, որ Հայկական հարց գոյություն չունի, քանզի չկա Հայաստան (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտնիության 85):

Արևմտյան Հայաստանի տեղանունների ձևախեղման փորձը շարունակվեց նաև երիտթուրքերի օրոք, երբ դեռևս հենց ցեղասպանության գործադրման շրջանում 1916 թ.-ին, Էնվերի հրամանագրերից իմանում ենք, որ վերջինս հրամայել էր հայկական, հունական, բուլղարական և ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի անվանումները վերածել թուրքերենի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտնիության 95): Այդ քաղաքականությունը շարունակեցին նաև հանրապետական Թուրքիայի կառավարողները՝ Մ. Զեմալ Աթաթուրքից սկսած:

Հայ բնակավայրերի տեղանունները փոխելու գործելաոճով թուրքական՝ մեկը մյուսին հաջորդող իշխանությունները փորձում էին ոչ միայն քողարկել Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը, այլև թուրքացնել այն, ինչը պատկանում էր հայ ժողովուրդին՝ սկսած հոգևոր-մշակութային ժառանգությունից՝ փորձելով ստվեր նետել պատմական ճշմարտության վրա՝ հերքել հայերի տեղաբնիկ լինելու հանգամանքը: Զանի որ տեղանունները պատմական անցյալի խոսուն վկաներ էին, այդ էր պատճառը, որ միատարր Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացում տեղանունների թուրքացմանը վերապահվել էր կարևոր գործառույթ (Մեյքոնյան 30):

Մշակութային ցեղասպանության գլխավոր նպատակը, որով վերջնական ավարտին հասցրած կհամարվեր հայության դեմ գործադրված ցեղասպանության քաղաքականությունը, այն է, որ ներկայացվի, թե Օսմանյան կայսրության անբաժանելի մաս կազմող արևելյան նահանգները երբեք հայերի բնօրրանը չեն եղել, որ հայերը տեղաբնիկ չեն, չունեն հոգևոր-մշակութային ժառանգություն: Դրանով էր պայմանավորված, որ 1923 թ.-ից սկսած Արևմտյան Հայաստանի տարածքը պաշտոնապես կոչվեց Արևելյան Անատոլիա (Մեյքոնյան 88):

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք նշել, որ երիտթուրքերի որդեգրած «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսն իր վերջական հանգուցալուծումը գտավ հանրապետական Թուրքիայի կառավարող շրջանակների կողմից, երբ կոտորվեց կամ բռնի թուրքացվեց ոչ միայն արևմտահայությունը, այլև այդ բռնի թուրքացման կնիքը դրոշմվեց հայության բնօրրան Արևմտահայաստանի վրա. հիմնահատակ ավերվեց (և այսօր էլ շարունակվում է նույն վանդալիզմը) մեր դարավոր մշակութային ժառանգությունը, իսկ երբեմնի հայկական բնակավայրերի անվանումները խեղդվելով թուրքացվեցին:

Զեմալական վարչակարգը, օգտվելով հետպատերազմյան աշխարհաքաղաքական իր համար շահեկան դրությունից, ոչ միայն չանցավ հատուցման ճանապարհով, ինչն արձանագրված էր վերջինիս՝ համաձայն Անտանտի տերությունների՝ դեռևս 1915 թ.-ի մայիսի 24-ի համատեղ հռչակագրի և երիտթուրքերի դատավարության կայացրած դատավճիռների, այլև շարունակեց երիտթուրքերի կիսատ թողած ցեղասպան քաղաքականությունը՝ գործադրելով մշակութային եղեռն, Արևմտահայաստանը «մաքրելով» հայությունից և հարձակում սկսելով արդեն Արևելյան Հայաստանի դեմ: Ավելին՝ արդեն 1930-ական թվականներից կյանքի կոչվեց ազգանունների թուրքացման օրենքը, որով, օրինակ, հայերի դեպքում արգելվեց կրել ազգանուն, որ հայկական հնչեղություն ուներ և ազգային պատկանելություն էր հիշեցնում (Փիրումյան 97): Թուրքական այդ քաղաքականության նպատակն էր Թուրքիայի տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին զրկել իրենց ինքնությունը պահպանելու հնարավորությունից:

Հիշեցնենք, որ Թուրքիայի Հանրապետությունը անգամ հուշարձանների պահպանմանն ու խնամքին վերաբերող միջազգային պայմանագրեր է ստորագրել, նման պարտավորություններ նա ստանձնել է նաև ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության նկատմամբ: Ավելին՝ մշակութային ժառանգության նկատմամբ Թուրքիայի պարտավորությունները ամրագրված են նաև միջազգային փաստաթղթերում: Լոզանի պայմանագրի 1-ին մասի 3-րդ բաժինը՝ 37-44-րդ հոդվածները, ամբողջությամբ վերաբերում են Թուրքիայի հպատակության տակ գտնվող քրիստոնյա ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Հենց 37-րդ հոդվածը փաստում է, որ 38-44-րդ հոդվածներում ամրագրված պարտավորություններն անբեկանելի են և թուրքական ոչ մի օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող խոչընդոտել այդ դրույթների կատարմանը (Մարուքյան 79): Վերոհիշյալ հոդվածների համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր առանց սեռի, լեզվի և դավանանքի խտրականության երաշխավորել թուրքահպատակ բնակչության կյանքի, զույգի պաշտպանությունը, ապահովելու էր իրավահավասարություն և կրոնի ու լեզվի ազատ գործածություն: 42-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր լիակատար պահպանության տակ առնել և ապահովել քրիստոնյա փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգերի, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը (Պապյան 47-48): 44-րդ հոդվածով Թուրքիան համաձայնվում է, որ վերոհիշյալ հոդվածները հանդիսանում են միջազգային պարտավորություններ և դրանց իրագործումը հանձնվում է Ազգերի լիգային (Պապյան 48): Բայց ինչպես պատմությունն է ցույց տալիս, Թուրքիան ոչ միայն չի կատարում վերոհիշյալ հոդվածներով ստանձնած միջազգային պարտավորությունները, այլև հետևողականորեն անտեսում և ոտնահարում է ոչ միայն ազգային փոքրամասնությունների իրավունքները, այլև վերջիններիս մշակութային ժառանգության նկատմամբ ցուցաբերում է ընդգծված «ոչնչացման» քաղաքականություն: Վերոհիշյալ հոդվածների կարևորությունն այն է, որ թուրքական այդ հանցավոր քաղաքականությունը պաշտոնապես քննադատվել և միջազգային-իրավական գնահատականի է արժանացել նաև Լոզանի կոնֆերանսում: Սա խոսում է այն մասին, որ Օսմանյան կայսրությունը, ապա վերջինիս իրավահաջորդ քեմալական վարչակարգը հետևողականորեն ոտնահարում էին փոքրամասնությունների իրավունքները, ինչի հետևանքով նրանք ոչ միայն կոտորվել, այլև բռնի կերպով դավանափոխվել, քաղաքացիությունից զրկվել, բռնի տեղահանվել են, զրկվել իրենց մշակութային ժառանգությունից, ինչի պատճառով էլ վերոհիշյալ հոդվածների իրագործման վերահսկողությունը փոխանցվել էր Ազգերի լիգային: Սա խոսում է այն մասին, որ թուրքական կողմի որդեգրած մշակութային ցեղասպանության քաղաքականությունը պայմանագիրը ստորագրած պետություններից յուրաքանչ-յուրին լիարժեք իրավունք է տալիս ամբողջությամբ վերանայելու Լոզանի պայմանագիրը:

Թուրքիայի Հանրապետությունը 1965 թ.-ին ստորագրել է դեռևս 1954 թ.-ին ուժի մեջ մտած Հաագայի կոնվենցիան, որում շեշտը դրված էր անկախ ծագումից մշակույթների պահպանման կարևորության վրա, որով Թուրքիան պարտավորվել է պատերազմի ժամանակ պահպանել մշակութային հուշարձանները, իսկ 1969 թ.-ի Վիեննայի կոնվենցիայի 60-րդ կոնվենցիայի համաձայն՝ բազմակողմ պայմանագրի մասնակիցներից մեկի կողմից պայմանագրի կոպիտ խախտումը մյուս մասնակիցներին իրավունք է տալիս կասեցնել պայմանագրի գործունեությունն ամբողջությամբ կամ մասամբ, կամ լիովին դադարեցնել այն (Պապյան 50): Թուրքիան միացել է նաև Եվրոպական խորհրդի կողմից ընդունված և 1985 թ.-ի հոկտեմբերի 3-ին Գրենսդայում ստորագրված «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիային», համաձայն որի՝ պետք է միջոցներ ձեռք առնվեն հուշարձանների, կառույցների համալիրների և տեսարժան վայրերի պահպանության

համար, կանխել պահպանության տակ եղած անշարժ գույքի փչացումը, քայքայումը կամ ոչնչացումը (Պարսամյան 357-358): Ավելորդ է նշել, որ թուրքական իշխանությունները ոչ միայն չեն կատարում միջազգային պայմանագրերով ստանձնած մշակութային ժառանգության պահպանման պարտավորությունները, այլև պետական մակարդակով ճիշտ հակառակ քաղաքականություն են իրականացնում: Միջազգային հանրությունը ոչ միայն պետք է իրազեկվի այդ մասին, այլև համապատասխան քայլեր ձեռնարկի՝ Թուրքիային պարտադրելով կատարել իր ստանձնած միջազգային պարտավորությունները:

Ազգի ու մշակույթի ոչնչացման քաղաքականությունը կարմիր թելի պես միշտ առաջնային տեղ է զբաղեցրել թուրքական պաշտոնական քաղաքականության մեջ, և կարող ենք ասել, որ այսօր էլ, երբ Թուրքիան իր պատմական անցյալի նկատմամբ որդեգրել է բացահայտ ժխտողական քաղաքականություն (խոսքը վերաբերում է Նախնառաջ Հայոց ցեղասպանությանը)՝ ոտնահարելով մարդու իրավունքները, ազգային ու կրոնական ճնշումների է ենթարկում Թուրքիայում բնակվող հայությանը և պատեհ առիթի դեպքում ոչնչացնում մեր մշակութային ժառանգությունը: Եվ չնայած այն բանին, որ համաձայն Թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանության ու վերականգնման օրենքի գոյության՝ ոչ մի հուշարձան չի վերականգնվել, ավելին՝ նենգափոխվել ու յուրացվել է («Վարձք» 5): Այսօր էլ Թուրքիայի անպատժելիության օրինակից ոգևորված՝ հայ պատմամշակութային ժառանգության նկատմամբ «մշակութային ցեղասպանության» նույն քաղաքականությունը շարունակում է իրականացնել վերջինիս կրտսեր եղբայրը՝ Ադրբեջանի Հանրապետությունը, ինչի վառ դրսևորումներից մեկը Նախիջևանում Ջուղայի հայկական խաչքարերի ոչնչացումն էր: Այդ նույն քաղաքականության տրամաբանական շարունակության ականատեսը դարձանք Արցախյան վերջին 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո: Ադրբեջանական ընդգծված քաղաքականությունը միտումնավոր թիրախավորում ու ոչնչացնում է Արցախի հայկական եկեղեցիներն ու մշակութային ժառանգության օբյեկտները:

Օգտագործված գրականություն

1. Եարտըմեան Հ. Տաճատ վրդ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1995:
2. Կիրակոսյան Ջոն, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Եր., 1983:
3. Հակոբյան Հակոբ, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002:
4. Հովհաննիսյան Անուշ, Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Եր., ՀՀ ԳԱԱ, 2005:
5. Մարուքյան Արմեն, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., ՊԻ, 2015:
6. Մելքոնյան Ռուբեն, Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականություն, 21-րդ դար, տեղեկատվական-վերլուծական հանդես, 6 (28), 2009:
7. Պապյան Արա, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Եր. 2007:
8. Պարսամյան Սեդա, Հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման թուրքական քաղաքականության շարունակականությունը// Մերձավոր Արևելք (պատմություն, քաղաքականություն, մշակույթ), հոդվածների ժողովածու, թիվ VIII, Եր., 2012:

9. Սահակյան Լուսինե, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ-Արոդ:

10. Սաֆրաստյան Արամ, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.), Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Ա, 1965:

11. Փիրումյան Ռուբինա, Փոքրամասնությունների ազգային ինքնության հարցը Թուրքիայում, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2010, թիվ 1 (29), հունվար-մարտ:

12. Զեչիշյան Մերի, Հայկական մշակութային եղեռնը Օսմանյան Թուրքիայի տարածքում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, գիտ. աշխատություններ, թիվ 7, Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2003:

13. Զոյանջյան Սուրեն, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Բ-Դ, 1965:

14. «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթ, Նյու Յորք, 1931, թիվ 25, հունիսի 20; Գեորգ Մետրոպ, Թուրքոյի հայոց կորուստները 1915-1922թթ.:

15. «Վարձք», Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, թիվ 2, հոկտեմբեր, Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր, Եր., 2010:

Works Cited

1. Yeartemean H. Tachat vrd., Hayastani vanqerun ev ekeghecinerun mshakutayin korusty 1894-1896 tarinerun, [Cultural loss of the churches and monasteries of Armenia in 1894-1896 and the years 1915-1925] Venetik-Surb Ghazar, 1995.

2. Kirakosyan John, Eriyturkery patmutyan datastani araj (1915-ic minchev mer orery), [Young Turks before the Court of History (from 1915 to the Present Day)] girq erkrord, Yer., 1983.

3. Hakobyan Hakob, Taragir hayutyan hayreniq veradarnalu pahanji patmakan ev iravakan himqery, [Historical and Legal Foundations of the Requirements of the Return of the Armenians in their Homeland] Yer., 2002:

4. Hovhannisyan Anush, Turqia. Mshakutayin ceghaspanutyun, [Turkey. Cultural Genocid] Yer., HH GAA, 2005:

5. Maruqyan Armen, Hayoc ceghaspanutyan nyutakan hetevanqneri haghtaharman himnaharcery, [The Problem of Overcoming the Material Consequences of the Armenian Genocide] Yer., PI, 2015:

6. Melqonyan Rouben, Teghanunneri popokhutyuny vorpes turqacman qaghaqakanutyun, 21 dar, teghekatvakan-verluctakan handes, [Changing Toponyms as a Policy of Refinement, 21st Century, Information and Analytical Journal] 6 (28), 2009:

7. Papyan Ara, Hayoc pahanjatirutyun iravakan himunqery, [Legal foundations of the Armenian claim] Yer. 2007.

8. Parsamyan Seda, Haykakan mshakutayin hushardzanneri vochnchacman turqakan qaghaqakanutyun sharunakutyuny/ Merdzavor Arevelq (patmutyun, qaghaqakanutyun, mshakuyt), [Continuation of the Turkish Policy of Destruction of Armenian Cultural Monuments// Middle East (History, Politics, culture)] hodvacneri joghovatsu, tiv VIII, Yer., 2012.

9. Sahakyan Lusine, Teghanunneri turqacumn Osmayan kaysrutyunum ev hanrapetakan Turqiayum, [Turkification of Tponyms in the Ottoman Empire and Republican Turkey] Monreal-Arod.

10. Safrastyan Aram, Kostandnupolsi Hayoc patriarqarani koghmic Turqiyai ardaradatutyany ev davananqneri ministrutyan nerkayacvats haykakan ekeghecineri ev vanqeri cucaknern u taqirneri (1912-1913 tt.), [The List and Hiding Places of Armenian Churches and Monasteries Presented by the Ministry of Justice and Religions of Turkey by the Armenian Patriarchate of Constantinople (1912-1913)] Ejmiatsin, Pashtonakan amsagir Hayrapetakan Atoy S. Ejmiatsni, A, 1965.

11. Pirumyan Roubina, Pokramasnutyunneri azgayin inqnutyan harcy Turkiayum, [The Issue of National Identity of Minorities in Turkey] «Vem» hamahaykakan handes, 2010, tiv 1(29), hounvar-mart.

12. Qeshishyan Mery, Haykakan mshakutayin egherny Osmanyany Turqiyai taratsqum, Hayoc ceghaspanutyany patmutyan ev patmagrutyan harcer, [Armenian Cultural Genocide in the Ottoman Turkey, the History and Historiography of the Armenian Genocide, the Scientific Literature Papers] git. ashxatutyunner, tiv 7, Yer., HH GAA Hayoc ceghaspanutyany tangaran-institut, 2003.

13. Qolangyan Souren, Haykakan kotoracnery ev mer dzeragrakan korustnery, [The Armenian Massacres and our Handwritten Loss, Echmiadzin, the Official Journal of the Patriarchal throne of St. Echmiadzin] Ejmiatsin, Pashtonakan amsagir Hayrapetakan Atoy S. Ejmiatsni, B-D, 1965.

14. «Hayastani kochnak» shabatater, [The weekly] New York, 1931, tiv 25, hunisi 20, Gevorg Mesrop, Turqioy hayoc korustnery 1915-1922 tt.

15. «Vardzq», Haykakan chartarapetutyunn ususmnasirogh himnadram, tiv 2, hulisnoyember, Arevmtyany Hayastani patmakan hushardzanneri vichaky 1915 t.-ic I ver, [Foundation for Research on Armenian Architecture, No. 2, July-November, the state of the historical monuments of Western Armenia in 1915 godus as long as they were] Yer., 2010.

YOUNG TURKS' ONGOING POLICY OF «CULTURAL GENOCIDE» AGAINST ARMENIAN CULTURAL HERITAGE BY THE KEMALISTS IN 1920S

MANE KONINYAN

*NAS RA Institute of History, Department of the
Armenian Question and Armenian Genocide, Senior assistant,
Yerervan, the Republic of Armenia*

The purpose of this article is to substantiate the fact that not only the Armenian people, but also their spiritual and cultural heritage fell victim to the policy of genocide perpetrated by the Young Turks and Kemalist regimes in Western Armenia and in the Armenian-populated regions of the Ottoman Empire.

The main goal of the article is to present and analyze the stages and outcomes of the policy of cultural genocide perpetrated by the Young Turks in Western Armenia and other Armenian-populated areas of the Ottoman Empire, and then by the Kemalists in the Republic of Turkey.

The research used historical-comparative and historical-analytical methods. In the course of the study, we concluded that the policy of destruction of the nation and culture is a red thread throughout the history of Turkey's official policy. And now, pursuing an open policy of denying its historical past, it, whenever opportunity is present, destroys the cultural heritage of the Armenians. Inspired by the example of Turkey's impunity, the same policy of "cultural genocide" is being pursued by the latter's younger brother, the

Republic of Azerbaijan. One of the most striking manifestations of this policy was the destruction of Armenian khachkars in the Nakhichevan Jugh.

Key words: *Western Armenia, Ottoman Empire, The Armenian Genocide, Cultural genocide, Treaty of Lausann, League of Nations.*

ПРОДОЛЖЕНИЕ ПОЛИТИКИ «КУЛЬТУРНОГО ГЕНОЦИДА» МЛАДОТУРОК В ОТНОШЕНИИ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ КЕМАЛИСТАМИ В 1920-Е ГОДЫ

МАНЭ КОНИНЯН

*старший лаборант отдела Истории Армянского вопроса и
Геноцида армян Института истории НАН РА,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является обоснование факта, что не только армянский народ, но и его духовное и культурное наследие пали жертвой политики геноцида младотурок и кемалистских режимов в Западной Армении и в армянонаселенных районах Османской империи.

Основная цель статьи – представить и проанализировать этапы и проявления политики культурного геноцида, проводимой младотурками в Западной Армении и других населенных армянами районах Османской империи, а затем и в Турецкой Республике.

В ходе исследования были использованы историко-сравнительный и историко-аналитический методы.

Мы пришли к выводу о том, что политика уничтожения нации и культуры красной нитью проходит через всю историю официальной политики Турции. И сейчас, проводя открытую политику отрицания своего исторического прошлого, она, при необходимости, уничтожает и культурное наследие армян. Воодушевившись примером безнаказанности Турции, такую же политику «культурного геноцида» сегодня проводит и младший брат последней - Азербайджанская Республика. Одним из самых ярких проявлений проведения подобной политики стало разрушение армянских хачкаров в нахичеванской Джуге.

Ключевые слова: *Западная Армения, Османская империя, Геноцид армян, Культурный геноцид, Лозаннский договор, Лига Наций.*

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ՕՐՈՔ*

ՀՏԴ 94(479.25)

DOI: 10.52063/25792652-2021.4-64

ԷԴՎԱՐ ՎԱՐՇԱՄՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
 Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edovarshamyan@mail.ru

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում վերհանելու Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության ներքաղաքական զարգացումները չորրորդ դարի 40-ական թթ., ինչպես նաև հնարավորինս ամբողջական և համակողմանի բացահայտել Հայոց թագավոր Տիրանի հարաբերությունները Հռոմի և Պարսկաստանի հետ՝ հիմնական թիրախ ունենալով արտաքին քաղաքական անցուղարձերը:

Վերոնշյալ նպատակի իրականացման համար աշխատանքի առանցքում դրված են հետևյալ խնդիրները. Ա) ուսումնասիրել Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության արտաքին քաղաքական մարտահրավերները՝ հռոմեապարսկական հակամարտության ծիրում, Բ) ուսումնասիրել Հայոց թագավոր Տիրանի վարած արտաքին և ներքին քաղաքականությունը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմահամեմատական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ Տիրանի թագավորության պատմափուլում շարունակում էր լարված մնալ Հայոց թագավորության արտաքին միջավայրը: Հարևան քաղաքական միավորները անընդհատ սպառնում էին պետության անվտանգությանը: Նման պայմաններում Հայոց թագավորը մի կողմից հավատարիմ մնաց հայհռոմեական դաշինքին, մյուս կողմից փորձեց կարգավորել հարաբերությունները Պարսկաստանի հետ: Ներքին քաղաքականության մեջ Տիրանը քայլեր ձեռնարկեց միավորելու մասնատված երկիրը և փորձ կատարեց ամրապնդել կենտրոնաձիգ իշխանությունը երկրում:

Հիմնաբառեր՝ Հռոմեական կայսրություն, Սասանյան Պարսկաստան, արտաքին քաղաքականություն, ներքին քաղաքականություն, Մեծ Հայքի թագավորություն, Տիրան Արշակունի, Շապուհ Բ, Կոստանդինոս:

Նախաբան

Տիրան Արշակունու գահակալության պատմափուլը (339-350) Հայ ժողովրդի պատմության մեջ հետաքրքրական, բայց միևնույն ժամանակ քիչ ուսումնասիրված ժամանակաշրջաններից է: Խնդրո առարկա դարաշրջանին կամ դրա առանձին ենթափուլերի զարգացումներին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Նրանցից յուրաքանչյուրը Տիրանի գործունեությունը քննության է առել ավելի կամ պակաս մանրամասնությամբ: Ուսումնասիրության ընթացքում մեծ տեղ է հատկացվել Տիրանի թագավորության շրջանի իրադարձությունների բացահայտմանը՝ հավուր պատշաճի գնահատելու և ամբողջացնելու Հայոց թագավորի պատմաքաղաքական կերպարը: Հայոց թագավորի պատմաքաղաքական դիմանկարն ամբողջացնելու,

* Հոդվածը ներկայացվել է 15.11.2021թ., գրախոսվել՝ 25.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Տիրանի գահակալության շրջանի արտաքին և ներքին մարտահրավերները հասկանալու և վերլուծելու համար նախ դիտարկենք, թե ինչպիսին էր արտաքին քաղաքական իրադրությունը Մեծ Հայքի շուրջ 4-րդ դարի 40-ական թթ.:

Իրադրությունը Մեծ Հայքի շուրջ Տիրան Արշակունու գահակալության շրջանում

Կոստանդինոս կայսեր օրոք (337-361) գրեթե յուրաքանչյուր տարվա զարևանդ պարսիկներն սապատակում էին Հռոմի արևելյան պրովինցիաները: Երբ ամռանը Նրանք հետ էին դառնում՝ հռոմեացիներն իրենց հերթին ավերում էին պարսկական երկրամասերը՝ առանց թշնամու հետ անմիջապես բախվելու: Պարսկական զորքերը, 345 թ. գետանցելով Տիգրիսը, բանակեցին Սինգարայի մոտ: Սինգարայի ճակատամարտում հռոմեական լեգեոնները սկզբում Կոստանդինոս կայսեր մասնակցությամբ որոշակի հաջողության հասան, սակայն չդիմանալով պարսիկների գիշերային կատաղի գրոհին՝ խայտառակ պարտվեցին (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 65): Հ. Մանանդյանը ենթադրում է, որ այդ ճակատամարտում հավանաբար մասնակցել են նաև հայակական զորքեր (Մանանդյան 154): Կարծում ենք, որ առավել հավանական է այն տեսակետը, ըստ որի՝ ինչպես ցույց են տվել Չ. Բյուրին և Ն. Ադոնցը, Սինգարայի ճակատամարտը տեղի է ունեցել ո՛չ թե 348 թ., ինչպես ենթադրում են որոշ հետազոտողներ (Sykes 413), այլ 345 թ. (Адоны 254-255; Bury 302-305): Սինգարայի ճակատամարտից հետո, հավանաբար 345 կամ 346 թ. Շապուհ Բ-ին հաջողվում է երկրորդ անգամ պաշարել Մծբինը, որը տևեց գրեթե 3 ամիս: Այս անգամ էլ Շապուհը մեծ կորուստներ տալուց հետո ստիպված էր նահանջել (Շահնազարյան 224): Հռոմեա-պարսկական այս կռիվների մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Մովսես Խորենացին.

«Եւ զայլ յոյով թագաւորս Նուաճեալ Շապիոյ, և զազգս բարբարոսաց բազումս ի սատարութիւն կալեալ՝ սպառազինեցաւ ի Միջերկրեայս և ի Պաղեստինէ: Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս՝ սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ ճակատ, երկոքին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յերկաքանչիւրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց. մինչև ի հաւանութիւն եկեալ՝ արարին խաղաղութիւն ամս սակաւս» (Մովսես Խորենացի 322): Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ Հռոմի և Պարսկաստանի միջև տեղի ունեցած ճակատամարտում երկու կողմերն էլ մեծ կորուստներ տվեցին և պարտվեցին, համաձայնության գալով, խաղաղություն կնքեցին մի քանի տարով:

Այս իրադարձություններից հետո, Ճորա պահակով Այսրկովկաս ներխուժած կովկասյան լեռնականները 4 տարով ռազմակալեցին Աղվանքը: Նրանք ոչ միայն սպառնում էին Մեծ Հայքին, այլև Պարսկաստանին. «Բայց Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սեր հաստատեաց. մինչև զօրավիզն օգնականութեան եղեալ՝ թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ էին արտաքս քան զկապանն Ճորաց և բանակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս» (Մովսես Խորենացի 322): Համակարծիք ենք Բ. Հարությունյանի այն տեսակետին, որ հայ-պարսկական մերձեցումը հայ-հռոմեական հարաբերությունների խզում չէր նշանակում (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 66):

Իրադարձությունները սկսեցին զարգանալ գլխապտուկտ արագությամբ: Մագնեստիոս զորավարը 350 թ. սպանեց Կոնստանս Ա կայսրին (337-350) և իրեն կայսր հռչակեց (The Cambridge Medieval History volume I 59): Կոստանդինոսը ստիպված Արևելքից մեծ ուժեր ուղարկեց Նրա դեմ՝ դրան գումարելով Տիրանի տրամադրած հայկական այրուձիի գնդերը, որոնք հատկապես վարժ էին աղեղնաձգության մեջ: Սակայն Տիրանի այս քայլը Պարսկաստանում խիստ ցավազին ընկալվեց: Շապուհ Բ-ը, որին թվում էր, թե Տիրանն իր ազդեցության տակ է, խորապես հիասթափվեց: Պարսից արքան տեղյակ էր Հռոմում տիրող խառնակ

կացությանը և Մազնենտիոսի՝ կայսր հռչակվելուն: Քանի որ Յոնի արևելյան պրովինցիաների պաշտպանությունն Էապես թուլացել էր, պարսկական զորքերն ավերեցին Միջագետքն ու կայսրության արևելյան մի շարք պրովինցիաներ, գրավեցին մեծ թվով բերդեր և երրորդ անգամ պաշարեցին Մծբինը: Քաղաքը, մոտավորապես 3-ից 4 ամիս դիմադրելով պարսիկներին, ստիպեց վերացնել պաշարումը: Գրեթե այդ նույն ժամանակ մագքուլթները հարձակվեցին պարսից տիրույթների վրա, և ռազմական գործողությունները Արևելքում ժամանակավորապես դադարեցին (Taylor 142; Frye 310):

Տիրան Արշակունու արտաքին քաղաքականությունը

Այսպիսին էր արտաքին քաղաքական իրադրությունը Մեծ Յայքի շուրջ, և Յայք թագավոր Տիրանին վիճակված էր վարելու ճկուն արտաքին քաղաքականություն՝ տարածաշրջանում Յոնիին և Պարսկաստանին հավասարակշռելու համար: Ըստ երևույթին, այդ երկու գերտերություններից յուրաքանչյուրն ուներ իր նպատակները: Մասնավորապես, Պարսկաստանի համար Էական և առաջնային էր Մծբինի 298 թ. հաշտության պայմանագրով կորսված տարածքները հետ վերադարձնել, իսկ Յոնի համար առաջնային էր իր արևելյան պրովինցիաների և առկա ստատուս քվոյի պաշտպանությունը: Երկու կողմերն էլ ջանք չէին խնայում Մեծ Յայքի թագավորությունն իրենց կողմը գրավելու համար՝ որպես տարածաշրջանային ուժեղ խաղացողի: Այժմ փորձեց դիտարկել, թե նման արտաքին քաղաքական մարտահրավերների պայմաններում ինչպիսի՞ արտաքին քաղաքական կուրս որդեգրեց Յայք թագավոր Տիրանը:

Տիրանի վարած արտաքին քաղաքականության մասին պատկերացում կազմելու համար մեծ կարևորություն են ներկայացնում Մովսես Խորենացու հետևյալ խոսքերը. «Որոյ եկեալ (Տիրան - Է. Վ.), ունի գաշխարիս մեր խաղաղութեամբ, հաշտութիւն ընդ Պարսս առնելով և ոչ պատերազմուս. հարկելով Յունաց, այլ և մասնաւոր ինչ Պարսից՝ կայր ի հանդարտութեան իբրև զհայր իւր...» (Մովսես Խորենացի 322): Դատելով պատմիչի հարորդած տեղեկություններից՝ Տիրանին հաջողվում է խաղաղության մեջ պահել մեր երկիրը, հռոմեացիներին և պարսիկներին վճարում է որոշակի հարկ, և վարում ինքնուրույն արտաքին քաղաքականություն՝ հավատարիմ մնալով Տրդատ Մեծի օրոք կնքված հայ-հռոմեական դաշինքին և կարգավորելով հարաբերությունները Պարսկաստանի հետ: Մովսես Խորենացու տեղեկություններն առ այն, որ Շապուհ Բ-ը բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Տիրան թագավորի հետ, մինչև իսկ թիկունք և օգնական եղավ՝ Յայք թագավորին ազատելով հյուսիսային ցեղերի հարձակումներից, փաստում են, որ ինչ-որ մի պահից տեղի են ունեցել հայ-պարսկական հարաբերությունների մերձեցում:

Ինչ վերաբերում է հայ-հռոմեական հարաբերություններին, ապա Տիրանը վերահաստատեց իր հավատարմությունը Յոնիին: Նախ հայկական զորքերը հռոմեացիների հետ միասին մասնակցեցին Սինգարայի ճակատամարտին, որտեղ Կոստանդինոս կայսրը պարտվեց: Հավանաբար, 345 թ. կայսեր Արևելքում եղած ժամանակին է վերաբերում Մովսես Խորենացու այն տեղեկությունը, որ Յայք թագավորը ընդամառ է գնացել Կոստանդինոսին, տրամադրել օգնական զորք և որպես հավատարմության նշան տվել պատանդներ. «Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի (Կոստանդինոս – Է. Վ.), դիմէ ի վերայ Պարսից զօրացն, և հալածականս առնէ. և հարեալ սպասաւորութիւն՝ անցուցանէ զամբարիշտն Յուլիանոսս (Կոստանդինոս – Է. Վ.) հանդերձ բազմութեամբ այրելծիոյն, և մեծարի ի նմանէ յոյժ: Եւ խնդիրս առնէ զի մի՛ տարցի զնա ընդ իւր ի Պարսս, իբր անկար գոյով ձիավարել, և յանձն առեալ Յուլիանոսս (Կոստանդինոս – Է. Վ.)՝ խնդրէ զօրս և պատանդս: Եւ Տիրանայ խնայեալ յԱրշակ որդի իւր երկրորդ՝ տայ զնա զորդի իւր զՏրդատ զերրորդ, հանդերձ կնաւ և որդուք, և զթռն իւր զՏիրիթ, զորդի մեռելոյն

Արտաշիսի, որդւոյ իւրոյ անդրանկան: Չորս առեալ Յուլիանոս (Կոստանդինոս – Է. Վ.)՝ նոյն հետացն առաքէ ի Բիւզանդիոն. և զՏիրան արծակէ յիւր աշխարհն» (Մովսէս Խորենացի 324; Baynes 628):

Համաձայն Պատմահոր հաղորդած տեղեկությունների՝ հռոմեացիների հետ պարսկական արշավանքին պետք է մասնակցեր Մեծ Հայքի հարավային գնդի հրամանատար Ռշտուկյաց Չորս նահապետը: Սակայն նա, լսելով Հուսիկի սպանության մասին լուրը, ասում է. «Մի վարեցուք հրամանաւ այնորիկ, որ գայթազդութիւն արկանէ յերկրպագութիւնն Քրիստոսի, և սպանանէ զսուրբս նորա. և մի՛ ճանապարհակցեսցուք այս ամբարիշտ թագաւորի» (Մովսէս Խորենացի 326): Նա, զորքն իրեն կամակից դարձնելով, հետ է դառնում և գնում ամրանում է Տնորիքում: Այս իմանալով Կոստանդինոս կայսրը սուրհանդակների միջոցով թուղթ է ուղարկում Տիրանին հետևյալ բովանդակությամբ. «Չգորս, զոր արծակեցեր ընդ մեզ, առեալ զորագլխի նոցին՝ ի բաց դարձաւ. և մենք բաւական էաք յանթիւ գնդացս մերոյ զհետ առաքել՝ ունել զնոսա. այլ թույլ տուաք վասն երկուց պատճառաց. առաջին՝ զի մի՛ ասիցեն զմենք Պարսիկք, եթէ բռնութեամբ և ոչ կամաւ ածէ զգորսն. երկրորդ՝ փորձել զքո միամտութիւնդ: Արդ՝ եթէ ոչ ի քումմէ կամաց արար նա զայն՝ սատակեսցես զնա ազգաւիմբ, առ ի չըողուլ նմա մնացորդ. ապա եթէ ոչ՝ զի ի դառնայն մերում անպարտելի զօրութեամբս վանեսցուք զքեզ և զաշխարհդ» (Մովսէս Խորենացի 328): Տիրանն այս տեսնելով՝ բարկանում է և Հայր մարդպետին ուղարկում Չորայի մոտ: Չորան մենակ մնալով ակամայից գալիս է թագավորի մոտ: Նրան բռնելով՝ թագավորը զրավում է Աղթամարը, նրա ամուր բերդը և բոլորին կոտորում: Փրկվեց մի փոքրիկ երեխա, որը Մեհենդակ եղբոր որդին էր, և դայակները նրան փախցրին, իսկ Հայոց թագավոր Տիրանը նրա տեղը նշանակում է Սաղամութին, Անձիտի տիրոջը (Մովսէս Խորենացի 328):

350 թ. պարսկական արշավանքների ընթացքում էլ, հավանաբար, տեղի ունեցավ Տիրանի գերևարությունը, որը Փափսոսու Բուզանդին ու Մովսէս Խորենացին ներկայացնում են միանգամայն տարբեր կերպ, ինչի հետևանքով Հ. Մանանդյանը կարծել է, թե դրանք սոսկ վիպական պատմվածքներ են, մասամբ հիշողություններ այն պատմական իրադարձությունների, որոնք տեղի էին ունեցել 297-298 թթ.: Տրդատ Գ-ի օրոք (Մանանդյան 152):

Տիրանին վերագրվող մի շարք իրադարձություններ վերագրվել են Տրդատ Գ-ի գահակալության շրջանին: Այնուամենայնիվ, ինչու՞ են պատմիչները երկու թագավորների գործունեությունն իրար խառնել, եթե նրանց անունները տարբեր են: Դատելով Սեբեոսի երկու տեղ գտած Անանուկի ժամանակագրական ցանկերի տվյալներից՝ Տրդատը միայն 298 թ. է սկսել անվանվել Տրդատ, իսկ մինչ այդ կրել է Տիրան անունը (Պատմութիւն Սեբեոսի 58-60): Այդ է հավաստում այն փաստը, որ Տիրանի գահակալության կամ «ի 2 ամի Տիրանայ արքայի Հայոց՝ թագաւորէ Ներսէս»: Սասանյանների տոհմում Ներսէս անունով այլ արքա չկա: Հետևաբար, Անանուկի Տիրանը նույնանում է Տրդատ Գ-ին: Ներսէսն իշխել է 293-302 թթ., ուստի Տիրանի գահակալությունն ընկնում է 288 թ., ինչը Տրդատի երկրորդ գահակալության տարին է (առաջին անգամ Մեծ Հայքի մի մասի վրա թագավորել է 274 թ.): Անանուկի մեկ այլ հաղորդման մեջ Տիրան-Տրդատը շփոթված է հստորով Կոտակի որդի Տիրանի հետ (Պատմութիւն Սեբեոսի 61): Նրա ժամանակագրական ցանկերում նաև ասվում է, որ Տրդատն իշխել է Դիոկղետիանոսի 15-րդ տարում, որը համապատասխանում է 298 թ.: Դա Հ. Մանանդյանին ստիպել է ենթադրել, թե Տրդատ Գ-ի գահակալությունը սկսել է 298 թ. (Մանանդյան 104), ինչը, կարծում ենք, ընդունելի չէ: Անանուկի տվյալները ենթադրել են տալիս, որ Տրդատ Գ-ը թագադրվել է առնվազն 3 անգամ, որոնցից առաջին երկուսը Տիրան անունով: Պատմահոր հաղորդմամբ՝ Տրդատ Գ-ն իշխել է 56 տարի (Մովսէս Խորենացի 300-304), և եթե ընդունենք, որ նա մահացել է 330 թ., ապա առաջին անգամ թագավորել է 274 թ., չունենալով ամբողջ երկրում

իշխանություն, իսկ երկրորդ անգամ 288 թ.՝ թագավորելով երկրի մեծ մասում: Միևնույն ժամանակ մինչև 293 թ. Մեծ Հայքի արևելյան շրջաններում իշխում էր Ներսես Սասանյանը, որը նույն թվականին դարձավ պարսից արքայից արքա (Daryae 157): Մծբինի 298 թ. հաշտությունից հետո Տրդատ Գ-ը թագադրվեց երրորդ անգամ վերցնելով Տրդատ անունը: Ահա այս պատճառով է, որ Խոսրով Կոտակի որդի Տիրանին վերագրվող իրադարձությունները առնչվել են Տրդատ Գ-ի գահակալության շրջանին:

Անդրադառնալով Տիրանի գերեվարության խնդրին՝ Մովսես Խորենացին գրում է. «Ճշմարտիւ ի վերայ հասաք, եթէ զսերս մեր հաստատուն պահեցեր, ոչ գալով ընդ կայսեր յաշխարհս Պարսից. այլ և զգունդն զոր էառ ի քէն՝ զհետ յղեալ կոչեցեր ի բաց: Եւ զառաջինս զոր արարեր, գիտեմք զի մի՛ ընդ աշխարհ քո անցանիցէ՝ արարեր, զոր ինքն իսկ առնելոց էր. ուստի և մեր պահապանք գնդին վատասրտեալ ի բաց եկին զքեզ պատճառելով. վասն որոյ մեր ցասուցեալ՝ սալարի նոցա ցլու արբուցաք արին: Եւ քում թագաւորութեանդ ոչ ինչ վնասեսցուք, երդուեալ ի Միիր մեծ աստուած. միայն փութա՛ տեսանել զմեզ, զի խորհել ինչ մարդասցուք վասն հասարակաց օգտի» (Մովսես Խորենացի 330): Դատելով Պատմահոր հաղորդած տեղեկություններից՝ Տիրան թագավորը հռոմեական արշավանքի ժամանակ պահպանել էր սերը դեպի պարսից արքան, հետ էր կանչել հռոմեական զորքերի հետ միացած հայկական ուժերը, և Շապուհը Հայոց թագավորին հրավիրում էր Պարսկաստան՝ հասարակական օգուտի մասին խորհրդակցելու համար: Շարունակելով Մովսես Խորենացու հաղորդումները՝ Տիրանը շտապում է պարսից արքունիք, որտեղ Շապուհն իր զորքերի դեմ հանդիման նրան նախատեց և աչքերը կուրացրեց (Մովսես Խորենացի 332):

Փավստոս Բուզանդը հայ-պարսկական հարաբերությունների վատացումը փորձում է բացատրել Տիրանի Փիսակի քսու խարդավանքներով: Փավստոս Բուզանդի հաղորդմամբ. «Բայց դեռ բարեկամութիւն էր 'ի մէջ թագաւորացն երկոցունց, 'ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից: Նայէր յաշխարհին Ատրպատական որում անուն կոչէր բարձգահին իւրում Շապուհ Վարագ: Այդ մինչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր 'ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ 'ի տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս քան զդւ էր մոլորութեամբ, որոյ անուն Փիսակ կոչիւր, որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ Սիւնի: Սա դեսպանագնացեալ էր առ Վարագ Շապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին: Չայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային: Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի և հոյակապ... Չորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեալ զձին Վարագայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. և 'ի նմանէն ինքն թուղթ առեալ, բերեալ մատուցանէր արքային Հայոց» (Փավստոս Բուզանդ 78):

Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ Տիրան թագավորի ձին առիթ էր, որպեսզի սենեկապետ Փիսակը մի չնչին բանի պատճառով խռովություն զգի երկու թագավորների միջև: Շարունակելով իր միտքը՝ Փավստոսը նշում է, որ Տիրանը, կասկածելով, որ երկու թագավորների միջև կարող է խռովություն ծագել, գտնում է նույն տեսքով, նշանով, գույնով մի ձի, և հրովարտականով ու ընծաներով Փիսակի միջոցով ուղարկում է Ատրպատական: Փիսակը, գալով Վարագ Շապուհի մոտ, ավելի սրեց իր չարախոսությունը, համաձայն որի, Տիրանը աներկյուղ է պարսից արքայից, և իրենց ծաղրելու համար ուղարկել է մեկ ուրիշ ձի: Այս ամենը լսելով՝ Վարագ Շապուհը ամբաստանության թուղթ գրեց պարսից արքային հայոց թագավորի մասին, և այն աստիճան գրգռեց, որ հրաման ստացավ որևէ հնար գտնել Տիրանին բռնելու համար: Համաձայն պատմիչի հաղորդած տեղեկությունների՝ Վարագը դեսպան է ուղարկում Հայոց թագավորի մոր հաշտության պատրվակով՝ թույլտվություն հայցելով նրան այցելության գալու: Տիրանն ընդունեց առաջարկը, իսկ Վարագը 3 հազար մարդով

Ներակայացավ թագավորին Ապահունյաց երկրում և մեծ պատվով նրանից մեծարվեց: Որոշ ժամանակ անց թագավորին ընթրիքի հրավիրեցին՝ նրան պատվելու համար, և երբ թագավորն ու նրա հետ եղողները սաստիկ հարբեցին, դարանակալ մարդիկ Տիրանին շրջապատեցին և ձեռքերը կապեցին երկաթե շղթաներով: Եկան հասան մի գյուղ Դալարիք անվամբ, որտեղ էլ Վարազը կուրացրեց Տիրանին, և շտապեցին Պարսից արքայի մոտ (Փավստոս Բուզանդ 80-84): Եթե մի պահ վերանանք Փիսակի վիպական ծագման պատմությունից, ապա այս հարցում ավելի հավանական է թվում Բ. Հարությունյանի տեսակետը, ըստ որի՝ Վարազ Շապուհը 350թ. Մծբինի 3-րդ պաշարման ժամանակ Շապուհ Բ-ից հանձնարարություն է ստանում ձերբակալել Տիրանին: Վերջինս, որ աշխատում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել Պարսկաստանի հետ, իրեն այցի եկած Վարազ Շապուհին ընդունում է Ապահունյաց երկրի Մեծ Մասիսի (Նեխ Մասիք) ստորոտում՝ Ադիորսք քաղաքում: Վարազ Շապուհը Հայաստան է ժամանում 3000-անոց զորաջոկատով և մեծարվում Տիրանի կողմից: Սակայն հայոց ավագանին, վատ ընդունելով Վարազ Շապուհի այդպիսի մեծ թիկնախմբով գալը, աստիճանաբար լքում են արքայի բանակը: Թագավորն էլ, կարծելով, թե պարսիկներից վտանգ չկա, չէր հոգում իր պաշտպանությունը: Դրանից օգտվելով՝ Վարազ Շապուհն ընթրիքի է հրավիրում Տիրանին, որի ժամանակ էլ դարանակալ զինվորները ձերբակալում են նրան, կնոջը, ողիներին ու կողոպտում որսակայանը: Հասնելով Դալարիք գյուղ՝ Վարազ Շապուհը կուրացնել է տալիս Հայոց թագավորին, ինչի պատճառով գյուղը դրանից հետո կոչվում է Ածուխ: Այնուհետև գերիներին տանում են Պարսկաստան և ներկայացնում Շապուհ Բ-ին (Հայոց պատմություն ԳԱՄ հրատ. հտ. Բ գիրք Ա 68):

Փավստոս Բուզանդը նշում է, որ Հայոց թագավորի կուրացումն ու գերեվարումը առաջ բերեցին նախարարների զայրույթը: Նրանք զորք կազմելով, հետապնդեցին պարսից սահմանակալին, սակայն հասնել չկարողացան: Դրանից ավելի զայրացած՝ նրանք կողոպտեցին ու հրկիզեցին մերձակա պարսկական երկրամասերը, իսկ բնակչությանը ենթարկեցին կոտորածի (Փավստոս Բուզանդ 84): Կարծում ենք, որ պատմիչն, իմանալով, որ նշված տարիներին պարսից զորքը հաճախ գլխավորել է Ներսեհ զորավարը, նրան շփոթել է Ներսեհ թագավորի հետ և բերել պարսից Ներսեհ թագավորի 297թ. անհաջող արշավանքի պատմությունը: Այնինչ, Հայոց ավագանին կատարվածը, հավանաբար, համարելով երկրի արժանապատվությանը հասցված հարված, միաբանվեց և որոշեց վրեժ լուծել: Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականն ուղարկվեցին Հռոմ՝ կայսրից օգնություն խնդրելու:

«Յայնմ ժամանակի առաքեցին 'ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ թագաւորն Յունաց, զի 'ի նա ձեռս տուեալ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝ խնդրել վրեժս 'ի թշնամեաց նոցա: Ապա առաքեցին զԱնդովկ նահապետն Սինեաց, և զԱրշավիրն Կամսարական, նահապետն Արշարունեաց: Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց 'ի կայսերական պալատն թագաւորացն. և տային զհրովարտակն, և ունէին զպատարագսն բերեալ առաջի, և մատուցանէին զաշխարհապաղատ պատգամսն առաջի թագաւորին: Չոր իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելաներ իրին հասելոյ. և օգնական և թիկունք լինէր աշխարհին Հայոց: Մանաւանդ զի զախտն յիշեալ զդաշանցն կռելոյ գերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ 'ի մեջ կայսերն Կոստանդիանոսի և 'ի մեջ թագաւորին Տրդատայ եղեալ էր» (Փավստոս Բուզանդ 86): Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականն օգնության խնդրանքով հռոմեական կայսր մոտ էին գնացել Տիրանի ձերբակալությունից հետո: Հռոմեական կայսրը մեծ պատրաստակամությամբ հանձն առավ նրանց խնդրանքը կատարել, ինչն իր նշանակալի դերն ունեցավ կայսր Կոստանդիանոսի և Հայոց թագավոր Տրդատ Գ-ի միջև կնքված դաշինքը:

Շապուհ Բ-ը, որ ուշադիր հետևում էր դեպքերի զարգացմանը, որոշեց նախահարձակ լինել, քանի որ միավորված հայ նախարարությունը հռոմեական օժանդակության դեպքում խիստ վտանգավոր էր դառնում: Փավստոս Բուզանդի հաղորդմամբ՝ Հայաստան է ուղարկվում Ներսես զորավարը (Փավստոս Բուզանդ 86): Հակառակ պարսիկների սպասելիքներին, թե հռոմեացիները թուլացել են և հայկական գործերին չեն միջամտի, կայսրությունն ակտիվ քայլերի դիմեց: Հռոմեական արևելյան լեգեոններն ու հայկական զինված ուժերը կարողացան կասեցնել պարսկական զորքերի հարձակումը և անգամ հաղթել: Ի վերջո, կողմերը պարսիկների համար նպաստավոր պայմաններով համաձայնության եկան, ըստ որի՝ Տիրանն ազատվեց գերությունից, իսկ թագաժառանգ Արշակը, նրա համաձայնությամբ, հռչակվեց Հայոց թագավոր: Շապուհ Բ-ը թագադրեց Արշակին, և Տիրանը թագավորական ընտանիքի, բոլոր գերիների ու կողոպտված զանձերի հետ բազմաթիվ ընծաներով ուղարկվեց Հայաստան (Փավստոս Բուզանդ 88-92): Պատմահայրն իրավացիորեն նշում է, որ պարսից արքան այդ քայլն արեց՝ «ակն ածելով ի գորացն Հայոց» (Մովսես Խորենացի 332): Բ. Հարությունյանը նշում է, որ վերոնշյալ իրադարձությունների արդյունքում Մեծ Հայքի թագավորությունը որոշ ժամանակով հայտնվեց պարսկական ազդեցության ներքո (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 70):

Պարսիկների կողմից Տիրանի գերևարման պատճառը Հ. Աստուրյանը համարում է Հայոց թագավորի՝ Կոստանդինոսին օգնական գնդեր տրամադրելը (Աստուրեան 280): Ն. Շահնագարյանը նշում է, որ Կոստանդինոսին օգնական զորք տրամադրելը պատճառ չէր, այլ լուր պատրվակ: Պատճառն այն էր, որ Հայաստանը Հռոմի դաշնակիցն էր (Շահնագարյան 226): Տիրանի վարած արտաքին քաղաքականության մասին իր տեսակետն է հայտնել Հ. Հարությունյանը, համաձայն որի՝ Տիրան թագավորը չհետևեց իր հոր վարած հռոմեատեր քաղաքականությանը, նա աշխատեց Հյուսիսային Միջագետքում տեղի ունեցող պարսկա-հռոմեական պատերազմների ընթացքում պահպանել չեզոքություն, որը համապատասխանում էր Հայաստանի շահերին: (Հարությունյան 99-100): «Իսկական կռվախնձորը երկու պետությունների մեջ,- գրում է Լեոն,- մնում էր Հայաստանը, որը Շապուհը համարում էր պարսկական թագի վաղեմի ժառանգություն և որի վերստացումը նա դարձրել էր իր քաղաքականության անկյունաքար: Տիրանի ժամանակ էլ այդ հուժկու և եռանդուն սասանյանն աշխատում էր՝ ինչպես և Խոսրովի ժամանակ, դիվանագիտական կտրուկ միջոցներով իրականացնել իր նպատակը: Տիրանը, հռոմեացիների թուլության պատճառով մենակ մնալով այդ ուժեղ քաղաքականության առջև, թեքվեց դեպի Շապուհի կողմը» (Լեոն 438): Այս հարցի հետ կապված իր տեսակետն ունի Բ. Հարությունյանը, ըստ որի՝ իրականում բոլոր ուղղակի և անուղղակի տեղեկությունները փաստում են, որ Տիրանը թե՛ Պարսկաստանի և թե՛ Հռոմի հետ վարել է բարեկամական հարաբերություններ՝ հմտորեն խուսափելով նրանց միջև, ինչը հնարավորություն է տվել ապահովելու երկրի անկախությունը և ներքին հարցերում վարելու միանգամայն անկախ քաղաքականություն (Հարությունյան 26):

Ասպիտով, օգտագործելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև համադրելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները, կարող ենք արձանագրել, որ արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում Տիրանը մի կողմից հավատարիմ մնաց հայ-հռոմեական դաշինքին, մյուս կողմից փորձեց բարիդրացիական հարաբերություններ պահպանել Պարսկաստանի հետ: Կարծես թե, այդ քաղաքականությունը սկզբնական շրջանում հաջողում էր, սակայն, ցավոք, այն երկար չտևեց և ավարտվեց Տիրանի կոլրացմամբ ու գերեվարմամբ:

Հայոց թագավոր Տիրան Արշակունու ներքին քաղաքականությունը

Տիրանի վարած ներքին քաղաքականության մասին պարզաբանումներ մտցնելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է իմանալ թե ինչպիսին էին թագավորի

հարաբերությունները նախարարների և եկեղեցու հետ պատմիչների հաղորդած տեղեկությունների համատեքստում: Փափստոս Բուզանդը նախարարությունների հարցում տարվող քաղաքականությունը կապում է Հայր մարդպետի գործունեության հետ: Պատմիչը վերջինիս համարում է «այր մի անօրեն և այսամուտ, որ անելի ընդ ազգս նախարարացն գրգռեր զթագաւորն Տիրան: Այս ինքն ուներ զպատիւն մեծի մարդպետութեան, այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին: Չբազումս 'ի նախարարացն ետ քուրթեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տերութիւն թագաւորութեանն: Մանաւանդ անելի գերկու տոհմն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուտ, և անուկ առնել միահաղոյն զտոհմն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային 'ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչև անգամ և զբզակ կոտորեցին ազգացն» (Փափստոս Բուզանդ 74): Պատմիչի հաղորդած տեղեկությունները ցույց են տալիս, որ Հայր մարդպետը անօրեն, սատանայաբարո մարդ էր, որը թագավորին գրգռել է նախարարական տների դեմ, կոտորել տվել շատ անմեղ նախարարների, նրա չարախոսությամբ սրի քաշվեցին և անզավակ դարձան Ռշտունյաց ու Արծրունյաց տոհմերը, որոնց իգական սեռի ներկայացուցիչներն անգամ սպանվեցին:

Շարունակելով իր միտքը՝ պատմիչը գրում է, որ հրաշքով փրկվեցին երկու երեխա՝ Մեհենդակ Ռշտունու որդի Տաճատը և Վաչե Արծրունու որդի Շավասպը: Տիրանը կարգադրել էր նրանց ևս սպանել, սակայն թագավորի հրամանը չհրազործվեց, քանի որ իրերի բերումով այդտեղ գտնվող Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները, որոնք թագաժառանգ Արշակի դաստիարակներն էին, իրենց կյանքը վտանգելով, փրկեցին այդ տոհմերի վերջին շառավիղներին և նրանց դուրս բերելով արքունական բանակից՝ հեռացան Տայք՝ իրենց տոհմական տիրույթներ: Նրանք ինամեցին այդ մանուկ իշխանագուններին, այնուհետև նրանց կնության տվեցին իրենց աղջիկներին, որով և այդ տոհմերը չմարեցին: Իրենք էլ երկար ժամանակ թողեցին պետական ծառայությունը (Փափստոս Բուզանդ 74): Դատելով Փափստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից՝ կարող ենք արձանագրել, որ պատմիչը բացասական է ներկայացնում Հայր մարդպետի գործունեությունը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ պատմիչը ոչինչ չի հայտնում այն մասին, թե ինչու են բնաջնջվել Ռշտունիները և Արծրունիները: Կամ նրանք մեղք էին գործել, որի մասին պատմիչը լռում է, կամ էլ արքունիքը նրանց ոչնչացնում էր՝ հետապնդելով կարևոր հեռահար ռազմավարական նպատակներ: Բ. Հարությունյանը նշում է, որ Ռշտունյաց և, մասնավորապես, Արծրունյաց տոհմերին, եթե մոտենանք հայագիտության մեջ ամրացած տեսակետով, կարելի է ավելի շուտ մեղադրել պարսկասիրության, քան Հռոմի հարելու մեջ: Այսպիսով՝ ստացվում է, որ թագավորն իր զայրույթը թափում է պարսկասերների վրա, ինչը, իհարկե, տրամաբանական չէ (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 63): Պատմիչը Հայր մարդպետին մեղադրում է նախարարներին առանց հանցանքի մատնելու, նախարարական տներն իրար դեմ գրգռելու, չարախոսելու և կոտորել տալու մեջ: Բնականաբար այստեղ հարց է ծագում. Կարո՞ղ էր թագավորը առանց լուրջ մեղադրանքի գնալ նման քայլի: Կարծում ենք՝ ոչ: Հետևաբար կարող ենք արձանագրել, որ Հայր մարդպետի այդ մատնության տակ թաքնված են եղել ծանրակշիռ պատճառներ, ինչն էլ ստիպել է թագավորին բնաջնջել այդ երկու նախարարական տները: Կարծում ենք, որ հավանական է նաև այն ենթադրությունը, ըստ որի՝ արքունիքն ինքը կարող էր ներքին խարդավանքների միջոցով ստեղծել այնպիսի իրավիճակ, որն էլ այդ նախարարական տների ոչնչացման պատճառ է հանդիսացել: Մարկվարտը և Հ. Մանանդյանը նշում են, որ մարդպետության պաշտոնը զբաղեցնողները եղել են նշանավոր դեմքեր, որոնք նպատակ են ունեցել վերականգնելու Մեծ Հայքի թագավորության փառքն ու հզորությունը՝ թուլացնելու նախարարական ավագանուն և արդեն ավատականացած եկեղեցուն (Մանանդյան 156; Markwart 155-156): Արծրունիների և Ռշտունիների տոհմերի բնաջնջումը Մարկվարտն իրավացիորեն բացատրում է նրանով, որ,

գտնվելով Ատրպատականի, Ադիաբենեի սահմանների մոտ, այդ երկու նախարարությունները ռազմավարական առումով ունեին մեծ կարևորություն, ուստի անհրաժեշտ էր դրանց տիրույթները ենթարկել Արշակունիների իշխանությանը (Markwart 59-60): Հետևաբար միանգամայն ընդունելի է Բ. Հարությունյանի այն տեսակետը, համաձայն որի՝ անկասկած, արքունիքը կամենում էր այդ շրջանները և դրանցով անցնող մայրուղիներն առնել իր անմիջական վերահսկողության ներքո: Սակայն խոսքը տոկ նախարարությունների տիրույթների մասին չէ, այլ երկու երկրամասերի՝ Արևմտյան Վասպուրականի կամ Ռշտունյաց աշխարհի կամ Կորճայքի, որոնք հանձնված են եղել հիշյալ նախարարությունների կառավարմանը: Պաշտոնի ժառանգականությունն ավատատիրության շրջանում կարող էր հանգեցնել նշված երկրամասերը ժառանգական տիրույթի վերածելուն, ինչը միանգամայն անընդունելի էր արքունիքի համար: Իսկ Մամիկոնյաններն, այդ տոհմերի վերջին շառավիղներին փրկելով, պաշտպանում էին առաջին հերթին իրենց ավատատիրական շահերը, որոնք նրանց կարծիքով վտանգվել էին արքունիքի կողմից (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 64):

Հայոց թագավոր Տիրանի վարած ներքին քաղաքականության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել թագավորի հարաբերությունները եկեղեցու հետ: Զանի դեռ Վրթանես կաթողիկոսը ողջ էր, թագավորը եկեղեցու նկատմամբ հատուկ քաղաքականություն չէր վարում: Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ «թուլացեալ յամենայն բարեպաշտութենէ գաղտնի, ոչ իշխելով համարձակ պատուել զախտն ի մեծէն Վրթանիսէ» (Մովսես Խորենացի 322): Վերջինս մահացավ Տիրանի գահակալության երրորդ տարում, հավանաբար, 341/342 թ.: Նրան հողին հանձնեցին Ղարանաղյաց գավառի Թորդան գյուղում, իսկ նոր կաթողիկոս ձեռնադրվեց Վրթանեսի որդի Հուսիկը, որն ամուսնացած էր Տիրանի դստեր հետ և ըստ Պատմահոր՝ «եկաց յեպիսկոպոսութեանն ամն վեց» (Մովսես Խորենացի 326): Թագավորի հրամանով մի շարք մեծամեծ իշխաններ հազարապետ Վաղարշի առաջնորդությամբ Հուսիկին ուղարկեցին Կեսարիա, որտեղ նա հանդիսավոր ձեռնադրվեց Հայոց կաթողիկոս: Վերադարձին թագավորը Հուսիկին դիմավորեց Տափերի կոչվող կամրջի մոտ: Նա Տիրանի ուղեկցությամբ եկավ Արտաշատ և բազմեց հայրապետական աթոռին (Փավստոս Բուզանդ 48-50):

Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Հուսիկը փորձեց եկեղեցու իշխանությունը բարձրացնել՝ հակադրվելով արքունիքին և, առաջին հերթին, իր աներ Տիրանին: Հայոց թագավորը անհանգստացած էր եկեղեցու տնտեսական հզորացումից և թույլատրեց հեթանոսությանն աշխուժանալ և այն հակադրեց եկեղեցուն: Փավստոս Բուզանդը, որ բազմաթիվ դրական գծերով է ներկայացնում երիտասարդ կաթողիկոսին, Տիրանին ու երկրի մեծամեծերին բնութագրում է որպես «ոչ ինչ ըստ աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինելին: Զան գամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանն սպանութիւնս՝ անխտիր ի՛ հեղուլ գարին արդար ՚ի տարապարտուց գործէին, և այլ մեղս բազումս» (Փավստոս Բուզանդ, 50): Պատմիչի հաողորդած տեղեկությունները ցույց են տալիս, որ մեղադրանքները հիմնականում վերաբերում էին հեթանոսական ավանդույթներին, որոնք եկեղեցու աչքում մեծագույն մեղքեր էին, բայց թագավորի կողմից հովանավորվում էին:

Թագավորի և կաթողիկոսի հարաբերությունների սրման երկրորդ պատճառը, կարծում ենք, այն էր, որ Հուսիկը կնոջը չէր սիրում: Կինը նրան պարզևեց երկվորյակ տղաներ՝ Պապին և Աթանազիոսին, որից հետո Հուսիկը հեռացավ կնոջից (Փավստոս Բուզանդ 20): Կարծում ենք, որ սա կարող էր լինել անձնական վիրավորանք թագավորի համար և կաթողիկոսի հետ թշնամանալու լուրջ կռվան:

Ամենամյա տոներից մեկի ժամանակ Տիրանն իր մեծամեծերի հետ կամեցավ մտնել Մեծ Ծովք գավառի Բնաբեղ բերդի եկեղեցի, կաթողիկոսը նրան արգելեց՝ ասելով. «Չես արժանի, հի՛մ գաս, մի՛ գար ՚ի ներքս» (Փավստոս Բուզանդ 52):

Թագավորի հրամանով Հուսիկին հենց եկեղեցում բրածեծ արեցին: Եկեղեցու սպասավորները նրան տարան Դարասաղյաց գավառի Թորդան գյուղ, որտեղ հայրապետը շուտով մահացավ: Նրա դին ամփոփեցին տոհմական հանգստարանում (Փավստոս Բուզանդ 52): Պատմահայրը հիշյալ դեպքերը փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում: Ըստ նրա՝ իբր, երբ թագավորը կամեցել է եկեղեցու արևելյան պատին կախել Հուլիանոս Ուրացող կայսեր (361-363) պատկերը, որը նվեր էր ստացել անձամբ կայսրից, Հուսիկն այն ոտնակոխ է անում: «Որում ոչ ինչ ունկնդիր եղև Տիրան, քանզի երկեաւ ի Յուլիանոսե, զմտաւ ածելով՝ մեռանել ինքեան իբրև զկոխող թագաւորական պատկերի. և յաւելելալ բորբոքումն չարութեանն, զոր ուներ ընդ սրբոյ Յուսկանն, յաղագս հանապազորդ յանդիմանութեան իւրոյ յանցանաց՝ հրամայեաց ջալտիւք հարկանել յերկար, մինչ ի գտնելն աւանդեաց զհոգին» (Մովսես Խորենացի 326): Հավանական է Բ. Հարությունյանի տեսակետը, ըստ որի՝ ժամանակագրական առումով Պատմահոր այս հաղորդումը ոչ մի հիմք չունի, քանի որ Հուլիանոսը Տիրանի որդի Արշակ Բ-ի ժամանակակիցն է: Ուստի մտնում է ենթադրել, որ Մովսես Խորենացին հեթանոսների նկատմամբ Տիրանի հանդուրժողականությունը փորձել է բացատրել Հուլիանոս կայսրին հավատարմությամբ՝ նրանց դարձնելով ժամանակակիցներ (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 60):

Հուսիկի սպանությամբ նոր կաթողիկոսի ձեռնադրությունն օրակարգի հարց դարձավ: Նրա որդիներ Պապը և Աթանագինեսն իրենց խիստ աշխարհիկ վարքի պատճառով թեկնածուների մեջ չէին և նախընտրեցին զիվորական գործը: Զանի որ Գրիգոր Լուսավորչի տոհմից այլևս ոչ մեկը չկար, որոշվեց կաթողիկոսությունը հանձնել Դանիել Եպիսկոպոսին, որը «աշակերտ եղեալ էր մեծին Գրիգորի, վերակացու և զխաւոր եկեղեացն նահանգին Տարսուոյ, Գրիգորի ձեռական՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ուներ զիշխանութիւն զայն առանձինն. այլ վերակացու և հրամանատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս. եւ էր սա ազգաւ ասորի» (Փավստոս Բուզանդ 58): Թագավորի հրամանով նրա մոտ ուղարկվեցին Սահառույաց տոհմի Չոմն, Վանանդի Արտավան, Ամատույաց տոհմի Կարեն և Դիմաքսյան տոհմի Վարազ իշխանները: Իշխանները Դանիելին եկեղյաց գավառի Թիվ գյուղից ընդառաջ տարան Հայոց թագավորին և հանդիպեցին Աղձկյաց գավառի Բառաեջ գյուղում (Փավստոս Բուզանդ 62): Բ. Հարությունյանը ենթադրում է, որ սա, ամենայն հավանականությամբ, Աղձկիցի Բաթռիսջ գյուղն է (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 61): Սակայն Դանիելը թագավորին տեսնելուն պես նրան սկսեց մեղադրել հեթանոսությամբ հետևելու և Հուսիկ կաթողիկոսին սպանելու մեջ: Այդ ամենից զայրացած Տիրանը, որին նախարարների ներկայությամբ անպատվել էին, կարգադրեց Դանիելին խեղդամահ անել, չնայած ներկաները խնդրում էին վճիռը փոխել: Նրա մարմինը հողին հանձնվեց Տարոնի մայր եկեղեցում՝ Հացյաց դրախտ կոչված վայրում (Փավստոս Բուզանդ 66-68):

Թագավորը հայոց մեծամեծերի հետ որոշեց հայրապետական իշխանությունը հանձնել Տարոն գավառից Փառեն քահանային: Նա նույնպես ձեռնադրվելու համար Վասակ Մամիկոնյանի, Մեհենդակ Ռշտունու, Անդովկ Սյունու, Արշավիր Կամսարականի և ուրիշ 10 պատվավոր մարդկանց ուղեկցությամբ ուղարկվեց Կեսարիա և վերադառնալուց հետո կաթողիկոս եղավ կարճ ժամանակով (Փավստոս Բուզանդ 70): Պատմահոր հաղորդմամբ՝ նա կաթողիկոս ձեռնադրվեց «ի տասներորդ ամի Տիրանայ, որ կալաւ զաթռն ամս չորս» (Մովսես Խորենացի 330): Փառենը լավատեղյակ էր իր նախորդների ճակատագրին և մտքով անգամ չէր անցկացնում ընդդիմանալ թագավորին կամ քննադատել նրան ու մեծամեծ նախարարներին (Փավստոս Բուզանդ 70):

Տիրանի վարած ներքին քաղաքականության մասին պատմագիտության մեջ կան հակասական տեսակետներ: Մանսավորապես, Բ. Հարությունյանը նշում է, որ նախարարությունների հարցում Տիրանը շարունակեց հոր՝ Խոսրով Կոտակի,

քաղաքականությունը: Դա ոչ թե քմահաճության արդյունք էր, այլ խորապես մտածված քաղաքականություն, որը միջազգային բարդ պայմաններում փորձում էր կյանքի կոչել Հայոց թագավորը (Հայոց պատմություն ԳԱԱ հրատ. հտ. Բ գիրք Ա 62): Լեոն Նշում է, որ Տիրանի ժամանակ ուժեղացավ պարսկական կողմնորոշման քաղաքականությունը, Հայոց թագավորը լայն համբերություն էր ցույց տալիս դեպի հեթանոսական անցյալը և երկրի ներսում տեղի էին ունենում խիստ ընդհարումներ հռոմեական կողմնորոշման կողմի հետ, որի պաշտպանը դարձավ հոգևորականությունը (Լեո 435-436): Հ. Հարությունյանը նշում է, որ Տիրանն ուժեղացնելով կենտրոնական իշխանությունը, պայքար է ծավալում երկու ուղղությամբ թե՛ պարսկական և թե՛ հռոմեական քաղաքականություն վարող իշխանների և հոգևորականների դեմ (Հարությունյան 100): Ա. Գարագաշյանը նշում է, որ Խոսրովին հաջորդած Տիրան թագավորի օրոք քայքայվեց Մեծ Հայքի թագավորության ներքին հզորությունը (Գարագաշյան 19): Ի մի բերելով վերև ասվածը, կարող ենք ամրագրել, որ Տիրան թագավորը վարել է խորապես մտածված և միանգամայն արդարացված ներքին քաղաքականություն՝ թիրախ ունենալով բարձրացնելու և ամրապնդելու Մեծ Հայքի կենտրոնաձիգ թագավորության կենսունակությունը:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրենք, որ Տիրան Արշակունու թագավորության պատմափուլում շարունակում էր լարված մնալ Հայոց թագավորության արտաքին միջավայրը: Հարևան քաղաքական միավորները անընդհատ սպառնում էին պետության անվտանգությանը: Նման պայմաններում Տիրանը որդեգրեց ճկուն արտաքին քաղաքականություն: Հայոց թագավորը մի կողմից հավատարիմ մնաց հայ-հռոմեական դաշինքին, մյուս կողմից փորձեց կարգավորել հարաբերությունները Պարսկաստանի հետ: Ներքին քաղաքականության մեջ Տիրանը կարողացավ միավորել մասնատված երկիրը և փորձ կատարեց ամրապնդել կենտրոնաձիգ իշխանությունը երկրում: Տիրանի օրոք հայության հոգևոր-դավանանքային միջավայրը շարունակեց մասնատվածությունը, ի դեմս հեթանոսության աշխուժացման, ինչը մտածված քաղաքականության արդյունք էր՝ հակադրվելու հզորացած եկեղեցուն:

Օգտագործված գրականություն

1. Աստուրեան, Հարութիւն. *Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 Էն Ն. Ք. մինչև 428 յ. Ք.*, Վենետիկ, 1912:
2. Գարագաշեան, Աստոն. *Քննական պատմութիւն հայոց ըստ Նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Գ, Թիֆլիս, 1895:*
3. Լեո. *Երկերի ժողովածու, հատոր առաջին*, Երևան, 1966:
4. *Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հատոր Բ, միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք առաջին (IV դարի սկիզբ – IX դարի կես)*, Երևան, 2018:
5. Հարությունյան, Բաբելեն. «Միջավատատիրական պայքարի և հայոց Խոսրով Բ Կոտակ և Տիրան թագավորների կենտրոնաձիգ իշխանության ուժեղացման քաղաքականության շուրջ», *Գիտելիք*, թ. 14, 2004:
6. Հարությունյան, Հմայակ. *Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.)*, Երևան, 1945:
7. Մանանդյան, Հակոբ. *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա*, Երևան, 1957:
8. Մովսես, Խորենացի. *Հայոց պատմություն*, Երևան, 1981:

9. Շահնագարյան, Երկրլայ. *Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ* (մ. թ. ա. VI դ. – մ. թ. V դ.), Երևան, 1990:

10. *Պատմություն Սեբեոսի*, աշխատասիրությամբ Գևորգ Աբգարյանի, Երևան, 1979:

11. Փալստոս Բուզանդ, *Պատմություն հայոց*, Երևան, 1987:

12. Baynes, Norman. "Rome and Armenia in the Fourth Century", *The English Historical Review*, 1910, vol. XXV, London.

13. Bury, John. "The date of Battle of Singara", *Byzantinische Zeitschrift*, 1896, V.

14. Daryaee, Touraj. *King of the Seven Climes: A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE)*, Irvine, 2017.

15. Frye, Richard. *The History of Ancient Iran*, Munchen, 1983.

16. Markwart, Josef. *Südarmenien und die Tigrisquellen, nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV*, Wien, 1930.

17. Sykes, Percy. *A History of Persia*, vol. I, London, 1921.

18. Taylor, Don. *Roman Empire at War, A Compendium of Battles from 31 BC to AD 565*, England, 2016.

19. *The Cambridge Medieval History, volume I, The Christian Roman Empire and The Foundation of The Teutonic Kingdoms*, edited by Gwatkin, Henry. Whitney, James. Cambridge, 1911.

20. Адонц, Николай. «Фауст Византийский как историк», Христианский Восток. Серия, посвященная изучению христианской культуры народов Азии и Африки, том VI, 1922, Санкт-Петербург.

Works Cited

1. Adonc, Nikolaj. Faust Vizantijkij. kak istorik. <<Hristianskij Vostok. Serija, posvashennaja izucheniju hristianskoj kul'tury narodov Azii i Afriki>>. Sankt-Peterburg. 1922. Tom VI, [Faustus of Byzantium: As a Historian. "Christian East. Series dedicated to the study of the Christian culture of the peoples of Asia and Africa". Sankt-Peterburg, 1922, Volume VI]. (In Russian)

2. Astowrean, Harowt'iwn. Qaghaqakan veraberowt'iwnner y'dnme'j Hayastani & Hr'ovmay 190 e'n n. Q. minchev 428 y. Q. Venetik, [Political Relations between Armenia and Rome from 190 BC to 428 AD. Venetik] 1912. (In Armenian)

3. Garagashean, Anton. Qnnakan patmowt'iwn hayoc y'st noragoyn patmakan, lezowbanakan ev banasirakan teghekowt'eanc. masn G. T'iflis, [Examination of Armenian History according to the latest Historical, Linguistic and Philological Information. part C. Tiflis] 1895. (In Armenian)

4. Harowt'yownyan, Babken. Mijavatatirakan payqari & hayoc Xosrov B Kotak & Tiran t'agavorneri kentronad'ig ishkanowt'yan owjheghacman qaghaqakanowt'yan showrj. Erevan. <<Giteliq>>. 2004. t'iv 14, [On the Policy of Strengthening the Centrifugal Power of the Armenian Khosrov II Kotak and Tiran kings and Intergovernmental Struggle. "Knowledge". Yerevan. 2004. No. 14.]. (In Armenian)

5. Harowt'yownyan, Hmayak. Hayastany' Arshakownineri jhamanak (1-429 t't.). Erevan, [Armenia during the Arsacids (1-429). Yerevan] 1945. (In Armenian)

6. Hayoc patmowt'yown. GAA hrat. Hator B. mijin darer (IV dar-XVII dari ar'ajin kes). girq ar'ajin (IV dari skizb-IX dari kes). Erevan, [Armenian History: Publication of the National Academy of Sciences. Volume B. The Middle Ages (IV century-first half of XVII century). book one (beginning of IV century-half of IX century). Yerevan] 2018. (In Armenian)

7. Leo. Erkeri jhoghovac'ow. hator ar'ajin. Erevan, [Collection of Works. Volume one. Yerevan] 1966. (In Armenian)

8. Manandyan, Hakob. Qnnakan tesowt'yown hay jhoghovrdi patmowt'yan. hator B. masn A. Erevan, [Examination Theory of the History of the Armenian People. Volume B. Part A. Yerevan] 1957. (In Armenian)
9. Movses, Xorenaci. Hayoc patmowt'yown. Erevan, [Armenian History. Yerevan] 1981. (In Armenian)
10. Patmowt'iwn Sebe'osi. ashxatasirowt'yamb Gevorg Abgaryani. Erevan, [Sebeos' History. Yerevan] 1979. (In Armenian)
11. P'avstos, Bowzand. Patmowt'yown hayoc. Erevan, [History of Armenia. Yerevan] 1987. (In Armenian)
12. Shahnazaryan, Nikolay. Hay-iranakan & hay-hr'omeakan haraberowt'yownneri' hay matenagirneri lowsabanowt'yamb (m.t'.a. VI d.-m.t'. V d.). Erevan, [Armenian-Iranian and Armenian-Roman Relations through the Coverage of Armenian Chroniclers (VI century BC-V century AD). Yerevan] 1990. (In Armenian)

THE KINGDOM OF GREATER ARMENIA DURING THE REIGN OF TIRAN ARSACID

EDGAR VARSHAMYAN

*Yerevan State University, Chair of the History of Armenia, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

This article aims at revealing the internal political developments of the Arsacid dynasty of Greater Armenia in the 40s of the 4th century, as well as the relations of the Armenian king Tiran with Rome and Persia, having as main target the foreign policy events.

To achieve the above goal, the following tasks are at the core of the work. a) to study the foreign policy challenges of the Arsacid dynasty of Greater Armenia in the wake of the Roman-Persian conflict, b) to study the foreign and domestic policy pursued by the Armenian king Tiran.

The work is written by a combined examination of facts, using the methods of historical-comparative analysis.

As a result of the study, it can be argued that the external environment of the Armenian kingdom remained tense during the historical period of the kingdom of Tiran. Neighboring political units constantly threatened the security of the state. Under such conditions, Tiran adopted a flexible foreign policy. On the one hand, the Armenian king remained loyal to the Armenian-Roman alliance, on the other hand, he tried to normalize relations with Persia. In domestic politics, Tiran was the real successor to Khosrov Kotak. With his policy he helped to unite the divided country, he tried to strengthen the centrifugal power in the country.

Keywords: *The Roman Empire, Sassanian Persia, foreign policy, domestic policy, The Kingdom of Greater Armenia, Tiran Arsacid, Shapur II, Constantius.*

ЦАРСТВО ВЕЛИКАЯ АРМЕНИЯ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ТИРАНА АРШАКУНИ

ЭДГАР ВАРШАМЯН

*аспирант кафедры истории Армении
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – раскрыть внутривнутриполитическое состояние Аршакунийского царства Великая Армения в 40-х годах IV века, а также максимально полно и всесторонне раскрыть отношения армянского царя Тирана с Римом и Персией, уделяя особое внимание внешнеполитической обстановке этого периода.

Для достижения вышеуказанной цели в основу работы положены следующие задачи: а) изучить внешнеполитические вызовы для Аршакунийского царства Великой Армении после римско-персидского конфликта; б) изучить внешнюю и внутреннюю политику, проводимую армянским царем Тираном.

Работа написана путем комбинированного исследования фактов с использованием методов сравнительно-исторического анализа.

В результате проведенного исследования можно утверждать, что внешняя обстановка Армянского царства оставалась напряженной в исторический период царствования Тирана. Соседние политические единицы постоянно угрожали безопасности государства. В таких условиях Тиран проводил гибкую внешнюю политику. С одной стороны, армянский царь оставался верным армяно-римскому союзу, с другой – пытался нормализовать отношения с Персией.

Во внутренней политике Тиран был настоящим преемником Хосрова Котака. Своей политикой он способствовал объединению раздробленной страны и попытался укрепить централизацию власти.

Ключевые слова: *Римская империя, Сасанидская Персия, внешняя политика, внутренняя политика, царство Великая Армения, Тиран Аршакуни, Шапур II, Констанций.*



**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԳԵՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱԼ
ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ»¹ ԵՐԿՈՒՄ***

ՉՏԴ 342.1

DOI: 10.52063/25792652-2021.4-78

ՆԱՐԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
աստվածաբանության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mirzoyan.narineac@gmail.com*

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել պատերազմի ու գերության վերաբերյալ իրավակարգավորումներն ըստ Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկի:

Աշխատանքի խնդիրն է բնագրերի համադրմամբ վեր հանել խնդրո առարկա հարցերի սահմանումներն ըստ երեք խմբագրությունների և քննության առնել դրանց բովանդակային առանձնահատկությունները:

Ուսումնասիրության կարևորությունն ու անհրաժեշտությունը պայմանավորված են պատմաէկեղեցական իրողությունների բնութագրմամբ, պետաիրավական համակարգի զարգացմամբ: Հեղինակի՝ ազգային գիտակցության ու ազգապահպանման վերաբերյալ հայացքները, որոնք միտված են պետականության վերականգնմանը հասարակական միասնականության և իրավակարգավորման պայմաններում, կարևորվում են իրենց արդիական նշանակությամբ:

Աշխատանքը շարադրված է աղբյուրների և առկա ուսումնասիրությունների պատմաքննական վերլուծությունների կիրառմամբ:

Հետազոտությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ Մխիթար Գոշը քննարկվող թեմային հատկացնում է առանձնահատուկ նշանակություն՝ կարևորելով պետահասարակական հարաբերությունների իրավակարգավորումները այնպիսի բացառիկ պայմաններում, ինչպիսիք են՝ պատերազմական իրադրությունը և հետևանքները: Օրենսգիրքը դրանց կարգավորման իրականացումը հնարավոր է համարում հանրային կյանքի հիմքում ազգային արժեքների իրավական ամրապնդմամբ:

Աշխատանքում զուգահեռաբար տրվում են քննարկվող թեման ներկայացնող բոլոր հոդվածների բնագրերը:

¹ «Գիրք դատաստանի» անվանածը բնագրային է: Իրավաբանական այս հուշարձանի բոլոր դարերի ձեռագրերում երկն անվանված է «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի», ինչպես օրինակ՝ «ի ձեռն գրոց դատաստանի», «զգիրս դրոշմեցաք դատաստանի», «յօժարեցաք գրել զդատաստանաց գիրքըս», «պատճառ գրոցս դատաստանի», «զգիրս դատաստանի», «զգիր դատաստանիս», «ի գիրս դատաստանի» և «գրոցս դատաստանի»: Ուստի գրության բնագրային տարբերակը պահպանում ենք ամենուր: Հարկ է նշել նաև, որ հայագիտության մեջ առավել տարածված և կիրառելի տարբերակը «Դատաստանագիրք» անվանածն է:

* Հոդվածը ներկայացվել է 24.11.2021թ., գրախոսվել՝ 30.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հիմնաբառեր՝ պատերազմ, գերի, գերեվարում, պետություն, եկեղեցի, թագավոր, դատաստան, այլազգի, կին, տղամարդ:

Ներածություն

Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկասիրությունը, որպես հայ իրավամտքի եզակի հուշարձան, հանդես է գալիս բարձրարժեք իրավագիտական նշանակության և ստեղծման ժամանակաշրջանի պատմական կարևորության համատեղմամբ: Հասարակական կյանքի տարաբնույթ հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավանորմերի հաստատմամբ օրենսդիրը ձևակերպում ու հիմնավորում է իրավահաստատ դրույթների համապարփակ ամբողջություն, որոնք կոչված էին ծառայելու պետության սահմանադրական իրավունքի ապահովմանը:

Չաքարյան իշխանապետության օրոք ստեղծված իրավական հուշարձանը դառնում է ազգային ինքնության պահպանման ու պետականաշինության անկյունաքար: Չաքարյանների՝ պետականության վերականգման ջանքերը համաքայլ շարունակությունն էին այն գործընթացի, որի սկզբնավորման հեղինակը իրավական դաշտում նրանց խոստովանահայրն է՝ իրավագետ, մանկավարժ, առակագիր, քաղաքական, հասարակական, պետական ու եկեղեցական գործիչ Մխիթար Գոշը:

Ա)Պատերազմի և գերության հարցերը կարգավորող օրենքները՝ ըստ «Գիրք դատաստանի» երկի

«Գիրք դատաստանի» բազմատիրույթ ընդգրկում ունեցող իրավահաստատ երկն ամբողջանում է հասարակական ու պետական կյանքում առանձնահատուկ կարևորություն ներկայացնող մեկ այլ թեմատիկայի՝ պատերազմի ու գերության հարցերի իրավակարգավորմամբ: Խնդրո առարկա հարցերի սահմանումներն արտացոլված են երկի տասը հոդվածների շրջանակում: Իրավակարգավորումների միջև կան ներքին Եական տարբերություններ, որոնք վերաբերում են կյուլթի ոչ միայն ձևին, այլև բովանդակությանը, որովհետև միևնույն իրավահարաբերությունը տարբեր ձեռագրախմբերում այլաձև է կարգավորվում՝ պայմանավորված աշխատության Ա, Բ և Գ խմբագրություններով և ժամանակաշրջանների առանձնահատկություններով:

Աշխատանքի շարադրման համար հիմք ենք ընդունում Ա խմբագրությունը՝ որպես նախնական ու հեղինակային, մի հանգամանք, որ շատ կարևոր է քննարկվող թեմայի շուրջ հեղինակի իրական հայացքներն արտահայտելու համար: Հարկ է նշել, որ ուսումնասիրողները «Գիրք դատաստանի» երկի բովանդակային առանձին հարցերի անդրադառնալիս տարբեր ու հակասական տեսակետներ են առաջադրել՝ պայմանավորված տարբեր խմբագրությունների կիրառմամբ: Ուստի անհրաժեշտ ենք համարում տարբեր խմբագրությունների համադիր ներկայացումն ու վերլուծությունը՝ հիմք ընդունելով Գոշի հեղինակած օրինակը, այն է՝ Ա խմբագրությունը:

Ստորև տրված են պատերազմի ու գերության հարցերի իրավակարգավորումների բնագրերն ըստ Ա, Բ¹ և Գ խմբագրությունների: Քանի որ Գ խմբագրությունը կազմվել է ավելի ուշ՝ Ա խմբագրության հետևողությամբ, և ունի նույն հաջորդականությունն ու թեմաները, ապա աղյուսակով զուգարաբար ներկայացնենք Ա և Գ խմբագրությունները: Ա և Գ խմբագրություններն ունեն բովանդակային տարբերություններ, որոնք աղյուսակում ընդգծված են, իսկ եթե նույն միտքն այլ կերպ է արտահայտված, չենք ընդգծել:

¹ Ա և Բ խմբագրությունների գիտահամեմատական արդյունքները ի հայտ են բերում Ա և Բ խմբագրությունների միջև բովանդակային և տեքստային նույնություններ՝ միայն տարբեր հաջորդականությամբ և աննշան տեքստային տարբերություններով, որոնց հղման կարգով կանդրադառնանք Ա խմբագրության տեքստում:

Աղյուսակ

Դատերազմի և գերության հարցերի իրավակարգավորումների բնագրերն ըստ Ա և Գ խմբագրությունների

Ա խմբագրություն	Գ խմբագրություն
<p>ԳՆՈՒՄ Բ. ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱԻՐՈՒՑ ԴՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՑԱ¹</p> <p>Դատաստանաւ վարեցի յամենայն իրս եւ ի գործս հաւատացեալ թագաւոր: Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, մի՛ տացէ առնել սպանումն, բայց եթէ որ պատճառ պատերազմին իցէ յայլազգեացն: Եւ եթէ զքաղաք պաշարիցէ այլազգեաց, նախ ի խաղաղութիւն զնոսա կոչիցէ մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ եթէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ, զընդդիմացեալսն սպանեալ՝ զայլսն ընդ հարկիւ կայցէ. ապա թէ անձնատուրք լիցին, յայլսն հարկիցին, այլ մի՛ ի գլուխս: Եւ զծառատունկս ոչ հարկանել ի պաշարել քաղաքի՝ զպտղաբերս: Չքաղաքատուրս եւ զբերդատուրս, եթէ ճշմարիտ իցէ եւ յայլազգեաց, մատնիցէ մահու: Ապա եթէ բաւական իցէ փրկել զանձն, զկին եւ զմանկունս յարքունկիս կալեալ վաճառիցէ եւ տարագիր ի ժառանգութենէ արասցէ՝ խրատեալ յաչս: Ապա եթէ չարն ի գլուխ ելանիցէ, եւ ընդ ձեռամբ գայցէ, մի՛ ապրեցուցէ: Իսկ եթէ քրիստոնեայ եւ հանդերձեալ իցէ յայլազգիս մատնել եւ եթէ ի քրիստոնեայս, նոյն դատաստան մահու է: Բայց վասն մարդասիրութեան մեր աւրինացս խրատեցի յաչս, կամ ի ձեռս, կամ յայլս, զի ապաշխարութեան հասանիցէ եւ մի՛ կորիցէ, թէ ի գլուխ ելեալ իցէ չարն եւ թէ ոչ²:</p> <p>Բայց ասելի է զաւրինակ բաժանման գերոյն եւ աւարին³: Եթէ պատահի թագաւորի երթալ յաւար ամենայն զաւրաք, դրոշիւք եւ փողովք յաշխարհի թշնամեաց եւ աւար առեալ դարձցի, ոսկի</p>	<p>ԳՆՈՒՄ Բ. ՎԱՍՆ ԹԱԳԱԻՐՈՒՑ ԴՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՑԱ</p> <p>Դատաստանաւ վարեցի յամենայն իրս եւ ի գործս արքայն: Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, հրաման մի՛ տացէ այլ սպանութիւն առնել: Եւ եթէ պաշարեցէ զքաղաք այլազգեաց, նախ ի խաղաղութիւն կոչեցէ զնոսա մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ թէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ զքաղաքն, զայնոսիկ, որ ոչ կամէին զխաղաղութիւն, որով սպանանէ եւ զայլսն ընդ հարկիւ ածցէ, ապա թէ եւ նոքա հակառակին, սատակեցէ զնոսա, իսկ զգլխաւորսն ոչ եւս: Եւ ի պաշարել արքայի զքաղաքս ոչ է պարտ զծառս պտղաբերս կտրել: Չքաղաքատուրս եւ զբերդատուրս, եթէ յառաջ քան զչարն ի գլուխ հանելն յայտնեցին իրքն, մահու մատնեցին, իսկ եթէ զնով զնեսցէ զանձն իւր, փրկեցի, ապա զաչսն հանիցեն եւ զկինն եւ զորդիսն յարքունկիսն ծառայ առցեն եւ զինքն յայլ աշխարհի վարեցեն մերկ եւ անաչք: Ապա թէ զչարն ի գլուխ հանիցէ, եւ ընդ ձեռամբ ածցեն զնա, անողորմ սպանցի. այս դատաստանս այլազգոյ է, թէ հանդիպի: Իսկ եթէ քրիստոնեայ իցէ եւ մատնիցէ քաղաք կամ բերդ ի ձեռս անօրինաց կամ ի ձեռս քրիստոնէից, զնոյն արասցեն. զկին եւ զորդիսն եւ զստացուածս առցեն եւ զինքն յաչսն խրատեցեն եւ յայլ աշխարհի վարեցեն եւ մի՛ սպանցեն վասն մարդասիրին Քրիստոսի:</p> <p>Եթէ պատահի երթալ թագաւորի յաւար զօրօք եւ աւար առեալ դարձցի, ոսկի գտեալ՝ արքային լիցի: Բայց մի՛ երդմամբ առցէ, այլ</p>

¹ Ա և Գ խմբագրություններում Բ հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ Երկրորդ՝ աշխարհական օրենքների Ա հոդվածը. այն նույնությամբ ներկայացնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 306):

² Բ խմբագրության մեջ՝ *եւ մի՛ կորիցէ չարին յանդ ոչ եղելոյ* (**Բաստամեանց**, էջ 308):

³ Այս նախադասությունը Գ խմբագրության մեջ չկա:

գտեալ յաւարին՝ արքայի լիցի: Բայց մի՛ երդմամբ առցէ, այլ քարոզ լիցի, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միոյ եւթն տուծեսցի¹: Բայց տասանորդս յեկեղեցին տացէ:

Եւ գերոյն եւ աւարին կէսն արքայի լիցի, եւ տասանորդեսցէ յեկեղեցիս, եւ ի կիսոյն՝ զաւրացն: Իւրաքանչիւր իշխանք զնոյն բաժին արասցեն եւ նոքա եւս նախ տասանորդեսցեն յեկեղեցիս իւրաքանչիւր: Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զաւրս, եւ իշխանք ինքեանց դրաւշիւք եւ փողովք իցեն, ոսկին նմանապէս արքայի լիցի, եւ ի գերոյն եւ յաւարեն՝ տասանորդ արքայի, իսկ յեկեղեցիսն՝ յիսներորդիցեն, որ է ըստ Աւրինացն: Փողս եւ դրաւշս պարտ է տալ իշխանի՝ ի վերայ գաւառի եւ բերդի լիցի:

Իսկ գողս թագաւորի եւ աւագակս ոչ վայել է, բայց միայն լուտեսս: Ապա թէ արտաքոյ իրաւանց էլցեն եւ առաքեսցեն, վասն հրամանին կէսն նոցա լիցի ի մարոյ եւ յանանոյ, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն, երկու բաժինն երթողին լիցի, զի կամաւք ի մահ դիմեցին: Չայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զաւրականին մեռանել՝ անպարտ է տերն: Իսկ գող առաքեալ եւ մեռեալ՝ պարտապան արեան է տերն, իսկ իւրովի երթողին՝ ոչ: Եւ զոր առաքեսցէ եւ ըմբռնեսցի, զնեսցէ, եւ զոր ոչն առաքեսցէ, ինքնին զնեսցէ զանձն:

Չաւրական ի պատերազմի զոք ըմբռնեալ՝ զգեստն եւ զէնքն ամենայն նորա լիցին, այլ զրահն՝ տեառն լիցի:

Արծաթ յաւարին իշխանացն լիցի, պղինձ եւ երկաթ եւ նման նոցա՝ զաւրացն: Դիպակ, կերպաս ամենայն աւրինակաւ թագաւորին լիցի, եւ ասրեղէն պատուական եւ կտաւ իշխանացն, եւ անարգ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զաւրացն: Իսկ զհարկս գաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն. մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւնս, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յԱստուծոյ կարգեցան ի փրկութիւն եւ ի պահպանութիւն

քարոզ կարդասցէ ի ժողովն, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միոյ եւթն տուծեսցի: Բայց թագաւորն ի տասնէն զմինն կաթողիկոսին տացէ յամենայնէ: Գերոյն եւ աւարոյն կէսն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն եւ տասանորդս տացեն յեկեղեցին: Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զօրսն, այլ իշխանք միայն՝ զօրօք իւրեանց, նոյնպէս ոսկին արքային լիցի, եւ գերին եւ աւարն՝ տասանորդս արքայի, իսկ յեկեղեցի՝ ի յիսնէն մինն ըստ Օրինացն: Փողս եւ դրօշս պարտ է տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի:

Գողս եւ աւագակս ոչ վայել է թագաւորի եւ իշխանի, բայց միայն լուտեսս, որ է **ջաշուշ**: Չօրք եւ իշխանք, եթէ հրամանաւ արքայի յաւար երթիցեն ըստ պատահման անկասկած, կէս աւարոյն եւ գերոյն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն՝ երկու բաժին երթողին լիցի, քանզի կամօք ի մահ դիմեցին: Չայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զօրականի մեռանել՝ անպարտ է տերն, որ առաքեսցն զնա: Իսկ եթէ արքայ առաքեսցէ, եւ մեռանիցի, պարտապան արեան նորա նա եղիցի, որ առաքեսցն զնա: Իսկ եթէ գողն հրամանաւ իւրով երթիցէ ի գողութիւն եւ մեռանի, արիւն նորա ի գլուխ նորա: Եւ զոր առաքեսցէ արքայ կամ իշխան ի գողութիւն, եւ ըմբռնեսցի, որ առաքեսցն զնա, նա զնեսցէ, իսկ եթէ կամաւ իւրով երթիցէ առանց հրամանի, ինքն զինքն զնեսցէ:

Չօրական եթէ ի պատերազմի զոք ըմբռնեսցէ, զգեստն, եւ զէնքն, եւ երկվարն նորա լիցի, իսկ զրահն՝ թագաւորին: Ոսկի, ակունք եւ կերպաս ամենայն կերպիւ, զորս առցեն յաւարի, թագաւորաց բաժին է, իսկ արծաթ եւ մարգարիտ՝ իշխանաց, նոյն եւ ասրեղէն պատուական. իսկ անարգ ասրեղէն, եւ կտաւ, եւ պղինձ, եւ երկաթ եւ այլ այսպիսի, զօրացն լիցի: Իսկ զհարկս գաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն եւ մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւն, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ Աստուծոյ, զի

¹ Բ խմբագրութեան մեջ՝ տուծեսցի-ն դարձել է տուզանեսցի (Բաստամեանց, Էջ 312):

<p>աշխարհի եւ ոչ ի կործանումն:</p> <p>Եւ արդ, այսպէս լիցի: Չանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ աւրինադրեաց յԵգիպտոս, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի նախ ինքեանց Էր ժառանգութիւն, եւ ոչ Էր հինգերորդ: Սոյնպէս եւ այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, եւ այգեստան, եւ բուրաստան մի՛ լիցի ընդ հարկաւ հնգեկին, նմանապէս ՝ ջրաղաց եւ տուն: Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի եւ կամ ընդ վաճառի հարկիցեն, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց, յորժամ բռնի ընդ հարկաւ արացեն:</p>	<p>յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն:</p> <p>Եւ արդ, այսպէս լիցի: Չանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս օրինադրեաց յԵգիպտոս, որ կոչի մինչեւ ցայսօր հնկակ, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի յառաջ ոչ էին հնկակ, այլ հայրենի կտուր, սակաւ եղեալ ունէին արծաթ համարով: Սոյնպէս եւ այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, եւ այգի, եւ դրախտ մի՛ լիցի ի նմանէ հնկակ, նմանապէս եւ՛ ջրաղաց, եւ տուն, եւ խանութ: Այլ թէ բնակիչքն արուեստաւորք են, իրաւամբ լիցի, որ ինչ պարտ իցէ, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց միայն այլազգեաց:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ Ը. ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈՑ¹</p> <p>Եթէ ի տանէ առն մատնիցի ի գերութիւն, յառնէն միայնոյ գնեցի, եւ թէ ի տանէ ծնողացն՝ յերկուցն, յորժամ ոչ ըստ կամաց առն անդ իցէ: Եւ այդ լիցի այդմ դատաստան: Բայց ժամանակն անսալոյ՝ կանոնացն լիցի. զի եթէ ոչ գտցէ միչչեւ գեւթն ամն շրջեալ, կին առցէ կամաւք ծնողաց կնոջն գերելոյ, եւ զինչան անդէն դարձուցէ զտուեալն ի բաժնի: Եւ առն գերելոյ նոյն լիցի՝ առնուլ այր կնոջն ըստ սահմանի ժամանակի:</p>	<p align="center">ԳԼՈՒԽ Ը. ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈՑ</p> <p>Եթէ ի տանէ առն գերի վարեցի կինն, այր իւր գնեցէ զնա: Եւ եթէ խռովեալ Էր կինն եւ ի տունս ծնողացն գնացեալ Էր եւ գերի վարեցի, այրն եւ ծնողքն գնեցեն: Նոյն լիցի եւ այրն, եթէ գերի վարեցի: Եւ երբ գերեցին, շրջելով խնդրեցեն եւթն ամ, եւ թէ ոչ գտցեն, որ ազատն մնաց՝ ամուսնացի հրամանաւ ծնողաց գերելոյն: Եթէ իրք մնացեալ կայ ի գերելոյն բաժնէ, անդրէն դարձուցեն ի ծնողսն գերելոյն:</p>
<p align="center">ԳԼՈՒԽ ԺԴ. ՅԱՂԱԳՍ ԴՏԱՍՏԱՆԱՑ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՍ ՅԱՂԱԳՍ ԱՅԼՈՑ ԻՐԻՔ ԱՅՐՆ ՅԱՄԻՑԷ, ԵՒ ԿԻՆ ԱՅԼՈՒԽ ԼԻՑԻ²</p> <p>Ապա թէ եւ հաւաստի յաղագս մահուան բանն, միչչեւ յոթն ամ մի՛ առցէ այր, ըստ սահմանի գերելոյն: Իսկ եթէ նախ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան զստուգելն, եւ զայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ այնմ առն պսակ ոչ իցէ, եւ մանկուք իցեն:</p>	<p align="center">ԳԼՈՒԽ ԺԴ. ՎԱՍՆ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՍ ԱՅԼ ՃԱՆԱԴԱՐՅՈՐԻ ԻՑԷ ԱՅՐՆ ԵՒ ՅԱՍԵՆԱՑ, ԵՒ ԿԻՆ ԱՅԼ ԱՅՐ ԱՌՆՈՒ</p> <p>Յորժամ այր ոք զնայ ի ճանապարհ եւ յամիցէ, պարտ է կնոջ նորա համբերել: Ապա եթէ լսէ վասն մահու ստուգիւ, մի՛ առցէ այր միչչեւ յեւթն ամն, ըստ սահմանի գերելոյն: Իսկ եթէ յառաջ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան զստուգելն մահու, եւ զայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ այնմ առն</p>

¹ Ա և Գ խմբագրություններում Ը հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ Է հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 102):

² Ա և Գ խմբագրություններում ԺԴ հոդվածն է, իսկ Բ խմբագրության մեջ՝ ԺԳ հոդվածը, որն ամբողջությամբ կրկնում է Ա խմբագրությունը (**Բաստամեանց**, էջ 109):

<p>Ապա եթե ինքեան պսակ իցէ եւ հաւանիցի աղաչողաց, կամք իւր են հնազանդիլ կամ ոչ:</p> <p>Ապա եթե զկնի սահմանին եւ ճշմարիտ կարծեալք սուտ մահուանն գայցէ, մի՛ առցէ զկին իւր, թէ ինքեան պսակ իցէ եւ այնմ առն չիցէ. ապա թէ այնմ առն իցէ եւ իւր չիցէ՝ առցէ, թէ եւ մանկուկն իցեն: Իսկ եթէ այնմ չիցէ եւ ոչ իւր, եւ յայնմանէ մանկուկն իցեն, մի՛ առցէ, զի զկնի սահմանի դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսասցէ, հարցեալ զկինն՝ զոր պտորժե՛ նմա լիցի, զի թերեւս այդպէս հակառակութիւնն լիցի լուծեալ: Եւ պատշաճ յաղագս երիտասարդութեանն տեսեալ ի նա յանգեցուցեն յերկուցն, եթէ անսան: 2այդ տեսաք յաղագս այդոցիկ իրաւացի դատաստան:</p>	<p>պսակ ոչ հասանի, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Ապա թէ այլ պսակ հասանի այս ճանապարհորդ այրկանս, իւր հրամանաւ լինի թողուլն եւ ոչ թողուլն: Ապա թէ յետ եւթն տարոյն եւ սուտ մահուանն գայցէ յետոյ, մի՛ առցէ զկինն իւր, թէ այլ պսակ հասանի իւր, եւ այրկանն, որ զկինն առեալ էր, ոչ հասանի պսակ. թողցի կինն այնմ, որ ոչ հասանի պսակ: Ապա թէ այնմ առն իցէ պսակ եւ իւր չիցէ, առցէ զկինն իւր, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Իսկ եթէ այնմ ոչ իցէ պսակ եւ ոչ իւր, մի՛ առցէ, զի զկնի սահմանին դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսայցէ, հարցանեն ընդ կինն, եւ կինն ում կամիցի՝ լինի:</p>
2. E'duard Bagrati Aghayan, *Ardi hayereni bacatrakan bar'aran*, [Explanatory Dictionary of the Modern Armenian Language] Erevan, «Hayastan», 1976:
3. Sergey Ashoti Galstyan, *Dprocakan bar'akazmakan bar'aran (Dprocakan matenashar) [School Word-Formation Vocabulary] (xmb. Hovhannes Zaqaryan)*, Er&an, ««Zangak-97» hratarakchut'yun», 2011.
4. R'usastani Dashnut'yan qaghaqaciakan datavarut'yan o'rensgirq, [The Civil Procedure Code of the Russian Federation] 14.11.2002.
5. Germaniayi qaghaqaciakan datavarut'yan o'rensgirq, [The Civil Procedure Code of Germany] 01.10.1879.
6. Erevan qaghaqi y'ndhanur iravasut'yan ar'ajin atyani dataran, *ED/22237/02/19* qaghaqaciakan gorc'ov oroshum, [The Court of First Instance of General Jurisdiction of the city of Yerevan, DD/22237/02/19 the decision on the civil case] 31.07.2019, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203958270.
7. ... *ED/6972/02/19* qaghaqaciakan gorc'ov oroshum, 26.03.2019, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203926045.

DETERMINING THE CHILD'S PLACE OF RESIDENCE IN COURT

HAYARPI ZARGARYAN

*Court of First Instance of the City of Yerevan, Judge;
Yerevan State University, Faculty of Law, Chair of Civil Law, Applicant;
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to emphasize the best interests of the child in litigation, and to cover the provisions of the substantive and procedural legislation on filing a lawsuit to determine the place of residence of a child.

The best interests of the child and their protection have remained a matter of concern to society and to the rule of law. Article 17 of the RA Family Code provides a legal opportunity to present the issue of determining the child's place of residence in combination with other requirements, but the article contains a grammatical error, which leads to misinterpretation and misuse of the article, which in turn is not in the best interests of the child. There are such problems in the case law due to the peculiarities of filing a claim for determining the child's place of residence, as the legal possibility of filing in combination with other claims, the lack of special jurisdictional rules, while these issues are not regulated by Articles 21-22 of the RA Civil Procedure Code. According to the author, the legal issue of determining the child's place of residence should be overcome by filling the legislative gap.

The article was written with the use of legal-comparative-analytical method.

The author came to the conclusion that there is a need to make additions and changes in Article 17 of the RA Family Code, as well as in Article 22 of the RA Civil Procedure Code.

Keywords: *determination of the child's place of residence in court, attachment of the child, right of the child to be heard, special rule of jurisdiction, selective territorial jurisdiction, combined claims, separate proceedings, existence of a claim.*

ОПРЕДЕЛЕНИЕ МЕСТА ПРЕБЫВАНИЯ РЕБЕНКА В СУДЕБНОМ ПОРЯДКЕ

ԱԿԱՐՔԻ ՅԱՐԳԱՐՅԱՆ

*судья суда первой инстанции города Еревана,
соискатель кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – обозначить и подчеркнуть интересы ребенка в судебном процессе, выявить положения материального и процессуального законодательства о подаче иска об определении места жительства ребенка в суд.

Главные интересы ребенка и их защита остаются предметом заботы общества и верховенства закона. Статья 17 Семейного кодекса РА дает правовую возможность поставить вопрос об определении места жительства ребенка в сочетании с другими требованиями, но в статье есть грамматическая ошибка, которая приводит к неправильному толкованию и неправильному применению статьи, что, в свою очередь, является не в интересах ребенка. В прецедентном

праве есть проблемы, связанные с особенностями подачи иска для определения места жительства ребенка, то есть с юридической возможностью подачи в сочетании с другими исками, отсутствием специальных юрисдикционных правил, при этом эти вопросы не регулируются статьями 21-22 Гражданского процессуального кодекса РА. По мнению автора, правовой вопрос определения места жительства ребенка должен быть преодолен путем заполнения законодательного пробела.

При работе над статьей использовался преимущественно сравнительно-правовой метод.

Автор пришел к выводу о том, что необходимо внести дополнения и изменения в статью 17 Семейного кодекса РА, а также в статью 22 Гражданского процессуального кодекса РА.

Ключевые слова: *определение места жительства ребенка в судебном порядке, привязанность ребенка, право ребенка быть выслушанным, особая юрисдикция, избирательная территориальная юрисдикция по желанию, взаимосвязанные требования, отдельное производство, наличие требования.*

ՓԱԽՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴԻՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ*

ՀՏԴ 341.2

DOI: 10.52063/25792652-2021.4-104

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության միգրացիայի, հայրենադարձների և փախստականների հարցերի բաժնի պետ, միգրացիայի և փախստականների հարցերով փորձագետ, Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ) mkhitaryan.elina.m@gmail.com

Հոդվածի նպատակն է լայն շրջանակների քննարկման առարկա դարձնել Դարաբաղյան հակամարտության շրջանակներում հարկադիր տեղահանված անձանց, այդ թվում՝ փախստականների և ներքին տեղահանված անձանց (այսուհետ՝ ՆՏԱ) վերադարձի խնդիրը՝ այն համադրելով միջազգային իրավունքում ամրագրված սկզբունքների և երաշխիքների հետ:

Դարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում «փախստականների վերադարձ» դրույթը, հետաքրքիր մետամորֆոզներ ունենալով հանդերձ, շրջանցել է 1988-94 թվականների ավելի քան 800 000 հայ փախստականների և ներքին տեղահանված անձանց՝ վերադարձի թիրախ դիտարկելով միայն ադրբեջանական կողմի տեղահանվածների՝ արհեստականորեն ուժեղացված թվերը:

Հոդվածի շրջանակներում առաջադրված խնդիրների ուսումնասիրության ընթացքում կիրառվել են իրավահամեմատական, վերլուծական, վիճակագրական, ինչպես նաև ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ադրբեջանական ազրեսիայի հետևանքով իրենց մշտական բնակության վայրից տեղահանված Արցախի բնակչության ավելի քան 25%-ի վերադարձի խնդրի լուծման համար անհրաժեշտ է տեղահանված և փաստացի ԱՀ-ում բնակվողներին տրամադրել ներքին տեղահանված անձանց՝ ՆՏԱ կարգավիճակ, իսկ ՀՀ-ում բնակվողներին՝ հարկադիր վերաբնակված/տեղահանված անձանց՝ ՀՎԱ/ՀՏԱ կարգավիճակ, ինչպես նաև բանակցային գործընթացում բարձրացնել 1988-1992թթ.-ին Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության հետևանքով բռնազաղթած 510 000 հայ փախստականների վերադարձի, իրավական ու սոցիալական երաշխիքների ապահովման խնդիրները:

Հիմնաբառեր՝ փախստական, ներքին տեղահանված անձինք, ՆՏԱ, հարկադիր տեղահանվածներ, Դարաբաղյան հակամարտություն, «չվերադարձնելու» սկզբունք:

* Հոդվածը ներկայացվել է 11.11.2021թ., գրախոսվել՝ 24.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ներածություն

Չինված հակամարտությունների հետևանքով մարդու և միջազգային հումանիտար իրավունքի խախտման, հետապնդումների, բռնության, ահաբեկչության, ինչպես նաև տարերային ու տեխնաժին աղետների պատճառներով ահազանում է հարկադիր տեղահանված անձանց (այդ թվում՝ փախստականներ, ՆՏԱ) թիվն աշխարհում ընդհանուր առմամբ հատելով 80 մլն-ի սահմանը (UN 1): Հատկանշական է, որ երկրաչափական պրոգրեսիայով մեծացող այդ թվի առաջնային պատճառը զինված հակամարտություններն են, ընդ որում՝ մի կողմից այդ զինված հակամարտությունները «տաքացվում են», «սնուցվում», մյուս կողմից «խորը անհանգստություն է արտահայտվում» դրանց առաջ բերած հետևանքների վերաբերյալ: Ոլորտի տեսաբանների ու փորձագետների կողմից հաճախակի է օգտագործվում «փախստականների պատմությունը միայն փախստականների մասին չէ» շրջատույթը (Gatrell 178), որն արտացոլում է երևույթի նախապատմությունն ու ելությունը:

Խնդրի նախապատմությունից

Բախումնաբանությունը (կոնֆլիկտոլոգիա) Ղարաբաղյան հակամարտությունը դասում է հակամարտությունների էթնոքաղաքական դասին և կարգավորման բարդությամբ առանձնացնում է այն: Ղարաբաղյան հիմնահարցն աչքի է ընկնում նաև հակամարտությանը ներգրավված սուբյեկտների բազմազանությամբ, կարգավորման դիմամիկայի վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների բարդ համակցությամբ, տարածաշրջանում անընդհատ և արագ փոփոխվող աշխարհաքաղաքական վերադասավորումներով, որոնք իրենց հերթին որոշակիորեն ազդում են Ղարաբաղյան հակամարտության վրա՝ կարգավորման տեսանկյունից այն դարձնելով ավելի բարդ ու խճճված (Գալստյան 63):

Լեռնային Ղարաբաղի հարցը հակամարտության վերածվեց այն պահին, երբ 1988 թվականին ի պատասխան խաղաղ ցույցերի՝ Ադրբեջանը ուժ կիրառեց փետրվարի 27-29-ին հայերի հանդեպ ազգային զտման ու ցեղասպանական գործողությունների, հայության բռնագաղթի իրագործմամբ՝ ի վերջո հանգեցնելով ռազմական գործողությունների:

Ղարաբաղյան հակամարտության առանցքային՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, տարածքների ու զինված ուժերի հետքաշման, հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափանկման հիմնախնդիրներից առանձնացրել ենք փախստականների և ներքին տեղահանված անձանց ու նրանց վերադարձի հիմնախնդիրը: Այս կոնտեքստում հակամարտության մեջ հատկանշական է այն, որ ի տարբերություն այլ ազգամիջյան հակամարտությունների, երբ որպես կանոն, հարկադիր տեղահանվածների այլք բարձրանում է զինված բախումներից հետո, Ղարաբաղյան հակամարտության պարագայում Ադրբեջանական ԽՍՀ տարածքում մշտապես բնակվող ավելի քան 510 000 հայեր փախստականի կարգավիճակում հայտնվեցին մինչ պատերազմական ռազմական գործողությունները:

Հակամարտության առաջին տարիներին նախկին խորհրդային տարածքում տարաբնույթ, երբեմն իրարամերժ ու չհամակարգված, ցաքուցրիվ ու պատահական միջևորդական ջանքեր գործադրվեցին, որոնք այդպես էլ չհանգեցրին որևէ հետևողական գործընթացի, և դրանց արդյունքում չձևվեց կարգավորման որևէ փաստաթուղթ (Geopolitics):

Միջազգային կառույցներից առաջիններից ԵԽՏԿ-ն է 1993 թվականին արցախյան հակամարտության շրջանակներում բնակչության տեղաշարժի խնդրին անդրադառնում «նախկին խորհրդային երկրների միջև բնակչության տեղաշարժերի մասին 996» բանաձևի ընդունմամբ: Փաստաթուղթը մասնավորապես նշում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո «Մոլդովայից, Վրաստանից, Հայաստանից, Ադրբեջանից,

Օսիայից և Ինգուշերիայից, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից և Կենտրոնական Ասիայի որոշ երկրներից շուրջ մեկ միլիոն Էթնիկ ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ են տեղահանվել: Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում ու Տաջիկստանում վերջին և դեռևս շարունակվող բռնությունների պատճառով տասնյակ հազարավոր ընտանիքներ անհապաղ օգնության և շարունակական օժանդակության կարիք ունեն՝ ձմռանը դիմակայելու համար»: Այսինքն՝ հակամարտության վերաբերյալ միջազգային հանրության առաջին արձագանքները վերաբերվում են հենց մարդասիրական կողմին (Ակոսյան և Պետրոսյան 54), «բնակչության տեղաշարժի» խնդրին, ինչը հավասարապես խնդիր էին համարում Ա՝ գերտերությունները, և՛ տարածաշրջանային պետությունները: Փախստականների ու տեղահանվածների հարցը որպես խաղաթուղթ, իսկ հաճախ նաև նենգասպառնալիքի (շանտաժի) միջոց կիրառելու ազդակները շատ արագ ընկալեցին ադրբեջանական իշխանությունները: Նրանց պնդմամբ բանակցային գործընթացում որպես առանցքային առանձին դրույթ մտցվեց «փախստականների վերադարձ» ձևակերպումը՝ հետագայում լրացվելով «փախստականների և ներքին տեղահանվածների վերադարձ» դրույթով: «Տեղահանված անձանց» վերադարձի խնդիրը հակամարտության կարգավորման 1997 թվականի «փաթեթային» տարբերակում առաջադրվել է որպես առաջնային կարևորության բաղադրիչ (հոդված 5)՝ հիմնավորելով տեղահանված անձանց տեղաբաշխումը բաժանարար գծի երկայնքով, որն ընդգրկում էր միայն ԼՂ-ի հարակից շրջանները: Ընդգծենք նաև, որ համաձայնագրի մեջ որևէ կերպ չէին հիշատակվում Ադրբեջանի հայ փախստականների և նրանց վերադարձի մեխանիզմները. սահմանափակվում էին հետևյալ ձևակերպմամբ. «Կողմերը համաձայնում են համագործակցել Միջազգային Կարմիր խաչի, ՄԱԿ փախստականների հարցով գերագույն հանձնակատարի և այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ հակամարտության արդյունքում (Абасов и Хачатрян 147):

«Փուլային» տարբերակը, որը հակամարտության կարգավորման նոր բանաձևեր էր առաջադրում, կրկին որևէ հստակ ձևաչափ չէր առաջարկում փախստականների վերադարձի վերաբերյալ, ավելին՝ այստեղ չէր պարզաբանվում՝ հա՛յ, թե՞ ադրբեջանցի փախստականների վերադարձի մասին է խոսքը (Абасов и Хачатрян 156):

Հետաքրքիր ձևակերպումների ենք հանդիպում հակամարտության կարգավորման հաջորդ՝ «ընդհանուր պետության» փաթեթում. այստեղ երրորդ գլուխն անդրադառնում է Շուշիի և Շահումյանի հարցին, ինչի շրջանակներում էլ մեր խնդրո առարկայի վերաբերյալ նշվում էր հետևյալը. «Կողմերը համաձայնում են, որ բոլոր ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ իրենց բնակության վայր Շուշի» (Абасов и Хачатрян 160-161): Հիմքում ունենալով վերոգրյալ ձևակերպումը՝ հենվելով միջազգային իրավունքի՝ «փախստական» եզրույթն ամրագրող դրույթներին՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը. Շուշիի ադրբեջանցիների՝ փախստականի կարգավիճակով հանդես գալը նշանակում է, որ նրանք տեղաշարժվել են, «բռնագաղթել են» մի պետության տարածքից, այսինքն՝ ԼՂՀ-ից մեկ այլ պետության՝ Ադրբեջանի Հանրապետության տարածք, ինչը մի կողմից՝ Լեռնային Ղարաբաղից հեռացած ադրբեջանցիների իրավական կարգավիճակն է արտացոլում, մյուս կողմից՝ ԼՂՀ-ի՝ որպես միջազգային իրավունքի առանձին սուբյեկտի իրավական ճանաչման փաստ է:

Հակամարտության կարգավորման քվեքային փաստաթղթում (հոդված 12) խնդիրը ներկայացնելով Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հակամարտության համատեքստում՝ փախստականների հարցում առաջարկվում է լուծման հետևյալ ձևաչափը. յուրաքանչյուր կողմ ինքն է փոխհատուցում իր ազգակիցների (փախստականների) կորուստները և

պարտավորվում է հետազայում որևէ պահանջ չներկայացնել հակառակ կողմին՝ կապված ԼՂ հակամարտության հետ:

Հակամարտության կարգավորման նախորդ՝ վերոհիշյալ փաստաթղթերում արտացոլվում է «փախստական» ձևակերպումից դեպի «ներքին տեղահանված» եզրույթ մետամորֆոզը, որը պարզապես ձևակերպումների փոփոխությունն է, այլ այս ճակատում ադրբեջանական դիվանագիտության ծանրակշիռ հաջողություն, որը կպարզաբանենք ստորև:

Ադրբեջանը 1999 թվականի մայիսի 21-ին ընդունել է հիմնարար փաստաթուղթ՝ օրենք «Փախստականների և հարկադիր տեղահանվածների (երկրի սահմաններում վերաբնակված անձանց) կարգավիճակի մասին», որի հենց 1-ին հոդվածում սահմանվում են «փախստական» և «ներքին տեղահանված» կարգավիճակները: Ըստ այդմ՝ ադրբեջանական կողմը «փախստականներ» է համարում Հայկական ԽՍՀ-ից 1989-1990 թվականներին տեղահանված ադրբեջանցիներին՝ այդ թիվը պաշտոնապես ներկայացնելով 500 000, այնինչ ԽՍՀՄ 1959 թվականի մարդահամարով ՀԽՍՀ-ում բնակվում էին 108 000 ադրբեջանցիներ (Всесоюзная перепись населения 1959г. 15-16), իսկ 1989 թվականի մարդահամարով որոշ աղբյուրներ նշում են շուրջ 140 000 մարդ, իսկ որոշները՝ 84 860 (Всесоюзная перепись, 1989г.): Թվի նման տատանումը կապված է Հայաստանի հյուսիսային շրջաններում Լոռիում, Շիրակում և Տավուշում բնակվող 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով տևազուրկ ադրբեջանցիների՝ դեռևս մինչև հակամարտության «տաքացումը» ՀԽՍՀ տարածքից հեռանալու հետ, որոնք իրենց ունեցվածքի լիարժեք փոխհատուցում են ստացել, և իրենց նախկին հիմնական բնակության վայրերը սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ելնելով լքելիս ինքնակամ նախընտրել են ոչ թե ՀԽՍՀ այլ բնակավայր, այլ Ադրբեջանի ԽՍՀ: Նշենք նաև, որ Հայկական ԽՍՀ-ում բնակվող ադրբեջանցիների մեծ մասը հեռացել է խաղաղ պայմաններում, իսկ նրանց տեղահանումը կազմակերպվել է ԽՍՀՄ համապատասխան գինված ստորաբաժանումների ուղեկցությամբ, անվտանգ պայմաններում, իսկ այդ ընթացքում ադրբեջանցիներից շատերը հասցրել էին իրենց տներն ու ունեցվածքը վաճառել Բաքվից, Սուևգայիթից, Կիրովաբադից (ներկայումս՝ Գյանջա) և այլ վայրերից մազապուրծ փախած հայերին կամ անհամարժեք փոխանակել վերջիններին ունեցվածքի հետ: Հատկանշական է, որ Ադրբեջանի ԽՍՀ-ից եկած հայերենի իմացությամբ ադրբեջանցիներից Մոսկվայից գաղտնի կազմում էր «հարվածային» ջոկատներ, որոնց ուսուցանվում էր ոչ թե կարգուկանոնի պահպանումը, այլ զենքի կիրառումը խաղաղ բնակչության վրա:

Եվ այսպես, Ադրբեջանական կողմը «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակի տակ է մտցում նախկին ԼՂԻՄ և հարակից շրջաններից տեղահանվածներին՝ պաշտոնապես դրանց թիվն ուճացնելով ավելի քան 700 000 մարդու: Այնինչ 1989թ.-ի մարդահամարի տվյալներով՝ ԼՂԻՄ տարածքում բնակվում էր ոչ ավել, քան 35.000 ադրբեջանցի, իսկ հարակից շրջաններում մոտ 300.000: Ադրբեջանական արտաքին քարոզչության առանցքային դրույթներից մեկն է փախստականների ու տեղահանվածների մեկ միլիոնանոց թվաքանակի ներկայացումը՝ որպես ավելի պատկառազուրկ և հրատապ լուծում պահանջող հարց: Իրականում և՛ Հայաստանից, և՛ Լեռնային Ղարաբադից, և՛ ԼՂ հարակից շրջաններից գնացած ադրբեջանցիների թվաքանակը, միասին վերցրած, չի անցնում հինգ հարյուր հազարը (Գալստյան 70): Ավելին՝ Ադրբեջանական կողմը հասել է նրան, որ միջազգայնորեն ամրագրել է իր քաղաքականության համար «նպաստավոր» թվաքանակ ՄԱԿ-ի Փախստականների Հարցերով Գերագույն Հանձնակատարի Գրասենյակի՝ ՄԱԿ ՓԳՀ/UNHCR Ադրբեջանի մասով 2009 թվականի հոկտեմբերին ընդունած հատուկ զեկույցում «250 000 փախստականներ Հայաստանից» և «600 000 ԼՏԱ՝ Լեռնային Ղարաբադից և հարակից 7 օկուպացված շրջաններից» (AzIDPs):

«Փախստականների մասին» և «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ՀՀ օրենքներն ընդունվել են համապատասխանաբար 03.03.1999թ.-ին և 26.11.2006թ.-ին, իսկ Արցախում 06.12.2006թ.-ին և 20.10.2004թ.-ին: Դրանց դրույթներով՝ փախստական համարվում են ԱդրիՍՀ տարածքից 1988-1992թթ.-ին բռնագաղթած ազգությամբ հայերը: Երևան թիվը 1959 թվականին համամիութենական մարդահամարով 442 000 էր (Всесоюзная перепись населения 1959г. 14), 1979 թվականին՝ 475 486, իսկ 1989թ.-ին՝ շուրջ 510 000 (Всесоюзная перепись, 1989г.) այն դեպքում, երբ 1988թ.-ին ցեղասպանական առաջին փուլերի հետևանքով արդեն սպանվել և բռնագաղթել էին մեծաթիվ հայեր:

Ինչ վերաբերվում է ՀՀ-ում և ԱՀ-ում «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակին, ապա արտառոց երևույթի ենք հանդիպում: ԱՀ-ում, ինչպես և ՀՀ-ում բացակայում է ՆՏԱ իրավական կարգավիճակը հստակեցնող և նրանց հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավական որևէ ակտ (Մխիթարյան 134-135): Փաստենք, որ Նախկին ԼՂԻՄ տարածքում 1989 թվականի դրությամբ բնակվող շուրջ 145 500 հայերը, որոնք 1991-1994թթ.-ի ռազմական գործողությունների հետևանքով տեղահանվել են, Շահումյանի շրջանի ավելի քան 17 000 հայ բնակչությունը, Հյուսիսային Արցախի շուրջ 105 500 բնակիչները (ընդհանուրը՝ 268 000) չեն ստացել որևէ կարգավիճակ, հետևաբար և անվտանգության, սոցիալ-իրավական երաշխիքներ: Հարկադիր տեղահանվածի կարգավիճակին համապատասխանում են 1991-1994 թվականների Արցախյան առաջին պատերազմից ընթացքում Ադրբեջանի կողմից բռնագաղթված՝ Նախկին ԼՂԻՄ Մարտակետի շրջանի Այգեստան, Կարմիրավան, Հայկաջուր, Ղազանչի, Մարաղա, Սեյսուլան և Լենինավան գյուղերի բնակիչները, որոնք ևս անցած 30 տարիների ընթացքում որևէ իրավական կարգավիճակ չեն ստացել:

Փախստականներին «չվերադարձնելու» (non-refoulement) սկզբունքը Ղարաբաղյան հակամարտության կոնտեքստում

Ճազման կամ մշտական բնակության պետության պաշտպանությունից զրկված լինելը փախստականին բնորոշող երևույթներից է: Անձին միջազգային պաշտպանությամբ ապահովելու անհրաժեշտություն է առաջանում այն դեպքում, երբ պետությունը մերժում է այդ անձին՝ իր քաղաքացուն ազգային պաշտպանություն տրամադրել կամ այն անհնար է լինում տրամադրել այլ պատճառներով (Վարդանյան 493): Փախստականների միջազգային պաշտպանության հանրաճանաչ սկզբունքներից կարևորագույնն է վտարման կամ վերադարձն արգելելու սկզբունքը, իսկ միջազգային փաստաթղթերում կիրառվում է այս եզրույթի ֆրանսերեն տարբերակը՝ «non-refoulement»՝ չվերադարձնել: 19-րդ դարի առաջին քառորդում տարբեր երկրների կողմից ակտիվորեն կիրառվում էր չվտարելու-չվերադարձնելու երևույթը, իսկ որոշակի հանգամանքների առկայության դեպքում մարդկանց այլ պետություններ չվերադարձնելու միտքը ծագել է անհամեմատ վաղ ժամանակներում: Արդեն Ազգերի լիգայի օրոք 1933 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունվեց «Փախստականների լիգայի միջազգային կարգավիճակի մասին» կոնվենցիան, որում առաջին անգամ ամրագրվում են փախստականներին չարտահանանելու և չարտաքսելու սկզբունքները (Сарашевский 35): Այն ընդունեցին 14 պետություններ, բայց վավերացրին միայն 3-ը: Այդ տարիներին առաջին անգամ կնքված իրավական պայմանագրերն ընկան 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի հիմքում (Анисимович 67-68): ՄԱԿ-ի ԳԱ 1951թ. հունիսի 2-ի Կոնվենցիայում բավական մանրակրկիտ ներկայացվում են Փախստականի իրավական կարգավիճակի սկզբունքները, որոնք փախստականների պաշտպանությունն իրականացնելիս պետությունների կողմից կիրառած

հիմնադրույթներ են: Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասում «չվերադարձնելու» կամ վերադարձի արգելում, չվտարում՝ nonrefoulement սկզբունքն ամրագրվել է որպես բոլոր փախստականների համար իմպերատիվ, *jus cogens* նորմ: Այդ դեպքում միջազգային պաշտպանությունն տրամադրելու պատասխանատվությունը կրում է այն երկիրը, որտեղ անձը ապաստան է հայցում: Կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձ այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար՝ իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով (1951 Convention 32):

Ներդրվելով ունիվերսալ ու տարածաշրջանային մի շարք կոնվենցիաներում՝ չվտարման սկզբունքը սկսեց կիրառվել նաև որպես մարդու իրավունքների պաշտպանության միջոց: Այսպես՝ մարդու իրավունքների բնագավառում գործող համընդհանուր սկզբունքներից (ունիվերսալությունը, անօտարելիությունը, անբաժանելիությունը, իրավահավասարությունը) (Նիկողոսյան 14-15) գատ, ամրագրվում են փախստականներին վերաբերվող ոլորտային նեղ սկզբունքները, որոնց մեջ հստակորեն առանձնացվում է **non-refoulement**՝ «չվերադարձնելու» սկզբունքը:

Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում **non-refoulement**՝ «չվերադարձնելու» սկզբունքը ի սկզբանե «խաղում» էր ոչ Ադրբեյջանի օգտին, քանի որ արդեն 1994 թվականի դրությամբ Ադրբեյջանը միջազգային իրավունքի սուբյեկտ էր և ընդունել էր ՄԱԿ-ի ԳԱ 1951թ. հունիսի 2-ի Կոնվենցիայի դրույթները: Սա նշանակում էր, որ Ադրբեյջանը պարտավոր է իր պետության սահմաններում ապաստանած փախստականների հանդեպ կիրառել **non-refoulement**՝ «չվերադարձնելու» սկզբունքը, առավել ևս երբ խոսքը ծագմամբ ադրբեյջանցիների մասին է:

Այսպիսով՝ Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում փախստականների վերադարձի հիմնախնդրի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումը հենված է միջազգային իրավունքի սկզբունքների վրա, ըստ որոնց՝ «փախստականի» կարգավիճակը կարող է տարածվել միայն կես միլիոն մարդկանց վրա, որոնք ոչ թե պարզապես տուժել են հակամարտության ընթացքում, շատ ավելի վաղ՝ մինչև զինված հակամարտությունը, դարձել են ադրբեյջանական պետության կողմից նախապես մտածված ու կազմակերպված ցեղասպանական գործողությունների զոհ: Նշենք նաև, որ այդ իսկ պատճառներով այսօր Ադրբեյջանը չի պնդում «փախստական» իրավական ձևակերպումը, այլ ավելի շատ խոսում է տեղահանված անձանց հիմնահարցերի առաջնային լուծման մասին՝ լավ հասկանալով, որ այդ պարագայում «փախստական» իրավական կատեգորիայի կիրառումն աշխատում է ի վնաս իրեն: Ըստ էության «փախստականներ» կարելի է համարել միայն նախկինում Հայաստանում բնակվող ադրբեյջանցիներին, իսկ նախկին ԼՂԻՄ տարածքից ծագմամբ ադրբեյջանցիներին փախստական կարելի է համարել միայն այն դեպքում, եթե Ադրբեյջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղը որպես անկախ պետություն, միջազգային իրավունքի առանձին սուբյեկտ, քանի որ «փախստական համարվում է ընդունող երկրի քաղաքացի չհանդիսացող անձը...»:

Եզրակացություն

Մինսկի խմբի ԱՄՆ նախկին համանախագահներից Ջեյմս Ուորլիքը հաճախակի էր հնչեցնում այն միտքը, թե «ստատուս քվոն դարձել է անտանելի»։ այն Ադրբեյջանը հօգուտ իրեն փոխեց 2020թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի «հրամանատարությամբ» լայնամասշտաբ պատերազմի արդյունքում: 2020 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագրով՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեյջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի համատեղ

հայտարարության 7-րդ կետով «Ներքին տեղահանված անձինք և փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ» (Հայտարարություն): Կետն այս որպես «ներքին տեղահանված և փախստական» որպես ամրագրում է աղբբեջանցիներին և իր հստակությամբ անգամ երկբայելու տեղիք չի տալիս՝ արդյո՞ք խոսքը երկու կողմերի փախստականների ու ՆՏԱ մասին է: Հայկական կողմն ընդհանրապես չի արձագանքել (բացառությամբ որոշ փորձագիտական շրջանակների) 1988-92թթ.-ին բռնազաղթած հայ փախստականների, 1991-1994թթ.-ին հարկադիր ու ներքին տեղահանված անձանց՝ նախկին հիմնական բնակության վայրեր վերադարձի, նրանց կորսված գույքի (ի հակակշիռ Աղբբեջանի) մասին: Ճիշտ է, Աղբբեջանի կողմից 1988-92թթ.-ի ցեղասպանական գործողությունները, 2020թ.-ի պատերազմում անմարդկային վայրագությունները, ՀՀ կիսակապիտուլացված վիճակը բռնահանված հայ փախստականներին և ՆՏԱ-ին իրենց բնակատեղիները վերադառնալու անվտանգության բացարձակապես ոչ մի երաշխիք չեն տալիս, բայց այդ խնդրի բարձրաձայնումը ոչ թե բարի ցանկություն է, այլ հայկական կողմի պարտավորություն՝ միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն՝ պաշտպանել ազգությամբ շուրջ 800 000 (510 000+268 000) հայ փախստականների և ներքին տեղահանված անձանց շահերը: Եթե դա չի անում ՀՀ պետական քաղաքական իշխանությունը՝ ընտրված ՀՀ բնակչության մեծամասնության կողմից, ապա գիտական ու հասարակական դաշտը ունի աշխատելու, պայքարելու, տարափոխելու տարբեր միջոցներ՝ փորձելու խնդիրը վերածել «խաղաթղթի»:

Ի հակակշիռ հայկական կողմի՝ Աղբբեջանը տարիներ շարունակ «վերադարձին» միտված քաղաքականություն է վարել: 2010թ.-ի մայիսին ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով հատուկ ներկայացուցիչ Վոլտեր Կելին իր զեկույցում հայտարարել է, որ «...տասնյակ հազարավոր աղբբեջանական ՆՏԱ ապրում են հակասահիտարական պայմաններում», բնականաբար Կելին ցույց չեն տվել Բաքվի կենտրոնական փողոցներում հայերի տները զավթած աղբբեջանցիներին, այլ տեսակցության են տարել «հատուկ նշանակության» ՆՏԱ-ների հետ՝ պնդելու նախկին բնակավայրեր վերադարձի իրենց դրույթը, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից նորանոր գումարներ կորզելու համար: Ընդ որում, մինչ այդ միջազգային կառույցներից ստացած գումարներով 2007 թվականի դրությամբ ներքին տեղահանվածների համար 315 000 բնակելի տուն էր կառուցվել, որի համար ծախսվել էին ստացված գումարների չնչին տոկոսները միայն:

2020թ.-ի պատերազմից հետո Ի.Ալիևի հանձնարարկանով հարցում է սկսվել ՆՏԱ շրջանում՝ «պատրա՛տ են նրանք վերադառնալու հայրենիք»: Իբր այդ հարցումը պիտի վերհանի իրական նկարագիրը: Եթե այո, ապա պետության կողմից կառուցված և նրանց տրամադրված բնակելի տները կփոխանցվեն պատերազմում զահված շեփիղներին: Հրաժարվողները կգրկվեն իրենց ՆՏԱ կարգավիճակից և համապատասխան արտոնություններից (BBC NEWS): Ալիևը հայտարարել է, որ իմաստ չունի նախկին հարկադիր տեղահանվածներին շարունակել պահել Բաքվում, Գյանջայում, Սումգայիթում, քանի որ «հողերը ազատագրված են»: Նրանց հատկացված «տները շեփիղների ընտանիքներին տալը շատ լավ որոշում է»:

Սակայն ամեն ինչ միանշանակ չէ, 30 տարիների ընթացքում ՆՏԱ և փախստականների մեծ մասը մեկեն է ՌԴ, նախկին ԽՍՀՄ երկրներ ու արտերկիր, մի մասն արդեն նատուրալիզացվել՝ բնավորվել է Աղբբեջանի տարբեր բնակավայրերում և այդքան էլ հեշտ չէ տեղահանել իրենց սովորական կենսաձևից կամ քաղաքային բնակավայրերից տեղափոխել գյուղական բնակավայր: Այնպես որ աղբբեջանական կողմը կիրառելու է հարկադիր վերաբնակեցում, կանխատեսվում է նաև նախկին «կարմիր քրդստանի» նորօրյա բանաձևի կիրառում՝ շրջափակել ՀՀ-ն և Արցախը Սիրիայից ահաբեկիչների, թուրքոմանների ընտանիքներ վերաբնակեցնելով:

Որպես խնդրի ներհայկական լուծում առաջարկում ենք 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի պատճառով և 2020 թվականի նոյեմբերի 9-ի Համաձայնագրի հետևանքով տեղահանված և փաստացի ԱՀ-ում բնակվողներին տրամադրել ներքին տեղահանված անձանց՝ ՆՏԱ կարգավիճակ, իսկ ՀՀ-ում բնակվողներին՝ հարկադիր վերաբնակված/ տեղահանված անձանց՝ ՀՎԱ/ ՀՏԱ կարգավիճակ՝ օրենսդրորեն սահմանելով այդ խմբերի իրավական կարգավիճակը և սոցիալ-տնտեսական, իրավական երաշխիքները, ակտիվորեն ներկայացնելով ու պաշտպանելով այդ անձանց շահերն արտաքին-քաղաքական հարթակներում: Միաժամանակ անհրաժեշտ է ցանկացած բանակցային սեղանի շուրջ անընդհատ բարձրացնել 1988-1992թթ.ին Ադրբեյջանի ցեղասպան քաղաքականության հետևանքով բռնազաղթած 510 000 հայ փախստականների վերադարձի, իրավական ու սոցիալական երաշխիքների ապահովման խնդիրները:

Օգտագործված գրականություն

1. Ակոբյան, Յուլյա և Պետրոսյան, Գոռ. «Արցախյան հիմնախնդիրը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեժաժողովում». *Կրթությունը և գիտությունը Արցախում*, N 1-2, Հունվար-հուլիս 2017, էջեր 54-60:
2. Գալստյան, Խաչիկ. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները». *21-րդ դար*, N 4 (10), 2005, էջեր 63-82:
3. Մխիթարյան, Էլինա. ««Ապաստան Հայցողներ», «ներքին տեղահանված անձինք», «հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք» եզրույթները, կարգավիճակները. Դրանց իմպլեմենտացիայի անհրաժեշտությունն Արցախի իրավական դաշտում». *Գիտական Արցախ*, N 2(9), Երևան, «Արցախ» հրատարակչություն, 2021, էջեր 127-139:
4. Նիկողոսյան, Գոռ. «Փախստականների իրավական կարգավիճակի սկզբունքները». *Դատական իշխանություն*, N 2 (163), Երևան, 2013, էջեր 14-23:
5. Վարդանյան, Զնարիկ. «Չվերադարձնելու սկզբունքը փախստականների միջազգային-իրավական պաշտպանության մեխանիզմում». *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին*, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջեր 493-505:
6. «Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի արդի փուլը. Մադրիդյան սկզբունքներ». *Գեոպոլիտիկա հետազոտություններ*, 8 հունիս 2016, <http://geopolitics.am/archives/12208>, դիտվել է 26.08.2021:
7. «Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեյջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը». *Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնական կայք-էջ*. Մամլո խորհրդագրություն 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>:
8. Абасов, Али и Хачатрян, Арутюн А. *Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность*, Москва, 2004.
9. Анисимович, Арсений. «Некоторые аспекты решения проблемы беженцев в XX в.». *Журнал международного права и международных отношений*, N 2, Минск, 2006, с. 66-69.
10. Сарашевский, Юрий. «Роль Лиги Наций в формировании права беженцев». *Белорусский журнал международного права и международных отношений*, N 1, Минск, 2001, с. 33-36.

11. «Сможет ли Азербайджан вернуть своих беженцев в Карабах?». BBC NEWS: Русская служба, 12 апреля 2021, <https://www.bbc.com/russian/news-56660532>.
12. «Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав по республикам СССР». *Институт демографии имени А.Г. Вишневецкого-Национальный исследовательский университет «Высшая школа экономики»*, http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=13. Доступно 30.08.2021.
13. Центральное статистическое управление при Совете министров СССР. *Уровень образования, национальный состав, возрастная структура и размещение населения СССР по республикам, краям и областям: по данным Всесоюзной переписи населения 1959 года*. ГОССТАТИЗДАТ, Москва, 1960.
14. 1951 Convention and The Protocol relating to the status of refugees. *The UN Refugee Agency (UNHCR)*, <https://www.unhcr.org/3b66c2aa10>.
15. "AzIDPs: Azerbaijan: Analysis of Gaps in the Protection of Internally Displaced Persons (IDPs)". *The UN Refugee Agency (UNHCR)*, October 2009, <https://www.unhcr.org/protection/convention/4bd7edbd9/azerbaijan-analysis-gaps-protection-internally-displaced-persons-idps.html>.
16. Peter Gatrell, Refugees-what's wrong with history?, *Journal of Refugee Studies*, vol. 30, N 2, 2017, p.170-189.
17. "UN refugee chief laments nearly 80 million people forcibly displaced". *UN news*, 18 June 2020, <https://news.un.org/en/story/2020/06/1066492>.

Works Cited

1. Akopyan, Colak & Petrosyan, Gor'. «Arcaxyan himnaxndiry' Evropayi xorhrdi xorhrdaranakan vehajhoghovum». Krt'ut'yuny' & gitut'yuny' Arcaxum, N 1-2, Hunvar-hulis 2017, e'jer 54-60 [The Artsakh issue in the Parliamentary Assambly of the Council of Europe]. (In Armenian)
2. Galstyan, Xachik. «Gharabaghyan hakamartut'yan kargavorman her'ankarnery'». 21-rd dar, N 4 (10), 2005, e'jer 63-82 [Prospects for the settlement of the Karabakh conflict]. (In Armenian)
3. Mxitaryan, Elina. ««Apastan Haycoghner», «nerqin teghahanvac' and'inq», «harkadir verabnakvac'/teghahanvac' and'inq» ezruyt'nery', kargavitwaknery'. Dranc implementaciayi anhrjheshtut'yunn Arcaxi iravakan dashtum». Gitakan Arcax, N 2(9), Erevan, «Arcax» hratarakchut'yun, 2021, e'jer 127-139 [The terms and status "asylum seekers", "internally displaced persons", "forced resettlement/displaced persons": their implementation in the ligal sphere of artsakh, Erevan] 2021. (In Armenian)
4. Nikoghosyan, Gor'. «P'axstakanneri iravakan kargavitwaki skzbunqnery'». Datakan ishханut'yun, N 2 (163), Erevan, 2013, e'jer 14-23 [Principles of legal status of refugees, Erevan] 2013. (In Armenian)
5. Vardanyan, Qnarik. «Chveradard'nelu skzbunqy' p'axstakanneri mijazgayin-iravakan pashtpanut'yan mexanizmm». EPH iravagitut'yan fakulteti profesoradasaxosakan kazmi gitajhoghovi nyut'eri jhoghovac'u' nvirvac' HH ankaxut'yan hr'chakman 20-amyakin, EPH hrat., Erevan, 2012, e'jer 493-505 [The principle of non-refoulement in the mechanism of international legal protection of refugees, Erevan] 2012. (In Armenian)
6. «Ler'nayin Gharabaghi hakamartut'yan banakcayin gorc'y'nt'aci ardi p'uly'. Madridyan skzbunqner». Geopolitiks hetazotut'yunner, 8 hunis 2016, <http://geopolitics.am/archives/12208>, ditvel e' 26.08.2021 [The current stage of the Nagorno Karabakh conflict negotiation process. Madrid Principles] 2016. (In Armenian)

7.«Hayastani Hanrapetut'yan varchapeti, Adrbejani Hanrapetut'yan naxagahi & R'usastani Dashnut'yan naxagahi haytararut'yuny'». Hayastani Hanrapetut'yan varchapeti pashtonakan kayq-e'j. Mamlo haghordagrut'yun, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/> [Statement by the Prime Minister of the Republic of Armenia, the President of the Republic of Azerbaijan and the President of the Russian Federation] 10.11.2020. . (In Armenian)

8.Abasov, Ali i Hachatrjan, Arutjun A. Karabahskij konflikt. Varianty reshenija: idei i real'nost', Moskva, [Karabakh conflict. Solution options: ideas and reality] 2004. (In Russian)

9.Anisimovich, Arsenij. «Nekotorye aspekty reshenija problemy bezhencev v XX v.» Zhurnal mezhdunarodnogo prava i mezhdunarodnyh otnoshenij, N 2, Minsk, 2006, s. 66-69 [Some aspects of solving the problem of refugees in the XX century, Minsk] 2006. (In Russian)

10.Sarashevskij, Jurij. «Rol' Ligi Nacij v formirovanii prava bezhencev». Belorusskij zhurnal mezhdunarodnogo prava i mezhdunarodnyh otnoshenij, N 1, Minsk, 2001, c. 33-36 [Role of the League of Nations in shaping refugee law, Minsk] 2001. (In Russian)

11.«Smozhet li Azerbajdzhan vernut' svoih bezhencev v Karabah». BBC NEWS: Russkaja sluzhba, 12 aprelja 2021, <https://www.bbc.com/russian/news-56660532> [Will Azerbaijan be able to return its refugees to Karabakh] 12 april 2021. (In Russian)

12.«Vsesojuznaja perepis' naselenija 1989 goda. Nacional'nyj sostav po respublikam SSSR». Institut demografii imeni A.G. Vishnevskogo-Nacional'nyj issledovatel'skij universitet «Vysshaja shkola jekonomiki», http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=13. Dostupno 30.08.2021. [1989 All-Union Population Census. National composition in the republics of the USSR]. (In Russian)

13.Central'noe statisticheskoe upravlenie pri Sovete ministrov SSSR. Uroven' obrazovanija, nacional'nyj sostav, vozrastnaja struktura i razmeshhenie nasilenija SSSR po respublikam, krajam i oblastjam: po dannym Vsesojuznoj perepisi naselenija 1959 goda. GOSSTATIZDAT, Moskva, [Central Statistical Office under the Council of Ministers of the USSR. The level of education, ethnic composition, age structure and distribution of the population of the USSR by republics, territories and regions: according to the data of the All-Union Population Census of 1959, Moskva] 1960. (In Russian)

14.1951 Convention and The Protocol relating to the status of refugees. The UN Refugee Agency (UNHCR), <https://www.unhcr.org/3b66c2aa10>.

15.“AzIDPs: Azerbaijan:Analysis of Gaps in the Protection of Internally Displaced Persons (IDPs)”. The UN Refugee Agency (UNHCR), October 2009, <https://www.unhcr.org/protection/convention/4bd7edbd9/azerbaijan-analysis-gaps-protection-internally-displaced-persons-idps.html>.

16.Peter Gatrell, Refugees-what's wrong with history?, Journal of Refugee Studies, vol. 30, N 2, 2017, p.170-189.

17.“UN refugee chief laments nearly 80 million people forcibly displaced”. UN news, 18 June 2020, <https://news.un.org/en/story/2020/06/1066492>.

THE PROBLEM OF RETURN OF REFUGEES AND INTERNALLY DISPLACED PERSONS IN THE EVOLUTION OF INTERNATIONAL LAW WITHIN THE FRAMEWORK OF THE KARABAKH CONFLICT

ELINA MKHITARYAN

*Ministry of Labour, Social Affairs and Housing of Artsakh Republic,
Department of Migration, Refugees and Repatriation, Head;
Refugee and Migration Expert;
Artsakh State University, Faculty of History and Law, Lecturer;
Stepanakert, the Republic of Artsakh*

The purpose of the article is to discuss the issue of the return of forced displaced persons, including refugees and internally displaced persons (IDPs), in the context of the Nagorno-Karabakh conflict, combining with the principles of international law.

In the negotiation process on Nagorno-Karabakh, the provisions on the “return of refugees”, despite interesting metamorphoses, “bypassed” more than 800,000 Armenian refugees and internally displaced persons of 1988-94, “serving” only the Azerbaijani policy of artificially inflating the number of IDPs.

In the course of study of the issues posed within the article, individual (personal) or special methods - legal-comparative, analytical, statistical, systemic, as well as general scientific, such as dialectical, logical, historical methods were used.

The result of the research is the conclusion that it is necessary to learn lessons from the “Azerbaijani experience” of the refugee return policy in order to solve the problem of the return of more than 25% of the Artsakh population, who have the IDP status due to the aggression of Azerbaijan in 2020.

Keywords: *refugees, internally displaced persons, IDPs, asylum seekers, internally displaced persons, forced displacements, the nonrefoulement principle.*

ПРОБЛЕМА ВОЗВРАЩЕНИЯ БЕЖЕНЦЕВ И ВНУТРЕННЕ ПЕРЕМЕЩЕННЫХ ЛИЦ В РАМКАХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В ЭВОЛЮЦИИ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

ЭЛИНА МХИТАРЯН

*начальник отдела миграции, беженцев и репатриации Министерства
труда, социальных и жилищных вопросов Республики Арцах,
эксперт по вопросам беженцев и миграции,
преподаватель факультета истории и юриспруденции
Арцахского государственного университета,
г.Степанакерт, Республика Арцах (НКР)*

Целью данной статьи является обсуждение вопроса возвращения вынужденно переселенных лиц, в том числе, беженцев и внутренне перемещенные лица (ВПЛ), в контексте нагорно-карабахского конфликта и принципами международного права.

В переговорном процессе по Нагорному Карабаху положения о «возвращении беженцев», несмотря на интересные метаморфозы, «обошли стороной» более

800 000 армянских беженцев и внутренне перемещенных лиц 1988-94гг., «прислуживая» только азербайджанской политике искусственного завышения числа ВПЛ.

В рамках темы при изучении поставленных проблем использовались индивидуальные (частные) или специальные методы – сравнительно-правовые, аналитические, а также статистические и системные общенаучные методы, такие, как диалектические, логические, исторические.

В результате исследования мы пришли к выводу о том, что необходимо извлечь уроки из «азербайджанского опыта» политики возвращения беженцев для решения проблемы возвращения более 25% населения Арцаха, оказавшейся в статусе ВПЛ из-за агрессии Азербайджана 2020г.

Ключевые слова: *беженцы, внутренне перемещенные лица, ВПЛ, вынужденные переселенцы, Карабахский конфликт, принцип невозвращения.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**МЕЖДУНАРОДНЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ УСЛОВИЯ
ТРАНСФОРМАЦИИ УГРОЗ И ВОЗМОЖНОСТЕЙ ДЛЯ АРМЯНСКОЙ
ГОСУДАРСТВЕННОСТИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ***

УДК 327.2

DOI: 10.52063/25792652-2021.4-116

МАКСИМ ВАСЬКОВ

*профессор Института истории и международных отношений
Южного федерального университета,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор социологических наук, кандидат исторических наук,
г. Ростов-на-Дону, Российская Федерация
vaskovmaxsim@mail.ru*

Целью статьи является системное рассмотрение актуальных в настоящее время международных политических условий, в которых рассматриваются трансформации угроз и возможностей для армянской государственности. Существующая нестабильность в геополитических процессах в целом, а в отношении региона, прежде всего, – агрессивные действия Азербайджана и усиление турецкого влияния создают новый контур нестабильности и угроз для армянской государственности. Однако обратная сторона этих процессов может привести к активизации политических сил, незаинтересованных в усилении турецко-азербайджанского блока, поэтому основное внимание уделяется оценке изменений, произошедших в политических позициях ведущих держав, как последствий недавних боевых действий, в частности, возникновению нового контекста взаимоотношений армянской стороны с азербайджанско-турецким блоком, Грузией, Ираном, трансформации политических позиций России и её новой роли в регионе, изменению политической роли США и стран Европейского Союза. Делается вывод о том, что для противостояния возникающим угрозам и более успешному использованию имеющихся возможностей преодоления последствий военного конфликта и укрепления армянской государственности необходимо проводить работу по реальному укреплению политических отношений с Россией, но при этом обратить внимание на возможную роль Армении в усилении и придании более глубокого характера сотрудничеству России и Ирана, поскольку эти государства, при всей сложности политических процессов, не заинтересованы в становлении туранского тандема Азербайджана и Турции в качестве ведущей геополитической силы региона.

* Հոդվածը ներկայացվել է 16.11.2021թ., գրախոսվել՝ 30.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ключевые слова: угрозы безопасности, политическая трансформация, Россия, Армения, Иран, Турция, Азербайджан, система, международные отношения, политика, агрессия, баланс сил, кризис, политические интересы.

Глобальный контекст формирования архитектуры угроз и возможностей для армянской государственности

Главная внешнеполитическая трансформация, исходя из которой теперь предстоит выстраивать внешнеполитический и внутривнутриполитический направления, – это реальность военной угрозы, которая перестала быть гипотетической. С этим связано выявление специфики взаимодействия с другими внешнеполитическими игроками, понимание существующих в данном контексте возможностей и ограничений.

Международный политический контекст, связанный с трансформацией угроз и возможностей для армянской государственности, во многом находится под влиянием последствий агрессии Азербайджана против Арцаха и результатов 44 дневной войны. Эти трагические события показали изменение баланса сил в регионе в пользу азербайджанско-турецкого блока, продемонстрировавшего готовность использовать для реализации своих военно-политических целей даже международные террористические организации.

С другой стороны, от Турции идёт подрыв важных для России систем взаимоотношений на постсоветском пространстве. В частности, эту информацию официально подтвердил во время конфликта директор Службы внешней разведки России С.Е. Нарышкин. Как следует из его заявления, союзниками Азербайджана и Турции явились запрещенная по решению суда в России террористическая организация «Джабхат-ан-Нусра» и такие радикальные исламистские структуры, как «Фиркат Хамза», «Султан Мурад» и ряд других.[1]

Сохраняется абсолютно явная военная угроза. Азербайджан и Турция будут максимально пытаться укрепить свои позиции и, не допуская новой большой войны, получить спорные с их точки зрения территории Армении. Для этого будут использованы вооруженные провокации, захват и блокировка объектов транспортной инфраструктуры, психологическое давление, как на Армению, так и на Россию. Примером такого давления в отношении России можно показать выступление И.Г. Алиева с требованием прекратить вооружение Армении со стороны России, провокации на армяно-азербайджанской границе и блокирование транспортных артерий. Российская дипломатия отвергла эти требования, но контекстом звучит то, что Азербайджан будет всё более активно пытаться представить Россию не как миротворческую и конструктивную силу, а как силу враждебную миру в регионе.

Здесь также нужно обратить внимание на информационные компании, которые развиваются сейчас в Азербайджане в отношении роли России и российского контингента миротворцев, причем не только со стороны оппозиционных И.Г. Алиеву сил. Следует особенно обратить внимание на подобные высказывания у политических лидеров и организаций, которые ему лояльны. Это сильное давление с учётом того, что в Азербайджане получают всё больший вес настроения недовольства «не полной победой» и требования «довести начатое до конца». Реальное препятствие для этого – российский миротворческий контингент.

Особое внимание нужно обратить на анонсированное в ноябре 2021 г. в Стамбуле оформление «Союза тюркских государств». Определённые решения по этому вопросу ожидаются в ходе 8-го саммита «Тюркского совета». Предполагается, что в «Союзе тюркских государств» будут, помимо самой Турции и Азербайджана, ещё и Казахстан, Киргизия, Узбекистан, не исключается участие

пока еще в статусе наблюдателя и Туркменистана.

Можно предположить, что оформление «Союза тюркских государств» ослабляет значение ОДКБ как военно-политической структуры, отвечающей за коллективную безопасность своих стран-участников. Казахстан и Кыргызстан являются участниками ОДКБ, но можно с большой долей вероятности предположить, что в случае военного конфликта между Республикой Арменией и турецко-азербайджанским тандемом они, тем более находясь в союзных отношениях с Турцией и Азербайджаном, не будут выполнять никаких обязательств, как, впрочем, сомнительно, что их выполняла бы и Беларусь. В этой ситуации у Армении остаётся только поддержка со стороны России, а не ОДКБ, но и Россия может рассчитывать только на Армению.

В сложившихся условиях для Армении необходима чёткая геополитическая определённость. В Армении существуют политические силы, которые настаивают на переориентации внешней политики от России на так называемый «коллективный запад» и США при налаживании «добрососедских» отношений с Турцией и Азербайджаном.

К сожалению для автора, гарантии безопасности со стороны России не распространялись на Арцах, но это был вопрос дипломатии Армении с момента обретения Арцахом независимости. Автор не сомневается, что официальное признание Арцаха со стороны Армении, особенно если бы это произошло сразу после победы в освободительной войне, создало бы изначально более благоприятный политический контекст. Тем более, что в тот исторический период ещё не было в целом негативного для армянской стороны груза последующих дипломатических договорённостей. Неблагоприятного, прежде всего, в том смысле, что был утверждён принцип территориальной целостности Азербайджана, и признание тогда стало крайне сложным политическим шагом, на который ни одно правительство в Армении так и не решилось.

Непризнание суверенитета Арцаха стало ключевым элементом для азербайджанской дипломатии в отношениях с Россией. Но гарантии безопасности собственно для Республики Армении российская сторона подтвердила, когда начала актуализироваться угроза массированного удара по её территории. Хотя оценка характера российского участия по-разному понимается армянской и российской сторонами. Для России нежелательно и опасно укрепление Турции и Азербайджана в регионе, но в России не воспринималась война в Арцахе как «своя» война, однако при этом, никто из российских политических и военных руководителей не ставил под сомнение обязательств в вопросах обеспечения безопасности, данных Республике Армении.

Нельзя забывать и о стремлении Азербайджана показать для России, что в Баку есть собственные интересы в сотрудничестве с российской стороной и представить азербайджанскую политику как в виде коммуникационной площадки и возможности для развития отношений с Турцией. С другой стороны, Азербайджан попытаться создать у России иллюзию своей якобы большей независимости от турецкой политики, чем это есть на самом деле.

Что касается позиции упоминавшегося «коллективного запада» и США, то с их стороны была чётко показана поддержка Турции как ближайшего союзника и важного члена НАТО. В частности, генеральный секретарь НАТО Йенс Столтенберг во время активных боевых действий призвал турецкую сторону содействовать деэскалации конфликта в Арцахе (Нагорном Карабахе). «Я ожидаю, что Турция использует свое большое влияние, чтобы снизить напряжение в регионе...»[2]. При этом НАТО, пытаясь представить турецкую сторону в качестве миротворца, сознательно игнорировали то, что турецкие вооруженные силы принимали

непосредственное участие в боевых действиях на стороне Азербайджана. Также НАТО не стало давать оценку доказанным фактам использования в ходе боевых действий международных террористических организаций на стороне Азербайджана. Другие факты – это политические игры вокруг признания Арцаха в парламенте Франции и негативная реакция на принятое решение со стороны Э. Макрона, до этого на словах поддерживавшего Армению. «Недопризнание» геноцида армянского народа со стороны Президента США Дж. Байдена, произнёсшего в своей речи определение «геноцид армян», но ничего не сделавшего для юридического оформления признания геноцида согласно американскому законодательству. Более того, именно Дж. Байден, которого считали другом Армении и армянского народа, фактически одновременно со своей речью продлил мораторий на запрет осуществления поставок Азербайджану военной техники и оружия. Хотя сейчас в оценке реальных геополитических возможностей США и ценности гарантий с их стороны важнейшую роль играет ещё афганский фактор и публичное повторение «сайгонского сценария».

Фактор ирано-российских отношений в процессе трансформации политических отношений в регионе

Analyzing democratic developments in 2019, the British Economist Intelligence Unit ranked Armenia among the winners and among the countries with the greatest progress. In 2018, Armenia ranked 103rd among 167 countries, improving its position by eight points. The greatest progress has been made in the area of effective government work (Economist Intelligence-Armenia). The authoritative human rights organization Freedom House in its regular report on democracy called "Freedom in the World" ranked the Republic of Armenia among the countries that have made the most progress. Assessing the level of democracy by 25 different criteria, Freedom House in Armenia recorded a progress of 6 points in 2018, or 50 out of 100 possible, instead of 44 last year. Nevertheless, it still belongs to the group of partially free countries. According to Human Rights Watch, one of the most influential Western human rights organizations, the early parliamentary elections in Armenia on December 9, 2018 met international standards, passed in a truly competitive atmosphere. However, there are still problems and shortcomings in the field of human rights. According to the E-Government Development Index (EGDI) conducted by the United Nations, Armenia has improved its position by 19 points in 2020, one of the largest advances in the Asian region, improving from 87 to 68 (EGDI-Armenia Overview). In 2021, according to the Heritage Foundation's index of economic freedom, Armenia ranks 32nd among 178 countries, improving its position by 2 points. Armenia is a leader among the Eurasian economic union (EEU) countries (Index of Economic Freedom-Armenia-2021).

Conclusions

The research of public administration system and evaluation found out the following assessments. From beginning of 1990s Armenian people want the state and its public administration to act as a social and economic promoter, capable of ensuring equitable distribution of opportunities, sustainable management of resources and equitable access to opportunities (political, economic, social and cultural). Modernization through public administration is a complex process and many factors derived from that dimension.

In recent years, public administration system is increasingly modernizing. Due to the problems of state development at the second stage, the main priority of system should be the perspective to achieve the third stage. Analysis of official strategies and legislative regulations reveals the will to prepare background to complete the transition. Moreover, research showed that leadership as a way to develop and modernize in comparative perspective has some positive dynamic. However, still in the RA, public administration and public policy do not play a major role in the delivery of services and the provision of much needed economic infrastructure. But, most important of all, an established non-partisan civil service is vital to democracy as it makes it possible to have

a peaceful and orderly political succession, and thus genuine pluralism. There is still need to foster dynamic partnership with the civil society and the private sector, to improve the quality of public service delivery, enhance social responsibility and feedback on public service performance. There is need to overcome the patronage system in the public service system in favor of merit system (especially in the civil service). Capacity development in the public administration needs to be addressed at three levels: the individual, the institutional and the societal. Key in this process are capacity development for policy support.

Works Cited

1. Altunyan Katerina, Kalantaryan Edgar, "Public Management Reforms in the Republic of Armenia", *Journal of Social Technology and Research*, 6(100)2019 January-February, "SPO SOTIS", pp. 17-26.
2. Attila Ágh, "Europeanization of Public Administration in Eastern and Central Europe: The Challenge of Democracy and Good Governance", pp. 7-8. <https://core.ac.uk/download/pdf/33270628.pdf> [Available 05.11.2021]
3. Bogov Dmitri, Kresic Ana, Beschastna Galina, "Armenia Diagnostic", *Report October 2019, EBRD*, pp. 7-8. <https://www.ebrd.com/documents/strategy-and-policy-coordination/armenia-diagnostic.pdf?blobnocache=true> [Available 05.11.2021]
4. Country Classification: Data Sources, Country Classifications and Aggregation Methodology, "Statistical Annex of United Nation", "World Economic Situation and Prospects", pp. 143-150. https://www.un.org/en/development/desa/policy/wesp/wesp_current/2014wesp_country_classification.pdf [Available 05.11.2021]
5. "Economic Intelligence –Armenia, Report 2019". <https://country.eiu.com/armenia> [Available 05.11.2021]
6. "EDGI-Armenia Overview", 2020, <https://publicadministration.un.org/egovkb/en-us/Data/Country-Information/id/8-Armenia> [Available 05.11.2021]
7. Erdmann Gero, Engel Ulf, "Neopatrimonialism Revisited: Beyond a Catch-all Concept", *GIGA Working Paper Series No. 16, Hamburg: German Institute of Global and Area Studies*, pp. 45-46.
8. "European Bank for Reconstruction and Development Transition Report 2020-21", <https://2020.tr-ebrd.com/countries/#> [Available 05.11.2021]
9. Hamadeh Nada, Rompaey Van Catherine, Matreau Eric, "New World Bank country classifications by income level: 2021-2022", *World Bank Blog, July 21, 2021* <https://blogs.worldbank.org/opendata/new-world-bank-country-classifications-income-level-2021-2022#:~:text=The%20World%20Bank%20assigns%20the,%2C%20and%20high%2Dincome%20countries.> [Available 05.11.2021]
10. Ilke Dagli Hustin, "Score Armenia Pilot Study: Analysis and Recommendations", by the USAID/OTI and implemented by the Centre for Sustainable Peace and Democratic, 2019, p. 15. <https://www.socialcohesion.info/library/publication/score-armenia-pilot-study> [Available 05.11.2021]
11. "Indicators reflecting Armenia's status on governance" <https://ogp.gov.am/files/libraries/1/1611143693659.pdf> [Available 05.11.2021]
12. "Index of Economic Freedom-Armenia-2021" https://www.heritage.org/index/pdf/2021/countries/2021_IndexofEconomicFreedom-Armenia.pdf [Available 05.11.2021]
13. Miarka Agnieszka, "Armenia's Domestic Policy after the Velvet Revolution: Selected Issues", "Central Asia and the Caucasus", Volume 21, Issue 2, 2020, pp. 66-75. https://www.researchgate.net/publication/342313150_Armenia's_Domestic_Policy_after_the_Velvet_Revolution_Selected_Issues [Available 05.11.2021]
14. Mussari Riccardo, Cepiku Denita, "Public Administration Reform in Transition: Reflection from the Albanian Experience", "Journal of Public Management Review", Volume 9, by Routledge, 2007, pp. 353-375.
15. Nakrosis Vilatis, "The Influence of Government Priorities on Public Administration Reforms in Europe", *The NISPA Journal of Public Administration and Policy*, Vol. VII, No 1, 2015, p.29.

16. Public Administration Reform Strategy of the Republic of Armenia, 2021, Decree of the Government of the Republic of Armenia of July 2021, L-decision <https://www.e-draft.am/projects/3438> [Available 05.11.2021]

17. "Public Administration Reform Practice Note", UNDP, November 12, 2015, <https://www.undp.org/publications/public-administration-reform-practice-note-0> [Available 05.11.2021]

18. Saltanat Liebert, Stephen E. Condrey, Goncharov Dmitry, "Public Administration in Post-Communist Countries. Former Soviet Union, Central and Eastern Europe, and Mongolia", Routledge, London, 2013, pp. 343-344.

19. "Social Progress Index in 2020: Executive Summary", "Social Progress Imperative", pp. 6-10. <https://www.socialprogress.org/static/37348b3ecb088518a945fa4c83d9b9f4/2020-social-progress-index-executive-summary.pdf> [Available 05.11.2021]

20. Schomaker Rahel, "Revolution and Public Administration", CUAS Villach and German Research Institute for Public Administration, "Spryer", pp. 43-45.

21. Waldo Dwight, "Public Administration in a Time of Revolution", Public Administration Review, Vol. 28, No. 4 (Jul. - Aug., 1968), pp. 362-368.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱԼ

*Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածի նպատակն է վերհանել Հայաստանի Հանրապետությունում հանրային կառավարման համակարգի արդիականացման առաջնահերթ խնդիրները: Այդ խնդիրների վերազնահատումը հանրային կառավարման տեսության հայեցակարգային դրույթների համատեքստում, կարող է նպաստել ժամանակակից հայկական պետությունում հանրային կառավարման կարևորության ու դերի աճին: Հաշվի առնելով անցումային երկրներում հանրային կառավարման հատուկ կարգավիճակը՝ սույն հետազոտությունը կատարվել է զարգացման ու արդիականացման հիմնական խնդիրների շուրջ: Բացի այդ, հոդվածում դիտարկվում է հանրային կառավարման նոր հարացույցը, որի նպատակն է համակարգային խնդիրների լուծման համար թիրախային առաջարկությունների ձևակերպումը:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք հանրային կառավարման տեսական հիմունքների հիմքով՝ կիրառելով կառավարման դասական ու նոր տեսությունների համեմատական մեթոդը: Տեսական պնդումները ցույց են տվել, որ քաղաքագիտության տեսանկյունից հանրային կառավարման ուսումնասիրությունը կառավարության գործունեության վերլուծությունն է, ինչը նշանակում է կառավարության քաղաքականության ու գործողությունների՝ պետության և հասարակության վրա ազդեցությունների ուսումնասիրություն:

Հոդվածում սահմանվել է հայեցակարգային խնդիրների համառոտ շրջանակ՝ բացահայտելու ՀՀ-ում հանրային կառավարման բարեփոխումները և ընդհանուր համեմատությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ:

Ամփոփելով սույն ուսումնասիրության հիման վրա ստացված արդյունքները՝ ակներև է դառնում, որ հանրային կառավարման արդիականացումը պետք է ներառի երեք հիմնական մակարդակներ՝ պետական, ինստիտուցիոնալ ու հասարակական: Վերջինն էլ պահանջում է հանրային քաղաքականություններին աջակցող կարողությունների զարգացման զուգակցում:

Հիմնաբառեր՝ պետական կառավարում, հանրային բարեփոխումներ, հանրային քաղաքականություն, հանրային ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարություն, անցումային կառավարում, պետական կառավարում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկրներ, Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ):

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ПЕРЕОЦЕНКА ТРИДЦАТЬ ЛЕТ СПУСТЯ

КАТЕРИНА АЛТУНЯН

*ассистент кафедры государственного управления
факультета международных отношений
Ереванского государственного университета,
кандидат политических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – указать на приоритетные вопросы модернизации системы государственного управления в Республике Армения. Под переоценкой понимается периодическая переоценка прогресса положений теории государственного управления, растущего значения и роли государственного управления в современном армянском государстве. Данное исследование посвящено основным проблемам ускоренного развития стран с переходной экономикой с учетом их особого статуса государственного управления. Кроме того, в статье рассматривается новая парадигма государственного управления с целью внесения целевых предложений по дальнейшему совершенствованию всей системы.

Исследование проводилось на основе теоретических положений общественного управления с применением сравнительного метода классической и новой концепций государственного управления. Теоретические положения доказывают, что с точки зрения политологии изучение государственного управления - это анализ деятельности правительства, что означает изучение воздействия государственной политики и ее действий на государство и общество. В статье сформулирован краткий круг концептуальных вопросов по определению реформ общественного управления в Армении и дано общее сравнение с блоком стран Центральной и Восточной Европы.

Обобщая результаты, полученные на основе данного исследования, мы приходим в выводу о том, что модернизация государственного управления должна осуществляться на трех основных уровнях: государственном, институциональном и социальном.

Ключевым моментом в этом процессе является развитие потенциала для поддержки политики.

Ключевые слова: *государственное управление, государственные реформы, государственная политика, государственная служба, правительство Республики Армения, переходный период, государственное управление, страны Центральной и Восточной Европы (ЦВЕ), Содружество Независимых Государств (СНГ).*

ԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈՐԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (2000-2020ԹԹ.) *

ՀՏԴ 93/94:327

DOI: 10.52063/25792652-2021.4-137

ՀԱՅԿԱՐԱՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Լիբերթի համալսարանի պամոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ,
ք. Լինչբուրգ, Վիրջինիա, ԱՄՆ
hnahapetyan@liberty.edu

Հոդվածի նպատակն է ներկայացնել ԱՄՆ-ում ադրբեջանական լոբբիի կայացման, զարգացման և որոշակի անկման դինամիկան: Բուն խնդիրը՝ նշված թեմայի համատեքստում և պատմական մերօրյա փաստերի համադրմամբ ներկայացնել ադրբեջանական լոբբիստական խմբերի ազդեցիկ հակահայ աշխատանքը, հայկական լոբբիի՝ հակազդմանն ուղղված գործունեությունը:

Հեղինակը նպատակ ունի ներկայացնել փաստեր առ այն, որ ադրբեջանական լոբբին ըստ էության ադրբեջանական կառավարությանը ենթակա վերահսկելի կառույց է: Աշխատելով նման ձևաչափով՝ ադրբեջանական լոբբին հաճախ գործում է ի հակառակ ԱՄՆ օրենքների՝ հանդիսանալով օտար կառավարության կողմից Միացյալ Նահանգների քաղաքական անցուղարձի վրա ազդեցություն ստանալուն ու միջամտելուն ուղղված արտաքին ուժ: Այս նպատակով ներկայացվել են մասնավորապես ամերիկյան աղբյուրներում արձանագրված փաստեր հակահայ լոբբիստական մեքենայություններին ադրբեջանական դիվանագետների միջամտության և վերջիններիս կողմից ուղղորդման աշխատանքի մասին: Նույնպես ամերիկյան, այսինքն՝ չեզոք աղբյուրները հստակեցնում են, որ աշխատանքը ֆինանսավորում են ադրբեջանցի օլիգարխները կամ պետական նավթային ընկերությունը՝ SOCAR-ը:

Հոդվածում ամերիկյան, հայկական, ադրբեջանական և այլ բաց աղբյուրներում առկա փաստերը համադրվել են ԱՄՆ մայրաքաղաքում և տարբեր նահանգներում կատարած դաշտային հետազոտությունների արդյունքների հետ: Հոդվածի պատրաստման ընթացքում համայնքային տարբեր գործիչների հետ իրականացվել են հարցազրույցներ: Ստացված խորապատկերն օգնում է առավել հիմնավոր պատկերացնել ինչպես դաշնային մայրաքաղաքում, այնպես էլ տարբեր նահանգներում ադրբեջանական լոբբիի և դեսպանատան հակահայ աշխատանքի բնույթն ու ռազմավարությունը:

Վերլուծելով ԱՄՆ-ում ապշերոնյան լոբբիի մասնակի թուլացման պատճառները՝ հեղինակը նաև արձանագրում է, որ դա կարող է լինել ժամանակավոր երևույթ: Իրավիճակը ենթադրում է մշտական լարված աշխատանք հայկական համայնքային միությունների համար և հնարավորության սահմաններում՝ գործընկերություն բարեկամ ժողովուրդների համայնքային միությունների հետ:

Հիմնաբառեր՝ ադրբեջանական լոբբի, թուրքական լոբբի, Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) հակամարտություն, Արցախի անկախության ճանաչում, ԱՄՆ

* Հոդվածը ներկայացվել է 01.12.2021թ., գրախոսվել՝ 07.12.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

հայ համայնք, Հայ Դատ (ԱՄՆ Հայ Ազգային Կոմիտե), Ադրբեջանի Հանրապետության Պետական Նավթային Ընկերություն (SOCAR):

Վերջին շուրջ երկու տասնամյակներին ԱՄՆ-ում ադրբեջանական լոբբին կայացման ու զարգացման փուլեր է անցել: 21-րդ դարի անցած ժամանակարանթացքում այն գրեթե զրոյական վիճակից նախ ձևավորվել է, ապա ենթարկվել որոշակի դինամիկայի: Ադրբեջանական լոբբիստական խմբերի աշխատանքի որակի, սկզբնական ակտիվությունից հետո նրանց դիրքերի թուլացման վրա ազդել են հայկական լոբբիստական խմբերի աճող դիմադրությունը, ինչպես նաև զուգահեռ ծավալված այլ իրողություններ՝ կապված ԱՄՆ հանրային ու քաղաքական շրջանակներում ադրբեջանական լոբբիի նկատմամբ ձևավորված վերապահումների և բուն Ադրբեջանի քաղաքական գործընթացների հետ: Քանի որ ԱՄՆ-ում (ինչպես նաև այլուր) ադրբեջանական ակտիվ լոբբիստները հիմնականում պաշտոնական Բաքվի դրածոներն են, առանցքային նշանակություն ունեն Ադրբեջանի ներքաղաքական վիճակն ու վերադասավորումները: Հաշվի առնելով ադրբեջանաթուրքական կողմերի սերտաճումը՝ Թուրքիայի քաղաքական զարգացումները ևս ազդում են Ադրբեջանի լոբբիստների աշխատանքի վրա:

ԱՄՆ-ում ադրբեջանական քաղաքական-լոբբիստական միությունների ձևավորման առաջին քայլերը

1920թ.-ին, երբ Մուսաֆաթական Ադրբեջանն անկում ապրեց, անվտանգության նախարար Նադի Շեյխզամանլին հաստատվեց ԱՄՆ-ում: Վերջինիս որդի Սալեհ Շեյխզամանլին 1957թ.-ին Նյու Ջերսի նահանգում գրանցեց ԱՄՆ Ադրբեջանական համայնք կառույցը: Այլ տվյալներով՝ ASA-ն նա չի հիմնել, բայց ավելի ուշ գլխավորել է այն:

Ժամանակագրական առումով ASA-ն հանդիսանում է ԱՄՆում առաջին ադրբեջանական միությունը (Azerbaijani): Ներկայում կառույցը ղեկավարում է նախարարի թոռնուհի Թոմրիս Ազերին: Հիմնադրումից հետո՝ տասնամյակների կտրվածքով, սովոր համայնքի և անկախ Ադրբեջանի բացակայության պայմաններում ASA-ն առանձնապես գործուն չէր: Իրավիճակը մասամբ փոխվեց ԱՀ անկախությունից հետո, թեև ակտիվ քաղաքական խումբ ASA-ն այդպես էլ չդարձավ: Թերևս պետք է հաշվի առնել հետևյալ պատճառները՝

1. ASA-ն հիմնվել էր Մուսաֆաթ գործչի կողմից, իսկ այլևսների (իշխանության պայմաններում նշված կուսակցությունն ընդդիմադիր է: Պաշտոնական Բաքվի հետ կառույցի կապը շատ ակտիվ բնույթ չի կրել, թեև ժամանակ առ ժամանակ որոշ հարաբերություններ գրանցվել են: Մասնավորապես 2006թ.-ին Բաքվում Ադրբեջանցիների համաշխարհային երկրորդ Կոնգրեսի ժամանակ Թ. Ազերին պարգևատրվել է Ադրբեջանի պատվո շքանշանով: Դրա հետ միասին ուշադրության արժանի է հետևյալը՝ 2012թ.-ին Նյու Արքում փոթորիկի հետևանքով մեծապես տուժեց ASA-ի կենտրոնը, որը մինչև օրս նորոգված չէ (Azeri): Կարելի է գրավակցնել, որ պաշտոնական Բաքվի հետ ավելի ինտենսիվ հարաբերությունների պայմաններում նավթադոլարների հաշվին գրասենյակի նորոգությունը խնդիր չէր լինի:

2. ASA-ն գրասենյակ չի ունեցել Վաշինգտոնում, որտեղ կենտրոնացած է լոբբիստական հիմնական աշխատանքը: Նյու Ջերսիի փոքր բնակավայրը դաշնային իշխանությունների հետ ակտիվ կապի հնարավորություն չի ընձեռում:

3. Թոմրիս Ազերին ավելի ավագ սերնդի ներկայացուցիչ է և ժամանակի պահանջին համընթաց հանրային, քաղաքական կամ քարոզչական աշխատանքի փորձառության պակաս ունի:

Ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ այլ պետություններում ադրբեջանական միությունների կտրուկ ակտիվացումը սկսվեց 2001թ.-ից, երբ այն ժամանակվա նախագահ Ջեյթար Ալիևի հրամանով ձևավորվեց Արտասահմանում

ապրող աղբրեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեն: Վերջինիս կազմում են տարբեր երկրների ու աշխարհամասերի (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրոպական երկրներ, Մերձավոր Արևելք և այլն) համապատասխան բաժիններ: Ունենալով նաև պետական զանձարանի աջակցությունը՝ Կոմիտեն զգալի կյուրական ռեսուրսներ ուղղեց լրբբինգի աշխուժացման ուղղությամբ՝ գրանցելով առաջընթաց: Մասնավորապես 2004թ.-ին ԱՄՆ Կոնգրեսում գրանցվեց Աղբրեջանական հարցերով հանձնախումբը: Գրանցման պահին այն ուներ ութ անդամ: Ցուցանիշն աստիճանաբար սկսեց աճել և երկու տարի անց նրանք արդեն 17-ն էին: Հիմա Աղբրեջանի Բարեկամների Խումբը երեք տասնյակի սահմաններում է՝ արձանագրելով որոշ անկում վերջին մի քանի տարիների համեմատ: 2005թ.-ի փետրվարին անդամներից Բիլ Շուստերը Կոնգրեսում աղբրեջանական կեղծ թեզերի շրջանակում խոսեց Խոջալու-Իվանյանի՝ 1992թ.-ի իրադարձությունների մասին, ինչն առաջին դեպքն էր, երբ դաշնային կոնգրեսում աղբրեջանական կեղծիք բարձրաձայնեցին: Հետագա տարիներին օրենսդիրներ Բիլ Շուստերը, Ղեն Բարտոնը, Վիրջինիա Ֆոքսը նոր աղբրեջանական պատկերով հանդես եկան:

2007թ.-ին ձևավորվել է ԱՄՆ Աղբրեջանցիների ցանցը՝ U.S. Azerbaijanis Network-USAN): Հիմնական ակտիվ անդամներն են համայնքային գործիչներ Ադիլ Բագիրովը, Բեդիր Մամադյին և Յուսուֆ Բաբանլին: Վերջինս նաև հանդես է գալիս որպես Ազերթաջ լրատվական գործակալության թղթակից ԱՄՆ-ում, Հյուստոնի աղբրեջանական միության հիմնադիրներից ու ղեկավարներից է (Babanli): Բագիրովը քաղաքական ամբիցիաներով գործչի կենսագրություն ունի, ԱՄՆ Հանրապետական կուսակցության անդամ է: Հաստատելով Օհայո նահանգում անշարժ գույքի և բեռնափոխադրումների բիզնես է ծավալել, ընտրվել Դեյտոնի տարածաշրջանի կրթական հանձնաժողովի վարչական խորհրդի անդամ: 2018-ին, երբ մահացավ Օհայոյի Սոնթգոմերիի շրջանի անշարժ գույքի համար պատասխանատու պաշտոնյան, որը դեմոկրատ կուսակցությունից էր, Բագիրովն առաջադրեց իր թեկնածությունը՝ հայտարարելով, թե իբր դեմոկրատների ղեկավարման շրջանում ծառայության որակը նահանջել է (Stewart): Հավաքելով մոտ 88 հազար ձայն՝ Բագիրովն ընտրություններում պարտվեց դեմոկրատ մրցակցին (Dr. Adil Baguirov):

Մինչև Օհայոյում հաստատվելը Ադիլ Բագիրովը բնակվում էր մայրաքաղաք Վաշինգտոնի տարածաշրջանում, տպագրել է հոդվածներ (Khojaly) և մասնակցել մեծ թվով հակահայ հանրահավաքների՝ իրեն դրևստրելով ոչ աղեկվատությանը մոտ ազդեցիկ ձևով: Ըստ առկա տեղեկությունների՝ նա ազգակցական կապեր ունի աղբրեջանցի դիվանագետ, Մեծ Բրիտանիայում ԱՀ դեսպան Էլին Սուլեյմանովի հետ, որը 2005-2011թթ.-ին ԱՀ հյուպատոսն էր Լոս Անջելեսում, այնուհետև 10 տարի դեսպանը Վաշինգտոնում: 2013-ին USAN-ը Սպիտակ Տան կայքում ստորագրահավաք էր սկսել՝ կոչ անելով, որ ԱՄՆ նախագահին աղբրեջանական պատ հայտարարություն անի Խոջալու-Իվանյան բնակավայրի դեպքերի հետ կապված: Սպիտակ տան՝ ավելի ուշ հետևած հայտարարությունը չեզոք էր (Issue): USAN-ի ակտիվությունը վերջին շրջանում նվազել է:

Ադիլ Բագիրովը նաև հակահայ ուղղվածության karabakh.org քարոզչական կայքի և Զարաբաղ ֆոնդի հիմնադիրներից է: Վերջինս նա հիմնել էր Բաքվի Խազար համալսարանի ռեկտոր Համլետ Իսախանլիի և իրավաբան Ջոն Վաֆայիի հետ (Karabakh): Թյուրքական ծագումով իրավաբան Ջոն Չենգիզ Վաֆային ծնունդով Թավրիզից է, Իրանում զբաղեցրել է փոխնախարարի պաշտոն, ապա ԱՄՆ փոխադրվելով՝ անցել իրավաբանական աշխատանքի, միացել Հանրապետական կուսակցությանը: 2008-ին, երբ նախագահական ընտրություններում մրցում էին Բարաք Օբաման և Ջոն Մակքեյնը, Վաֆային ղեկավարում էր Աղբրեջանցիները Հանուն Մակքեյնի շարժումը: 2011-14թթ.-ին Զարաբաղ հիմնադրամն ակտիվ էր մասնավորապես քարոզչական, մշակութային միջոցառումներ ֆինանսավորելու գործում, դրամաշնորհ էր տալիս աղբրեջանական պատ «հետազոտությունների»

համար: ԱՄՆ մայրաքաղաքի տարածքում գործող Harem Carpets ընկերությունից գնում անելու դեպքում շահույթի մի մասը փոխանցվում է Karabakh Foundation-ին (Emre): Հիմնադրամի ակտիվությունը 2014թ.-ից հետո էապես նահանջել է, karabakh.org քարոզչական կայքը համեմատաբար ավելի գործուն վիճակում է:

2011թ.-ին ԱՄՆ-ում գրանցվեց ԱՄՆ Ադրբեջանական Ալյանսը՝ The Azerbaijan-America Alliance: Կառույցի ֆինանսական հովանավորն ըստ էության ԱՀ իշխանություններն էին, մասնավորապես 2002-2017թթ.-ին ԱՀ տրանսպորտի նախարար Չիյա Մամադովի որդի Անար Մամադովը: Նշված հայրն ու որդին, Վիքիլիքսից սկսած մինչև BBC, ինչպես նաև այլ հեղինակավոր լրատվամիջոցներում բնութագրվել են որպես կոռուսմպացված ընտանիք (Wiki): Մամադովները Բաքվում Դոնալդ Թրամպի հետ հյուրանոց կառուցելու անավարտ ու չստացված ծրագրի դերակատարներն են (Davidson): 2011թ.-ից Անարի գրանցած կառույցն ԱՄՆ մայրաքաղաքում ծավալեց աշխատանքային բուռն գործունեություն՝ մասնավորապես 2012-2013թթ.-ին զբաղվելով ԱՄՆ-ից հարյուրավոր քաղաքական գործիչների կամ նրանց աշխատակիցների՝ Ադրբեջան ուղարկելու գործով, ինչին ավելի մանրամասն կանդիդատանք ավելի ուշ: Կոռուսմպացված ընտանիքի շառավիղը նույնանման որակներ դրսևորեց նաև ԱՄՆ-ում աշխատանքի ժամանակ, ինչը որոշակի դիմադրության հանդիպեց ամերիկյան իշխանությունների կողմից: 2015թ.-ից կազմակերպության ակտիվությունը նվազեց, նրանց Ֆեյսբուքյան էջը մինչև հիմա չի թարմացվել: 2013-ից կառույցի գործադիր ղեկավարն էր նախկին կոնգրեսական, հանրապետական Դեն Բարտոնը (The Azerbaijan): Երբ այլանսը սկսեց կազմալուծվել՝ Մամադովը Բարտոնին մեկ տարվա աշխատավարձ պարտք մնաց, ու վերջինս, այս մասին սկանդալային հայտարարություններ անելով, հեռացավ կառույցից (Schrek):

ԱՄՆ-ում գործող այլ ադրբեջանական միությունների ցանկում է ԱՄՆ Ադրբեջանական խորհուրդը: Այն հիմնել է ԱՄՆում ԱՀ առաջին հավատարմատար Ջեյհուն Սոլազադեն: Ըստ առկա տեղեկությունների՝ կառույցը նախ գրանցվել է Վաշինգտոնում, ապա փակվել ու 2006-ին վերաբացվել է այս անգամ Նյու Յորքում: Դեկավար կազմում Լայա Ռաջաբովա, Գարանֆիլ Հասանովա, Ջավիդ Հուսեյնով անունների կողքին նշված է Էրգյուն Զըրըքովայի անունը (Board): Վերջինս ազգությամբ թուրք է, ԱՄՆ Թուրքական Միությունների Ասոցիացիայի նախկին ղեկավարն է, հայտնի է Հայոց Տեղասպանությունը մերժող հայտարարություններով (Sassounian): ԱՄՆ Ադրբեջանական խորհրդի ակտիվության աստիճանը նույնպես վերջին տարիներին նվազել է:

ԱՄՆ-Ադրբեջան առևտրային պալատը գործում է Վաշինգտոնում և ֆորմալ առումով զբաղվում է երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների խթանմամբ: Ադրբեջանական տարածքային միություններ են գործում նաև Նյու Յորքում, Տեխասում, Կալիֆոռնիայում, կենտրոնական նահանգներում և այլուր: Մի շարք համալսարաններում ժամանակ առ ժամանակ կենդանության նշաններ են ցույց տալիս ադրբեջանական ուսանողական խմբերը, սակայն որպես կանոն դա պարբերական բնույթ չի կրում:

Ադրբեջանական լոբբիստական խմբերի վերելքն ու անկումը

Ինչպես նշվեց, անցնող երկու տասնամյակում Ադրբեջանի լոբբիստներն ԱՄՆ-ում նախ ակտիվացել, ապա անկում են ապրել: Ներկայացնենք նրանց դիրքերի թուլացման հիմնական պատճառները.

- 2012-2016թթ.-ին նավթի գները միջինացված եռակի նվազեցին, ինչը հանգեցրեց մանաթի արժեզրկմանը, տնտեսական ակտիվության անկմանն ու այլոց թվում նաև՝ լոբբինգի ուղղությամբ ծախսերի կրճատմանը:
- ԱՄՆ-ում ամենակտիվ լոբբիստական խմբի՝ ԱՄՆ Ադրբեջանական այլանսի հովանավոր Մամադովների ընտանիքը կորցրեց դիրքերն ապշերոնյան

կառավարական շրջանակներում: 2017թ.-ին կոռուկացված նախարար Մամադովին պաշտոնանկ արեց կոռուկացված նախագահ Ալիևը: Արդյունքում նախկինում ակտիվ այլախոս այսօր գոյություն չունի:

- Ադրբեջանական լրբին սերտորեն համագործակցում էր ԱՄՆ-ում ծավալված թուրքական գյուլենական շարժման մասնաճյուղերի հետ: Սակայն քաղաքական ու հոգևորական գործիչ Ֆեթհուլա Գյուլենի և Թուրքիայի ղեկավար Ռեջեփ Էրդողանի հակասությունների խորացման արդյունքում ԱՄՆ-ում Ալիևի դրածո լրբիստներն էլ սկսեցին խուսափել գյուլենական թևի հետ գործակցելուց:

- Վաշինգտոնից հեռացավ և այլ աշխատանքերով զբաղվեց Բագիրովը՝ ըստ ետևյալ թուլացնելով մայրաքաղաքում իր հիմնած միությունների աշխատանքը:

- Որոշ որոնումներից հետո ամերիկահայ լրբին ուժեղացրեց ու կատարելագործեց ադրբեջանական լրբիի դեմ հակազդման աշխատանքը:

- Ոչ առանց հայկական կողմի ջանքերի սկսեցին բացահայտվել ու հանրայնացվել ադրբեջանական լրբիի աշխատանքներում առկա սուտը, կեղծիքն ու մեքենայությունները, ինչը գրավեց ամերիկյան մամուլի և քաղաքական շրջանակների ուշադրությունը և հանգեցրեց արդեն ամերիկյան կողմի որոշակի հակազդեցությանը:

Ստորև մանրամասնեք վերոնշյալ իրողությունները:

Ինչպես ընդհանրապես Արցախյան պատերազմում, դիվանագիտական ճակատում կամ պատմության դասագրքերում, լրբինգում նույնպես պաշտոնական Բաքվին բնորոշ են կեղծիքն ու մեքենայությունները: Դա նկատելի դարձավ լրբինգի առաջին իսկ ակտիվության հետ միասին, երբ Բաքվի ոչ միայն մամուլը, այլև դիվանագիտական կայքերն ու անձամբ նախագահ Ալիևի պաշտոնական էջը սկսեցին կեղծել ամերիկյան տարբեր գործիչների հայտարարությունների տեքստերը՝ համեմատաբար չեզոք ելույթները ներկայացնելով իրենց պետքական շեշտադրումներով: Մասնավորապես դեռ 2009թ.-ի մարտի 31-ին Նևադայի այն ժամանակվա նահանգապետ Ջիմ Գիբոնսը հայտարարություն տարածեց 1918թ.-ի մարտին ադրբեջանցիների դեմ իբրև թե իրականացված ջարդի մասին: Ադրբեջանական կողմն իր անունից հավելեց, թե նահանգապետը դատապարտել է «ադրբեջանցիների ցեղասպանությունը» (նման եզրույթ տեքստում չկար), իսկ Նևադայում սուգ է հայտարարվել (В Американском): Նևադան այն նահանգն է, որտեղ գտնվում է Լաս Վեգասը, և դժվար է պատկերացնել, որ խաղատների հռչակավոր քաղաքում սգային Ադրբեջանի համար:

1992թ.-ին Խոջալու-Իվանյանի հետ կապված դեպքերի ոչ միայն վավերագրական ընթացքն է կեղծվում, այլ նաև կեղծում են կեղծիքի ճանաչմանն ուղղված արշավի մասին տվյալները: ԱՅ նախագահի կայքէջը պնդում է, թե ամերիկյան 18 նահանգ է հաստատել Խոջալուի դեպքերի ադրբեջանականատ տարբերակն արտահայտող փաստաթղթերը: Նման իրողությունն չկա: Օրինակ՝ որպես Մասաչուսեց նահանգի կողմից ճանաչման վկայական Իլհամ Ալիևի կայքը ներկայացնում է 2010թ.-ի փետրվարին մեկ օրենսդիրի կողմից առաջադրված և խոսնակի կողմից ստորագրված թուղթը, որը չի անցել քվեարկության ընթացակարգ, չունի ֆորմալ փաստաթղթի համարանիշ (Administrative): Բովանդակային առումով էլ 160 նահանգային օրենսդիրներից միայն երկուսի ստորագրած թղթի կտորն ընդհանրապես չի հիշատակում հայերին, միայն Նշում է «Խոջալուի սպանդի 18-ամյակի» մասին:

Բնականաբար, հայկական կողմը որևէ առիթով չի պնդել, թե 1992թ.-ին Խոջալուի բնակիչներն Ակնայի տարածքում չեն սպանվել: Հարցն այն է, թե ով էր կազմակերպել այդ ողբերգությունը: Նշված թեմայով Ադրբեջանի նախագահ Այազ Մուխամբեդովի կամ լրագրող Դանա Մազալովայի բացահայտումները հայտնի են:

Ջորջիա նահանգի դեպքում հայկական լրատվամիջոցը ուշադրություն էր հրավիրել, որ օրենսդիրի հաստատած տեքստում չկա «ցեղասպանություն» բառը,

ինչպես նշված էր ադրբեջանական լրահոսում (No formulation): Խոջալուի թեմայի համատեքստում խորհրդային-ռուսական 366-րդ գնդին հղվող ադրբեջանցիների մշտական մեղադրանքը Ջորջիայի պարագայում լոբբիստները խառնել էին՝ փաստաթղթում գրանցելով «336-րդ դիվիզիա»: ԽՍՀՄ բանակի նշված համարի ներքո գործող դիվիզիան 1941-ին Ուլյանովսկ քաղաքի մոտերքից 1945-ին մարտերով հասել է Լեհաստան (336 ՇԸ), բայց Արցախում երբեք չի եղել:

2015-ի հունվարին ԱՄՆ Արևմտյան ափի ադրբեջանական հյուպատոսը լուսանկարվեց Կոլորադոյի Սենատում՝ ձեռքին ինչ-որ մի թուղթ: Հյուպատոսության կայքում էլ գրեցին, թե չնայած հայկական լոբբին արշավ էր ծավալել՝ նահանգային Սենատում Ադրբեջանի օգտին աշխատանքը կասեցնելու համար, սակայն «հատուկ հետաքրքրություններ ունեցող այս խումբն անփառունակ կերպով տապալվեց» (Strong): Տարօրինակ կարող էր թվալ, որ հայկական լոբբիի տապալման մասին խոսելով՝ հյուպատոսությունը ոչ ներկայացնում էր ընդունված փաստաթղթի համարը, ոչ քվեարկության արդյունքը: Հունվարի 23-ին նահանգային սենատոր Լարի Քրաուդերն իրոք ադրբեջանական օրինագիծ էր առաջադրել, որն ամրագրվել էր SJR006 համարի ներքո: Եթե ուսումնասիրենք օրենսդիր փաստաթղթերի արխիվացման ուղղությամբ մասնագիտացող ամերիկյան կայքերը, կտեսնենք, որ SJR 006-ը որոշ առաջխաղացում գրանցելուց հետո «մահացել է ներկայացուցիչների պալատում» (բառացի՝ died in chamber): Մեր լոբբին փակեց այս օրինագծի ճանապարհը, իսկ այն, ինչ Ադալը ձեռքին լուսանկարվել էր, չհաստատված տարբերակն էր, որի վրա սենատորն ու Սենատի ղեկավարը ստորագրել էին: Այդ թղթի կտորը Կոլորադոյի կողմից ճանաչման ուժ չունեւր, հատկապես երբ բուն օրինագիծը «մահացել էր»: Ադրբեջանը հերթական անգամ ստում էր, և նման օրինակները կարելի է շարունակել:

Հայտնի առաջին դեպքը, երբ այնպան մեքենայությունները գրավեցին արդեն ամերիկյան իշխանությունների ուշադրությունը և հակահարված ստացան, եղավ այն ժամանակ երբ ադրբեջանական կողմը փորձեց իր ստերի մեջ ներքաշել Սպիտակ Տան բարձրաստիճան պաշտոնյային: 2009թ.-ի մարտի 18-ին Ադրբեջանում սահմանադրական փոփոխությունների հանրաքվե էր, որով վերացվելու էր նախագահի՝ երկու անգամից ավելի վերընտրվելու մասով նախկինում գործող արգելքը: Հասկանալի է, որ 2003-ին ԱՀ նախագահ «ընտրված» Իլիամ Ալիևը հող էր նախապատրաստում իր ու իր գերդաստանի անժամկետ իշխանության համար, ինչի ակնատեսն ենք ներկայում: Հանրաքվեին նախորդող շաբաթներին ԱՀ իշխանությունները մոդելավորեցին մի իրավիճակ, որն առերևույթ կարելի էր մեկնաբանել որպես ԱՄՆ իշխանությունների աջակցություն Իլիամ Ալիևին: Այդ պահին ևորընտիր նախագահ Բարաք Օբամայի ընտրարշավի մենեջեր Դևիդ Փլուֆին փողով հրավիրեցին Ադրբեջան իբրև թե Գերբ (Արևմտյան) համալսարանում դասախոսություն կարդալու: Սակայն ինչպես պարզվեց, նրան 50 հազար նավթադոլար էին վճարելու ոչ միայն կամ ոչ այնքան դասախոսության համար, որքան Իլիամ Ալիևի հետ սպասվող հանդիպման: Թեման գրավեց ԱՄՆ մամուլի և, պետք է ենթադրել, նաև անձամբ Օբամայի ուշադրությունը: Foreign Policy-ն, մեջբերելով Բաքվում աշխատած մի անանուն պաշտոնյայի, հավելեց. «Հանրաքվեի նախօրեին այս այցը Ադրբեջանի ներսում կներկայացվի որպես նախագահ Բարաք Օբամայի անձնական աջակցություն Իլիամ Ալիևին» (Rozen): Փլուֆի արդարացումները, թե ինքը Բաքու էր ժամանել զուտ որպես անհատ քաղաքացի, համոզիչ չէին: Ընդդիմադիր Իսա Ղամբարը հայտարարում էր, որ եթե Փլուֆն իրոք եկել էր ժողովրդավարությանը սատարելու, ապա նա պետք է հանդիպեր նաև ընդդիմությանը, ոչ թե միայն Ալիևին: Բաքվում ԱՄՆ դեսպանատունը հայտարարեց, որ չի զբաղվում Փլուֆի այցով, քանի որ այն պաշտոնական չէ, իսկ մամուլում հրապարակումներն իրար հաջորդեցին: Փետրվարի 10-ին Wall Street Journal-ը հաղորդեց, որ Փլուֆը ստացած 50 հազարից հրաժարվել է՝ ի օգուտ ԱՀ ոչ

կառավարական կառույցների (Simpson): Այս եղանակով ու չորրորդ իշխանության ճնշման արդյունքում պետական գանձարանի փողերը վերջնահաշվում ֆինանսավորեցին ադրբեջանական ընդդիմությանը: Փլուֆի այցի հետ կապված սկանդալը դարձավ ԱՄՆ-ում Ադրբեջանի կոռուպցիոն գործերի բացահայտման սկիզբը: Այդ բացահայտումները, գումարվելով հայ համայնքի աճող դիմադրությանը, սկսեցին խաղալի ապշերոյան լոբբիստների դիրքերը:

Ըստ առկա տպավորության՝ Նախնական փուլում հայկական կառույցների շրջանում որոշակի անհատակություն էր տիրում ադրբեջանական կողմին հակազդելու առումով: Բաքվի ակտիվացումն ըստ էության նոր վիճակ ձևավորեց հայկական կողմի համար: Նախկինում ամերիկահայերը բախվում էին Թուրքիայի լոբբիստներին, որոնք պայքարում էին Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, սակայն մեղադրական օրինագծեր, որպես այդպիսին, թուրքերը մեր դեմ չէին առաջադրում: Մինչդեռ Ադրբեջանի գործողությունները նոր վիճակի հանգեցրին, երբ հայկական կողմը փաստացի հայտնվեց մեղադրվողի կարգավիճակում: Որոշակի ժամանակ պահանջվեց հակազդման ամենարդյունավետ եղանակները մշակելու համար:

Տեղային նշանակության ադրբեջանամետ օրինագծերի դեմ առաջին հակահարվածները եկան Վայոմինգ և Հավայի նահանգներից: 2014թ.-ին հունվարի վերջին Վայոմինգի օրենսդիրի անդամ Դեն Չվոնիցերը օրենսդիրներ Կոնոլլի, Միլերի և Քրիստենսենի աջակցությամբ նահանգի Ներկայացուցիչների պալատում առաջադրեց HJ0002 օրինագիծը (HJ-0002): Փաստաթուղթը դրվատանքով էր խոսում Ադրբեջանի մասին և թեև չէր մասնավորեցնում Արցախյան թեման, սակայն ընդգրկում էր պարբերություն Ադրբեջանի տարածքի՝ շուրջ 33 հազար քառակուսի մղոն լինելու մասին: Մասնավորապես հայկական կողմի համար սա ունի հասկանալի ենթատեքստ՝ Չվոնիցերն այս թվաբանության մեջ տեղավորել էր Արցախը: Փետրվարի 12-ին օրենսդիր մարմինը 25 կողմ, 35 դեմ հարաբերակցությամբ մերժեց օրինագիծը: Որքան հայտնի է, հայկական կողմը չէր միջամտել, պարզապես մի շարք օրենսդիրներ իրենք ուսումնասիրել էին խնդրի էությունն ու հակադրվել օտար բռնապետին զովերգող փաստաթղթին:

Մտավորապես նույն օրերին՝ հունվարի 27-ին, ապա նաև 29-ին, Հավայի նահանգում օրենսդիրներ Կաբանիլան և Տակային առաջադրեցին 9 (House, no 9) և 13 (House, no. 13) համարի օրինագծերը: Առաջին փաստաթուղթը զովաբանում էր Ադրբեջանին՝ այն ներկայացնելով որպես ԱՄՆ-ի հետ ռազմավարական հարաբերություններ զարգացնող երկիր և ադրբեջանականաստ ձևակերպումներով անդրադառնում Արցախյան հակամարտությանը: Մյուս օրինագիծն արտացոլում էր Իվանյան բնակավայրի կրակակետերի ճնշման Ն»ի Ի»ի կեղծիքը: 13 համարի՝ տարաբախտ թիվ հանդիսանալու թեզն այս դեպքում էլ իրեն արդարացրեց, քանի որ Ադրբեջանն անսպասելի հայտնվեց նահանգային մամուլի թիրախում: Հոնոլուլու Սիվիլ Բիթ թերթին տարօրինակ թվաց, որ հեռավոր կղզի-նահանգը օրինագիծ էր պատրաստվում ընդունել մի երկրի մասին, որի վերաբերյալ Հավայի բնակիչները դժվար թե քիչ թե շատ պատկերացում ունենային: Լրատվամիջոցը դեռ մեկ տարի առաջ նաև ուշադրություն էր դարձրել, որ նահանգային օրենսդիրներ Մարկ Տակային և Ռիդա Կաբանիլան ադրբեջանական լոբբիի ֆինանսավորմամբ այցելել էին Բաքու: «Կաբանիլայի և Տակայիի մի քանի օր տևած այցի վրա Ադրբեջանն ընդհանուր առմամբ մոտ 8 հազար դոլար է ծախսել օդանավի տոմսերի, սննդի, կեցության և այլ նպատակներով», 2013-ի հուլիսին գրել էր ամերիկյան լրատվամիջոցը՝ ընդգծելով, որ տարվա կտրվածքով սա ամենաթանկարժեք նվերն է, որ նահանգային որևէ օրենսդիր ստացել էր որևէ կառավարությունից (Eagle, Azerbaijani): 2013-ին Տակային ու Կաբանիլան Բաքվում մասնակցել էին ԱՄՆ-Ադրբեջան համաժողովին, որին ավելի ուշ կանդադարառանք:

Այսպիսով, երբ նշված երկու նահանգային օրենսդիրները 2014-ի սկզբին «անսպասելիորեն» որոշեցին Բաքվի օգտին օրինագծեր առաջադրել, Սիվիլ Բիթի

լրագրողները, ընթերցողներին հիշեցնելով, որ այս գույգը մի տարի առաջ «մեկնել էր մոլորակի հակառակ կողմը թանկարժեք ճամփորդության», հարցադրում էին առաջ քաշել, թե հատկապես ինչ պատճառով են Կաբանիլան ու Տակային «այդքան մտահոգ Ադրբեջանով»:

Կրակին յուղ ցրեց Կաբանիլայի անկեղծանալը. նա թերթին ասել էր, որ օրինագծի տեքստը ստացել է ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Սուլեյմանովից: Մինչդեռ օտար դիվանագետի կողմից ամերիկյան պաշտոնական փաստաթուղթ հեղինակելը հակաօրինական է: Թերթը գրել էր նաև գիտնական որ Դոն Վեբստերի բողոքի մասին: Նահանգային Կոնգրես ուղարկած նամակում Վեբստերը մտահոգություն էր հայտնել, որ հարկատուների փողերը ծախսվում են կեղծ փաստաթուղթ առաջադրելու նպատակով (Eagle, Why do): Դր Վեբստերի հայուհի հարս Անի Մարտիրոսյանը, ինչպես նաև նահանգի բնակիչ, ծագումով արցախցի ևս մեկ հայուհի ու վերջինիս էթնիկ ռուս ամուսինը նույնպես գործում էին. նրանք այցելեցին օրենսդիր, հանդիպեցին կոնգրեսականներին և հասան նրան, որ օրինագծերի քվեարկությունը հետաձգվեց և երբեք տեղի չունեցավ: «Տարօրինակ օրինագծերը պարտություն կրեցին, երբ ենթահանձնաժողովներն անժամկետ հետաձգեցին դրանց քվեարկությունը: Տեղի հայ համայնքը դա համարեց հաղթանակ», իր բլոգում գրել էր նահանգային իրավաբանը (Lowenthal):

Մեկ տարի անց՝ 2015թ.-ին, նույն Մարկ Տակային ընտրվեց ԱՄՆ դաշնային Կոնգրես Զավայան նահանգից: Ստորև, ըստ նահանգային կայքերից մեկի տվյալների, ներկայացնում են նրա օգտին այս ընտրարշավի համար ֆինանսական հատկացում արած ԱՄՆ քաղաքացիներից մի քանիսի անունները՝ Կարա Ամիրով (Թեխաս), Միրզալամ Միրին (Թեխաս), Իսմայիլ Ահմեդով (Թեխաս), Մեհմեթ Գյուզելդերե (Իլինոյ), Ռեմզի Օթեն (Կալիֆորնիա), Էդիս Փեքթաշ (Իլինոյ), Յըլմազ Սավաշ (Կալիֆորնիա) և այսպես շարունակ (Hawaii): Վաշինգտոն փոխադրվելուց հետո էլ Տակայիի բարեկամությունը թուրք-ադրբեջանցիների հետ չէր դադարում: 2015թ.-ին նա առնվազն ութ անգամ շփումներ էր ունեցել Թուրքիայի ու Ադրբեջանի օգտին լրբբինգ իրականացնող Պողեստա Գրուսի և Գեփհարդ Գրուսի վարձու լրբբիստական ընկերությունների աշխատակիցների հետ՝ քննարկելով Անկարայի ու Բաքվի հետաքրքրություններին առնչվող հարցեր (Mark): 2016թ.-ին Մարկ Տակային մահացավ քաղցկեղից: Այդ նույն տարում մեր համայնքային ակտիվիստները հասան նրան, որ Զավայան նահանգը ճանաչեց Արցախի անկախությունը (Asbarez):

Վայոմինգում և Զավայիում ադրբեջանական լրբբի պարտությունը որոշ իմաստով շրջադարձային դարձավ: Ինչպես հեղինակի հետ զրույցում նշել է համայնքային գործիչներից մեկը, «մենք հասկացանք ինչպես պայքարել ադրբեջանական փաստաթղթերի դեմ և հավատացինք մեր ուժերին»: Զաջորդող ամիսներին ու տարիներին ամերիկահայությունը մի շարք «հաջող մարտեր» մղեց ադրբեջանական օրինագծերի դեմ:

Կենտուկի

2016թ.-ի փետրվարին նահանգային սենատոր Դեյվըն Թեյերն ադրբեջանամետ օրինագիծ էր առաջադրել (Unofficial): Զակագրման աշխատանքները երկու ուղղություններով էին՝ Վաշինգտոնից աշխատում էր ԱՄՆ Զայ Դատի գրասենյակը, իսկ տեղում մոբիլիզացվել են Կենտուկիում բնակվող նախկին ադրբեջանահայերի ուժերը: Նահանգի բնակիչ Ռոման Սաֆարովը երկու օրով աշխատանքային արձակուրդ վերցրեց, որ զբաղվեր այդ գործով: Այցելելով նահանգում ապրող 50-ի չափ նախկին ադրբեջանահայերի և հավաքելով ստորագրություններ՝ Սաֆարովը դրանք ներկայացրեց Սենատ: Օրինագիծը չանցավ:

Հարավային Դակոտա

2014թ.-ին, երբ մեր լոբբին աշխատանք էր տանում Հարավային Դակոտայում ադրբեջանական կեղծ փաստաթուղթը չեզոքացնելու ուղղությամբ (ինչը հաջողվեց) (South Dakota), անսպասելիորեն կապեր հաստատվեցին հայերի հանդեպ համակրանք ունեցող օրենսդիրների հետ, որոնք ոչ միայն չեզոքացրին օրինագիծը, այլև մեկ տարի անց ապահովեցին, որ Հարավային Դակոտան ճանաչի Հայոց Ցեղասպանությունը: Այսպիսով՝ Բաքուն անուղղակիորեն հարվածեց ավագ եղբոր՝ Թուրքիայի շահերին:

Թենիսի

2014թ.-ին մարտ ամսին տողերիս հեղինակը և ՀՀ-ից ժամանած լրագրող Մարինա Գրիգորյանն աշխատում էին 1988-90 թթ.-ի ջարդերից հետո ԱՄՆ-ում ապաստանած ադրբեջանահայերի հիշողությունները տեսագրելու նախագծի վրա: Ծրագիրն իրականացվում էր ՀՀ նախագահի աշխատակազմին կից գործող Հանրային Կապերի և Ինֆորմացիայի Կենտրոնի հովանավորությամբ և նախատեսում էր հարցազրույցների շարք Թենիսիի մայրաքաղաք Նեշվիլում: Նահանգային օրենսդիր անդամ Ջո Թաունսը ճիշտ այդ օրերին առաջադրել էր ադրբեջանական պետությանը գովաբանող օրինագիծ (House): Համայնքային ակտիվիստ Պերո Բարսումյանը, աշխատանքից իր հաշվին արձակուրդ վերցնելով, եկավ Նեշվիլ՝ նպատակ ունենալով կասեցնել օրինագիծը: Տողերիս հեղինակի հետ զրույցում ասել էր, որ քանի դեռ ինքը Թենիսիում է ապրում, այստեղ ադրբեջանական լոբբին չի կարողանալու Հայաստանի դեմ աշխատել: Մենք նրան փոխանցեցինք ձեռքի տակ առկա տվյալները Ադրբեջանի կոռուպցիոն աշխատանքների և հակաօրինական լոբբիստական մեքենայությունների մասին: Բարսումյանը կապ հաստատեց նահանգային կոնգրեսի՝ Էթիկայի հարցերով հանձնաժողովի՝ իրեն ծանոթ մի շարք օրենսդիրների, ինչպես նաև լրատվամիջոցների հետ: Բարսումյանի ջանքերով թեմային անդրադարձավ նահանգի News Channel 5 ալիքի ականավոր հետաքննող լրագրողներից մեկը, որն ամերիկահայ գործչից հարցազրույց վերցրեց: «Այս դաժան մարդիկ, նահանգից նահանգ անցնելով, փորձում են վերաշարադրել պատմությունն ու օրինագծեր անցկացնել»։ լրագրող Ֆիլ Վիլյամսին ասել էր Բարսումյանը (Williams): Հետաքննող լրագրողի համառ հարցերին ի պատասխան՝ օրինագծի հեղինակը պնդում էր, թե իբր տեղյակ չէր հայ-ադրբեջանական հակամարտությունից, իսկ փաստաթուղթն առաջադրել էր, քանի որ Ադրբեջանը համարում էր ԱՄՆ-ին դաշնակից երկիր: Սա այն դեպքում, երբ մեկ տարի առաջ նա Բաքվում էր: Ու չնայած Ադրբեջանում շրջագայությանն ու նվերներին՝ հակամարտության մասին իբր տեղյակ չէր, օրինագիծն էլ, ըստ Թաունսի արդարացումների, նվերների հետ կապ չուներ: Ֆիլ Վիլյամսը կոռուպցիոն կասկածների հետ կապված երկու ռեպորտաժ պատրաստեց Թաունսի՝ ադրբեջանական լոբբիի հետ աշխատանքի մասին: Օրինագիծը չանցավ, իսկ օրենսդիրի կոռուպցիոն գործերը քննիչների ուշադրությանն արժանացան. նրա՝ Ադրբեջան այցի թեման մինչև այսօր քննության տակ է:

Անվճար ճամփորդության սկանդալ

«Ադրբեջանն անսովոր արշավ է ծավալել ԱՄՆ օրենսդիրների հանդեպ ազդեցություն շահելու նպատակով», - 2014-ի հունիսին՝ Թենիսիում լրագրողական բացահայտումներից երկու շաբաթ անց, գրեց BuzzFeed ազդեցիկ լրատվամիջոցը (Gray): Ըստ ստացված տպավորության՝ լրագրող Ֆիլ Վիլյամսի ռեպորտաժները (և Բարսումյանի կատարած աշխատանքը) շոշափելի դեր ունեցան 2012-2013թթ.-ին խորհրդաժողովներին մասնակցելու նպատակով Ադրբեջան հարյուրավոր ամերիկացի պետական աշխատողներ բերելու թեմայի հանրայնացման և ծավալված հետաքննությունների համար: Հետագայում նաև Նյու Յորք Թայմսը, Վաշինգտոն

Փոստը, Ֆորին Փոլիսին և այլ լրատվամիջոցներ, կայքեր ու կոռուկացիոն թեմաների մոնիտորինգով զբաղվող կառույցներ հողվածների շարքով անդրադարձան թեմային: «2013-ի սկզբից 17 նահանգների նահանգային օրենսդիրներ օրինագծեր են առաջադրել այս նախկին խորհրդային հանրապետության վերաբերյալ: Հիմնականում դրանք ընդհանուր բնույթի հայտարարություններ են կամ դատապարտում են խոջալուի սպանողը: Մի բան է ընդհանրացնում այս նախաձեռնությունները՝ գրեթե բոլոր օրինագծերն ունեն առնվազն մեկ աջակից, որը նախորդ մայիսին այցելել էր մայրաքաղաք Բաքվում կազմակերպված կոնֆերանսին»,- նկատել էր BuzzFeed-ը:

2013-ին մայիսի 28-ին և 29-ին դաշնային կոնգրեսի տասից ավելի օրենսդիրներ կամ օրենսդիրների ներկայացուցիչներ ու տարածքային կոնգրեսականներ Յուտա, Նյու Մեքսիկո, Հավայի, Վայոմինգ, Թենիսի, Արիզոնա, Պենսիլվանիա և այլ նահանգներից այցելել էին Բաքու՝ ֆորմալ առումով «ԱՄՆ-Ադրբեջան՝ ապագայի տեսլականը» խորհրդաժողովին մասնակցելու: Ընդհանուր թվով 317 հոգանոց դեսանտ հիշեցնող մի պատվիրակություն էր ժամանել, ինչի վրա Բաքուն միլիոն դոլարից ավելի էր ծախսել: Արդյունքում Ադրբեջանն այդ տարի ԱՄՆ-ում լոբբինգի վրա ամենաշատը փող ծախսած տասը օտար երկրներից մեկը դարձավ (Itkowitz):

Բացի Մամադովների Ադրբեջանական այլանը, այցի համար վճարել էին SOCAR նավթային պետական ընկերությունը, գյուլենական թևի հետ առնչվող Turquoise Council-ը և Ադրբեջանի Բարեկամների Համագումար (AFAZ) կազմակերպությունը: Վերջին երկուսը ղեկավարում էր Նույն անձը՝ Էթնիկ թուրք, գյուլենական Զեմալ Օքտուզը: AFAZ-ի փոխստորենն էր Տեխասի նախկին նահանգապետ Ռիք Փերիի քույրը՝ Միլա Փերի Չոնսը:

ԱՄՆ օրենսդրությունն արգելում է, որ պետական պաշտոնյան այցելություն կատարի կամ նվերներ ստանա օտար կառավարության հաշվին: Բաքուն հավանաբար թուրքական ավելի փորձառու լոբբիստների խորհրդով դիմել էր խորամանկության: Ֆորմալ առումով վրյաժի համար վճարել էին AFAZ-ը և Turquoise Council-ը, այսինքն՝ իբրև թե ԱՄՆ քաղաքացի թուրքերն ու ադրբեջանցիները և իրենց միությունները: Սակայն, ինչպես պետք է պարզեր քննությունը, AFAZ-ը և Turquoise Council-ը փողը ստացել էին SOCAR-ից, այսինքն՝ օտար կառավարական գանձարանից: Վերադարձից հետո պաշտոնյաները, ինչպես և պահանջվում էր, սկսեցին տարբեր ծառայություններ մատուցել ապշերոնյան հանրապետությանը: Արդեն մեջբերվել է Հավայան նահանգից Ռիդա Կաբանիլայի հայտարարությունն այն մասին, որ ադրբեջանական օրինագիծն իր համար գրել էր Ադրբեջանի դեսպանը: Նույն կերպ Նյու Մեքսիկոյից Ադրբեջան մեկնած նահանգային սենատոր Ջերի Օրտիզը հայտարարել էր, որ օրինագիծն առաջադրել էր նահանգի ադրբեջանցիների և Ադրբեջանի պատվո հյուպատոսի խնդրանքով: ԱՄՆ Կոնգրեսի Էթիկայի հարցերով հանձնախումբը ծավալուն քննություն անցկացրեց այս ուղղությամբ՝ բազմիցս հարցաքննելով նաև Անար Մամադովին: Օքտուզը դատապարտվեց կարճատև ազատազրկման և 20 հազար ԱՄՆ դոլար տուգանքի:

Ալիևի վարձու լոբբիստները

Ինչպես Ադրբեջանը, այնպես էլ Թուրքիան դեսպանատների միջոցով օգտվում են վճարովի լոբբիստների ծառայությունից: Օրենսդրությունը սահմանում է, որ օտար կառավարությունները կարող են վարձել մասնավոր լոբբիստական միություններ: Սովորաբար դրանք հիմնվում են պաշտոնաթող օրենսդիրների, դաշնային կամ տեղական կառավարական շրջանակներում կապեր ունեցող գործիչների կողմից, որոնք, իրենց կապերն օգտագործելով, առաջ են տանում օտար պետության հետաքրքրությունները հանրային-քաղաքական շրջանակներում, վերլուծական ինստիտուտներում կամ մամուլում: 1981թ.-ին այն բանից հետո, երբ նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1915թ.-ի իրադարձությունները բնութագրեց որպես զեղասպանություն, Թուրքիայի դեսպանատունը փողով վարձեց Gray and Company

լոբբիստական գրասենյակը, ինչից հետո նման ծառայությունները դարձան պարբերական: Նույն մեթոդին հետևեց Թուրքիայի կովկասյան մասնաճյուղը: 2010-ականների սկզբին Ադրբեջանի հիմնական հաճախորդներն էին Gephardt Group-ը, Podesta Group-ը, Bob Lawrence and Associates-ը, իսկ 2017թ.-ից վարձեցին և մինչև այս պահն աշխատում են BGR ընկերության հետ: Ըստ արտաքին լոբբինգի հարցերով մասնագիտացող Sunlight վաշինգտոնյան հաստատության՝ 2013-ին, երբ նավթի գինը 100\$-ից ավելի էր մեկ բարելի դիմաց, Բաքուն ԱՄՆ-ում լոբբինգի վրա 10 ամենաշատ փող ծախսած երկրների ցանկում էր՝ 2,3 միլիոն տրամադրելով լոբբիստական գործերին (Azerbaijan): 2014-ին դեսպան Սուլեյմանովը պայմանագիր ստորագրեց Podesta Group-ի ղեկավար Ջոն Պոդեստայի հետ՝ պարտավորվելով ամեն ամիս 50 հազար վճարել քաղաքական լոբբինգի և PR ուղղվածության գործերի համար (FARA-1): Նույն ամսավճարով 2017-ից սկսեցին աշխատել BGR Group-ի հետ (FARA-2):

Նախորդ տարվա սեպտեմբերի 28-ին՝ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ծավալման հաջորդ օրը, BGR-ն էլեկտրոնային նամակներ էր ուղարկում հարձակման մեջ մեղադրելով հայկական կողմին: Պատերազմի ընթացքում ԱՄՆ Հայ Երիտասարդաց Դաշնակցության ակտիվիստները մի քանի հանրահավաք են արել BGR-ի վաշինգտոնյան կենտրոնակայանի մոտ՝ պահանջելով խզել կապերը Ալիևի կառավարության հետ և հայերի արյան հաշվին փող չաշխատել (ինչպես նշված էր ցուցապաստառներից մեկին): Ամերիկահայերը նաև հեռախոսազանգերով էին նույն պահանջները հղում BGR-ին, կոչ անում բոյկոտել Walgreens դեղատները, քանի որ նշված ցանցը նույնպես վճարում է BGR-ին լոբբինգի համար: Հայկական կողմի նման մարտավարությունը նախկինում արդյունավետ է եղել. 2015-ին Լոս Անջելեսի օդակայանը և Կալիֆոռնիայի Օլյանդ քաղաքի նավահանգիստը հայ համայնքի պահանջով խզեցին կապերը Gephardt Group լոբբիստական ֆիրմայի հետ (Port): Ընդհանուր առմամբ Թուրքիայի լոբբիստ Gephardt Group-ն այս եղանակով կորցրեց տարեկան մեկ միլիոն դոլարից ավելի, քանի որ այդքան նրան կվճարեին, եթե հարաբերությունները շարունակվեին: Ընկերության սեփականատեր Դիբ Գեպարդը նախ ավելացրեց վարձը, ապա խզեց կապերը Թուրքիայի հետ: BGR-ի նկատմամբ այս մարտավարությունը այս պահի դրությամբ մասնակի արդյունք է դեռ տվել, քանի որ առկա տեղեկություններով՝ 2021-ից BGR-ն ավելացրել է վարձը՝ Բաքվից լրացուցիչ փող գանձելով իրենց հավելյալ գլխացավանքի համար: Ցավալին այն է, որ BGR-ի՝ ԱՀ դեսպանատան հետ կապերի պատասխանատուն էթնիկ հույն Մարկ Թավլարիդիսն է, որը Վաշինգտոնի հունական տաճարի հոգևորականի որդին է: Ամերիկահայ շրջանակներում հայտնի է պատմություն, որ Թավլարիդիս ընտանիքի անդամներից մեկը ներողություն է խնդրել ամերիկահայ գործչից իր ազգականի աշխատանքի համար՝ ասելով, որ Ալիևի վարչակազմի հետ նրա գործարքները ցավով են ընդունվում ընտանիքի անդամների կողմից:

Եզրակացություն

ԱՄՆ-ում Ադրբեջանի լոբբիստական աշխատանքի ուսումնասիրությունը կարևոր է Բաքվի քաղաքականության միտումներն ավելի գլոբալ առումով պատկերացնելու համար: Տեսականորեն նմանօրինակ գործնական հետազոտություններով հնարավոր է պատկերացում կազմել նաև այլ երկրներում ադրբեջանական լոբբիստական մեքենայությունների մասին, հստակեցնել այն համապարփակ ռազմավարությունը, որ Արցախի, մայր Հայաստանի և Սփյուռքի դեմ որդեգրել է Բաքուն:

Արձանագրեցինք, որ հայկական կողմի ուժեղացող ճնշումը, Եթիկայի հարցերով հանձնաժողովի քննությունները, մամուլի բացահայտումները, Գյուլենականների՝ Էրդողանի կառավարության հետ կոնֆլիկտը, Մամադովների չեզոքացումը, 2014-15թթ.-ին նավթի զգալի գնանկումը բերեցին ադրբեջանական լոբբիստների դիրքերի անկմանը: Ադրբեջանականի ֆոնին ամերիկահայ լոբբիի դիրքերն առավել կայուն են,

քանի որ հիմնված են ԱՄՆ քաղաքացիների աշխատանքի օրինական իրավունքի, ոչ քաղաքական կոնյուկտուրաների ու ստի վրա: Սակայն աղբյուրների կողմի ներկայիս պարտությունը չպետք է համարել վերջնական: Նրանք ունեն փող և Թուրքիայի կառավարության աջակցությունը: Հայ համայնքը մշտական զորաշարժերի մեջ պետք լինի՝ համապատասխան մոնիտորինգի և հակազդման աշխատանքներով քայքայելու հակառակորդի հակահայ նախաձեռնությունները:

Ինչպես մի առիթով նշել է ԱՄՆ Հայ Դատի գրասենյակի մամուլի պատասխանատու Եղիսաբեթ Չոլջյանը. «Դիրքերում կանգնած տղաները թող իմանան, որ մենք էլ այստեղ ենք որպես մի երկրորդ շարաայուն դիրքերը պահելու համար»:

Օգտագործված գրականություն / Works Cited

1. «336 СД». *Память Народа*, <https://pamyat-naroda.ru/warunit/336%20сд/?backurl=/warunit/?q=336%20сд&page=1>, Доступно: 18 Ноября, 2021.
«336 SD». *Pamjat' Naroda*, [The memory of the People] <https://pamyat-naroda.ru/warunit/336%20sd/?backurl=/warunit/?q=336%20sd&page=1>, Dostupno: 18 Nojabrja, 2021.
2. «В американском штате Невада объявлен траур в связи с геноцидом азербайджанцев». *Day.Az* 01 Апреля, 2009, <https://news.day.az/politics/151869.html>, Доступно: 18 Ноября, 2021.
«V amerikanskom shtate Nevada ob`javlen traur v svjazi s genocidom azerbajdzhancev». [Mourning has been declared in the US state of Nevada in connection with the genocide of Azerbaijanis] *Day.Az* 01 Aprelja, 2009, <https://news.day.az/politics/151869.html>, Dostupno: 18 Nojabrja, 2021
3. «Karabakh Foundation. - новый уровень продвижения азербайджанской культуры искусства и истории в США». *Interfax.az*, 01.03.2011, <http://interfax.az/view/458614>, Доступно: 18 Ноября, 2021.
«Karabakh Foundation. - novyj uroven' prodvizhenija azerbajdzhanskoj kul'tury iskusstva i istorii v SShA». [Karabakh Foundation. - a new level of promotion of Azerbaijani culture, art and history in the USA] *Interfax.az*, 01.03.2011, <http://interfax.az/view/458614>, Dostupno: 18 Nojabrja, 2021.
4. «Azerbaijan Society of America», <https://azsociety.org/proud>, Accessed: 18 Nov. 2021.
5. «12 out of 150 top donors Turkish.» *Hawaii Free Press*, <http://www.hawaiifreepress.com/Portals/0/Article%20Attachments/Takai%20Gulen%20MONEY%201.pdf>, Accessed 18 Nov. 2021.
6. «Azerbaijan Spends Unprecedented Resources on Lobbying.» *Crude Accountability*, 16 Dec. 2019, <https://crudeaccountability.org/azerbaijan-spends-unprecedented-resources-on-lobbying/>, Accessed: 18 Nov. 2021.
7. Azeri, Tomris, «A Proud with Azerbaijani Heritage». *Azerbaijan Today*. 03 February 2021, <https://azerbajiantoday.az/2021/02/03/a-proud-american-with-azerbajani-heritage/>, Accessed: 18 Nov. 2021.
8. «Board of Directors» *Azerbaijani-American Council*, <http://azeris.org/index.php/board/>. Accessed: 18 Nov. 2021.
9. «Dr. Adil Baguirov: Political and Social Activist.» *Elect Bagirov*, <http://www.electbagirov.com/index.html>, Accessed: 18 Nov. 2021.
10. «Emre Elci: Harem Carpets LLC.» *Karabakh Foundation*, <http://karabakhfoundation.com/shop/emre-elci-harem-carpets-llc/>, Accessed: 18 Nov. 2021.

11. "Engagement Agreement." *U.S. Department of Justice*, 1 Jan. 2014, <https://efile.fara.gov/docs/5926-Exhibit-AB-20140430-41.pdf>, Accessed: 18 Nov. 2021.
12. "Exhibit, Execution." *U.S. Department of Justice*, 03 March 2017, <https://efile.fara.gov/docs/5430-Exhibit-AB-20170320-60.pdf>, Accessed: 18 Nov. 2021.
13. "Hawaii Recognizes Nagorno-Karabakh Republic's Independence." *Asbarez*, March 30 2016, https://asbarez.com/hawaii-recognizes-nagorno-karabakh-republics-independence/?utm_source=feedburner&utm_medium=feed&utm_campaign=Feed%3A%20Asbarez%20%28Asbarez%20News%29, Accessed: 18 Nov. 2021.
14. "House Resolution 115." *Tennessee General Assembly*, <https://www.capitol.tn.gov/Bills/108/Bill/HR0145.pdf>, Accessed: 18 Nov. 2021.
15. "HJ 0002 – Support of Azerbaijan." *State of Wyoming 66th Legislature*, <https://wyoleg.gov/Legislation/2014/HJ0002>, Accessed: 18 Nov. 2021.
16. "H.R. no. 9 House Resolution" *Hawaii House of Representatives*, https://www.capitol.hawaii.gov/session2014/bills/HR9_PDF, Accessed: 18 Nov. 2021.
17. "H.R. no. 13, House Resolution." *Hawaii House of Representatives*, https://www.capitol.hawaii.gov/session2014/bills/HR13_PDF, Accessed: 18 Nov. 2021.
18. "Issue a Proclamation commemorating and recognizing the war crime of the Khojaly Massacre." *The White House*, 26 Jan. 2013, <https://petitions.obamawhitehouse.archives.gov/petition/issue-proclamation-commemorating-and-recognizing-war-crime-khojaly-massacre-and-its-victims/>, Accessed 18 Nov. 2021.
19. "Mark Takai: ANCA Report Card, 114th Congress." *Armenian National Committee of America*, <https://anca.org/congress/mark-takai-10632-114/>, Accessed: 18 Nov. 2021.
20. "No formulation "genocide" used by Georgia in reference to Aghdam events of February 1992." *Panorama.am*, 28 Feb. 2021, <https://www.panorama.am/en/news/2012/02/28/usa-georgia-xocali/804206>, Accessed: 18 Nov. 2021.
21. "Port of Oakland Refuses to Renew Gephardt Contract." *Armenian National Committee of America*, 12 March 2015. <https://anca.org/press-release/port-of-oakland-refuses-to-renew-gephardt-contract/> Accessed: 18 Nov. 2021.
22. "Recognition of the Genocide of Khojaly" *Administrative Department of the President of Azerbaijan*, <https://files.preslib.az/projects/khojali/enkhojali/gl5.pdf>, Accessed: 18 Nov. 2021.
23. "South Dakota Rejects Anti-Armenian Measure." *Armenian National Committee of America*, 25 Feb. 2014, <https://anca.org/press-release/south-dakota-rejects-anti-armenian-measure-2/>, Accessed: 18 Nov. 2021.
24. "Strong Support for Azerbaijan from Colorado State Senate". *Consulate General of the Republic of Azerbaijan in Los Angeles*, 30 Jan. 2015, <https://losangeles.mfa.gov.az/en/news/3489/strong-support-for-azerbaijan-from-colorado-state-senate>, Accessed: 18 Nov. 2021.
25. "The Azerbaijan America Alliance Announces Former Congressman Dan Burton as Chairman of the Board." *PR Newswire*, 13 Feb. 2013, <https://www.prnewswire.com/news-releases/the-azerbaijan-america-alliance-announces-former-congressman-dan-burton-as-chairman-of-the-board-191097441.html> Accessed: 18 Nov. 2021.
26. "Unofficial Copy as of 03.01.2016." *Legiscan.com*, <https://legiscan.com/KY/text/SR168/id/1355658/Kentucky-2016-SR168-Draft.pdf>, Accessed: 18 Nov. 2021.

27. “Wiki: Who Owns What in Azerbaijan.” Wikileaks, https://wikileaks.org/gifiles/docs/13/1358784_-eurasia-wiki-who-owns-what-in-azerbaijan-.html, Feb 2, 2020, Accessed: 18 Nov. 2021.
28. “Yusif Babanli.” *Western Caspian University*, <https://wcu.edu.az/en/page/babanliyusif>, Accessed 18 Nov. 2021.
29. Baguirov, Adil. “Khojaly Massacre Deserves Recognition” *The Hill*, 21 Feb. 2013, <https://thehill.com/blogs/congress-blog/foreign-policy/284237-khojaly-massacre-deserves-recognition>, Accessed: 18 Nov. 2021.
30. Davidson, Adam. “Donald Trump’s Worst Deal” *New Yorker*, 13 March 2017, <https://www.newyorker.com/magazine/2017/03/13/donald-trumps-worst-deal>, Accessed 18 Nov. 2021.
31. Eagle, Nathan. “Azerbaijani Aloha Sends Hawaii Lawmakers Across Planet on Pricey Trip.” *Honolulu Civil Beat*, 11 July 2013, <https://www.civilbeat.org/2013/07/19489-azerbaijani-aloha-sends-hawaii-lawmakers-across-planet-on-pricey-trip/>, Accessed: 18 Nov. 2021.
32. ---. “Why Do Two Hawaii Lawmakers Care So Much About Azerbaijan?” *Honolulu Civil Beat*, 11 Feb. 2014, <https://www.civilbeat.org/2014/02/21151-why-do-two-hawaii-lawmakers-care-so-much-about-azerbaijan/>, Accessed: 18 Nov. 2021.
33. Gray, Rozie. “Inside Azerbaijan’s Bizare Lobbying Push.” *Buzzfeed*, 02 June, 2014, <https://www.buzzfeednews.com/article/rosiegray/inside-azerbaijans-bizarre-us-lobbying-push>, Accessed: 18 Nov. 2021.
34. Itkowitz, Colby. “Which Foreign Countries Spent the Most to Influence U.S. Politics?.” 14 May, 2014, <https://www.washingtonpost.com/blogs/in-the-loop/wp/2014/05/14/which-foreign-countries-spent-the-most-to-influence-u-s-politics/>, Accessed: 18 Nov, 2021.
35. Lowenthal, Ben. “Azerbaijan-Hawaii Relations?” *The State of Aloha*, 28 Feb. 2014, <http://stateofaloha.blogspot.com/2014/02/azerbaijan-hawaii-relations.html>, Accessed 18 Nov. 2021.
36. Rozen, Laura. “What is David Plouffe Doing in Azerbaijan.” *Foreign Policy*, 09 Feb. 2009. <https://foreignpolicy.com/2009/02/09/what-is-david-plouffe-doing-in-azerbaijan/> Accessed: 18 Nov. 2021.
37. Sassounian, Harout. “Turkish Denialist Helps Publicize Truth about the Armenian Genocide.” *Armenian Weekly*, March 03 2016, <https://armenianweekly.com/2016/05/03/kirlikovali-kabc/>, Accessed: 18 Nov. 2021.
38. Schreck, Carl. “Ex-U.S. Congressman Quits Azerbaijani Lobby Group Citing Nonpayment.” *Radio Free Europe/ Liberty*, March 02 2016, <https://www.rferl.org/a/former-us-congressman-dan-burton-quits-azerbaijan-lobby-group-nonpayment/27585777.html>, Accessed: 18 Nov. 2021.
39. Simson, Glenn. “Plouffe to Donate Speaking Fee to Pro-Democracy Groups.” *The Wall Street Journal*, Feb. 10 2019, <https://www.wsj.com/articles/SB123421448248665029> Accessed: 18 Nov. 2021
40. Stewart, Chris. “Elections 2018: Montgomery County Recorder Candidates at odds over electronic filing of records.” *Dayton Daily News*, 28 October 2018, <https://www.daytondailynews.com/news/local-govt--politics/electon-2018-montgomery-county-recorder-candidates-odds-over-electronic-filing-records/0t3dakSNYqnWtenrHA4LLP/>, Accessed: 18 Nov. 2021.
41. Williams, Phil, “Lawmaker Says \$10K Contribution, Resolution Just ‘Coincidence’.” *NewsChannel Five*, 07 Sep. 2015, <https://www.newschannel5.com/news/newschannel-5-investigates/lawmaker-says-10k-contribution-resolution-just-coincidence>, Accessed: 18 Nov. 2021.

AZERBAIJAN'S LOBBY ACTIVITIES IN THE UNITED STATES (2000-2020)

HAYKARAM NAHAPETYAN

*Liberty University, History Classes, Ph.D. Student,
Lynchburg, VA, USA*

The article examines the dynamics of the formation, development and a certain decline of the Azerbaijani lobby in the United States. By bringing together historical and contemporary facts, the article describes the aggressive anti-Armenian activities of the Azerbaijani lobbying groups and the countermeasures of the Armenian lobby.

As expected, at the core of the anti-Armenian work of Absheron Peninsula's lobbyists is the political-lobbying and propaganda efforts against Artsakh. The author tried to showcase that the Azerbaijani lobby of the United States in reality represents an entity controlled by the government of Azerbaijan and subject to Aliyev. As a contrast to that, the Armenian American political lobby-groups represent independent organizations of US citizens of Armenian origin. In this capacity, the Azerbaijani lobby, in fact, takes actions that technically are against US legislation, as they act as an external force that seeks to influence the political processes of the U.S.

During the work, the author used Armenian, Russian, American, Azerbaijani-Turkish publications and narratives. In addition, as a result of field research, interviews were conducted with organizations of the Armenian community and Armenian activists.

Key Words: *The Azerbaijani lobby, Turkish lobby, the Artsakh (Nagorno-Karabakh) conflict, recognition of Artsakh's independence, the Armenian-American community, Hai Tad (the Armenian National Committee of America), the State Oil Company of the Azerbaijan Republic.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ЛОББИСТОВ АЗЕРБАЙДЖАНА В США (2000-2020ГГ.)

АЙКАРАМ НААПЕТЯН

*студент докторантуры
исторического факультета Университета Либерти,
г. Линчбург, штат Вирджиния, США*

В статье рассматривается динамика становления, развития и определенного упадка азербайджанского лобби в США. При сопоставлении исторических и современных фактов представлена агрессивная антиармянская работа лоббистских групп Азербайджана и противодействие ей армянского лобби.

Как ожидалось, в основе антиармянской работы апшеронских лоббистских групп лежит политико-лоббистская и пропагандистская работа против Арцаха. Автор стремится представить факты, о том, что азербайджанское лобби США в реальности является структурой, подконтрольной правительству Азербайджана и Алиеву. В противоположность этому, политические структуры американских армян являются независимыми структурами граждан США армянского происхождения. При таком формате в работе азербайджанского лобби, по сути, присутствует

деятельность, идущая вразрез с законодательством США. По сути, лоббисты Баку выступают в роли внешней силы, которая стремится влиять на политические процессы в Америке.

Во время работы над статьей автор использовал армянские, русские, американские, азербайджано-турецкие публикации и литературу. Помимо этого, в результате полевых исследований были проведены интервью с организациями армянской общины и армянскими активистами.

Ключевые слова: *азербайджанское лобби, турецкое лобби, арцахский (нагорно-нарабахский) конфликт, признание независимости Арцаха, Армянская община Америки, Ай-Дат (Армянский Национальный Комитет Америки), Государственная нефтяная компания Азербайджанской Республики.*

**ՎԱՐՁՎԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ
44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ***

ՀՏԴ 323.28:341(479.25)

DOI: 10.52063/25792652-2021.4-153

ՄԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի, ք.Մեծամոր, Հայաստանի Հանրապետություն movsisyanmarine8@gmail.com

Հոդվածի նպատակն է ներկայացնել վարձկան-ահաբեկիչների մասնակցությունը Արցախյան 44-օրյա պատերազմին, ընդգծել նրանց ազդեցությունը վերջնարդյունքի վրա:

Խնդիր է դրվել փաստարկել Թուրքիայի և այլ օտարերկրյա պետությունների կողմից վարձկան-ահաբեկիչների ներգրավումը ռազմական գործողություններին:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են համագիտական մեթոդներ՝ փաստերի հավաքագրում, վերլուծություն, համեմատում, համադրում, ընդհանրացում:

Հետազոտության արդյունքները հիմք են դարձել հետևյալ եզրահանգմանը՝ ներկայիս Ադրբեջանի սահմանները գծվեցին ինչպես ազրեսիվ ռազմական գործողությունների, այնպես էլ միջազգային ահաբեկչական կառույցների անդամների, մասնավորապես ջիհադիստների մասնակցությամբ, ինչն աննախադեպ է համաշխարհային պատմության մեջ. փաստացի ահաբեկիչների միջոցով գծվեցին միջազգային սահմաններ: Սա Հայաստանի Հանրապետության համար կարող է լինել լեգիտիմ իրավունք (հաղթաթուղթ)՝ կորսված հայկական տարածքներն ու բնակավայրերը որոշ ժամանակ անց ետ վերադարձնելու համար: Փաստացի, Արցախյան (ԼՂ) հիմնախնդիրը Հարավային Կովկասում կայուն անվտանգության ապահովման հիմնական բաղադրիչներից մեկն է, որի վերջնական լուծման շուրջ բանակցային գործընթացը կարող է վերադառնալ դիվանագիտական դաշտ հոլմանիտար բաղադրիչի ապահովմամբ, այդ թվում՝ վարձկան-ահաբեկիչների վերաբերյալ փաստերի միջազգայնացմամբ, դատապարտմամբ ու պատժելիության:

Հիմնաբառեր՝ Արցախյան 44-օրյա պատերազմ, վարձկան-ահաբեկիչներ, անվտանգություն, Արցախ, ՀՀ, Ադրբեջան, Թուրքիա, ՌԴ, միջազգային իրավունք:

2020թ. Արցախյան պատերազմի ընթացքը և հետևանքները: 1994 թվականին հաստատված հրադադարի ռեժիմն Ադրբեջանի կողմից խախտվել է բազմիցս, և այս անգամ արդեն անթաքույց այն համակարգվում էր Թուրքիայի

* Հոդվածը ներկայացվել է 20.11.2021թ., գրախոսվել՝ 27.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

կողմից, որն Ադրբեջանին ցուցաբերում էր անմիջական ռազմական աջակցություն՝ ներառյալ Սիրիայից վարձկանների ու ահաբեկիչների հավաքագրումն ու տեղափոխումը: 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծվեց Արցախյան 44-օրյա (3-րդ) պատերազմը: Վերջինիս ագրեսիվ ռազմական, նախահարձակ մարտական գործողությունները սկսվեցին ու ծավալվեցին միանգամից արցախաադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով («Շփման գծի ողջ երկայնքով...»): Նույն օրը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք, իսկ Ադրբեջանում ի սկզբանե հայտարարվեց ռազմական դրություն ու պարետային ժամ, այնուհետև՝ ընդհանուր զորահավաք:

Պատերազմն իր բնույթով հիբրիդային էր: Կիրառվեցին և՛ ավանդական ռազմական միջոցներ, և՛ նորագույն տեխնիկաներ, տեխնոլոգիաներ, և՛ տեղեկատվական-հոգեբանական աննախադեպ գործիքակազմ: Պատերազմը ռազմական գործողությունների լայնամասշտաբության, ինտենսիվության, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և տեխնիկայի օգտագործման ձևով ու ծավալով համեմատելի է 2003թ. Իրաքյան պատերազմի («Սա աննախադեպ ծանր...») հետ:

Կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը՝ Ադրբեջանն Արցախի գրեթե բոլոր բնակավայրերին հարվածում էր խոշոր տրամաչափի հրետանային, հրթիռային զինտեխնիկայով, անօդաչու թռչող սարքերով և միջազգայնորեն արգելված կասետային, քիմիական տարրեր պարունակող ֆոսֆորային զինամթերքով, այդ թվում նաև՝ մայրաքաղաք Ստեփանակերտին, Շուշիին, Հադրուկին, Մարտունիին և Մարտակերտին՝ խաղաղ բնակավայրերին պատճառելով հսկայական ավերածություններ, քաղաքացիական վիրավորներ ու զոհեր: Բնակչության 60%-ից ավելին՝ տասնյակ հազարավոր մարդիկ, անհապաղ տարահանվել են իրենց տներից, տեղահանվել բնակավայրերից:

Բազմաթիվ քաղաքացիական ենթակառուցվածքներ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ (Ստեփանակերտի ծննդատունը), բնակելի շենքեր, էլեկտրակայաններ ու կապի ցանցեր, ենթարկվել են ռմբակոծությունների, ավերածությունների հարվածներին, հազարավոր ընտանիքներ տեղահանվեցին: Բացահայտ թիրախավորվում էին հայկական-ազգային մշակութային աննախադեպ արժեք ունեցող կոթողները, կիրառվում էր հստակ հաշվարկված սիմվոլներով: Հոկտեմբերի 8-ին Ադրբեջանը երկու հրթիռակոծություն իրականացրեց Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարի ուղղությամբ: Հարձակումներ եղան նաև հակամարտությունը լուսաբանող լրագրողների նկատմամբ. վիրավորվեց 7 լրագրող և մահացավ լրագրողական խմբի ուղեկցորդը: Պատերազմի ընթացքում ադրբեջանցի զինվորները գլխատել, խոշտանգել ու մասնատել են հայ զինվորներին և հրապարակել նրանց լուսանկարներն ու տեսագրությունները սոցիալական ցանցերում (մասնավորապես՝ Telegram-ում և Instagram-ում): Ռազմական հանցագործության հերթական օրինակն Ադրբեջանի կողմից Արցախի բնակավայրերի հարակից անտառներում կիրառված միջազգայնորեն արգելված քիմիական զենքն էր (սպիտակ ֆոսֆոր)՝ լայնածավալ բնապահպանական աղետ հարուցելով և սպառնալով բնակչության կյանքին:

Միջազգային կառույցների («UN Security Council calls...») և տարբեր պետությունների կողմից բազմաթիվ կոչեր, հորդորներ հնչեցին երկու կողմերին՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վերադառնալ կառուցողական բանակցություններին: Չնայած դրանց՝ Ադրբեջանի զինված ուժերն ագրեսիվ ռազմական գործողությունների արդյունքում հրետակոծում էին նաև խաղաղ բնակավայրերը («Արցախի նախագահի խոսնակ...»), այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, որտեղ առաջին իսկ օրվանից հայտարարվեց օդային տազնապ:

Տեղեկատվական տիրույթում ի սկզբանե Ադրբեջանն արգելափակել էր գրեթե բոլոր սոցիալական մեդիաները՝ Facebook, Youtube, Whatsapp, TikToc: Անխափան աշխատում էր միայն Twitter-ը, քանի որ օգտագործվում էր միջազգային հարթակում քարոզչությունն տարածելու նպատակով: Փաստացի իրականացվում էր տեղեկատվական-հոգեբանական դաշտում լրջագույն հարձակողական քարոզչություն:

Լայնամաստաբ պատերազմի ավարտն արձանագրվեց 2020թ.-ի նոյեմբերի 9-ին Մոսկվայի միջևորդությամբ ստորագրված կրակի դադարեցման մասին եռակողմ (Ռուսաստանի Դաշնություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն)՝ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի, ՌԴ նախագահ Վ. Պուտինի, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից ստորագրված հայտարարությամբ («Հայաստանի Հանրապետության վարչապետի...»), որն ուժին մեջ մտավ նոյեմբերի 10-ից: Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվեց Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային ու հատուկ տեխնիկա: ՌԴ խաղաղապահ զորակազմը տեղակայվելու էր Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: ՌԴ խաղաղապահ զորակազմը տեղակայվելու էր 5 տարի ժամկետով, որն ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին: Կողմերի համաձայնությամբ պետք է ապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը: Փաստորեն, ադրբեջանական զինված ուժերը Թուրքիայի և վարձկան ահաբեկիչների ներգրավմամբ կարողացան գրավել Արցախի Հանրապետության շուրջ 75% ռազմավարական տարածքները:

Թուրքիայի և նրա կողմից ներգրավված վարձկանների մասնակցությունը 2020թ. Արցախյան պատերազմին և դրա ազդեցությունը տարածաշրջանային և միջազգային անվտանգային համակարգի վրա:

Հայաստանի պետական սահմանի ողջ երկայնքով նկատվում էին Ադրբեջանի ՉՈՒ կենդանի ուժի, տեխնիկայի, ինչպես նաև Թուրքիայից, Պակիստանից, Սիրիայից, Լիբիայից և այլ երկրներից Ադրբեջան ժամանած վարձկանների և միջազգայնորեն ճանաչված ահաբեկչական խմբավորումների կուտակումներ: Հատկանշական է, որ պատերազմի ողջ ընթացքում Թուրքիան անթաքույց աջակցեց Ադրբեջանին («Turkey Vows Support...») և հրապարակավ նախագահականի խոսնակի մակարդակով հայտարարեց՝ «Ադրբեջանը մենակ չէ, Թուրքիան նրա կողքին է, և Ադրբեջանն ունի իրենց լիակատար աջակցությունը» («Թուրքիան Հայաստանին մեղադրել...»): Վերոգրյալը փաստում են նաև այն հրապարակումները, համաձայն որոնց՝ դեռևս սեպտեմբերի 22-ից Ադրբեջանում անձնական գույք հանդիսացող պիկնիկայ մեքենաների առգրավում և հաշվառում է իրականացվել՝ բանակի կարիքները հոգալու պատճառաբանությամբ: Բացի այդ, ըստ Սիրիայի մարդու իրավունքներին հետևող կազմակերպության՝ սեպտեմբերի 24-ի տարածած հաղորդագրության՝ Թուրքիայի կառավարությունը Սիրիայի հյուսիսից Ադրբեջան է տեղափոխել Սուլթան Մուրադ և Ալ Համզա դիվիզիաների 300 վարձկանների («Turkish-backed mercenaries...»):

Պատերազմին Թուրքիայի մասնակցության և նրա կողմից վարձկան-ահաբեկիչների ներգրավման մասին փաստել են ոչ միայն հայազգի, այլև այլազգի պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ երկրների նախագահներ («Ֆրանսիայի նախագահ Է...»), համաշխարհային ճանաչում ունեցող հարյուրավոր հետազոտողներ, վերլուծաբաններ, լրագրողներ ու այլ մասնագետներ, տպագրվել են 100-ավոր հոդվածներ միջազգային մամուլում (Reuters, The Guardian, Times, Aljazeera, BBC, ռուսական և այլ հեղինակավոր պարբերականներում, արաբական

բազմաթիվ աղբյուրներում) («Ռ.Սաֆրաստյանի հարցազրույցը...»): Լրատվական մի շարք գործակալություններ ու կայքեր անգամ հարցազրույցներ են վերցրել Հայկաից և Իդիլիից ԼՂ հակամարտության գոտի մեկնել պատրաստվող, ինչպես նաև արդեն արցախյան ճակատից վերադարձած գրոհայիններից («Այո, ես Ադրբեջանում եմ...»): ՄԱԿ-ի՝ վարձկանների օգտագործման հարցով խումբը ևս արձանագրեց Արցախում նրանց օգտագործման փաստը՝ այն համարելով խիստ մտահոգիչ («Մարդու իրավունքների ՀՀ պաշտպան...»):

Փաստացի, 2020թ.-ի փետրվար-մարտ ամիսներին Թուրքիայից Նախիջևանի տարածք են տեղափոխվել Սիրիայում մարտնչած մեծ թվով խլամիստ գրոհայիններ, որոնց մի մասը տարբեր ուղիներով տեղափոխվել է Ադրբեջան: Այս համատեքստում հարկ է ընդգծել Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մտահոգությունները ահաբեկչական խմբավորումների ակտիվ գործունեության և տարածման վերաբերյալ, քանի որ դրանք դիտվում են որպես պետության և ընդհանրապես տարածաշրջանային, միջազգային անվտանգային համակարգի սպառնալիքներ:

2020թ.-ի սեպտեմբերի կեսերին Թուրքիայի Անթաքիա քաղաքի օդանավակայանից Ադրբեջան են մեկնել 25-30 ուլդուր («Ուլդուրները Չինաստանի...») վարձկան զինյալներ՝ իրենց ընտանիքների հետ միասին: Վերջիններս ընթացիկ տարվա սկզբին Ղազախստանից ինքնաթիռով տեղափոխվել են Անթաքիա, ապա ցամաքային ճանապարհով մեկնել Սիրիայի Իդլիբ նահանգի սիրիական-թուրքական սահմանից 17 կմ հեռավորությամբ գտնվող Ջաննուդիյե բնակավայր, որտեղ անցել են վերապատրաստում թուրք մարզիչների կողմից և մասնակցել ռազմական գործողություններին: Ջաննուդիյեի ճամբարում եղել են նաև 250-300 թուրքոման վարձկաններ, որոնք ևս պետք է տեղափոխվեին Ադրբեջան:

«Սուլթան Սուրար» և «Սուլեյման Շեյխ» խմբավորումների թուրքոման վարձկանները 2020թ.-ի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտից Սիրիայից տեղափոխվել են Թուրքիա՝ Գագիանթեփի միջազգային օդանավակայանով Ադրբեջան մեկնելու նպատակով: ԹՀ ՁՈւ կողմից Սիրիայի Աֆրին քաղաքում արդեն հավաքագրված գրոհայինների մի մասը՝ շուրջ 1000 հոգի, Ադրբեջան են տեղափոխվել նույն քաղաքից: Աֆրինից Թուրքիա, ապա Ադրբեջան են տեղափոխվել նաև «Ահրար ալ-Շամ» խմբավորման գրոհայիններ, որոնք թեև սկզբում դժկամությամբ են գրանցվել որպես կամավորներ, սակայն առաջարկվող աշխատավարձի (1000 ԱՄՆ դոլար) բարձրացումից (1500 ԱՄՆ դոլար) հետո նրանց շարքերում գրանցվողների թիվը կտրուկ աճել է¹:

Սիրիական ընդդիմադիր խմբերից մեկի ղեկավարի հաղորդմամբ՝ «Ջաբաթ Ան-Նուսրա» ահաբեկչական խմբավորման կենտրոնական ստորաբաժանման հետ կապված խմբերից շուրջ 150 գրոհային, մասնագիտացված քաղաքային մարտերի ու պարտիզանական գործողությունների համար, Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության հետ համաձայնեցված՝ ևս տեղափոխվել են Ադրբեջան:

2020թ.-ի սեպտեմբերի 30-ին ռադիոէթերից կլանվել են մարտական գործողությունների ընթացքի մասին ադրբեջանական կողմի խոսակցություններ, որոնք ևս վկայում են հակամարտությունում Թուրքիայի ներգրավվածության մասին՝ ինչպես ռազմական ավիացիայի կիրառման ոլորտում, այնպես էլ արաբախոս ու թուրքմեն

¹ Գրոհայինները, ովքեր արդեն մասնակցել են դարաբաղա-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցող ռազմական գործողություններին, հաղորդագրություններ են ուղարկել իրենց հարազատներին և մարտական ընկերներին՝ հորդորելով վերջիններիս զգուշավորությամբ համաձայնվել Ադրբեջան տեղափոխմանը, քանի որ նրանք չեն պատկերացնում, թե ինչ դժոխք է տիրում ռազմական գործողությունների դաշտում հայերի կողմից հասցված զանգվածային հարվածների պատճառով: Գրոհայինների խոսքերով, Լիբիայում առկա պայմանները անհամեմատելի են Արցախում իրենց տեսածի հետ:

գրոհայինների մասնակցության: Արձանագրվել է նաև աղբբեջաներեն ու արաբերեն խոսակցություն («Ազգային անվտանգության ծառայությունը...»):

Ռազմական գործողությունների ինչպես սկզբնական օրերին, այնպես էլ հետագայում տարածվեցին տեղեկություններ սպանված գրոհայինների մասին («Nagorno-Karabakh battles...»):

Հանրագումարենք՝ տուրբուլենտության ստեղծած քառսը խաղարկողների հնարավորություն է տալիս տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների ցանցային կիրառմամբ փոխել գործընթացի տրամաբանությունը՝ խրախուսելով չհիմնավորված նկրտումներով անպատասխանատու գործունեությունը (Մ. Մարգարյան...):

Ընդհանրացնենք՝ Հայաստանի և Արցախի դեմ սանձազերծված պատերազմում Աղբբեջանի կողմից զինված ահաբեկիչների ու վարձկանների՝ կազմակերպված ու համակարգված ձևով մասնակցությունը փաստվում է ձեռք բերված բավարար ապացույցներով:

Այսպես՝ ՀՀ գլխավոր դատախազության 2020թ.-ի նոյեմբերի 27-ի տարածած հաղորդագրության համաձայն՝ 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Աղբբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից մի շարք միջազգային պայմանագրերի պահանջների խախտմամբ, ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և ագրեսիայի ակտ իրականացնելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննության ընթացքում կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախնական տվյալներ են ձեռք բերվել պատերազմ վարելու առաջին իսկ օրվանից **Աղբբեջանի կողմից տարբեր ահաբեկչական խմբավորումների անդամ հանդիսացող, նյութական հատուցում ստանալու նպատակով հատուկ հավաքագրված անձանց՝ վարձկանների հավաքագրելու և օգտագործելու վերաբերյալ: Վերջիններս իրականացրել են միջազգային ահաբեկչություն՝ օտար պետության ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով, պայթյունի, հրկիզման և այլ նմանօրինակ գործողությունների կազմակերպմամբ ու իրականացմամբ, շարունակել են մարդկանց ոչնչացնելուն, շինություններ, կառույցներ, ճանապարհներ և հաղորդակցության միջոցներ, կապի միջոցներ կամ այլ գույք ոչնչացնելուն և վնասելուն ուղղված գործողությունները** («ՀՀ գլխավոր դատախազության...»):

Վերոգրյալի հիման վրա 2020թ.-ի հոկտեմբերի 12-ին միջազգային ահաբեկչության դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով (ՀՀ քր. օրենսգիրք, Հոդված 389...):

Համաձայն նույն հաղորդագրության՝ նախաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդվածով, 390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով («ՀՀ քրեական օրենսգիրք, 390-րդ հոդված...»), 395-րդ հոդվածի 3-րդ մասով¹ նախատեսված հանցագործություններ կատարելու **կասկածանքով 2020թ.-ի հոկտեմբերի 31-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռքբերվել է Աղբբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմին մասնակցող վարձկան՝ 1988թ. ծնված, ազգությամբ արաբ, Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի, Սարմադի քաղաքին հարակից Աթմի գյուղի բնակիչ Մուհիռաբ Մուհամմադ Ալ Շխերին, իսկ նոյեմբերի 2-ին՝ ազգությամբ արաբ, Սիրիայի Արաբական**

¹ Բացի ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդվածից, 34-390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից և 3-րդ մասի 1-ին կետից նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք, 395-րդ հոդվածի (Վարձկանությունը) 3-րդ մասը. Վարձկանի մասնակցությունը զինված ընդհարումներին կամ ռազմական գործողություններին: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015>

Հանրապետության քաղաքացի, Իդիբ Նահանգի Ջսեր Ալ Շահուր քաղաքի Ալ 2Իեդիե գյուղի բնակիչ 03.05.1975թ. ծնված Յուսեֆ Ալաբեթ Ալ Յաշին:

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ստացվել Նաև Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության սանձազերծած ռազմական գործողություններին մի շարք այլ վարձկանների մասնակցության, մասնավորապես «Սուլթան Սուլեյման Շահ» միջազգային ահաբեկչական խմբավորման պարագլուխ, ազգությամբ արաբ, Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի, «Աբու Ջամա» մականվամբ Մուհամմադ Ալ-Ջասիմի (ծնված 1985թ.) կողմից կոլեկտիվական հատուցման դիմաց Սիրիայի Արաբական Հանրապետությունում շուրջ **երկու հազարից** ավելի վարձկաններ հավաքագրելու, Նրանց Ադրբեջան տեղափոխելու, Արցախի և Հայաստանի դեմ վարվող պատերազմում ներգրավելու, այդ թվում՝ տեղում գործողությունները ղեկավարելու վերաբերյալ («ՀՀ գլխավոր դատախազության...»):

Ձեռք բերված օբյեկտիվ ապացույցները հիմնավորում են պատերազմի ողջ ընթացքում Ադրբեջանի Հանրապետության տարածքում միջազգային ահաբեկչական խմբավորումների անդամ ծայրահեղական ահաբեկիչների, վարձկանների ներկայությունը և Ադրբեջանի ՉՌԲ կազմում ակտիվ մասնակցությունը ռազմական գործողություններին և Արցախի բնակչության դեմ իրականացված ռազմական հանցագործություններին: Հարկ է նշել, որ ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների համատեղ եռակողմ հայտարարության ընդունումից հետո էլ հակամարտության գոտուց վերջիններին հեռացվելու վերաբերյալ առկա չէ որևէ տվյալ: Ավելին, ըստ հրապարակվող տեղեկությունների՝ միջոցներ են ձեռնարկվում ահաբեկչական խմբավորումների տեղակայման և վարձկանների հավաքագրման հիմնական կենտրոններից մեկը հանդիսացող՝ Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսային շրջաններից կազմակերպված ձևով անձանց Ադրբեջանի տիրապետության տակ անցած տարածքներ տեղափոխման և հաստատման վերաբերյալ: **Վերջինս իրականությանը համապատասխանելու դեպքում ըստ Էուլթան կարելի է գնահատել որպես տարածաշրջանում ահաբեկչական խմբավորումների կենտրոնացման, դրանով իսկ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բնակչության, տարածաշրջանի բոլոր երկրների անվտանգության և կայունության սպառնալիքների մեծացմանը, հարաբերական խաղաղության խաթարմանը միտված քայլ («ՀՀ գլխավոր դատախազության...»):**

2020թ. Արցախյան պատերազմին վարձկան-

ահաբեկիչների մասնակցության հետևանքով տարածաշրջանային անվտանգության համակարգում առաջացած ռիսկերն ու սպառնալիքները

Չկարգավորված ներքին խնդիրներ ունեցող Հարավային Կովկասում անվտանգային համակարգի, պետական կյանքի կազմակերպման և ժողովրդավարական մասնակցության վերաբերյալ ընկալումները բավականին տարբեր են՝ արժեքային համակարգի ձևավորման, սկզբունքայնության ու կայունության հաստատման տեսանկյունից: Յուրաքանչյուր անհավասարակշիռ քայլ հղի է նոր սպառնալիքներով ու մարտահրավերներով, որոնք կհանգեցնեն տարածաշրջանային նոր ու անդառնալի ցնցումների:

Ներկայումս և՛ Հարավային Կովկասում, և՛ ընդհանրապես հետխորհրդային տարածաշրջանում անվտանգային միջավայրը զգալիորեն փոխվել է. պահպանելով նախկինում առկա մարտահրավերները՝ ավելացել են նոր խնդիրներ: Սակայն անվտանգային համակարգը խաթարող հիմնախնդիրները մնում են Լեռնային Ղարաբաղը, Հարավային Օսիան, Աբխազիան, Հարավային Կովկասում ուժգնացող ահաբեկչության դրսևորումները՝ Կրաստանում, մասնավորապես Պանկիսի կիրճում գոյություն ունեցող արմատական վահաբական ուղղվածության ահաբեկչական

օջախները, որոնց ձևավորմանը նպաստել է հիմնականում սիրիական պատերազմը: Բացի նշյալներից, Ադրբեջանից շատերը մեկնել են Իրաք, Սիրիա՝ մասնակցելու ջիհադական շարժմանը: Թվարկված հիմնախնդիրներն ավելի սրվում են տարածաշրջանային պետությունների պետական կառավարման համակարգերի ակնհայտ տարբերություններով, ռազմավարական տարատեսակ տեսլականներով, որոնցում ցավոք, հիմնականում ժողովրդավարության անկման միտումներ են նկատվում: Լեռնային Ղարաբաղում վերջին լայնամասշտաբ պատերազմը շեշտակի փոխեց Հարավային Կովկասի պատկերը՝ հատկապես անվտանգային դիտանկյունից: Կոպտորեն խախտվեցին մի շարք միջազգային ու մարդասիրական նորմեր, առաջ եկան բնակչության կյանքին ու կենսագործունեությանը սպառնացող մարտահրավերներ, արձանագրվեց հումանիտար աջակցության կասեցում քաղաքական ենթատեքստով, ինչն անթույլատրելի է:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ՀԱՊԿ-ին ըստ էության Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից մեկն է: Հավաքական անվտանգության մասին Պայմանագրում առանձնահատուկ է 4-րդ հոդվածը, համաձայն որի՝ «**եթե անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա անդամ պետությունների կողմից դա կհամարվի որպես ագրեսիա սույն Պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ: Մասնակից պետություններից որևէ մեկի դեմ ագրեսիայի ակտի ի հայտ գալու պարագայում, մնացած մասնակից պետությունները կցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն՝ ներառյալ ռազմական օգնությունը, նաև կցուցաբերեն օժանդակություն իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով՝ հավաքական պաշտպանության իրավունքի իրագործման կարգին համապատասխան՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի**» (« COLLECTIVE SECURITY...»):

2020թ.-ի ադրբեջանա-արցախյան պատերազմին վարձկան-ահաբեկիչների մասնակցության փաստը կարծես թե ընդունեց նաև ողջ քաղաքակիրթ աշխարհը, սակայն զարմանալիորեն դա չանհագստացրեց միջազգային հանրությանը: Պատերազմին ահաբեկչական կազմակերպությունների ու առանձին գրոհայինների մասնակցության և տարածաշրջանում դրանց հայտնվելու վտանգների մասին խոսեցին միայն ՌԴ-ի, Ֆրանսիայի և Իրանի նախագահները, որոնք ևս, բացի հայտարարություններ տարածելուց, որևէ գործուն քայլ չձեռնարկեցին դրանց մուտքը կանխելու, առավել ևս դրանց ներթափանցումը կազմակերպած ու իրականացրած երկրների նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու վերաբերյալ՝ գոնե միջազգային որևէ կազմակերպության շրջանակներում քննարկում նախաձեռնելու առումով¹:

Այս իմաստով՝ բնակչության տարածքի կարգավիճակով պայմանավորված՝ որևէ իրավունքի օտարում միջազգային իրավունքի, այդ թվում՝ հումանիտար իրավունքի նորմերի ու սկզբունքների խախտում է, ինչի ակնատեսն ենք այսօր Արցախի Հանրապետությունում: Արդի աշխարհում նման փոքր տարածքում 44 օր տևած լայնածավալ ռազմական ագրեսիան հանգեցրել է աղետալի հետևանքների, որոնցից առավել ակնհայտ և վտանգավորներն են՝

¹ Տարօրինակ է խնդրի վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ 03.12.2020թ. տարածած հայտարարությունը. «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պահանջում են լիովին և անհապաղ տարածաշրջանից դուրս բերել բոլոր օտարերկրյա վարձկաններին և կողմերին կոչ են անում նպաստել նրանց հեռացմանը»։ այսինքն համանախագահների կողմից հերթական անգամ հավասարության նշան է դրվում կողմերի միջև և ստացվում է տպավորություն, թե 2 կողմն էլ օգտագործել են օտարերկրյա վարձկանների, տես՝ Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries (3 December 2020):

✓ Ադրբեջանը մինչև օրս չի կատարել Նոյեմբերի 9-ի հայտարարության («ՀՀ վարչապետի...») 8-րդ կետը, համաձայն որի՝ պետք է տեղի ունենար ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց փոխանակումը՝ «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով: Հայաստանը վաղուց արդեն կատարել է իր պարտավորություններն այս հարցի վերաբերյալ. հայկական կողմը ազատ է արձակել և Ադրբեջանին է վերադարձրել ադրբեջանցի բոլոր ռազմագերիներին:

✓ ԼՂ քաղաքացիական բնակչության շրջանում անվտանգության բնականոն ապահովման անհնարինությունը: Կյանքի իրավունքը համընդհանուր պարտադիրություն ունի բոլոր ժամանակներում բոլոր պետությունների համար և իրենից ներկայացնում է *jus cogens* Նորմ (իրավական պահանջ):

✓ 2021 թվականի մայիսի 12-ից Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումների ներթափանցումը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք:

Վերոնշյալ դրույթները հումանիտար հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա անհրաժեշտ է սևեռվել և հետամուտ լինել Նշյալ միջազգային-հումանիտար իրավունքի բացարձակ իրացմանը Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի Հանրապետության տարածքներում: **Փաստացի, Արցախյան (ԼՂ) հիմնախնդիրը Հարավային Կովկասում կայուն անվտանգության ապահովման հիմնական բաղադրիչներից մեկն է**, որի վերջնական լուծման շուրջ բանակցային գործընթացը կարող է վերադառնալ դիվանագիտական դաշտ հումանիտար բաղադրիչի ապահովմամբ՝ այդ թվում վարձկան-սահաբեկիչների վերաբերյալ փաստերի միջազգայնացմամբ, դատապարտմամբ և պատժմամբ:

Փաստացի, 2020թ.-ի Նոյեմբերի 9-ի և 2021թ.-ի հունվարի 11-ի եռակողմ հայտարարությունների շրջանակներում արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնականում չեն կատարվում Ադրբեջանի կողմից, ինչն անընդունելի և միջազգային իրավունքի բացահայտ խախտում է: Վարձկաններին ռազմական գործողություններում ներգրավելը բարբարոս ու անհաբեկչական երկրներին և նրանց ազդեցիվ զորքին բնորոշ հնամենի երևույթ է, որը, փաստորեն, Ադրբեջանի և Թուրքիայի թողտվությամբ, վերադարձավ մեր օրեր՝ քաղաքակիրթ մարդկությանը կանգնեցնելով Նոր ռիսկերի, վտանգների ու սպառնալիքների առջև: Ի վերջո աշխարհի քաղաքակիրթ հասարակություններում կարային զինվորականը համարվում է Նաև մտավորականության ներկայացուցիչ, պետության անվտանգության պատվար: Մինչդեռ վարձկանն ու նրա կարգավիճակը ենթադրում են կարիքի մեջ գտնվող ցանկացած ստահակի ներգրավումը պատերազմական գործողություններում:

Հումանիտար հասանելիությունը Արցախ չպետք է քաղաքականացվի. խոսքը մարդու իրավունքների պաշտպանության մասին է («ՀՀ ԱԳ Նախարար...»): Չափազանց հրատապ է Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ հայտնված մի շարք մշակութային, այդ թվում՝ հայկական կրոնական հուշարձանների պահպանության խնդիրը: Անհրաժեշտ է կարևորելով դիվանագիտական դաշտում ՄԻՆՍԿ-ի խմբի շրջանակներում ԼՂ հիմնախնդրի կարգավորումը՝ վերականգնել պատմական ու իրավական հիմքերն ու սկզբունքները:

Եզրակացություն

Ամփոփենք. Նոր աշխարհակարգը՝ հագեցած անոշություններով, ունի հանգույցներ՝ Նոր անորոշություններ ստեղծելու միտումներով: Առկա մարտահրավերներն ու սպառնալիքները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է ցուցաբերել միասնական, համակարգված, նրբանկատ, ռազմավարական ու պրագմատիկ մոտեցում՝ ուղղված ներպետական ու տարածաշրջանային անվտանգային խնդիրների հիմնային կարգավորմանը՝ գլոբալ անվտանգային լրջագույն խնդիրներից խուսափելու միտումով: Սա կլինի տարածաշրջանում

ընդհանուր հաջողության և մեր պետությունների անվտանգության ապահովման նպատակների իրագործման գրավականը:

Փաստորեն, ուժային բևեռների շահերի բախումները տարածաշրջանում հանգեցրել են առավել բարդ իրավիճակի՝ խորացնելով ներքին ու արտաքին քաղաքական անկայունությունը տարածաշրջանում, ծնել նոր անորոշություններ ներկա ու ապագա համագործակցության, համակեցության ու անվտանգության ապահովման վերաբերյալ: Ակնհայտ են կառավարման և անվտանգային ճգնաժամերը: Նոր աշխարհակարգի, գլոբալ վերադասավորումների, կերպափոխումների պայմաններում կենսական անհրաժեշտություն է ռազմավարական մտածողությունն ու գործունեությունը:

Հարկավոր է ներպետական, տարածաշրջանային ու գլոբալ մակարդակներում ճշգրիտ արձագանքել և արդյունավետ լուծումներ տալ սպառնացող ռիսկերին ու մարտահրավերներին: Գլոբալ անվտանգային համակարգը, փաստացի, խաթարվել է: Ահաբեկչական գործունեությունը սպառնալիք է ողջ աշխարհին ու մարդկությանը:

Խիստ մտահոգիչ է ողջ աշխարհի համար, երբ ահաբեկիչը կոչվում է միջազգայնորեն ճանաչված պետության կողմից կանոնավոր բանակի հետ միասին, ընդ որում՝ ՄԱԿ-ի անդամ հանդիսացող որոշ երկրների աջակցությամբ (բացահայտ աջակցողներ՝ Թուրքիա, Աֆղանստան, Պակիստան, կային նաև ոչ բացահայտ աջակցողներ): Ենթադրում ենք, որ ահաբեկչական խմբավորումների առաջնորդները, այս նախադեպը կիրառելով, լուրջ հայտ կարող են ներկայացնել միջազգային ահաբեկչական գործունեության մեջ՝ վարձկանությանը նոր թափ հաղորդելու նպատակով:

Վարձկան-ահաբեկիչների կողմից միջազգային սահմաններ գծելու այս նախադեպը կարող է դառնալ նորօրյա մեծագույն սպառնալիք միջազգային անվտանգության համար: Կարծում ենք՝ պատերազմներում կբարձրանա վարձկան-ահաբեկիչների դերն ու պահանջարկը, քանի որ այն փաստացի դարձավ «արդյունավետ միջոց» դա կիրառող կողմի համար՝ պետության միջազգային սահմաններ գծելու առումով:

Ահաբեկչական կազմակերպությունները 44-օրյա պատերազմում ունեցած «արդյունավետ» փորձը կարող են օգտագործել որպես նախադեպ և աշխարհի տարբեր տարածաշրջաններում եղած հակամարտություններում ընդգրկված երկրներին ու ժողովուրդներին առաջարկել վարձկանների ծառայությունը՝ լուծելու սահմանային, տարածքային և այլ լրջագույն խնդիրներ: Այն կարող է տարածվել ինչպես Մերձավոր և Միջին Արևելքում, այնպես էլ Միջին Ասիայում, Եվրոպայում, Ամերիկայում, Հինաստանում, Հնդկաստանում, ՌԴ-ում և այլուր:

ՀՀ և Արցախի Մարդու իրավունքների պաշտպանները, մարդու իրավունքների գծով միջազգային իրավապաշտպան տարբեր կառույցներ արձանագրել են, որ հայ գերիների ու խաղաղ բնակչության նկատմամբ իրականացվել է անմարդկային դաժան վերաբերմունք՝ անդամահատումներ, գլխատումներ, խեղումներ, սպանություններ և այլն, ընդ որում՝ դրանք նկարահանվել և տարածվել են համացանցում: Վարձկան-ահաբեկիչը, բնականաբար, զուրկ է հայրենասիրական ընկալումներից և նրա համար միևնույն է, թե ո՞վ կամ ի՞նչ նպատակով կվարձատրի իրեն: Եվ Աղբբեջանի իշխանությունները Թուրքիայի անմիջական աջակցությամբ, նաև վարձկան-ահաբեկիչների միջոցով փորձեցին իրականացնել Արցախի հայ բնակչության հերթական բնաջնջումը:

Օգտագործված գրականություն

1. «Ազգային անվտանգության ծառայությունը փաստեր է ներկայացնում ռազմական գործողություններում թուրքական կողմի մասնակցության, վարձկան-ահաբեկիչների ներկայության և վերջիններիս շրջանում առկա խուճապի վերաբերյալ», ԱՄԾ կայքէջ, 03.10.2020թ., <https://www.sns.am/hy/hարողագրություններ/2020/10/03/>

[ազգային-անվտանգության-ծառայությունը-փաստեր-է-ներկայացնում-ռազմական-գործողություններում-թուրքական-կր/471/](#) (24.08.2021)

2. «Այո, ես Ադրբեջանում եմ». AFP-ն գրուցել է Ադրբեջան մեկնած և մեկնել պատրաստվող սիրիացի վարձկանների հետ, Artsakh Press, 03.10.2020, <https://artsakhpress.am/arm/news/133524/ayo-es-adrbejanum-em-afp-n-zrucel-e-adrbejan-meknats-ev-meknel-patrastvox-siriaci-varzkaneri-hete.html> (24.08.2021)

3. «Արցախի նախագահի խոսնակ. Հակառակորդը հրետակոծում է նաև Ստեփանակերտը», Համայնական ցանց, 27.09.2020 <https://www.panarmenian.net/arm/news/285524/> (24.08.2021)

4. «Թուրքիան Հայաստանին մեղադրել է «խաղաղ բնակավայրերի վրա հարձակվելու համար»», Ազատություն ռադիոկայան, 27.09.2020 <https://www.azatutyun.am/a/30860294.html> (24.08.2021)

5. «Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը», Հայաստանի Հանրապետության վարչապետ, 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/> , https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun.pdf (24.08.2021)

6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», Հոդված 389. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015>

7. «ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի խոսքը և պատասխանները լրագրողների հարցերին Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ համատեղ մամուլի ասուլիսին», ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 31.08.2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/08/31/Mirzoyan_Lavrov_pess_conference/11049 (04.09.2021)

8. «ՀՀ գլխավոր դատախազության հաղորդագրությունը», 27.11.2020թ., <https://www.prosecutor.am/am/mn/8016/> (վերջին մուտքը 08.09.2021թ.)

9. «ՀՀ Սարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյանի՝ 17.11.2020թ. ֆեյսբուքյան գրառումը», <https://www.facebook.com/Armenianombudsman> (24.08.2021)

10. «ՀՀ Սարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ», 18.12.2020, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1443> (04.09.2021)

11. «ՀՀ քրեական օրենսգիրք», 390-րդ հոդված. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015> (24.08.2021)

12. «Շփման զճի ողջ երկայնքով Ադրբեջանն ակտիվ հրետակոծություն է սկսել հրետակոծվում է նաև Ստեփանակերտը», CIVILNET, 27.09.2020 <https://www.civilnet.am/news/375710/%d5%b7%d6%83%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%a3%d5%ae%d5%ab-%d5%b8%d5%b2%d5%bb-%d5%a5%d6%80%d5%af%d5%a1%d5%b5%d5%b6%d6%84%d5%b8%d5%be-%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%a1%d5%af%d5%bf%d5%ab%d5%be-%d5%b0%d6%80%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%b8%d5%ae%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-%d5%a7-%d5%bd%d5%af%d5%bd%d5%a5%d5%ac-%d5%b0%d6%80%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%b8%d5%ae%d5%be%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a7-%d5%b6%d5%a1%d6%87-%d5%bd%d5%bf%d5%a5%d6%83%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%a5%d6%80%d5%bf%d5%a8/> (24.08.2021)

13. «Ռուբեն Սաֆրաստյանի հարցազրույցը. Համաշխարհային ահաբեկչության մի հատվածը տեղափոխվել է Հարավային Կովկաս», Panorama.am, 02/10/2020, <https://www.panorama.am/am/news/2020/10/02/Սաֆրաստյան-ահաբեկչություն-Կովկասում/2372587>: (24.08.2021)

14. «Սա աննախադեպ ծանր պատերազմ է»: Առաջին լրատվական: 14.10.2020 <https://www.1in.am/2840214.html> (24.08.2021)
15. Մարգարյան Մարիամ, Մարգարյան Մամիկոն. «Քաղաքական տուրբուլենտություն. Մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման մարտահրավերները», Երևան, 2021: <https://mrmargaryan.wordpress.com/2021/01/26/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%B8%D5%AB%D5%AC%D5%A5%D5%B6%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1/> (24.08.2021)
16. ՌԴ արտաքին հետախուզության ծառայության տնօրեն **Ս.Նարիշկինը** ևս հաստատեց միջազգային ահաբեկչական կազմակերպությունների («Զարհաթ ան-Նուրա», «Ֆիրքաթ Համգա» և «Սուլթան Սուրադ») մասնակցությունը արցախա-ադրբեջանական պատերազմին, О ситуации вокруг Нагорного Карабаха, 06.10.2020, <http://svr.gov.ru/smi/2020/10/o-situatsii-vokrug-nagornogo-karabakha.htm>. (24.08.2021)
17. ՌԴ նախագահ Վ.Պուտինը, Путин забеспокоился из-за боевиков с Ближнего Востока в Карабахе, 10.10.2020, <https://lenta.ru/news/2020/10/14/boeviki/> (24.08.2021)
18. Սաքոյան Տ., Պանթյուրքիզը որպես եվրասիական ժողովուրդների աշխարհաքաղաքական մարտահրավեր, «21-րդ դար», թիվ 1 (71), Եր., 2017, էջ 75-84:
19. «COLLECTIVE SECURITY TREATY», May 15, 1992, Collective Security Treaty Organization, https://en.odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezopasnosti/ (04.09.2021)
20. «Over 300 Syrian Islamists arrive in Karabakh via Turkey – Macron» Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոն, 02.10.2020, <https://tass.com/world/1207675> (24.08.2021)
21. «Turkey Vows Support for Azerbaijan in Escalating Nagorno-Karabakh Conflict», Voice of Armenia, 28.09.2020 <https://www.voanews.com/south-central-asia/turkey-vows-support-azerbaijan-escalating-nagorno-karabakh-conflict> <https://www.russiamatters.org/analysis/armenia-azerbaijan-war-military-dimensions-conflict> (24.08.2021)
22. «Turkish-backed mercenaries | Turkey sends over 300 fighters to Azerbaijan», The Syrian Observatory For Human Rights, 24.09.2020 https://www.syriahr.com/en/185411/?cf_chl_jschl_tk=_pmd_opFUbChzcX2qHc6Z4HwQ8u8safVI7yA5IuvqXjPaDTE-1630851010-0-gqNtZGzNAeWjcnBszQpR (24.08.2021)
23. «UN Security Council calls for immediate end to fighting in Nagorno-Karabakh», France 24, 30.09.2020 <https://www.france24.com/en/20200930-un-security-council-calls-for-immediate-end-to-fighting-in-nagorno-karabakh> (24.08.2021)
24. Almost 800 Syrian mercenaries recruited by Turkey killed in Libya and Karabakh. The Syrian Observatory for Human Rights (SOHR) states that 496 of these mercenaries, including several minors, perished in Libya and 293 did so in the Karabakh war, <https://atalayar.com/en/content/almost-800-syrian-mercenaries-recruited-turkey-killed-libya-and-karabakh> (24.08.2021)
25. The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh, <https://www.bbc.com/news/stories-55238803> (24.08.2021)
26. Haut-Karabakh: des mercenaires syriens, soutenus par la Turquie, épaulent l'Azerbaïdjan, France 24, 02.10.2020, <https://www.france24.com/fr/20201002-haut-karabakh-des-mercenaires-syriens-soutenus-par-la-turquie-%C3%A9paulent-l-azerba%C3%AFdjan> (24.08.2021)
27. Nagorno-Karabakh battles | 72 Syrian mercenaries killed since Turkey threw them into raging conflict between Azerbaijan and Armenia, Oct 4, 2020, <https://www.syriahr.com/en/186882/> (24.08.2021)

28. Russia warns that Nagorno-Karabakh could become Islamist militant stronghold, <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-int-idUSKBN26R1DZ>, ترك يا المسماري: أذربيجان إلى ليدبيا من موزقة نقل (24.08.2021), <https://www.alarabiya.net/ar/north-africa/2020/10/01/> (24.08.2021)

29. Syrian mercenaries in Karabakh: who they are, what are doing there and where they are fighting, 26.10.2020, <https://citeam.org/syrian-mercenaries-in-karabakh.html> (24.08.2021)

30. Syrian rebel fighters prepare to deploy to Azerbaijan in sign of Turkey's ambition, <https://www.theguardian.com/world/2020/sep/28/syrian-rebel-fighters-prepare-to-deploy-to-azerbaijan-in-sign-of-turkeys-ambition>, <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-int-idUSKBN26R1DZ>, <https://eurasianet.Org/question-of-syrian-mercenaries-takes-over-armenia-azerbaijan-information-war> (24.08.2021)

31. Turkish-Backed Syrian Fighters Join Armenian-Azeri Conflict, <https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885> (24.08.2021)

32. US Department of Defense official says reports on transportation of Syrian mercenaries to Azerbaijan are proven, 01.10.2020, <https://en.armradio.am/2020/10/01/us-department-of-defense-official-confirms-the-transportation-of-syrian-mercenaries-to-azerbaijan-are-proven/> (24.08.2021)

33. Иранский сигнал Турции: Террористов на своих северных границах не потерпим, 01.10.2020, ԻԻՐ Սախապահ Ռոհախիս, <https://eadaily.com/ru/news/2020/10/01/iranskiy-signal-turcii-terroristov-na-svoih-severnyh-granicah-ne-poterpim> (24.08.2021)

34. Путин заявил Эрдогану о беспокойстве из-за боевиков в Карабахе, <https://www.rbc.ru/politics/14/10/2020/5f872b199a79473f1a017d19> (24.08.2021)

35. Разведка доложила: в Карабах прибыли террористы из Сирии и Ливии, <https://www.gazeta.ru/army/2020/10/06/13283173.shtml> (24.08.2021)

Works Cited

1. "Ayo, es Aذربejanum em,, AFP-n zrucel e Aذربejan meknac ev meknel patrastvogh siriatsi vardzkanneri het ["Yes, I am in Azerbaijan." AFP talked to Syrian mercenaries who arrived in Azerbaijan] 03.10.2020, <https://artsakhpress.am/arm/news/133524/ayo-es-adrbejanum-em-afp-n-zrucel-e-adrbejan-meknats-ev-meknel-patrastvox-siriatsi-vardzkanneri-hete.html> (24.08.2021)

2. Almost 800 Syrian mercenaries recruited by Turkey killed in Libya and Karabakh. The Syrian Observatory for Human Rights (SOHR) states that 496 of these mercenaries, including several minors, perished in Libya and 293 did so in the Karabakh war, <https://atalayar.com/en/content/almost-800-syrian-mercenaries-recruited-turkey-killed-libya-and-karabakh> (24.08.2021)

3. Artsakhi nakhagahi khosnak. Hakarakordy hretakotsum e naev Stepanakerty [Press Secretary of the President of Artsakh. The enemy is also shelling Stepanakert] 27.09.2020 <https://www.panarmenian.net/arm/news/285524/> (24.08.2021)

4. Azgayin anvtangutyany tsarayutyuny paster e nerkayatsnum razmakan gortsoghutyunnerum turqakan koghmi masnaktsutyany, vardzkan0ahabekichneri nerkayutyany ev verjinneris shrjanum arka khujapi veraberyal [The National Security Service presents the facts of the Turkish side's participation in hostilities, the presence of terrorist mercenaries and panic among the latter] 03.10.2020թ., <https://www.sns.am/hy/hարողողազրույթը/2020/10/03/ազգային-անվտանգության-ծառայությունը-փաստեր-է-ներկայացնում-ռազմական-գործողություններում-թուրքական-կո/471/> (24.08.2021)

5. COLLECTIVE SECURITY TREATY», May 15, 1992, Collective Security Treaty Organization, https://en.odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezопасnosti/ (04.09.2021)
6. Haut-Karabakh: des mercenaires syriens, soutenus par la Turquie, épaulent l'Azerbaïdjan, France 24, 02.10.2020, <https://www.france24.com/fr/20201002-haut-karabakh-des-mercenaires-syriens-soutenus-par-la-turquie-%C3%A9paulent-l-azerba%C3%AFdjan> (24.08.2021)
7. HH AG nakharar Ararat Mirzoyani khosqy ev pataskhannery Iragroxneri harcerin RD AG nakharar Sergey Lavrovi het hamatex mamuli asulisin [Speech and answers of the Minister of Foreign Affairs of the Republic of Armenia Ararat Mirzoyan to journalists' questions during a joint press conference with the Minister of Foreign Affairs of Russia Sergey Lavrov", Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia] https://www.mfa.am/hy/press-releases/2021/08/31/Mirzoyan_Lavrov_pess_conference/11049 (04.09.2021)
8. HH Gikhavor datakhazutyany haghordagruytyuny [Message of the Prosecutor General's Office of the Republic of Armenia] 27.11.2020թ., <https://www.prosecutor.am/am/mn/8016/> (վերջին սուսըրը 08.09.2021թ.)
9. HH mardu iravunqneri pashtpan Arman Tatoyani 17.11.2020 feysbuqyan grarumy [Human Rights Defender RA A.Tatoyan - 17.11.2020 Facebook post] <https://www.facebook.com/Armenianombudsman> (24.08.2021)
10. HH mardu iravunqneri pashtpani grasenyak 18.12.2020, [Office of the Human Rights Defender of the Republic of Armenia] <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1443> (04.09.2021)
11. HH qreakan orengsirq, hodvats 389, 390 [RA Criminal Code", Article 389, 390] <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015> (24.08.2021)
12. HH Qreakan orengsirq, hodvats 389. [RA Criminal Code", Article 389] <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015> (24.08.2021)
13. HH varchapeti, AH nakhagahi ev RD nakhagahi haytararutyuny [The Announcement of RA Prime-minister, AR and RF presidents] <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun.pdf (24.08.2021)
14. Iranskiy signal Turtsii: Terroristov na svoikh severnykh granitsakh ne poterpim 01.10.2020, lih nakhagah Hasan Rohani <https://easaily.com/ru/news/2020/10/01/iranskiy-signal-turcii-terroristov-na-svoih-severnyh-granichah-ne-poterpim> (24.08.2021)
15. Margaryan Mariam, Margaryan Mamikon, "Qaghaqakan turbulentutyun. Martahaverne 7 Hayastani bnakanon ardiakanacman hnaravorutyuntery", [Political Turbulence: Challenges and Challenges of Armenia's Natural modernization] Yerevan, 2021: <https://mrmargaryan.wordpress.com/2021/01/26/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%B8%D5%AB%D5%AC%D5%A5%D5%B6%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1/> (24.08.2021)
16. Nagorno-Karabakh battles | 72 Syrian mercenaries killed since Turkey threw them into raging conflict between Azerbaijan and Armenia, Oct 4, 2020, <https://www.syriahr.com/en/186882/> (24.08.2021)
17. Over 300 Syrian Islamists arrive in Karabakh via Turkey – Macron» Ֆրանսիայի Արցախի ե. Մակրոն, 02.10.2020, <https://tass.com/world/1207675> (24.08.2021)

18. Putin zayavil Erdoganu o bespokoihtstve iz-za boevikov v Karabaghe [Putin was concerned over militants from the Middle East in Karabakh] <https://www.rbc.ru/politics/14/10/2020/5f872b199a794731a017d19> (24.08.2021)

19. R. Safrastyani harcazruycy. Hamshkharhayin ahabekchutyan mi hatvatsy teghapohkvel e Haravayin Kovkas [Interview with Ruben Safrastyan. Part of the world terrorism has moved to the South Caucasus] 02/10/2020, <https://www.panorama.am/am/news/2020/10/02/Սահմանադուրան-ահաբեկչություն-Կովկասում/2372587>: (24.08.2021)

20. Razvedka dolojila: v Karabagh pribili terroristi iz Sirii i Livii [Intelligence reported: terrorists from Syria and Libya arrived in Karabakh] <https://www.gazeta.ru/army/2020/10/06/13283173.shtml> (24.08.2021)

21. RD artaqin hetakhuzutyan tsarayutyan tnoren A. Narishkiny evs hastatec mijazgayin ahabekchakan kazmakerputyunneri masnacityuy artsakha-adrbejanakan paterazmin. [Director of the Foreign Intelligence Service of the Russian Federation S. Sargsiannaryshkin also confirmed the participation of international terrorist organizations] O situatsii vokrug Nagornovo Karabaxa 06.10.2020, <http://svr.gov.ru/smi/2020/10/o-situatsii-vokrug-nagornogo-karabakha.htm>. (24.08.2021)

22. RD Nakhagah Vladimir Putin, Putin zabespokoilsya iz-za boevikov s Blijnovo Vostoka v Karabaxe [Putin was concerned over militants from the Middle East in Karabakh] 10.10.2020, <https://lenta.ru/news/2020/10/14/boeviki/> (24.08.2021)

23. Russia warns that Nagorno-Karabakh could become Islamist militant stronghold, <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-int-idUSKBN26R1DZ>, ترك يا :المسماري, <https://www.alarabiya.net/ar/north-africa/2020/10/01/> أذربيجان إلى ليديا من مرتزقة ت نقل ال بلاد-غرب-جدا-خط ير-أمني-تهديد-د-ل-د-نا-ال ل-بي-ال-ج-ش (24.08.2021)

24. Sa annakhadep tsanr paterazm e [This is an unprecedented heavy war';-[] 14.10.2020 <https://www.1in.am/2840214.html> (24.08.2021)

25. Saqoyan T., Pantyrqizmy vorpes evrasiakan joghovurdneri ashkharhaqaghaqakan martahraver [Pan-Turkism as a geopolitical challenge of the Eurasian peoples, "21st Century"] «21-rd DAR», tiv 1 (71), Er., 2017, ej 75-84.

26. Shpman gtsi voghj yerkeynqov Aadrbejann aktiv hretakotsutyun e sksel, hretakotsvum e naev Stepanakerty 27.09.2020 <https://www.civilnet.am/news/375710/%d5%b7%d6%83%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%a3%d5%ae%d5%ab-%d5%b8%d5%b2%d5%bb-%d5%a5%d6%80%d5%af%d5%a1%d5%b5%d5%b6%d6%84%d5%b8%d5%be-%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%a1%d5%af%d5%bf%d5%ab%d5%be-%d5%b0%d6%80%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%b8%d5%ae%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-%d5%a7-%d5%bd%d5%af%d5%bd%d5%a5%d5%ac-%d5%b0%d6%80%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%b8%d5%ae%d5%be%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a7-%d5%b6%d5%a1%d6%87-%d5%bd%d5%bf%d5%a5%d6%83%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%a5%d6%80%d5%bf%d5%a8/> (24.08.2021)

27. Syrian mercenaries in Karabakh: who they are, what are doing there and where they are fighting, 26.10.2020, <https://citeam.org/syrian-mercenaries-in-karabakh.html> (24.08.2021)

28. Syrian rebel fighters prepare to deploy to Azerbaijan in sign of Turkey's ambition, <https://www.theguardian.com/world/2020/sep/28/syrian-rebel-fighters-prepare-to-deploy-to-azerbaijan-in-sign-of-turkeys-ambition>, <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-int-idUSKBN26R1DZ>, <https://eurasianet.Org/question-of-syrian-mercenaries-takes-over-armenia-azerbaijan-information-war> (24.08.2021)

29. The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh, <https://www.bbc.com/news/stories-55238803> (24.08.2021)
30. Turkey Vows Support for Azerbaijan in Escalating Nagorno-Karabakh Conflict», Voice of Armenia, 28.09.2020 <https://www.voanews.com/south-central-asia/turkey-vows-support-azerbaijan-escalating-nagorno-karabakh-conflict>
<https://www.russiamatters.org/analysis/armenia-azerbaijan-war-military-dimensions-conflict> (24.08.2021)
31. Turkian Hayastanin meghadrel e “khaghagh bnakavayreri vra hardzakvelu hamar,, 27.09.2020 <https://www.azatutyun.am/a/30860294.html> (24.08.2021)
32. Turkish-backed mercenaries | Turkey sends over 300 fighters to Azerbaijan», The Syrian Observatory For Human Rights, 24.09.2020 https://www.syriahr.com/en/185411/?_cf_chl_jschl_tk__=pmd_opFUbChzcX2qHc6Z4HwQ8u8safVl7yA5luvqXjPaDTE-1630851010-0-gqNtZGzNAeWjcnBszQpR (24.08.2021)
33. Turkish-Backed Syrian Fighters Join Armenian-Azeri Conflict, <https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885> (24.08.2021)
34. UN Security Council calls for immediate end to fighting in Nagorno-Karabakh», France 24, 30.09.2020 <https://www.france24.com/en/20200930-un-security-council-calls-for-immediate-end-to-fighting-in-nagorno-karabakh> (24.08.2021)
35. US Department of Defense official says reports on transportation of Syrian mercenaries to Azerbaijan are proven, 01.10.2020, <https://en.armradio.am/2020/10/01/us-department-of-defense-official-confirms-the-transportation-of-syrian-mercenaries-to-azerbaijan-are-proven/> (24.08.2021)

MERCENARY PARTICIPATION IN THE 2020 44-DAY WAR IN ARTSAKH AND ITS IMPACT ON THE INTERNATIONAL SECURITY SYSTEM

MARINE MOVSISYAN

*Public Administration Academy of the RA,
Department of Political Management and Public Policy, Ph.D. Student;
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), member;
YSMU «Heratsi», High School, teacher of history;
Metsamor, the Republic of Armenia*

The purpose of the article is to present the participation of mercenary terrorists in the 44-day Artsakh war, to emphasize their impact on the end result.

The aim is to justify the implication of mercenary terrorists of other foreign countries to Turkey.

Symbolic methods were used in the research: data collection, analysis, comparison, comparison, generalization.

The results of the study led to the following conclusion: the borders of present-day Azerbaijan were drawn with the participation of both members of aggressive military operations and members of international terrorist organizations, particularly jihadists, which is unprecedented in world history: in fact, international borders were drawn by terrorists. This may be a legitimate right (trump card) for the Republic of Armenia to return the lost Armenian territories and settlements after some time. In fact, the Artsakh (NK)

issue is one of the main components of ensuring lasting security in the South Caucasus, the final settlement of which can return to the diplomatic arena by providing a humanitarian component, including internationalization, condemnation and punishment of mercenary terrorists.

Keywords: *44-day Artsakh war, mercenary terrorists, security, Artsakh, Armenia, Azerbaijan, Turkey, Russia, international law.*

УЧАСТИЕ НАЕМНИКОВ В 44-ДНЕВНОЙ 2020 Г. ВОЙНЕ В АРЦАХЕ И ЕГО ВЛИЯНИЕ НА СИСТЕМУ МЕЖДУНАРОДНОЙ БЕЗОПАСНОСТИ

МАРИНЕ МОВСИСЯН

*аспирант кафедры политического управления и
государственной политики Государственной академии
управления Республики Армения,
член Объединения молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
учительница истории старшей школы «Гераци» ЕГМУ,
г. Мецамор, Республика Армения*

Цель статьи – представить факты участия террористов-наемников в 44-дневной арцахской войне, подчеркнуть их влияние на конечный результат военных действий.

В статье поставлена задача аргументированно доказать вовлеченность в военные действия террористов-наемников со стороны Турции и других иностранных государств.

При проведении исследования были применены общенаучные методы: сбор и анализ фактов, сравнение, сопоставление, обобщение.

Результаты исследования привели к следующему выводу: нынешние границы Азербайджана посредством установлены путем агрессивных военных операций, в которых айивное участие принимали члены международных террористических организаций, в частности, джихадисты, что беспрецедентно для мировой истории. Это может быть использовано как законное право (kozyрь) Республики Армения для возвращения утерянных армянских территорий и населенных пунктов.. Фактически, нагорно-карабахский (нагорно-карабахский) конфликт является одним из ключевых компонентов обеспечения прочной безопасности на Южном Кавказе, окончательное урегулирование которого может вернуться на дипломатическую арену, обеспечив гуманитарную составляющую, включая интернационализацию, осуждение и наказание наемных террористов.

Ключевые слова: *44-дневная арцахская война, наемные террористы, безопасность, Арцах, Армения, Азербайджан, Турция, Россия, международное право.*

**ՀՀ-ՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՈՂ
ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ
ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻՍԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ***

ՀՏԴ 327

DOI: 10.52063/25792652-2021.4-169

ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գործընթացների և ինստիտուտների ամբիոնի ասպիրանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն nareksukiasyan@gmail.com

Հողվածի նպատակն է վեր հանել ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կոնստրուկտիվիստական գործոնները, որոնք վերաբերելի են հայ-ռուսական հարաբերություններին: Այդ նպատակով հողվածում կիրառվել է միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիզմի տեսամեթոդական գործիքակազմը: Հողվածը քննում է ՀՀ անկախության ակունքներից սկսած Էլիտաների ինքնության ձևավորումը, խոսույթներն ու ընկալումները արտաքին ու ներքին սպառնալիքների, դրանց հաղթահարման հնարավորությունների, արտաքին աջակցության ու դաշինքային քաղաքականության մասին: Հողվածը վեր է հանում արտաքին քաղաքական այն նորմերն ու դրանց ձևավորման կենսաշրջանները, որոնք, ի լրումն Նյուլթական իրականությունից բխող գործոնների, պայմանավորում, խրախուսում կամ սահմանափակում են Ռուսաստանի Դաշնության հանդեպ կառավարող Էլիտաների քաղաքականությունը և գործում որպես քաղաքական սուբյեկտների ներառման և բացառման մեխանիզմներ: Հողվածը ընգծում է ՀՀ առաջին և երկրորդ վարչակարգերի միջև առկա նմանություններն ու տարբերությունները վերոնշյալ հարցադրումների վերաբերյալ, մատնանշում դրանց միջև առկա բանավեճերն ու դրանց ազդեցությունը ձևավորվող նորմերի կենսաշրջանի վրա:

Հիմնաբառեր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականություն, ՀՀ-ՈՂ հարաբերություններ, կոնստրուկտիվիզմ, ինքնություն, արտաքին քաղաքական նորմեր, ՀՀ կառավարող Էլիտաներ, Հարավային Կովկաս:

Ներածություն

Նյուլթական, հնարավորինս օբյեկտիվ (եթե նմանը ընդհանրապես կա) իրականությունից բացի, ինչպես պետությունների, այնպես էլ դրանք ներկայացնող անձանց որոշումների հիմքում ընկած են նաև մի շարք սուբյեկտիվ գործոններ՝ սոցիալական իրականության ամբողջությունը, որը ձևավորում է ինքնություններ, հավաքականորեն ընդունված՝ միջսուբյեկտայինացված գաղափարներ, թույլատրելի և ընդունելի նորմեր, դրանցից շեղվելու դեպքում պատժի կամ բացառման մեխանիզմներ, որոնք այս կամ այն կերպ իրենց ազդեցությունն են ունենում

* Հողվածը ներկայացվել է 11.11.2021թ., գրախոսվել՝ 20.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

կառավարող Էլիտաների կողմից օբյեկտիվ իրականությունն ընթերցելու, ընկալելու և համապատասխան այդ ընկալման՝ որդեգրվող քաղաքականության վրա (Finnemore and Sikkink 393; Theys 38; Jepperson, Wendt and Katzenstein 18): Օբյեկտիվ իրականության նույն միջավայրերում տարբեր անհատներ, այդ թվում՝ պետության ղեկավարներ գործում են տարբեր կերպ, ինչը անլուծելի խնդիր է դնում (ևեռ)ռեալիզմի կամ ռացիոնալիստական ցանկացած այլ տեսության առաջ: Նման հետազոտական բացի լրացումը հնարավոր է իրականացնել կոնստրուկտիվիզմի տեսամեթոդական գործիքակազմով (Price 255; Rogers; Sterling-Folker 20; Mouritzen): Հիմնվելով վերոնշյալ դրդապատճառների ու կոնստրուկտիվիզմի մեթոդաբանության վրա՝ այս հետազոտությունը որպես նպատակ է սահմանել *վեր հանել* ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կոնստրուկտիվիստական գործոնները, որոնք վերաբերելի են հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Այդ նպատակով առանձնացվել են հետևյալ հարցադրումները. որո՞նք էին ՀՀ արտաքին քաղաքականությունը պայմանավորող հիմնական կոնստրուկտիվիստական նորմերը, ինչպե՞ս էր տեղի ունեցել այդ նորմերի կայացման կենսաշրջանը, ինչպիսի՞ անվտանգային ինքնություն ուներ ՀՀ-ն, ինչպիսի՞ն էին ՀՀ կառավարող Էլիտայի արտաքին սպառնալիքների ընկալումները, որո՞նք էին, ըստ վերջիններիս, այդ սպառնալիքների հաղթահարման միջոցները և ինչպե՞ս էին այդ պատկերացումները արտահայտվում նրանց վարած արտաքին ու դաշինքային քաղաքականության մեջ և, գլխավորապես, ինչպե՞ս էր կառավարող Էլիտաների կողմից ընկալվում կամ ինչպիսի՞ դեր/ակնկալիք էր վերագրվում ՌԴ-ին այդ հարցադրումների համատեքստում:

Արտաքին քաղաքական նորմերի ծագում

Քանի որ հարցադրումներից առաջինը վերաբերում է նորմերի ծագումնաբանությանը և քաղաքական դերակատարների վրա դրանց ներազդեցությանը, ապա անհրաժեշտ է քննել ՀՀ արտաքին քաղաքականությունը՝ մասնավորապես ՀՀ-ՌԴ հարաբերությունները «կարգավորող» նորմերի համակարգի առաջացման սոցիալական գործընթացն ու վերափոխումները: Այսպիսով՝ միջազգային համակարգում Հայաստանի Հանրապետության դերի մասին նորմերի ձևավորման ակտիվ փուլը սկիզբ է առնում ԽՍՀՄ վերջին տարիներից և «Ղարաբաղ» շարժումից, ինչը թերևս նախորդած տասնամյակների ազգային, քաղաքական, հաճախ դիսիդենտական մտքի բյուրեղացման արգասիքն էր: Այս քաղաքական շրջանակի կողմից սուր քննադատվում էր Հայաստանի վերջին հարյուրամյակների միջազգային այն ընկալումն ու դիրքավորումը, որը անհրաժեշտ էր համարում առկա տարածաշրջանային սպառնալիքներին դիմադրելու համար ապավինել երրորդ ուժին (Astourian): Դրա պարզ արտահայտումը Թուրքիայի հետ հակադիր, իսկ Ռուսաստանի հետ՝ բարեկամական հարաբերություններն էին (Sunny 186): «Ղարաբաղ» շարժան անդամները, որոնք պետք է շուտով դառնային ՀՀ կառավարող առաջին Էլիտան, հակադրվում էին այս նորմ դարձած՝ թուրքական սպառնալիքը ռուսական օժանդակությամբ հակազդելու ավանդույթին՝ համարելով այն ոչ արդյունավետ Հայաստանի շահերի սպասարկման տեսանկյունից (Mirzoyan 24-30): Բաքվում, Կիրովաբադում Սուվգայիթում հայ բնակչության ջարդերի և «Օղակ» գործողության արդյունքում, երբ ԽՍՀՄ կենտրոնը հանդես էր գալիս միանգամայն անընդունելի գործելաճով, այս նոր նորմը իր դիրքերն ամրապնդեց Էլիտայի շրջանում (Mirzoyan 28-29): Այն բյուրեղանում է Լևոն Տեր-Պետրոսյանի քննադատական «Մոսկվան այլընտրանք չունի» հոդվածում, որում հեղինակը պնդում է, որ Մոսկվայի հետ հարաբերություններում պետք է հանդես գալ ուժային դիրքից (Տեր-Պետրոսյան, Մոսկվան այլընտրանք չունի): Կառավարող այս Էլիտան ազգային, ապա նաև պետական շահերի սպասարկման կարևորագույն գրավական էր համարում առաջին հերթին հարևանների հետ խաղաղ գոյակցությունը (Տեր-Պետրոսյան, Ելույթ ՀՀ

Գերագույն խորհրդի նիստում; Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում): Վերոնշյալ իրադարձությունները, ապա նաև Թուրքիայի կողմից ի համերաշխություն Ադրբեջանի՝ Հայաստանին պարտադրված շրջափակումն ու սպառնալիքները տրամաբանական, խոսույթային խնդիր էին ստեղծում Էլիտայի նման դիրքորոշման հանրային լեգիտիմացիայի համար (Astourian 31; Uhiig 51): Մինչև նոր նորմը փորձ էր անում հաղթահարել պատմական կնճիռները, Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքականությունը բերում էր նրան, որ «հայերի մտքում ադրբեջանցիները, որոնք ռասայով, լեզվով և մշակույթով կապված էին թուրքերին, դարձան այն նույն անսիրտ մարդիկ, ովքեր մասնակցել էին 1915 թ. Ցեղասպանությանը» (Hovannisian, Historical Memory and Foreign Relations 241; MacDougall 174-175): Թեև այդ Էլիտան մինչև կառավարման ավարտը հավատարիմ մնաց Հայաստանի շահերի նման ընթերցմանը, Թուրքիայի սպառնալից քաղաքականությունը ստիպում էր փոխել առնվազն Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքը՝ վերահաստատելով հին, «մերժված» նորմը: Չուզահեռաբար հիմնվելով Ռուսաստանի դեմոկրատացման հետագծի վրա՝ կառավարող Էլիտան վստահ էր վերջինիս մոտ կայսերական հավակնությունների բացակայության վրա (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Իզվեստիա» թերթին)՝ մինչև իսկ կարծելով, որ «Ռուսաստանը, զբաղված լինելով իր ներքին խնդիրներով, վերջիվերջո կարող է հեռանալ այս երկրամասից» (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում): Սակայն Էլիտաների ընկալումներում Ռուսաստանի հետ կապերի խորացումն ու Մոսկվայի դերը տարածաշրջանում հիմնված էին մի քանի պատկերացումների վրա: Առաջին՝ Ռուսաստանը առնվազն անկախության առաջին տարիներին չունեի մշակված երկարաժամկետ քաղաքականություն (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Օգոնյոկ» ամսագրին), բայց եթե անգամ Ռուսաստանը չունեի տարածաշրջանային ծավալապաշտական հավակնություններ, ամեն դեպքում այն առնվազն դեմ էր իր նախկին կայսերական տարածքներ այլ ուժերի ներթափանցմանը, ինչը անխուսափելի կլինեի ըստ Տեր-Պետրոսյանի, եթե տարածաշրջանում առաջանար ուժային վակուում (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում; Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Նովյոյե Վրեմյա» շաբաթաթերթին): Երկրորդ՝ Էլիտան ուներ այն համոզմունքը, որ թեև Ռուսաստանի կարողություններն ու ուշադրությունը դեռևս գերկենտրոնացված էին սեփական ներքին խնդիրների վրա, սակայն դրանց հաղթահարումից հետո ՌԴ-ն վերադառնալու էր տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդմանը: (Aberg and Terzyan 157; Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Օգոնյոկ» ամսագրին): Երրորդ՝ հատկապես Թուրքիայի կողմից իրական սպառնալիքի բարձրաձայնումից հետո Էլիտայի համար ակնհայտ էր դառնում միայնակ դրան դիմակայելու անհնարինությունը և անվտանգային վակուումի առաջացման անընդունելիությունը (այստեղ ՀՀ և ՌԴ շահերը համընկնում էին) և ԱՊՀ-ն սկսում էր դիտարկվել որպես անվտանգության թեև թերի, սակայն կարևոր երաշխիք (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Նովյոյե Վրեմյա» շաբաթաթերթին): Այսպիսով՝ նկատվում է ընկալման փոփոխություն, որն ի սկզբանե անհնարին էր համարում անվտանգային երաշխիքների ապահովումը՝ «հույս դնելով թեկուզ հզոր ու ազդեցիկ, բայց հեռավոր պետությունների՝ Ռուսաստանի, Եվրոպայի կամ Միացյալ Նահանգների վրա» (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում), և առաջնահերթություն էր տալիս հարևանների հետ հարաբերությունների կարգավորմանը: Չորրորդ՝ պատերազմող երկրի համար ռազմական կարողություններ կուտակելու հրամայականը մղում էր Հայաստանում տեղակայված նախկին ԽՍՀՄ դիվիզիաների «ազգայնականացմանը», սակայն ի տարբերություն Ադրբեջանի, որը դա արեց Մոսկվայի հետ առճակատման գնալու միջոցով, Երևանն ուղիղ բանակցությունների միջոցով ժառանգեց երկու դիվիզիաները՝ մյուսին հետագայում տալով ռազմաբազայի կարգավիճակ, քանի որ կառավարող Էլիտան անընդունելի էր համարում Հայաստանի փխրուն

անվտանգության պայմաններում Ռուսաստանի հետ առճակատման գնալը (Տեր-Պետրոսյան, Հանդիպում լրագրողների հետ): Ռազմական և անվտանգության հարցում հարաբերությունների նման զգուշավորությունը ձևավորվեց և հետագայում մեծամասամբ պահպանվեց որպես ընդունված նորմ: Ինչպես ձևակերպել է Տեր-Պետրոսյանը և պետականության ամբողջ ընթացքում բաց կամ փակ ձևով արտահայտվել է ՀՀ արտաքին քաղաքականության մեջ՝ «Մենք կարո՞ղ էինք վտանգել Ռուսաստանի հետ ունեցած մեր բարեկամությունը՝ գտնվելով, մեղմ ասած, ոչ այնքան նպաստավոր աշխարհագրական միջավայրում:» (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 5-րդ համագումարում): Հինգերորդ՝ կար գիտակցում, որ ԱՊՀ-ն Հայաստանի համար դեռևս տնտեսական անհրաժեշտություն է, քանի որ հետխորհրդային պետությունների համար կարևոր էին տնտեսական միութենական շղթաների կապերը և այն արձանագրումը, որ ԱՊՀ-ից դուրս հայկական արտադրությունը դեռևս մրցունակ լինել չի կարող (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Պոլիտիկ Էստերնասիոնալ» հանդեսին): Սակայն հետխորհրդային տարածքի բազմակողմ կառույցների հանդեպ առկա էր որոշակի վերապահում, փոխարենը՝ հայ-ռուսական երկկողմ հարթությանը տրվում էր առաջնահերթություն (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Նովոյե Վրեմյա» շաբաթաթերթին): Ամեն դեպքում, կառավարող էլիտայի խոսույթում բացակայում են ՌԴ-ից կախվածության կամ ասիմետրիկ հարաբերությունների վերաբերյալ անհանգստությունները և նշվում է ճնշումների բացակայության մասին (Փափագյան)՝ համարելով, որ այդ հարաբերությունները շահում են Հայաստանում հակառուսականության բացակայությունից (ինչը տարածված երևույթ էր այլ հետխորհրդային պետություններում (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Պոլիտիկ Էստերնասիոնալ» հանդեսին)), ինչպես նաև նախագահներ Տեր-Պետրոսյանի ու Ելցինի անձնական հարաբերություններից ու ընդհանուր ժողովրդավարական արժեքներից (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 5-րդ համագումարում): Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմն աչքի էր ընկնում նաև արտաքին ուղիղ սպառնալիքի՝ Արցախյան հարցում Ադրբեջանի դիրքորոշման ուրույն ընթացմամբ: Նախ պետք է նշել, որ թեև Տեր-Պետրոսյանը պատերազմում հաղթանակած հայկական կողմի ղեկավարն էր, նրա ընկալումներում բացակայում էր ռազմական հաղթանակի բացարձակայնացումը, այն որպես քաղաքական վերջնական հաղթանակի ներկայացումը: Կար վստահություն, որ հենց Ադրբեջանը զգա իր ռազմական առավելությունը, ապա անմիջապես կվերսկսի պատերազմը (Տեր-Պետրոսյան, Հարցազրույց «Պոլիտիկ Էստերնասիոնալ» հանդեսին): ՀՀ Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսը): Ըստ Տեր-Պետրոսյանի՝ հակամարտության լուծման պատեհ պահը իր նախագահության վերջին ժամանակահատվածն էր, քանի որ կար վստահություն, որ արդեն մեկ-երկու տարուց ուժերի հավասարակշռությունը փոխվելու էր հօգուտ Ադրբեջանի (Տեր-Պետրոսյան, Պատերազմ, թե՛ խաղաղություն): Այս վստահությունը պայմանավորված էր թե՛ Ադրբեջանի կարողությունների սպասվող զարգացմամբ, թե՛ հայկական կարողությունների՝ հակամարտության լուծված չլինելու պատճառով ի հայտ եկող սահմանափակումներով (Տեր-Պետրոսյան, Ելույթ Հայոց համազգային շարժման 7-րդ համագումարում): Հատկանշական է, որ Տեր-Պետրոսյանը բազմիցս, անգամ Ռուսաստանի հետ Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի կնքումից հետո պնդում էր, որ ա) Արցախի հարցում Հայաստանը դաշնակիցներ չունի (Տեր-Պետրոսյան, Պատերազմ, թե՛ խաղաղություն), բ) Արցախի անվտանգության միակ երաշխավորը Հայաստանն է, (Տեր-Պետրոսյան, Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում), գ) ՌԴ-ն երբեք չի ճանաչելու Արցախի անկախությունը, քանի որ իր հերթին ունի «քսան Ղարաբաղ» (Տեր-Պետրոսյան, Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում), դ) Հայաստանը չի դառնալու «Ռուսաստանի Իսրայելը»՝ ապահովելով համապատասխան անվտանգային երաշխիքներ (Տեր-Պետրոսյան, Պատերազմ, թե՛ խաղաղություն), ե)

պայմանավորված կասախական նավթի գործունով՝ Ռուսաստանը ձգտելու է Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման, որի դեպքում «Հայաստանը կորցնելու է Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առավելությունը» (Տեր-Պետրոսյան, Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում), գ) Ռուսաստանն ինքն է հակամարտության լուծման հարցում համերաշխ արևմտյան՝ այդ ընթացքում պետությունների տարածքային ամբողջականությունը սատարող դիրքերին (Տեր-Պետրոսյան, Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում):

Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման շրջանը կարելի է համարել ՀՀ արտաքին հարաբերություններում նորմերի ձևավորման շրջան, իսկ դրա ընթացքում ու հատկապես դրա ավարտը պայմանավորող քննարկումները (տե՛ս հաջորդիվ)՝ առ արտաքին քաղաքականության սկզբունքները, միջազգային կարգը, սպառնալիքներն ու դաշինքային քաղաքականությունը վկայում են, որ Տեր-Պետրոսյանի գլխավորած կառավարող Էլիտային չհաջողվեց սեփական տեսլականը հիմնավորել որպես նորմ: Իսկ ինչ մասնավորապես վերաբերում է թուրքական սպառնալիքը չեզոքացնելու միջոցով ռուսական կամ որևէ այլ երրորդ ուժի կողմնորոշումից հրաժարվելու նախնական քաղաքականությանը, ապա դրա Էվոլյուցիան լավագույնս ներկայացնում է Ալլա Միրզոյանից հետևալով մեջբերումը. «1997 թ. նոյեմբերին Ռուսական դեսպանատան նոր շենքի բացման արարողության ժամանակ արված ելույթում Լևոն Տեր-Պետրոսյանը շարադրեց իր նախնական՝ «300-ամյա սխալը» ուղղելու նպատակից լիակատար շրջադարձը, հայտարարելով, որ «գործնականում վերջին մի քանի տարիներին երկկողմ հարաբերությունների բարելավման համար արվել է այնքան, որքան արվել է նախկինում հայ-ռուսական կապերի 300 տարիների ընթացքում¹»» (Mirzoyan 39):

Նորմերի թեստավորման, վերափոխման և հաստատման փուլ

Այն հիմնական նորմերը, որոնցով առաջնորդվում էր Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած Էլիտան և որոնց հետ սկզբունքային անհամաձայնության մեջ էր միցակից, ապա հաջորդ կառավարող Էլիտան, արտացոլված են Անվտանգության խորհրդի 1998 թ. ընդլայնված նիստի ընթացքում նախագահի ելույթում (Avetisyan 56-58): Օգտագործելով Տեր-Պետրոսյանի բառապաշարը՝ վերջինիս հրաժարականի արդյունքում խաղաղության կուսակցությանը (Տեր-Պետրոսյան, հրաժարականի հայտարարությունը) փոխարինում է հակադիր կուսակցությունը, որն ընտրություններից հետո արդեն ֆորմալ կերպով գլխավորում է Ռոբերտ Քոչարյանը: Կառավարող այս Էլիտայի առանցքային նորմատիվ ընկալումների տարբերությունը Արցախի հարցում ստատուս-քվոյի պահպանման իրոգործելիությունը և առավել լավ պայմաններով հարցի կարգավորումն էր: Ըստ Էլիտայի ներկայացուցիչներ Վազգեն Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի՝ Հայաստանի ներքին-կառուցվածքային որոշ խնդիրներ կարելի էր հաղթահարել արդյունավետ կառավարման, հարկային համակարգի բարելավման միջոցով (Սարգսյան; Astourian 51): Սարգսյանն ու Օսկանյանը կարծում էին, որ Հայաստանի տնտեսությունն արդեն հարմարվել է ադրբեջանաթուրքական շրջափակման պայմաններին, և դրա սահմանափակող ազդեցությունը այլևս «կենաց-մահու խնդիր» չէր: (Օսկանյան, հարցազրույցը Հայկական երկրորդ հետուստապիքին եւ «Նոր հարեւաններ» կայքին; Սարգսյան; Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 178): Ավելին՝ Քոչարյանի նախագահության առաջին ժամկետի տնտեսական հաջողությունները Օսկանյանին

¹ Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքի թարգմանությունը՝ ըստ հոդվածի հեղինակի:

թույլ էին տալիս մինչև իսկ պնդել, որ Հայաստանում ապագայի մասին բանավեճերը կենտրոնանում են ոչ թե Արցախի, այլ բնակչության կենսամակարդակի վրա (Օսկանյան, Ելույթը «Հարավային Կովկաս. Զաղաքական մարտահրավերներ եւ զարգացման հեռանկարներ» միջազգային համաժողովում): Բացի այդ, ըստ Էլիտայի՝ կառուցվածքային թուլությունների կայուն հաղթահարման իրատեսական միջոցներ էին համարվում Սփյուռքի ռեսուրսների մոբիլիզացիան (Քոչարյան, Ելույթ Հայաստան-Սփյուռք համաժողովում; Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 111) և տնտեսական զարգացմանն ուղղված արտաքին քաղաքականությունը (Օսկանյան, Ելույթը «Հարավային Կովկաս. Զաղաքական մարտահրավերներ եւ զարգացման հեռանկարներ» միջազգային համաժողովում): Սփյուռքի հետ կապերի վրա շեշտադրումը ընդգծում էր կառավարող Էլիտայի համար նախընտրելի այն նորմը, որը հենվում էր Էթնիկ ինքնության վրա՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը դարձնելով յուրատեսակ *raison d'état* (Barseghyan 411-412; Քոչարյան, Ելույթ Հայաստան-Սփյուռք համաժողովում): Տնտեսական աճի ապահովումը համարվում էր նաև Արցախյան հիմնախնդրի հաղթահարման վրա ազդող ուղիղ գործոն, որը կարևորվում էր Ադրբեջանի հետ մրցակցության համատեքստում (Քոչարյան, Հայաստանի տնտեսական կայունությունը մեծ դեր ունի Արցախյան խնդրի կարգավորման գործում): Ինչ վերաբերում է արտաքին սպառնալիքներին, սահմանափակումներին, ապա Թուրքիայի հարցում թեև հիմնականում շարունակվեց նույն՝ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանների բացմանն ուղղված քաղաքականությունը, սակայն Ցեղասպանության միջազգային ճանաչման արշավը արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձնելը էլ ավելի բարդացրեց երկխոսության հեռանկարը (Mirzoyan 90-93): Շրջադարձ կատարելով նախորդ Էլիտայի քաղաքականությունից՝ Ցեղասպանության հարցը արտաքին քաղաքական օրակարգ բերելը կառավարող Էլիտան հիմնավորում էր Հայաստանի ունեցած բարոյական պարտականությամբ, ցեղասպանությունների կանխարգելման միջազգային ջանքերին աջակցելու անհրաժեշտությամբ և այն համոզմամբ, որ նախորդիվ այդ հարցի դուրսթողումը, որը նպատակ ուներ չխանգարելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, որևէ արդյունք չէր տվել, հետևաբար չկար այն շարունակելու հիմնավորում (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 155-156): Թուրքիան շարունակում էր ընկալվել որպես տարածաշրջանային խոչընդոտ «անվտանգային շահերի, զարգացման ուղղությունների կամ եվրոպական ինտեգրման» հարցերում (Օսկանյան, Statement at Chatham House), ինչն ավելի էր սրվում Թուրքիայի վարած թշնամական քաղաքականության արդյունքում (Քոչարյան; Օսկանյան 152; Քոչարյան; Քոչարյան; Օսկանյան):

Գալով այս ամենի արտահայտմանը Քոչարյանի գլխավորած կառավարող Էլիտայի՝ Ռուսաստանի դերի մասին ընկալումներում, պետք է նշել, որ եթե Տեր-Պետրոսյանը կարծում էր, որ Ռուսաստանը վաղ թե ուշ «վերադառնալու» է տարածաշրջան ու իր միջազգային դերին, ապա այս վարչակազմի ընթացքում՝ 1998 թ.-ին, արդեն կար այն ընկալումը, որ «Ռուսաստանն արդեն գիտակցում էր, որ շատ բան է զիջել ու կորցրել, որ ադպես չի կարող շարունակել և պետք է արդեն քայլեր անել վերականգնելու նախկին դիրքերը միջազգային թատերաբեմում» (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 81): Սա, ըստ Օսկանյանի, արտահայտվում էր Ռուսաստանի կողմից արտաքին դերակատարներին դուրս թողնելու, տարածաշրջանային կազմակերպությունների ու իր միջազգային վարկի զարգացման և արտերկրում ռուսական կազմակերպությունների տնտեսական ներդրումների ու շահութաբերությունն ապահովելու քաղաքականությամբ (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 83-84):

Սպառնալիքների բալանսավորման տեսանկյունից հայ-ռուսական անվտանգային համագործակցությանը տրվում է թուրքական սպառնալիքը բալանսավորելու դեր (Շուգարյան): Մինչդեռ արցախյան հարցում սպառնալիքի պարագայում, ըստ կառավարող Էլիտայի, ռուս-ադրբեջանական հարաբերությունների բարելավումը դրական կարող էր ազդել հակամարտության կարգավորման վրա (Քոչարյան, Совместная ПК Р. Кочаряна и Г. Алиева): Բացի այդ, ի տարբերություն Տեր-Պետրոսյանի՝ Էլիտան ուներ ընկալում, որ հնարավոր է (առնվազն մինչ Ադրբեջանի նավթային ցատկը) պահպանել ռազմական հավասարակշռությունը (Սարգսյան): Թեև ՌԴ դիրքորոշումը առ այս, որ հայկական կողմը պետք է հրաժարվի ԼՂԻՄ-ից դուրս տարածքներից, բավական համոզիչ կերպով ներկայացվել էր այս Էլիտային (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 181), վարչակազմը նպատակ էր հետապնդում ապացուցել ռուս գործընկերներին, որ նման ելքը կթուլացնի հայկական կողմերի դիրքերը տարածաշրջանում, իսկ տարածաշրջանում թույլ դաշնակից ունենալը կհակասեր հենց Ռուսաստանի շահերին (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 181-183): Ռուսաստանի հետ համագործակցության մեջ հիմնական անվտանգային ուղղությունից բացի նկատվում է նաև վերջինիս՝ Հայաստանում տնտեսական դերի աճի ու ներուժի ընկալում, որը երկրորդ, նախագահի կառավարման ընթացքում արտահայտվել է ռուսական մեծ ձեռնարկությունների՝ հայկական տնտեսության մեջ ռազմավարական նշանակության ոլորտներ մուտքով, որոնց համար, ըստ Քոչարյանի, մեկնարկային կետ էր ծառայել «գույք-պարտքի դիմաց» գործարքը (Քոչարյան, այցը Ռուսաստան 13-15.05.2004): Սակայն այդ վարչակազմի կողմից նպատակահարմար չի համարվել Մաքսային միության անդամակցությունը՝ համարելով այն սահմանափակող գործոն Հայաստանի՝ ազատականացման ձգտող տնտեսության համար (Քոչարյան, Телемост Ереван-Москва): Մինչդեռ ունենալով Ռուսաստանի հետ երկկողմ փոխադարձ պաշտպանության համաձայնագիր՝ 2002 թ.-ին Հայաստանը անդամակցել է ՀԱՊԿ-ին՝ անվտանգության հարցում առաջնորդվելով «ինչքան շատ՝ այնքան լավ» (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 93) սկզբունքով:

Այսպիսով՝ երկկողմ համագործակցության խորացումը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական ոլորտներում բարձրացրել էր Ռուսաստանի՝ ռազմավարական գործընկերոջ ընկալումը կառավարող Էլիտայի շրջանում (Kotchikian 180-181), որը համարվում էր ամենականխատեսելի գործընկեր (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 86): Սակայն հարաբերությունների ասիմետրիայի նման խորացումը կարիք ուներ այլ ուղղություններով բալանսավորման, ինչն էլ բերեց Հայաստանի թերևս անկախության ողջ ընթացքում դավանած արտաքին քաղաքական դոկտրինի՝ կոմպլեմենտարիզմի ձևակերպմանը: Ըստ կոմպլեմենտարիզմի՝ ինչպես այն ձևակերպում է Վարդան Օսկանյանը, մենք «պարտավորված չենք ընտրելու ընկերների միջև, որ Հայաստանը կարող է լինել այն վայրը, որտեղ Ռուսաստանի, Եվրոպական Միության ու Միացյալ Նահանգների կամ որևէ երկու ենթադրաբար մրցակից երկրների՝ մասամբ համընկնող շահերը կարող են բավարարվել [...], որ նրանց հակադրվող շահերը երբևէ չեն շահարկվի՝ մեկին մյուսի դեմ հանելով:» (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 82): Սակայն առկա է նաև հստակ գիտակցում, որ Հայաստանի արտաքին քաղաքականության մանևրունակությունը կախված է ոչ այնքան Հայաստանից կամ հայ-ռուսական հարաբերություններից, որքան Արևմուտք-Ռուսաստան հարաբերություններից (Քոչարյան, Ելույթը Դավոսում; Օսկանյան, Statement at Chatham House): Այս ընկալումը հատկապես պարզ է արտահայտված 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ քաղաքականության փոփոխման հարացույցում: Ըստ Օսկանյանի՝ այդ փուլում ԱՄՆ-ը պակաս զգայուն ու հարմարվող էր այն հանգամանքների հանդեպ, որոնք չէին

ծառայում իր ազգային շահերին, ինչը բարդացնում էր ՀՀ արտաքին քաղաքականությունը (Օսկանյան, Փոքր երկրի մեծ մարտահրավերները 103-104):

Ամփոփում

Այսպիսով՝ անկախության ակունքներից իսկ Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում առկա է եղել սեփական դերի, արտաքին սպառնալիքների և դրանք բալանսավորելու վերաբերյալ ընդունելի նորմերի մրցակցություն: Մեկնակետում ունենալով նպատակ վերանայել և շրջել վերջին 300 տարիների հայ արտաքին քաղաքական մտքի պոստուլատները՝ Ռուսաստանի միջոցով Թուրքային բալանսավորելու սկզբունքը՝ «Ղարաբաղ» շարժումը, ապա նաև կառավարող Էլիտան բախվեց մի շարք խոչընդոտների, որոնք ձախողեցին «երրորդ ուժի բացառման» օրենքը և թույլ չտվեցին այդ նորմի լիարժեք ձևավորումը: Այդ հիմնական խոչընդոտներից էին ադրբեջանաթուրքական սպառնալիքի և թշնամական քաղաքականության շարունակականությունը, Հայաստանի քաղաքական համակարգում այդ նորմի հիմադրույթներին հակառակ տրամադրված ուժերի առավելությունը, անվտանգային վակուումի առաջացման վտանգն ու անթույլատրելիությունը նույն Էլիտայի ընկալումներում: Ռուսաստանի ընկալումը որպես կայսերական պատմությամբ տարածաշրջանային տերություն հաստատվեց որպես նորմ՝ լեգիտիմ համարելով վերջինիս տարածաշրջանային շահերը և դրանց հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը:

Իշանափոխությունից հետո արդեն կառավարող նոր Էլիտայի մոտ, ըստ որի գնահատման՝ հայ-ադրբեջանական մրցակցության մեջ Հայաստանը ունակ էր բալանսավորել անվտանգային սպառնալիքները, աստիճանաբար նկատվում է այդ սպառնալիքի աճի մասին ընկալումը, որն իր գագաթնակետին է հասնում Իլիամ Ալիևի կառավարման և ադրբեջանական նավթի եկամտաբերության աճի տարիներին: Էլիտայի ընկալումների հավաքական ամբողջության արդյունք է 2007 թ.-ին ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությունը (Mfa.am), որի մեջ արտացոլվում են արտաքին ու ներքին սպառնալիքների, դրանց հաղթահարման այնպիսի մոտեցումներ, որոնք մեծապես համապատասխանում են Հայաստանի անվտանգության նեոռեալիստական վերլուծությանը: Թեև Արցախյան հիմնախնդիրը արդեն իսկ խիստ անհավանական էր դարձրել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարը, այս վարչակազմի կողմից Ցեղասպանության միջազգային ճանաչման արշավի հանձնառումը էլ ավելի խորացրեց երկկողմ հարաբերությունների (կամ դրանց բացակայության) ճգնաժամը՝ հետաձգելով թուրքական սպառնալիքի մարումը: Այսպիսով՝ սկսվում էր ուրվագծվել պահպանողական արտաքին քաղաքական նորմի ձևավորումը, որտեղ փոխզիջումների ընդունելիության շեմը բարձրանում է, և Հայաստանը դառնում է խիստ արտահայտված պրո-ստատուս-քվո ուժ: Տարածաշրջանային ստատուս-քվոյի պահպանման համատեքստում էլ ավելի խիստ է արտահայտվում Ռուսաստանի հանդեպ դաշնակցային ընկալումը, և հարաբերությունների խորացման հրամայականը ձևավորվում է որպես նորմ: Սակայն հստակ է նաև գերկախվածության վտանգների մասին ընկալումը և դրանցից խուսափելու անհրաժեշտությունը, որն ակնհայտորեն կոմպլեմենտարիզմի ձևակերպման հիմնական շարժառիթներից է և վեր է հանում կառավարող Էլիտայի առավել մեծ գզայունությունը Ռուսաստան-Արևմուտք մրցակցությանը:

Օգտագործված գրականություն

1. Aberg, John H.S. and Aram Terzyan. "Structure or agency? Explaining Armenia's foreign policy evolution." *Eastern Journal of European Studies* 6 2018: 151-172. <http://ejes.uaic.ro/articles/EJES2018_0901_ABE.pdf>.
2. Astourian, Stephan H. *From Ter-Petrosian to Kocharian: Leadership Change in Armenia*. Berkeley: University of California, 2000.
3. Avetisyan, Sos. *The Hunchback of Caucasus: Armenia's "Stateness" issue and its post-war democratization, MPhil thesis*. Oxford: University of Oxford, 2016.
4. Barseghyan, Kristine. "Rethinking Nationhood: Post-Independence Discourse on National Identity in Armenia." *Polish Sociological Review*, 144 (2003): 399-416.
5. Cheterian, Vicken. "The Uses and Abuses of History: Genocide and the Making of the Karabakh Conflict." *Europe-Asia Studies* 70.6 (2018): 886-887.
6. Finnemore, M. and K. Sikkink. "Taking stock: The constructivist research program in international relations and comparative politics." *Annual Review of Political Science* 4 (2011): 391-416.
7. Hovannisian, Richard. "Historical Memory and Foreign Relations: The Armenian Perspective." Starr, Frederick S. *The Legacy of History in Russia and the New States of Eurasia*. Armonk, N.Y.: M.E. Sharpe, 1994. 237-276.
8. —. *The Armenian genocide : cultural and ethical legacies*. New Brunswick: Transaction Publishers, 2007.
9. Jepperson, Ronald L., Alexander Wendt and Peter J. Katzenstein. "Norms, Identity, and Culture in National Security." Katzenstein, Peter J. *The Culture of National Security: Norms and Identity in World Politics*. New York: Columbia University Press, 1996. 8-43. <https://edisciplinas.usp.br/pluginfile.php/5237136/mod_folder/content/0/Japersen%20et%20al%20.pdf?forcedownload=1>.
10. Kotchikian, Asbed. *The Dialectics of Small States: Foreign Policy Making in Armenia and Georgia*. Boston: Boston University Graduate School of Arts and Sciences, 2006.
11. MacDougall, James. *Post-Soviet Strategic Alignment: The Weight of History in the South Caucasus*. Washington D.C.: A Dissertation submitted to the Faculty of the Graduate School of Arts and Sciences of Georgetown University, 2009.
12. Mfa.am. "Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն." 26 1 2007. Mfa.am. <<https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrinarm.pdf>>.
13. Mirzoyan, Alla. *Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics*. New York: Palgrave Macmillan, 2010.
14. Mouritzen, Hans. "Combining 'incompatible' foreign policy explanations: how a realist can borrow from constructivism." *Journal of International Relations and Development* 20 (2017): 631–658.
15. Price, Robert. "Detecting ideas and their effects." Robert Goodin, Charles Tilly. *The oxford handbook of contextual political analysis*. Oxford: Oxford University Press, 2006. 252-265).
16. Rogers, Zac. *Realism and Constructivism as Compatible Epistemologies*. 30 10 2013. <<https://www.e-ir.info/2013/10/30/realism-and-constructivism-as-compatible-epistemologies/>>.

17. Sterling-Folker, Jennifer. "Realist Environment, Liberal Process, and Domestic-Level Variables." *International Studies Quarterly* 41.1 (1997): 1–25.
18. Suny, Ronald Grigor. *Looking toward Ararat: Armenia in Modern History*. Bloomington: Indiana University Press, 1993.
19. Theys, Sarina. "Constructivism." McGlinchey, Stephen, Rosie Walters and Christian Scheinpflug. *International Relations Theory*. Bristol: E-International Relations Publisher, 2017. 36-41.
20. Uhlig, Mark. "The Karabakh War." *World Policy Journal* 10.4 (1994): 47-52. <<https://www.jstor.org/stable/40209334>>.
21. Շուկարյան, Ռուբեն. *Globalization in the Context of Armenia՞s Foreign Policy Armenia on the Way to Europe International Conference*. 22 10 2003. 12 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/10/22/shugarian/1493>>.
22. Սարգսյան, Վազգեն. *Վազգեն Սարգսյանի նամակը Լևոն Տեր-Պետրոսյանին*. 1 10 1997. 3 8 2021. <<https://www.aravot.am/2008/02/09/329965/>>.
23. Տեր-Պետրոսյան, Լևոն. *Ելույթ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում*. 8 1 1998. 17 6 2021. <<https://bit.ly/3Bvbu5c>>.
24. —. *Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում*. 23 10 1990. 1 10 2021. <<https://bit.ly/3BylFVt>>.
25. —. *Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում*. 2 4 1992. 2 8 2021. <<https://bit.ly/2YE6FYY>>.
26. —. *Ելույթ Հայոց համազգային շարժման 5-րդ համագումարում*. 28 6 1993. 13 5 2021. <<https://bit.ly/2YztjBE>>.
27. —. *Ելույթ Հայոց համազգային շարժման 7-րդ համագումարում*. 26 12 1995. 16 7 2021. <<https://bit.ly/2YzB9ez>>.
28. —. *Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հայտարարությունը*. 4 2 1998. 19 2 2021. <<https://bit.ly/3FEFCxi>>.
29. —. *Հանդիպում լրագրողների հետ՝ նախագահական երդման առաջին տարեդարձի առթիվ*. 14 11 1992. 12 5 2021. <<https://bit.ly/3uXQAcz>>.
30. —. *Հարցազրույց «Իզվեստիա» թերթին*. 6 2 1992. 30 5 2020. <<https://bit.ly/3AAfNeo>>.
31. —. *Հարցազրույց «Նովոյե Վրեմյա» շաբաթաթերթին*. 7 10 1997. 26 3 2021. <<https://bit.ly/3v32npR>>.
32. —. *Հարցազրույց «Օգոնյոկ» ամսագրին*. 14 4 1992. 21 6 2021. <<https://bit.ly/3mGf0U7>>.
33. —. *Հարցազրույց ֆրանսիական «Պոլիտիկ Էնտերնասիոնալ» հանդեսին*. 9 5 1997. 12 6 2021. <<https://bit.ly/3BpzrLb>>.
34. —. *Մոսկվան այլընտրանք չունի*. 28 1 1990. 19 4 2021. <<https://bit.ly/33jJHo3>>.
35. —. *Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն*. *Երջանալու պահը*. 1 11 1997. 11 6 2021. <<https://bit.ly/2Wf9Lz8>>.
36. Փափազյան, Վահան. *Վահան Փափազյան. 1994թ.-ին զինադադարը հաստատեցինք մեզ համար լավագույն պայմաններով* Արամ Արարատյան. 22 5 2014. 17 7 2021. <<https://mediamax.am/am/news/special-file/10315/>>.
37. Բոչարյան, Ռոբերտ. *#золотойархив - Совместная ПК Р. Кочаряна и Г. Алиева | ключевые темы | Карабах - Геноцид армян*. 25 1 2001. 2 5 2021. <https://www.youtube.com/watch?v=_qHTn65ykiw&t=539s>.

38. —. *Speech by His Excellency Robert Kocharian President of the Republic of Armenia At the Plenary Meeting of the Council of the European Union.* 22 6 1999. 10 6 2021. <<https://www.mfa.am/en/speeches/1999/06/22/coe/1602>>.
39. —. *Statement By President Robert Kocharian On The Occasion Of The Memorial Of The Victims Of The Armenia Genocide.* 24 4 1999. 23 5 2021. <<https://www.mfa.am/en/speeches/1999/04/24/rk/1597>>.
40. —. *Телемост Ереван-Москва с президентом Р.Кочаряном 2000г.* 29 5 2000. 30 8 2020. <<https://www.youtube.com/watch?v=Wp3K-rtgkSA&list=PLUO718-u9r202RjITGX9r3y6UgODoZAYd&index=4>>.
41. —. *Ելույթ Հայաստան-Սփյուռք համաժողովում.* 27 5 2002. 18 7 2021. <<https://www.youtube.com/watch?v=8jnkxcpXjTc>>.
42. —. *Հայաստանի տնտեսական կայունությունը մեծ դեր ունի Արցախյան խնդրի կարգավորման գործում. Ռոբերտ Զոհարյան.* 2002. 25 7 2021. <<https://www.youtube.com/watch?v=5xq6guARi-M>>.
43. —. *Ռոբերտ Զոհարյանի այցը Ռուսաստան 13-15.05.2004.* 14 5 2004. 3 4 2021. <<https://www.youtube.com/watch?v=T6IWnJ2PkQY>>.
44. —. *Ռոբերտ Զոհարյանի ելույթը Դավոսում.* 1999. 26 8 2021. <<https://www.youtube.com/watch?v=FOffzokT-0M>>.
45. —. *Ռոբերտ Զոհարյանի հարցուպատասխանը ԵտեՎ-ում Մաս 11.* 23 6 2004. 18 8 2020. <<https://www.youtube.com/watch?v=S7MDFavWI7k>>.
46. Օսկանյան, Վարդան. *Minister Gives Pre-Election Interview Armenia in the Region, Interview with Mr. Vartan Oskanian, MFA by Vahan Hovhannisian, Journalist, H1 Television Or Վահան Հովհաննիսյան.* 8 2 2003. 19 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/02/08/preelectioninterview/1482%D6%89>>.
47. —. *Minister Oskanian Addresses John Smith Fellows.* 20 1 2003. 2 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/01/20/fellowshipprogram/1481>>.
48. —. *Speech By Vartan Oskanian Minister Of Foreign Affairs Republic Of Armenia At The International Conference On Prospects For Regional And Transregional Cooperation.* 28 9 2000. 19 8 2020. <<https://www.mfa.am/en/speeches/2000/09/28/vo/1454>>.
49. —. *Statement by Vartan Oskanian Minister Of Foreign Affairs Of The Republic Of Armenia.* 20 5 2000. 14 1 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2000/05/25/eapc/1445>>.
50. —. *Statement by Vartan Oskanian Minister of Foreign Affairs of the Republic of Armenia at Chatham House.* 16 4 2005. <<https://www.mfa.am/en/speeches/2004/04/16/vo/1506>>.
51. —. *ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի ելույթը «Հարավային Կովկաս. Զարգացման մարտահրավերներ եւ զարգացման հեռանկարներ» միջազգային համաժողովում.* 11 12 2003. 19 7 2021. <<https://www.mfa.am/hy/speeches/2003/11/12/oskanian/1496>>.
52. Օսկանյան, Վարդան. *ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի հարցազրույցը Հայկական երկրորդ հետուստապիլիքին եւ «Նոր հարեւաններ» կայքին «Նոր հարեւաններ» կայք.* 21 12 2006. 1 8 2021. <<https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2006/12/21/vo/1645>>.
53. —. *Փոքր երկրի մեծ մարտահրավերները (նախարարի օրագրից).* Երևան: «Անտարես» հրատարակչություն, 2013.

Works Cited

1. Aberg, John H.S. and Aram Terzyan. "Structure or agency? Explaining Armenia's foreign policy evolution." *Eastern Journal of European Studies* 6 2018: 151-172. <http://ejes.uaic.ro/articles/EJES2018_0901_ABE.pdf>.
2. Astourian, Stephan H. *From Ter-Petrosian to Kocharian: Leadership Change in Armenia*. Berkeley: University of California, 2000.
3. Avetisyan, Sos. *The Hunchback of Caucasus: Armenia's "Stateness" issue and its post-war democratization*, MPhil thesis. Oxford: University of Oxford, 2016.
4. Barseghyan, Kristine. "Rethinking Nationhood: Post-Independence Discourse on National Identity in Armenia." *Polish Sociological Review*, 144 (2003): 399-416.
5. Cheterian, Vicken. "The Uses and Abuses of History: Genocide and the Making of the Karabakh Conflict." *Europe-Asia Studies* 70.6 (2018): 886-887.
6. Finnemore, M. and K. Sikkink. "Taking stock: The constructivist research program in international relations and comparative politics." *Annual Review of Political Science* 4 (2011): 391-416.
7. Hovannisian, Richard. "Historical Memory and Foreign Relations: The Armenian Perspective." Starr, Frederick S. *The Legacy of History in Russia and the New States of Eurasia*. Armonk, N.Y.: M.E. Sharpe, 1994. 237-276.
8. —. *The Armenian genocide : cultural and ethical legacies*. New Brunswick: Transaction Publishers, 2007.
9. Jepperson, Ronald L., Alexander Wendt and Peter J. Katzenstein. "Norms, Identity, and Culture in National Security." Katzenstein, Peter J. *The Culture of National Security: Norms and Identity in World Politics*. New York: Columbia University Press, 1996. 8-43. <https://edisciplinas.usp.br/pluginfile.php/5237136/mod_folder/content/0/Japersen%20et%20al%20.pdf?forcedownload=1>.
10. Kotchikian, Asbed. *The Dialectics of Small States: Foreign Policy Making in Armenia and Georgia*. Boston: Boston University Graduate School of Arts and Sciences, 2006.
11. MacDougall, James. *Post-Soviet Strategic Alignment: The Weight of History in the South Caucasus*. Washington D.C.: A Dissertation submitted to the Faculty of the Graduate School of Arts and Sciences of Georgetown University, 2009.
12. Mfa.am. "Hayastani Hanrapetowt'yan azgayin anvtangowt'yan r'azmavarowt'yown." ["The national security strategy of the Republic of Armenia"] 26 1 2007. Mfa.am. <<https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrinarm.pdf>>. (In Armenian)
13. Mirzoyan, Alla. *Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics*. New York: Palgrave Macmillan, 2010.
14. Mouritzen, Hans. "Combining 'incompatible' foreign policy explanations: how a realist can borrow from constructivism." *Journal of International Relations and Development* 20 (2017): 631–658.
15. Price, Robert. "Detecting ideas and their effects." Robert Goodin, Charles Tilly. *The oxford handbook of contextual political analysis*. Oxford: Oxford University Press, 2006. 252-265).
16. Rogers, Zac. *Realism and Constructivism as Compatible Epistemologies*. 30 10 2013. <<https://www.e-ir.info/2013/10/30/realism-and-constructivism-as-compatible-epistemologies/>>.

17. Sterling-Folker, Jennifer. "Realist Environment, Liberal Process, and Domestic-Level Variables." *International Studies Quarterly* 41.1 (1997): 1–25.
18. Suny, Ronald Grigor. *Looking toward Ararat: Armenia in Modern History*. Bloomington: Indiana University Press, 1993.
19. Theys, Sarina. "Constructivism." McGlinchey, Stephen, Rosie Walters and Christian Scheinpflug. *International Relations Theory*. Bristol: E-International Relations Publisher, 2017. 36-41.
20. Uhlig, Mark. "The Karabakh War." *World Policy Journal* 10.4 (1994): 47-52. <<https://www.jstor.org/stable/40209334>>.
21. Shugaryan, R'uben. *Globalization in the Context of Armenia's Foreign Policy Armenia on the Way to Europe International Conference*. 22 10 2003. 12 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/10/22/shugarian/1493>>.
22. Sargsyan, Vazgen. *Vazgen Sargsyani namaky' Levon Ter-Petrosyanin*. [Vazgen Sargsyan's letter to Levon Ter-Petrosyan] 1 10 1997. 3 8 2021. <<https://www.aravot.am/2008/02/09/329965/>>. (In Armenian)
23. Ter-Petrosyan, Levon. *Eluyt' Anvtangut'yan xorhrdi y'ndlaynvac' nistum* [Speech at the enlarged session of the Security Council]. 8 1 1998. 17 6 2021. <<https://bit.ly/3Bvbu5c>>. (In Armenian)
24. —. *Eluyt' Hayastani Hanrapetut'yan Geraguyn xorhrdi nistum* [Speech at the sitting of the Supreme Council of the Republic of Armenia]. 23 10 1990. 1 10 2021. <<https://bit.ly/3BylFVt>>. (In Armenian)
25. —. *Eluyt' Hayoc hamazgayin sharjman 4-rd hamagumarum* [Speech at the 4th Congress of the Armenian National Movement]. 2 4 1992. 2 8 2021. <<https://bit.ly/2YE6FYY>>. (In Armenian)
26. —. *Eluyt' Hayoc hamazgayin sharjman 5-rd hamagumarum* [Speech at the 5th Congress of the Armenian National Movement]. 28 6 1993. 13 5 2021. <<https://bit.ly/2YztjBE>>. (In Armenian)
27. —. *Eluyt' Hayoc hamazgayin sharjman 7-rd hamagumarum* [Speech at the 7th Congress of the Armenian National Movement]. 26 12 1995. 16 7 2021. <<https://bit.ly/2YzB9ez>>. (In Armenian)
28. —. *Hayastani Hanrapetut'yan Naxagah Lewon Ter-Petrosyani hrajharakani haytararut'yuny'* [The resignation of the President of the Republic of Armenia Levon Ter-Petrosyan]. 4 2 1998. 19 2 2021. <<https://bit.ly/3FEFCxi>>. (In Armenian)
29. —. *Handipum Iragroghneri het` naxagahakan erdman ar'ajin taredard'i ar'tiv* [Meeting with journalists on the occasion of the first anniversary of the presidential oath]. 14 11 1992. 12 5 2021. <<https://bit.ly/3uXQAcz>>. (In Armenian)
30. —. *Harcazruyc «Izvestia» t'ert'in* [Interview with "Izvestia" newspaper]. 6 2 1992. 30 5 2020. <<https://bit.ly/3AAfNeo>>. (In Armenian)
31. —. *Harcazruyc «Novoye Vremya» shabat'at'erin* [Interview with "Novoye Vremya" weekly]. 7 10 1997. 26 3 2021. <<https://bit.ly/3v32npR>>. (In Armenian)
32. —. *Harcazruyc «O'gonyok» amsagrın* [Interview with "Ogonyok" magazine]. 14 4 1992. 21 6 2021. <<https://bit.ly/3mGf0U7>>. (In Armenian)
33. —. *Harcazruyc fransiakan «Politik e'nternasional» handesin* [Interview with the French "Political International" magazine]. 9 5 1997. 12 6 2021. <<https://bit.ly/3BpzrLb>>. (In Armenian)
34. —. *Moskvan ayly'ntranq chuni* [Moscow has no alternative]. 28 1 1990. 19 4 2021. <<https://bit.ly/33jJHo3>>.

35. —. Paterazm, t'e' xaghaghut'yun. Irjanalu pahy' [War or peace? the moment of getting serious]. 1 11 1997. 11 6 2021. <<https://bit.ly/2Wf9Lz8>>. (In Armenian)
36. P'ap'azyan, Vahan. Vahan P'ap'azyan. 1994t'.-in zinadadary' hastateciq mez hamar lavaguyn paymannerov Aram Araratyan [Vahan Papazyan. In 1994 we established the ceasefire on the best terms for us Aram Araratyan]. 22 5 2014. 17 7 2021. <<https://mediamax.am/am/news/special-file/10315/>>. (In Armenian)
37. Qocharyan, R'obert. #zolotojarhiv - Sovmestnaja PK R. Kocharjana i G. Alieva | kljuचेveye temy | Karabah - Genocid armjan [#gold archive - Joint PC of R. Kocharian and H. Aliyev | key topics | Karabakh - Armenian Genocide]. 25 1 2001. 2 5 2021. <https://www.youtube.com/watch?v=_qHTn65ykiw&t=539s>. (In Russian)
38. —. Speech by His Excellency Robert Kocharian President of the Republic of Armenia At the Plenary Meeting of the Council of the European Union. 22 6 1999. 10 6 2021. <<https://www.mfa.am/en/speeches/1999/06/22/coe/1602>>.
39. —. Statement By President Robert Kocharian On The Occasion Of The Memorial Of The Victims Of The Armenia Genocide. 24 4 1999. 23 5 2021. <<https://www.mfa.am/en/speeches/1999/04/24/rk/1597>>.
40. —. Telemost Erevan-Moskva s prezidentom R.Kocharjanom 2000g [Teleconference Yerevan-Moscow with President R. Kocharian 2000]. 29 5 2000. 30 8 2020. <<https://www.youtube.com/watch?v=Wp3K-rtgkSA&list=PLUO718-u9r202RjITGX9r3y6UgODOzAYd&index=4>>. (In Russian)
41. —. Eluyt' Hayastan-Sp'yur'q hamajhoghovum [Speech at the Armenia-Diaspora Forum]. 27 5 2002. 18 7 2021. <<https://www.youtube.com/watch?v=8jnkxcpjTc>>. (In Armenian)
42. —. Hayastani intesakan kayunut'yuny' mec' der uni Arcaxyan xndri kargavorman gorc'um [Armenia's economic stability has a great role in the settlement of the Artsakh problem]. R'obert Qocharyan. 2002. 25 7 2021. <<https://www.youtube.com/watch?v=5xq6guARI-M>>. (In Armenian)
43. —. R'obert Qocharyani aycy' R'usastan 13-15.05.2004 [Robert Kocharyan's visit to Russia]. 14 5 2004. 3 4 2021. <<https://www.youtube.com/watch?v=T6IWnJ2PkQY>>. (In Armenian)
44. —. R'obert Qocharyani eluyt'y' Davosum [Robert Kocharyan's speech in Davos]. 1999. 26 8 2021. <<https://www.youtube.com/watch?v=FOffzokT-OM>>. (In Armenian)
45. —. R'obert Qocharyani harcupatasxany' EXXV-um Mas 11 [Robert Kocharyan's question and answer session in PACE Part 11]. 23 6 2004. 18 8 2020. <<https://www.youtube.com/watch?v=S7MDFavWI7k>>. (In Armenian)
46. O'skanyan, Vardan. Minister Gives Pre-Election Interview Armenia in the Region, Interview with Mr. Vartan Oskanian, MFA by Vahan Hovhannisian, Journalist, H1 Television Or Vahan Hovhannisyan. 8 2 2003. 19 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/02/08/preelectioninterview/1482%D6%89>>.
47. —. Minister Oskanian Addresses John Smith Fellows. 20 1 2003. 2 7 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2003/01/20/fellowshipprogram/1481>>.
48. —. Speech By Vartan Oskanian Minister Of Foreign Affairs Republic Of Armenia At The International Conference On Prospects For Regional And Transregional Cooperation. 28 9 2000. 19 8 2020. <<https://www.mfa.am/en/speeches/2000/09/28/vo/1454>>.
49. —. Statement by Vartan Oskanian Minister Of Foreign Affairs Of The Republic Of Armenia. 20 5 2000. 14 1 2021. <<https://www.mfa.am/en/speeches/2000/05/25/eapc/1445>>.

50. —. Statement by Vartan Oskanian Minister of Foreign Affairs of the Republic of Armenia at Chatham House. 16 4 2005. <<https://www.mfa.am/en/speeches/2004/04/16/vo/1506>>.

51. —. HH AG naxarar Vardan O'skanyani elowyt'y' «Haravayin Kovkas. Qaghaqakan martahraverner ew zargacman her'ankarner» mijazgayin hamajhoghovowm [RA Foreign Minister Vartan Oskanian's speech "South Caucasus. Political Challenges and Development Perspectives "International Conference]. 11 12 2003. 19 7 2021. <<https://www.mfa.am/hy/speeches/2003/11/12/oskanian/1496>>. (In Armenian)

52. O'skanyan, Vardan. HH AG naxarar Vardan O'skanyani harcazruycy' Haykakan erkrord hetustaaliqin ew «Nor harewanner» kayqin «Nor harewanner» kayq [Interview of RA Foreign Minister Vartan Oskanian to the Second Armenian TV Channel and "New Neighbors" website "New Neighbors" website]. 21 12 2006. 1 8 2021. <<https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2006/12/21/vo/1645>>. (In Armenian)

53. —. P'oqr erkri mec' martahravernery' (naxarari o'ragric) [The big challenges of a small country (from the minister's diary)]. Erevan: «Antares» hratarakchowt'yown, 2013. (In Armenian)

THE FORMATION OF NORMS AND IDENTITY CONDITIONING THE FOREIGN POLICY OF THE ARMENIAN RULING ELITES IN THE RELATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA AND RUSSIAN FEDERATION: A CONSTRUCTIVIST LOOK

NAREK SUKIASYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Processes and Institutes, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The objective of the article is to reveal the constructivist factors determining the foreign policy of the Republic of Armenia that are relevant to the Armenian-Russian relation. To that end, the study employs the theoretical and methodological toolkit of International Relations school of Constructivism. The article examines the formation of identities, discourses and perceptions of ruling elites vis-à-vis the domestic and foreign threats, the ways to overcome them, the foreign support and the policy of alliance. The article reveals those foreign policy norms and their life-cycle, which in addition to the factors emanating from the material reality, condition, encourage or limit the policy of the ruling elites towards Russian Federation and act as mechanisms of inclusion and exclusion of political subjects. The article underlines the similarities and disparities between the first and second administrations of the RA in terms of the above mentioned matters, points out the debates therein and their influence on the life cycles of developing norms.

Key words: *Foreign policy of the Republic of Armenia, relations between Republic of Armenia and Russian Federation, Constructivism, Identity, foreign policy norms, ruling elites of the Republic of Armenia, South Caucasus.*

ФОРМИРОВАНИЕ НОРМ И ИДЕНТИЧНОСТИ, ОБУСЛАВЛИВАЮЩИХ ВНЕШНЮЮ ПОЛИТИКУ АРМЯНСКИХ ПРАВЯЩИХ ЭЛИТ В ОТНОШЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ: КОНСТРУКТИВИСТСКИЙ ВЗГЛЯД

НАРЕК СУКИАСЯН

*аспирант кафедры политических процессов и институтов
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – выявить конструктивистские факторы, определяющие внешнюю политику Республики Армения, которые относятся к армяно-российским отношениям.

С этой целью в исследовании используется теоретико-методологический инструментарий конструктивистской школы международных отношений.

В статье рассматривается формирование идентичностей, дискурсов и представлений правящих элит относительно внутренних и внешних угроз, путей их преодоления, внешней поддержки и союзнической политики. В статье раскрываются внешнеполитические нормы и их жизненный цикл, которые в дополнение к факторам, исходящим из материальной реальности, обуславливают, стимулируют или ограничивают политику правящих элит в отношении Российской Федерации и выступают в качестве механизмов включения и исключения политических субъектов. В статье подчеркиваются сходства и различия между первой и второй администрациями РА в вышеуказанных вопросах, указываются их противоречия и их влияние на жизненные циклы развивающихся норм.

Ключевые слова: *внешняя политика Республики Армения, отношения между Республикой Армения и Российской Федерацией, конструктивизм, идентичность, нормы внешней политики, правящие элиты Республики Армения, Южный Кавказ.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԶԵՆՈՔԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

ՅՏԴ 338.245.6

DOI: 10.52063/25792652-2021.4-185

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ashotmarkos@rambler.ru*

ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
meleonora06@rambler.ru*

Հոդվածում նպատակ է դրվել բացահայտել ու ներկայացնել Արցախյան 44-օրյա պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը) հասցրած տնտեսական վնասները և նախանշել Արցախի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման առաջնահերթ միջոցառումները:

Աշխատանքի խնդիրը Արցախի Հանրապետության տնտեսության վերականգնման և բնականոն գործունեության ապահովման համար առաջնահերթ միջոցառումների ներկայացումն է, Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների գործադրած ջանքերի ամփոփումը այդ ուղղությամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակները գտնում են, որ Արցախում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման առաջնային խնդիրներից են՝ Արցախի բնակչության անվտանգության ապահովումը, Արցախի Հանրապետության կարգավիճակի ամրագրումը, հանրապետությունում ձևավորված բարոյա-հոգեբանական մթնոլորտի առողջացումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև տնտեսական կապերի խորացումն ու զարգացումը, Արցախի Հանրապետությանը տրամադրվող օգնության ու աջակցման ծրագրերից անցումը երկրի երկարատև զարգացման ծրագրերին՝ հիմքում ունենալով ԱՀ և ՀՀ տնտեսությունների բացարձակ ու համեմատական առավելությունները:

* Հոդվածը ներկայացվել է 14.11.2021թ., գրախոսվել՝ 16.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հիմնաբառեր՝ Արցախի Հանրապետություն, 44-օրյա պատերազմ, պատերազմի տնտեսական հետևանքներ, օգնության ծրագրեր, ֆինանսական օժանդակություն, տնտեսության առողջացման միջոցառումներ, ԱՀ և ՀՀ տնտեսությունների զարգացման համալիր ծրագիր:

Ներածություն

Ցանկացած պատերազմ երկու և ավելի կողմերի միջև փոխհարաբերությունների կարգավորման միջոց է: Ըստ որում, պատերազմների նպատակները կարող են լինել բազմաթիվ, այդ թվում՝ զլոբալ ու տարածաշրջանային վերահսկողության հասնելը և լոկալ (տեղական)՝ դրանով իսկ սպասարկելով որոշակի խմբերի շահերը: Պատերազմների պատճառները կարող են լինել քաղաքական, գոյապահպանական, մշակութային, քաղաքակրթական, կրոնական, տարածքային և այլն: Սակայն բոլոր պատերազմները ուղեկցվում են մարդկային, կյուլթական, ֆինանսական և այլ ռեսուրսների հսկայական և շատ հաճախ անդառնալի կորուստներով: Կարևոր է նաև այն փաստը, որ, որպես կանոն, պատերազմի հետևանքները չեն վերանում պատերազմի անմիջապես ավարտից հետո, այլ հակառակը, դրանք ի հայտ են գալիս և շարունակում են զգացվել երկար ժամանակահատվածում, Էական ազդեցություն են թողնում բնակչության բարոյա-հոգեբանական վիճակի, սոցիալական, տնտեսական միջավայրի և ժողովրդագրական իրավիճակի վրա: Հատկապես վերջինը կարող է վերականգնվել միայն տասնամյակներ անց, քանի որ խոսքը վերաբերում է պատերազմի հասցրած անդառնալի ու հսկայական մարդկային կորուստներին: Այս համատեքստում կարևոր է դառնում պատերազմում ներքաշված երկրների կառավարությունների գործառույթների Էական փոփոխությունը: Դրանց շարքում նշանակալի է դառնում պատերազմի հասցրած տնտեսական վնասների վերականգնումը և երկրի հետագա կայուն զարգացման ապահովումը:

44-օրյա պատերազմը (2020 թ.-ի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը) ավարտվեց եռակողմ (ՌԴ, Հայաստան, Ադրբեջան) 2020 թ.-ի նոյեմբերի 9-ի հայտնի հայտարարությամբ, որով սահմանվեց պատերազմի դադարեցման և հետագա գործողությունների ճանապարհային քարտեզը: Այն ամրապնդվեց 2021 թ.-ի հունվարի 11-ի մեկ այլ փաստաթղթով: Պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի խաղաղապահ ուժերը ապահովում են տարածաշրջանում խաղաղությունն ու անվտանգությունը: Ստեղծված բարդ ու ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում (տասնյակ հազարավոր տեղահանված անձինք, կյուլթական ու ֆինանսական հսկայական կորուստներ և այլն) առաջնահերթ դարձավ բնակչության նվազագույն կենցաղային պայմանների ու սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, ինչը Արցախի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարությունների կողմից ձեռնարկված միջոցառումների հիմնական նպատակն էր և ուղղված էր ԱՀ-ում իրադրության կայունացմանը:

Ներկայումս Էական է դառնում Արցախի Հանրապետության և նրա բնակչության ապագայի հիմնախնդիրը, որի լուծումը պահանջում է ինչպես տարածաշրջանի, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների կողմից ջանքերի գործադրում, ինչը կարող է հիմք հանդիսանալ տարածաշրջանում երկարատև խաղաղության և համագործակցության համար (հակամարտության քաղաքական հանգուցայլուծում):

Տարածաշրջանում ստեղծված առանձնահատուկ պայմանների առկայության պարագայում առաջնահերթ ու կարևոր նշանակություն է ստանում տնտեսական գործոնի դերը, որը կարող է և պետք է ստեղծված իրադրությունից դուրս գալու շարժիչ ուժը դառնալ:

Պատերազմի տնտեսական հետևանքները և դրանց հաշվառման ու գնահատման մեթոդաբանությունը

Արցախյան երրորդ՝ 44-օրյա պատերազմը հանգեցրեց զգալի ինչպես մարդկային, այնպես էլ բնական պաշարների (հողային, ջրային պաշարների, ընդերքի մասերի, անտառային տարածքների) և այլ նյութական արժեքների կորստի: Հատկապես անգնահատելի են մարդկային կորուստները (հազարավոր զոհվածներ և վիրավորներ), որոնք անվերադարձ կորուստներ են և արժեքային որևէ չափման չեն ենթարկվում, իսկ դրա ազդեցությունը իրեն զգացնել կտա տասնամյակների ընթացքում: Մեր ուսումնասիրության առարկան 44-օրյա պատերազմի հասցրած տնտեսական վնասների բացահայտումն է, որը հիմնականում դրսևորվեց Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասի զավթմամբ, որի հետևանքով հակառակորդին անցան նաև այդ տարածքներում գտնվող ինչպես բնական ռեսուրսները, այնպես էլ արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքները: Հետևաբար, ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել գնահատելու նաև Արցախի Հանրապետության բոլոր տեսակի ռեսուրսների կորուստները և դրանց հատուցման կառուցակարգերը: Այդ պաշարներից հատկապես կարևորվում են ինչպես ընդերքի, այնպես էլ հողային պաշարները, որոնք ներառում են գյուղատնտեսական, բնակավայրերի, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային նպատակային նշանակության հողատարածքները, ինչպես նաև դրանց վրա գտնվող անշարժ ու շարժական գույքը:

44-օրյա պատերազմի տնտեսական վնասները հաշվառելու և գնահատելու նպատակով 2021 թվականի մարտի 10-ին Արցախի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Արցախի Հանրապետության պետական, համայնքային, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող գույքին պատերազմի հետևանքով հասցված վնասների հաշվառման և գնահատման հանրապետական հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 203-Ն որոշումը (ԱՀ կառավարության N 203 որոշում): Համաձայն այդ որոշման՝ ստեղծվել է պատերազմի հասցրած վնասների հաշվառման ու գնահատման հանրապետական հանձնաժողով և հաստատվել հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը: Նույն որոշմամբ հանձնաժողովին հանձնարարվել է մշակել Արցախի Հանրապետության պետական, համայնքային, իրավաբանական ու ֆիզիկական անձանց պատկանող գույքին հասցված վնասների գնահատման կարգը, իսկ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանը ցուցաբերել առաջնահերթ ու գործնական աջակցություն:

Արցախի Հանրապետության կառավարության մեկ այլ որոշմամբ հաստատվել է Արցախի Հանրապետության դեմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի անձազերծած պատերազմի հետևանքով պետական, համայնքային, իրավաբանական, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց գույքին հասցված վնասների հաշվառման և գնահատման աշխատանքների իրականացման միջոցառումների ծրագիրը: Տվյալ որոշման կարգավորման առարկան է.

- վնասի հաշվառման աշխատանքների իրականացմանն ուղղված Հանրապետական հանձնաժողովի միջոցառումների ծրագիրը,
- ծրագրի բովանդակային նկարագիրը,
- հաշվառման և գնահատման ենթակա վնասված կամ կորսված գույքի անվանացանկն ու արձանագրման ձևերը,

➤ վերը նշված գույքի վնասի գնահատման սկզբունքները, կարգն ու մեթոդաբանությունը:

Վերը նշված աշխատանքների իրականացման առաջին փուլում հաշվառվելու և գնահատվելու է ֆիզիկական անձանց հասցված վնասները, ինչպես նաև կազմակերպվելու է դրանց փոխհատուցման գործընթացը:

Վնասների հատուցման համար առաջին հերթին անհրաժեշտ է տեղեկությունների հավաքագրում ու հաշվառում, որի ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Նախ՝ կրած վնասների հայտարարագրերի ընդունման մասին հրապարակվել է հայտարարություն (հրապարակային առաջարկ) սահմանված ձևերով հայտերի ընդունման մասին, վնասները արձանագրելու և հանձնաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվել են աշխատանքային (փաստահավաք) խմբեր, առանձնացվել է վնասված կամ կորսված գույքի անվանացանկը:

ԱՅ վերահսկողության ներքո գտնվող սուբյեկտների վնասի արձանագրումն ու հաշվառումը իրականացվում է ըստ յուրաքանչյուր սուբյեկտի՝ դրա վերաբերյալ ձևավորված անհատական գործի հիման վրա: Տեղում (այդպիսի հնարավորության դեպքում) կատարված ուսումնասիրությունների, փաստերի արձանագրման, փաստաթղթավորման և ճշգրտումներից հետո առանձին սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են հանձնաժողովին:

Մասնագետների ներգրավմամբ վնասների ստուգման, նույնականացման, հաշվառման և ընդհանուր տեղեկատվական մատյանի ձևավորման աշխատանքներից հետո միայն իրականացվում է վնասների գնահատում՝ համաձայն ընդունված մեթոդաբանության:

Ֆիզիկական անձանց հասցված վնասների հաշվառման, փաստաթղթավորման և փոխհատուցման գործընթացի ավարտից հետո համանման ձևով միջոցառումներ են իրականացվելու նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (վնասների գնահատման աշխատանքների երկրորդ փուլ), այնուհետև նաև համայնքներին և պետությանը հասցված վնասի գնահատում (աշխատանքների իրականացման երրորդ փուլ):

Ներկայումս հանձնաժողովի կողմից շարունակվում են Արցախի կառավարության որոշումներով նախատեսված պատերազմի վնասների հաշվառման, գնահատման և փոխհատուցման աշխատանքները: Դրանք ավարտելուն պես արժեքային արտահայտությամբ հնարավոր կլինի պարզել պատերազմի կողմից պետությանը, համայնքներին, ֆիզիկական ու իրավաբանական անձանց, համայնքներին ու պետությանը հասցված վնասի չափերը, ինչպես նաև նախանշել դրանց համարժեք փոխհատուցման հնարավորություններն ու աղբյուրները:

Հարկ է նշել, որ վերոնշյալ որոշմամբ հստակեցված ու որոշակիացված են պատերազմի հետևանքով հասցված վնասի հաշվառման օբյեկտներն ու առարկաները: Այսպես՝ հաշվառման ու գնահատման ենթակա են՝ 1. անշարժ գույքը (ներառյալ՝ շենք-շինությունները (սպասարկման հողամասերով), հողամասերում կատարած ներդրումները (այդ թվում՝ այգիները, բանջարանոցները, կաթիլային համակարգերը), ջրամբարները, ջրագծերը, ջրամատակարարման համակարգերն ու արտեզյան ջրհորները), 2. օգտակար հանածոների հետախուզված ծավալները և արդյունահանման համար կատարված ներդրումները, 3. ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համար կատարված ներդրումները, 4. ճանապարհները և ճանապարհային ենթակառուցվածքները, 5. փոխադրամիջոցները, 6. շինարարական և հատուկ տեխնիկական, 7. գյուղատնտեսական տեխնիկական, 8. արտադրական սարքավորումները և փոխանցվող հարմարանքները, կառուցվածքները, մեքենա-մեխանիզմները, հոսքային գծերը, 9. գրասենյակային կահավորանքն ու համակարգչային տեխնիկական, 10. բնակարանային կահավորանքը և կենցաղային տեխնիկական, 11. առևտրի իրականացման սարքավորումները և պարագաները, 12. տնտեսական և գյուղատնտեսական նշանակության ապրանքները, այդ թվում՝

ընտանի կենդանիները, մեղվաընտանիքները, 13. պատրաստի արտադրանքն ու նյութական պաշարները, 14. ոչ նյութական ակտիվները:

Սահմանվել են նաև պատերազմի հետևանքով հասցված վնասների գնահատման սկզբունքներն ու մեթոդաբանական մոտեցումները: Փոխհատուցման իրավունք ունեցող սուբյեկտների վնասը հաշվարկվում և արձանագրվում է շուկայական (իրական կամ շուկայականին մոտարկված) արժեքով, ընդ որում՝ ըստ առանձին տնտեսավարող սուբյեկտների՝ գնահատման համար հիմք են հանդիսանում օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված գույքի վերաբերյալ արձանագրված տվյալները: Վնասի արժեքն արձանագրվում է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Շենք-շինությունների լրիվ կորստի պարագայում գնահատումը իրականացվում է ԱՀ անշարժ գույքի տեղեկատվական համակարգի «NKRPI» էլեկտրոնային ծրագրով՝ շուկայականին մոտարկված գնահատման եղանակով, իսկ այլ նշանակության անշարժ գույքի պարագայում հիմք է ընդունվում դրանց կառուցման 1 քառ. մետրի համար ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից արձանագրված և հաստատված ծախսերը՝ շուկայական գներով: Գնահատման այս սկզբունքը կիրառվում է նաև այն դեպքում, երբ բացակայում են հաշվառման համապատասխան տվյալները:

Այլ գույքի (կամ հիմնական միջոցների) լրիվ կորստի պարագայում գնահատումը իրականացվում է վնասին նախորդող եռամսյակում՝ հրապարակային բաց աղբյուրներում (համացանցի հարթակներում, մասնագիտացված առևտրային կազմակերպություններում և շուկաներում) նույնանման գույքի առք ու վաճառքի արձանագրված գործարքների արժեքներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ լիցենզավորված անկախ գնահատողների կողմից տրված արժեքներով:

Շենք-շինությունների մասնակի վնասվածության պարագայում գնահատումը իրականացվում է դրանց վերակառուցման (վերանորոգման) համար ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից շուկայական գներով արձանագրված և հաստատված ծախսերի հաշվարկման միջոցով:

Այլ գույքի (կամ հիմնական միջոցների) մասնակի վնասվածության պարագայում գնահատումը իրականացվում է դրանց վերանորոգման արժեքի որոշմամբ, որն իրականացվում է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավված անկախ փորձագետների կողմից:

Վնասների հատուցման իրավունքը ստացած սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության և վնասի հաշվառման ենթակա գույքի վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա վնասների գնահատման աշխատանքներն իրականացնում է հանձնաժողովը:

Արցախի նախագահի 2021 թ.-ի ապրիլի 19-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 336-Ա հրամանագրով (ԱՀ Նախագահի N 336-Ա հրամանագիր) հաստատվել են համապատասխան միջոցառումները, որոնց նպատակն է ֆինանսական աջակցություն տրամադրել պատերազմական գործողությունների հետևանքով անշարժ և շարժական գույքի կորստի արդյունքում վնասներ կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց (միջոցառումների շահառուներին):

Միջոցառումների շահառու չեն հանդիսանում՝

1. բանկերը, վարկային կազմակերպությունները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և/կամ մետաղի խտանյուղի

արտադրության (վերամշակման), վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և/կամ արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձինք, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և/կամ մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձինք:

2. զորահավաքային զորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստագորային ֆիզիկական անձինք կամ նրանց ամուսինները կամ համատեղությամբ բնակվող ծնողները կամ համատեղությամբ բնակվող զավակները, ինչպես նաև այն իրավաբանական անձինք, որոնցավաքային զորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստագորային ֆիզիկական անձինք կամ նրանց ամուսինները կամ համատեղությամբ բնակվող ծնողները կամ համատեղությամբ բնակվող զավակները, ինչպես նաև այն իրավաբանական անձինք), վառելիքաէներգետիկ տեղությամբ բնակվող ծնողները կամ համատեղությամբ բնակվող զավակները չեն ներկայացել զորահավաքային զորակոչով:

Միջոցառումների իմաստով գույքի կորուստ է համարվում շահառուին սեփականության, պտղատու այգիների դեպքում նաև վարձակալության իրավունքով պատկանող, ինչպես նաև ֆինանսական վարձակալությամբ (լիզինգ) ձեռքբերված այն գույքի կորուստը, որը պատերազմական գործողությունների հետևանքով մնացել է Ադրբեյջանի կողմից բռնագավթված տարածքում կամ լրիվ կամ մասնակի վնասվել է պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության տարածքում:

Շահառուին, գույքի փաստացի կորստի դիմաց պետական ֆինանսական աջակցությունը (այսուհետ՝ աջակցություն) տրամադրվում է դրամական օգնության ձևով և/կամ գանձապետական տարեկան 10% եկամտաբերությամբ և մարման 5 տարի ժամկետով հասարակ մուրհակների տրամադրմամբ:

Ընդունված միջոցառումների շրջանակում աջակցությունը տրամադրվում է շահառուների հետևյալ գույքի կորստի մասով (այսուհետ՝ աջակցության ուղղություններ).

1. հասարակական և արտադրական նշանակության շենք, շինություն,

2. ութից ոչ ավելի, բացառությամբ վարորդի, նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենա,

3. բեռնատար ավտոմեքենա, ինը և ավելի, բացառությամբ վարորդի, նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենա, գյուղատնտեսական, շինարարական և հատուկ տեխնիկա,

4. հիմնական միջոցների հետևյալ տեսակներ՝ կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ, արտադրական սարքավորումներ, հոսքային գծեր, ռոբոտատեխնիկա, հաշվողական և համակարգչային տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, գործիքներ, ինչպես նաև պաշարների հետևյալ տեսակներ՝ նյութեր, անավարտ արտադրություն, արտադրանք, ապրանքներ, արագամաշ առարկաներ (այսուհետ բոլորը միասին՝ նյութական ակտիվներ),

5. կաթնատու և մսատու կենդանի, մեղվաղնտանիք,

6. պտղատու այգի և խաղողի այգի:

Աջակցության ուղղություններից յուրաքանչյուրի համար սահմանված են հատուցման չափեր՝ ելնելով կորստի գնահատված արժեքի և արդեն տրամադրված աջակցության գումարի դրական տարբերությունից, սահմանված են գույքի յուրաքանչյուր տեսակի համար փոխհատուցման կոնկրետ սահմանաչափեր:

2020 թվականի նոյեմբերի 9-ի և 2021 թվականի հունվարի 11-ի եռակողմ հայտարարությունները

Թեև Արցախյան երրորդ պատերազմի դադարեցման վերաբերյալ միջնորդ երկրների կողմից կատարվեցին մի շարք փորձեր, սակայն դրանք ինչ-ինչ պատճառներով հաջողություն չարձանագրեցին: Պատերազմը «դադարեցվեց» Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև ստորագրված եռակողմ հայտարարությամբ: Նկատի ունենալով այդ հայտարարության նշանակությունը՝ այն կներկայացնենք ամբողջությամբ: Համաձայն նշված հայտարարության.

1. 2020 թվականի նոյեմբերի 10-ի մոսկովյան ժամանակով 00:00-ից Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին: Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

2. Ադրբեջանի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվելու է 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն Կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության Կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հրադադարի ռեժիմը վերահսկելու համար ստեղծվում է խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբաջարի շրջանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, ընդ որում շրջանցելով Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային և բեռնատար միջոցների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք և փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ:

8. Տեղի է ունենում ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակում:

9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջանփակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է

տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի հնքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի հնքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը (եռակողմ հայտարարություն, 9.11.2020):

Վերը նշված հայտարարության շարունակությունը և զարգացումը հանդիսացավ նույն երկրների ղեկավարների 2021 թվականի հունվարի 11-ի նոր՝ եռակողմ հայտարարությունը, որի համաձայն.

1. 2020 թ.-ի նոյեմբերի 9-ի հայտարարության՝ տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակելու մասին 9-րդ կետի իրականացման նպատակով աջակցում ենք Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության փոխվարչապետների համատեղ նախագահությամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու մասին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինի առաջարկը:

2. Աշխատանքային խումբն առաջին հանդիպումը կանցկացնի մինչև 2021 թ.-ի հունվարի 30-ը, որի արդյունքների հիման վրա կկազմի Հայտարարության 9-րդ կետի կիրառումից բխող աշխատանքների հիմնական ուղղությունների ցանկը՝ որպես գերակայություններ ընդունելով երկաթուղային և ճանապարհային հաղորդակցությունները, ինչպես նաև կսահմանի Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Կողմեր) միջև համաձայնեցված այլ ուղղություններ:

3. Գործունեության հիմնական ուղղություններն իրականացնելու նպատակով Աշխատանքային խմբի համանախագահները կհաստատեն այդ ոլորտներում փորձագիտական ենթախմբերի կազմը, որում կներառվեն Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներ և կազմակերպությունների պաշտոնատար անձինք: Փորձագիտական ենթախմբերը, աշխատանքային խմբի նիստից հետո մեկամսյա ժամկետում կներկայացնեն նախագծերի ցանկ, որում կներկայացնեն անհրաժեշտ ռեսուրսներն ու միջոցառումները՝ դրանց իրականացման և Կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատելու համար:

4. Աշխատանքային խումբը մինչև 2021 թ. մարտի 1-ը Կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատման կներկայացնի Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքով իրականացվող միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նոր տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների վերականգնման և կառուցման միջոցառումների իրականացման ցանկ և ժամանակացույց, նույն կերպ Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող փոխադրումների համար, որոնք պահանջում են հատել Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքները» (եռակողմ հայտարարություն, 11.01.2021):

Վերը նշված երկու հայտարարությունները, թեև ամբողջությամբ չեն իրականացվել ադրբեջանական կողմի մեղքով (ավելին՝ անցած շուրջ մեկ տարվա ընթացքում Ադրբեջանը ոտնձգություն է իրականացնում Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ, որն ուղեկցվեց նաև մարդկային զոհերով և խաղաղ բնակչության ահաբեկչությամբ), սակայն դրանք հիմք հանդիսացան տարածաշրջանում թեկուզ և փխրուն խաղաղության հաստատման համար: Ավստրալիայից է նաև, որ հակամարտության կողմերի միջև դեռևս պահպանվում է անվստահության մթնոլորտը, ձևավորված խաղաղության իրավիճակը վերջնական չէ և շարունակում է

մնալ Արցախի Հանրապետության կարգավիճակի չլուծված հիմնախնդիրը: Այս ամենը, ի վերջո, հետևանք է այն հանգամանքի, որ հակամարտող կողմերի միջև դեռևս չկա երկարատև խաղաղության մասին որևէ փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետության կողմից

Արցախի Հանրապետությանը ցուցաբերվող օգնությունը

Պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության արտադրական ռեսուրսների մեծ մասը բռնազավթվեց, ինչն ունեցավ ծանր սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական հետևանքներ: Եվ եթե վերջիններս ժամանակի ընթացքում աստիճանաբար կարող են մեղմվել, ապա սոցիալ-տնտեսական հետևանքները կունենան երկարաժամկետ ազդեցություններ թե՛ Արցախի Հանրապետությունում և թե՛ Հայաստանի Հանրապետությունում:

Բանն այն է, որ 44-օրյա պատերազմի հետևանքով հակառակորդի ուժերի կողմից ոչ միայն բռնազավթվեց Արցախի տարածքի 75%-ը, այլև այն ուղեկցվեց հայ բնակչության տեղահանմամբ, որ հանգրվանեց ինչպես Արցախի Հանրապետության չզավթված տարածքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Խոսքը շուրջ 34 հազար մարդու մասին է: Այս ծանր պայմաններում առաջնահերթ դարձավ բնակչության՝ քիչ թե շատ տանելի կենցաղային, սոցիալ-տնտեսական պայմանների ձևավորումն ու մարդկանց ապրելու համար նվազագույն կենսապայմանների ապահովումը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար մշակվեցին կարճաժամկետ միջոցառումներ ու ծրագրեր՝ Արցախում կյանքը բարելավելու համար: Իսկ ավելի երկար ժամանակահատվածի համար կենսական նշանակություն ունեցող ծրագրերի մշակումն ու իրականացումը դեռ բավարար ինտենսիվությամբ չի իրականացվում: Խոսքը ոչ միայն պատերազմից տուժած բնակչության տնտեսական վնասների փոխհատուցմանը և նրանց կյանքի նորմալացմանն է վերաբերում, այլև առաջնային դարձած բնակարանային շինարարությանը, որը ինչպես երկարատև ժամանակահատվածում հիմնախնդիրների լուծում է պարունակում, այնպես էլ զգալի ֆինանսական միջոցների ներդրում է պահանջում: Ըստ էության, խոսքը վերաբերում է Արցախի բնակչության օգնության ու աջակցության ծրագրին, որը հաջողությամբ իրականացվեց հետպատերազմյան գրեթե ամբողջ ժամանակահատվածում:

Մասնավորապես, ՀՀ վարչապետի 2020 թվականի նոյեմբերի 17-ի N 1244-Ա որոշմամբ ստեղծվել է 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախում առաջացած հումանիտար աղետի հակազդման, քաղաքացիական ենթակառուցվածքների, Արցախի բնականոն կենսագործունեության վերականգնման և տեղահանվածների ապահով ու արժանապատիվ վերադարձի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ՝ փոխվարչապետ Ս. Գրիգորյանի ղեկավարմամբ: Աշխատանքային խմբի գործունեությունը առնչվում է սոցիալական, կրթության, առողջապահության, ձեռնարկատիրական ու ենթակառուցվածքների ոլորտներին: Հաստատվել է նաև ՀՀ-ից աշխատանքային խմբի անհատական կազմը, ինչպես նաև խիստերին մասնակցող Արցախի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների կազմը:

Աջակցություն միջոցառումները տարբեր են և ներառում են ինչպես միանվագ դրամական օգնության տրամադրում, այնպես էլ պարբերական հիմքով ֆինանսական օժանդակության ծրագրեր: Առաջիններից մեկը ընդունվեց ՀՀ կառավարության 2020 թ. նոյեմբերի 18-ի «Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1813-Լ որոշումը, որի շահառուներն են Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում կամ Արցախում գտնվող Արցախի այն քաղաքացիները, որոնք ունեն Արցախի հաշվառում: Օժանդակության ձևը միանվագ դրամական օգնությունն էր՝ յուրաքանչյուր շահառուի համար նվազագույն

ամսական աշխատավարձի չափով (68 հազ. ՀՀ դրամ), ինչպես նաև կեցավայրի համար լրացուցիչ աջակցության տրամադրումը՝ 15 հազ. ՀՀ դրամի չափով այն շահառուներին, որոնք չունեն սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով ՀՀ-ում գտնվող անշարժ գույք:

ՀՀ կառավարության 2020 թ.-ի նոյեմբերի 21-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների հաշվարկային միջոցառումը հաստատելու մասին» N 1820-Լ որոշմամբ 300 հազ. դրամի չափով միանվագ դրամական օգնություն է տրամադրվել տվյալ որոշման յուրաքանչյուր շահառուին: Շահառու են համարվել պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիները, որոնք հաշվառված են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի համայնքներում և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակվել են այնտեղ: Այս որոշմամբ թվարկված են նաև հարևան երկրի վերահսկողության տակ անցած Զաշաթաղի շրջանի 52, Մարտակերտի շրջանի 8, Շահումյանի 16, Հադրութի 29, Շուշիի շրջանի 2, Ասկերանի շրջանի 8 և Մարտունու շրջանի 6 համայնքները, կամ ընդհանուր թվով՝ Արցախի 121 համայնքները:

Մեկ այլ որոշմամբ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերվել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի բնակավայրերում հաշվառված Արցախի քաղաքացիներին հյուրընկալած անձանց: Սոցիալական աջակցությունը տրամադրվում է անհատույց՝ յուրաքանչյուր ամիս դրամական օգնության ձևով՝ յուրաքանչյուր հյուրընկալված քաղաքացու համար 30 հազ. ՀՀ դրամ, եթե հյուրընկալի կացարանը Հայաստանի Հանրապետությունում է և 45 հազ. ՀՀ դրամ, եթե հյուրընկալի կացարանը Արցախի Հանրապետությունում է: Այս գումարը, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ենթակա չէ հարկման:

ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 17-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 2082-Լ որոշման շահառուներ են դարձել 44-օրյա պատերազմի հետևանքով ՀՀ և Արցախի հաշվառում ունեցող քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքները և հաշմանդամություն ձեռք բերած անձինք:

Ֆինանսական օժանդակության չափերը հետևյալն են՝

- ✓ 5 մլն ՀՀ դրամ՝ անձի զոհվելու դեպքում, տրվում է զոհվածի ընտանիքին,
- ✓ 3 մլն ՀՀ դրամ՝ անձի 1-ին խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- ✓ 2 մլն ՀՀ դրամ՝ անձի 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- ✓ 1 մլն ՀՀ դրամ՝ անձի 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- ✓ 3 մլն ՀՀ դրամ՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում:

Օժանդակություն է տրամադրվել նաև պատերազմի հետևանքով ՀՀ համայնքներում քաղաքացիների անշարժ գույքին հասցված վնասների համար: Այս միջոցառման շահառուներն են ՀՀ Սյունիքի մարզի որոշ համայնքների բնակիչները, որոնց պատկանող անշարժ գույքին հրետակոծության հետևանքով վնաս է հասցվել: Ֆինանսական օժանդակությունը պետք է տրամադրվի անհատական կարգով՝ կախված յուրաքանչյուրի գույքին պատճառված վնասի չափից:

Պատերազմի մարտական գործողությունների մասնակից սովորողներին, ինչպես նաև այն սովորողներին, որի ծնողը կամ ամուսինը մասնակցել է մարտական գործողություններին, ֆինանսական օժանդակությունը տրամադրվել է՝ կախված յուրաքանչյուրի ուսման վարձի չափից: Այս միջոցառման շրջանակում վճարվում է

սովորողի 2020-2021թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը՝ 100%-ի չափով:

Աջակցություն է ցուցաբերվում նաև պատերազմի ընթացքում անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին: Օժանդակության այս ձևն այն է, որ ամենամյա դրամական վճարներ են տրվում յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի հաշվով ամսական 300 հազ. ՀՀ դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա համար:

ՀՀ կառավարության առանձին որոշմամբ 250 հազ. ՀՀ դրամի չափով միանվագ դրամական օգնություն է տրամադրվել այն անձանց, որոնց հաշվառման վայրի հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը պատերազմի հետևանքով դարձել է բնակության համար ոչ պիտանի: Այդ նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 10-ի «Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 2021-Լ որոշումը:

Սոցիալական աջակցության ծրագրերից առանձնացնենք 2021 թ. օգոստոսի 12-ին ընդունված ՀՀ կառավարության «Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1326-Լ որոշումը, որի նպատակն է աջակցություն տրամադրել ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին աշխատանքի ընդունած գործատուին՝ նշված անձանց աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի չափով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ աշխատատեղի հարմարեցման ծախսերի փոխհատուցման միջոցով:

Ընդունվել են նաև այլ որոշումներ, որոնք լուծում են տարբեր ժամանակահատվածներում առաջացող կոնկրետ խնդիրները, իսկ կառավարությունը փորձում է անհատական որոշումներով լուծում տալ այս կամ այն խնդրին: Բացի զուտ դրամական օգնությունից, ՀՀ-ում կան նաև այլ, մասնավոր նախաձեռնություններ, որոնց նպատակն է արցախցիների սոցիալական վիճակի բարելավումը, աջակցությունը աշխատանք ունենալու, այդ նպատակով վերապատրաստվելու, ֆինանսավարկային կազմակերպությունների հետ հարաբերությունները հարթելու և այլ հարցերում: Օրինակ՝ «Աշխատանք արցախցիներին» անվանմամբ ֆեյսբուքյան էջը (որի նպատակն է ՀՀ-ում ժամանակավորապես գտնվող արցախցիներին աջակցություն ցուցաբերել աշխատանք գտնելու գործում) պարբերաբար տեղադրում է տարբեր կազմակերպությունների առաջարկները առկա աշխատատեղերի, դրանք զբաղեցնելու հնարավորության, ինչպես նաև վերապատրաստումների կազմակերպման մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այդպիսի ծրագրերը նպատակ ունեն աջակցելու և օգնություն ցուցաբերելու Արցախի բնակչությանը, և դրանք ունեն շարունակական բնույթ: Ընդհանուր առմամբ 2021 թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ ԱՀ-ին ՀՀ կառավարության կողմից տրամադրված օգնության չափը գնահատվում է 100 մլրդ դրամ: Այդ ամենով հանդերձ հասկանալի է, որ անհրաժեշտ է մշակել և ունենալ Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ հեռանկարային ծրագիր: Հասկանալի է նաև, որ այդպիսի ծրագրերի մշակումն ու իրականացումը իմաստ ունի միայն Արցախի Հանրապետության կարգավիճակը որոշելուց հետո:

Արցախյան հիմնախնդրի լուծումը

ՀՀ Ազգային ժողովը 2021 թ.-ի օգոստոսի 26-ին հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրին: Նշված ծրագրի առանցքն է կազմում ՀՀ և ԱՀ բնակչության անվտանգության ապահովումը, իսկ Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ առանձնացված է առանձին բաժին, որում շարադրված է ՀՀ կառավարության մոտեցումը. «Առաջիկա տարիներին Կառավարության գլխավոր խնդիրը պետք է լինեն ԼՂ ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը: Ղարաբաղյան հիմնախնդրի վերջնական կարգավորումը Կառավարությունը տեսնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցմամբ՝ հայտնի սկզբունքների և տարրերի, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Արցախի հետպատերազմյան վերականգնումը, տնտեսական կյանքի աշխուժացումը, տեղահանված բնակչության սոցիալական խնդիրների լուծումը, մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը լինելու են Կառավարության ուշադրության կենտրոնում: Չանք չի խնայվելու Արցախում արժանապատիվ և բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծելու համար: Այս նպատակներին Կառավարությունը հասնելու է Արցախի իշխանությունների հետ համագործակցության խորացման, ինչպես նաև Արցախի հետ գործակցության նոր ձևաչափերի ստեղծման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը և շարունակելու է աշխատել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Արցախի և Արցախի ժողովրդի անվտանգությունը կշարունակի ապահովել Պաշտպանության բանակը: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի ներկայությունն Արցախում անվտանգության կարևորագույն երաշխիք է: Կառավարությունը երաշխավորելու է բոլոր անհրաժեշտ պայմանների գոյությունը խաղաղապահ առաքելության անխափան ու անխոչընդոտ գործունեության համար:

Ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման համար առանցքային կարևորություն ունի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափի շրջանակներում բովանդակային բանակցությունների անցկացումը:» (ՀՀ կառավարության ծրագիր, 26.08.21):

Եզրակացություն

Արցախի Հանրապետության դեմ թուրք-ադրբեջանական 44-օրյա պատերազմը հանգեցրեց ԱՀ տարածքի 75 տոկոսի բռնազավթմանը և այդ տարածքի բնակչության տեղահանմանը, դրանով իսկ հսկայական վնաս պատճառվեց ինչպես ԱՀ բնակչությանը, այնպես էլ ենթակառուցվածքներին՝ հանգեցնելով մարդկային, կյանքական ու ֆինանսական հսկայական կորուստների: Հետպատերազմյան ժամանակաշրջանի հիմնախնդիրը Արցախի բնակչության կենսաապահովման համար անհրաժեշտ կենցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների ապահովումն էր, ինչին ձեռնամուխ եղան ԱՀ, ՀՀ կառավարությունները և ողջ սփյուռքը:

Ինչպես ԱՀ, այնպես է ՀՀ կառավարության կողմից իրականացված միջոցառումների նպատակն է գնահատել պատերազմի հասցրած տնտեսական վնասները, ինչպես նաև փոխհատուցել այդ վնասները կրած անձանց կորուստները: Դրանք հիմնականում օգնության և աջակցության ծրագրեր են, որոնք հաջողությամբ իրականացվել են և շարունակվում են մինչ օրս:

Տարածաշրջանում երկարատև խաղաղության ապահովման ծրագիրը այլընտրանք չունի և դրան պետք է միտված լինեն հակամարտող կողմերի ջանքերը: Թեև Ադրբեջանի դեկավարության ռազմատենչ հայտարարությունները շարունակվում

են, սակայն ակնհայտ է, որ պատերազմը կարող է ավարտվել միայն քաղաքական լուծմամբ և Արցախի կարգավիճակի որոշմամբ՝ կարգավորման հայտնի սկզբունքների հիման վրա:

Նկատի ունենալով, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության գործողության ժամկետը սահմանափակ է և հակամարտող երկրներից մեկի կողմից այն կարող է չերկարաձգվել ժամկետի ավարտից հետո, ուստի ելնելով տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից՝ հատկապես հայկական կողմը պետք է ջանքեր գործադրի ամրապնդելու իր դիրքերը (քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական և այլն) ինչպես ԱՀ-ում, այնպես էլ ՀՀ-ում:

Ակնհայտ է, որ խնդրի քաղաքական լուծման բանալին ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեռքբերում է, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ հակամարտության կարգավորումը կարելի է թողնել ինքնահոս վիճակի, այլ ընդհակառակը, պետք է ակտիվացնել և ուժեղացնել հայկական կողմի քաղաքական ու դիվանագիտական կարողությունները՝ հասնելու ցանկալի արդյունքների: Այդ նպատակով պետք է մշակել ու գործադրել Արցախյան հակամարտության լուծման այնպիսի սցենարներ, որոնք կապահովեն հայկական ազգային շահերի առավելագույն պահպանումը:

Օգտագործված գրականություն

1. ԱՀ կառավարություն. «Արցախի Հանրապետության պետական, համայնքային, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող գույքին պատերազմի հետևանքով հասցված վնասների հաշվառման և գնահատման հանրապետական հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 203-Ն որոշում. 10 մարտի 2021:

2. ԱՀ նախագահ. «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 336-Ա հրամանագիր. 19 ապրիլի 2021, <http://president.nkr.am/am/news/lawsOrders/5249> :

3. «Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարություն». 9 նոյեմբերի 2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>:

4. «Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը». 11 հունվարի 2021, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/>:

5. ՀՀ Ազգային ժողով. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» որոշում, 26 օգոստոսի 2021, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=112199>:

Works Cited

1. Government of Artsakh. «Arcaxi Hanrapetoi't'yan petakan, hamaynqayin, iravabanakan & fizikakan and'anc patkanogh guyqin paterazmi het&angov hascvac' vnasneri hashvar'man & gnahatman hanrapetakan hand'najhoghov steghc'elu, dra anhatakan kazmn u ashxatakargy' hastatelu masin» N 203-N oroshum. 10 marti 2021, [Decision No. 203-N on March 10, 2021 "Establishment of a republican commission for the registration and evaluation of damages caused by the war to state, communities property and property of legal entities and individuals of the Artsakh Republic"] (In Armenian).

2. President of the Artsakh Republic. «2020 t'vakani septemberi 27-in Arcaxi Hanrapetut'yan dem sand'azerc'vac' paterazmakan gorc'oghut'yunneri het'and'anc nyut'akan vnas krac' fizikakan & iravabanakan and'anc petakan finansakan ajacut'yan mijocar'umy' hastatelu masin» N 336-A hrmanagir. 19 aprili 2021, [Decree No. 336-A on April 19, 2021 "On approving the measure of state financial support to individuals and legal entities that suffered material damage as a result of the hostilities unleashed against the Artsakh Republic on September 27, 2020"] (In Armenian).

3. «Hayastani Hanrapetut'yan varchapeti, Adrbejani Hanrapetut'yan naxagahi & R'usastani Dashnut'yan naxagahi haytararut'yun». 9 noyemberi 2020, ["Statement by the Prime Minister of the Republic of Armenia, the President of the Republic of Azerbaijan and the President of the Russian Federation" . November 9, 2020] (In Armenian).

4. «Adrbejani Hanrapetut'yan naxagahi, Hayastani Hanrapetut'yan varchapeti & R'usastani Dashnut'yan naxagahi haytararut'yuny'». 11 hunvari 2021, ["Statement of the President of the Republic of Azerbaijan, the Prime Minister of the Republic of Armenia and the President of the Russian Federation" . January 11, 2021] (In Armenian).

5. RA National Assembly. «Hayastani Hanrapetut'yan kar'avarut'yan c'ragrin havanut'yun talu masin» oroshum, [Decision on approving the program of the Government of the Republic of Armenia, August 26, 2021.] (In Armenian).

ECONOMIC CONSEQUENCES OF WAR AND CONTENT OF THE MAIN MEASURES FOR THEIR NEUTRALIZATION

ASHOT MARKOSYAN

*Yerevan State University, Faculty of Economics and Management,
Chair of Innovation Economics, Head;
The Journal «Scientific Artsakh», Member of Editorial Board;
Doctor of Economics, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

ELYANORA MATEVOSYAN

*Yerevan State University, Faculty of Economics and Management,
Chair of Innovation Economics, Ph.D. in Economics,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to identify the economic damage caused by the 44-day Armenian-Azerbaijani war (from September 27 to November 9, 2020), as well as to outline the priority measures aimed to stabilize the socio-economic situation in the Republic of Artsakh.

The authors present the content of the main measures to recover the economy of the Republic of Artsakh, which are being carried out at this point in time and aimed at ensuring normal life. They also summarize the efforts made by the governments of the Republic of Artsakh and the Republic of Armenia in this direction.

As a result of the study, the authors come to the conclusion that the priority tasks for improving the socio-economic situation in Artsakh are ensuring the safety of the population, resolving the issue of the status of the Republic of Artsakh, improving the moral and psychological atmosphere in the republic, as well as deepening and developing economic relations between the Republic of Artsakh and Republic of Armenia

through the transition from programs of support and assistance to individuals and organizations to long-term programs for the development of the country.

Key words: *Republic of Artsakh, the 44-day war, the economic consequences of the war, aid programs, financial assistance, measures to restore the economy, a comprehensive program for the development of the economy of Armenia and Artsakh.*

ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ВОЙНЫ И СОДЕРЖАНИЕ ОСНОВНЫХ МЕРОПРИЯТИЙ ПО ИХ НЕЙТРАЛИЗАЦИИ

АШОТ МАРКОСЯН

*заведующий кафедрой экономики инноваций
факультета экономики и управления
Ереванского государственного университета,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор экономических наук, профессор,
г.Ереван, Республика Армения*

ЭЛЯНОРА МАТЕВОСЯН

*преподаватель кафедры экономики инноваций
факультета экономики и управления
Ереванского государственного университета,
кандидат экономических наук,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является выявление экономического ущерба, нанесенного 44-дневной армяно-азербайджанской войной (с 27 сентября по 9 ноября 2020 г.), а также обозначение первоочередных мероприятий по стабилизации социально-экономического положения в Республике Арцах.

Перед авторами стояла задача представить основное содержание первоочередных мер по восстановлению экономики Республики Арцах, которые осуществляются на данный момент времени и нацелены на обеспечение ее нормальной жизнедеятельности, а также обобщить усилия, предпринимаемые правительствами Республики Арцах и Республики Армения в этом направлении.

В результате исследования авторы приходят к выводу о том, что первоочередными задачами для улучшения социально-экономической ситуации в Арцахе являются обеспечение безопасности населения, решение вопроса о статусе Республики Арцах, улучшение морально-психологической атмосферы в республике, а также углубление и развитие экономических отношений между Республикой Арцах и Республикой Армения посредством перехода от программ поддержки и помощи отдельным лицам и организациям к долгосрочным программам развития страны.

Ключевые слова: *Республика Арцах, 44-дневная война, экономические последствия войны, программы помощи, финансовая помощь, меры по восстановлению экономики, комплексная программа развития экономики Армении и Арцаха.*

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ*

ՀՏԴ 338:336:008

DOI: 10.52063/25792652-2021.4-200

ԿԱՐԵՆ ԽՈՋՈՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի տնտեսագիտության և կառավարման
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
khojoyanKaren09@aspu.am

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան
թիվ 139 ավագ դպրոցի փոխտնօրեն,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
61susannasargsyan@gmail.com

**Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ մշակույթի ոլորտի պետական
ֆինանսավորման արդի վիճակի բարելավման ուղիները:**

**Հոդվածի խնդիրներն են՝ վերլուծել մեր հանրապետության մշակույթի
ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակը բնութագրող միտումները
և բացահայտել այդ ֆինանսավորման հնարավորությունների և կիրառվող
ձևերի շրջանակի ընդլայնման ուղիները:**

**Հոդվածում առաջարկվել են ՀՀ մշակույթի ոլորտի պետական
ֆինանսավորման արդի վիճակի բարելավմանն ու վերը նշված շրջանակի
ընդլայնմանն ուղղված մոտեցումներ:**

**Հոդվածում կիրառվել են գիտական վերացարկման, համեմատական և
գրաֆիկական վերլուծության, պատմականի և տրամաբանականի
գուճակցման մեթոդները:**

**Հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական
եզրահանգումները.**

- ՀՀ պետական բյուջեից մշակութային ծառայություններին 2016-2020թթ.
փաստացի հատկացումների դինամիկան բնութագրվել է փոփոխական
միտումներով և այն ընդհանուր առմամբ դրականորեն չի անդրադարձել
մշակույթի պետական ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման
վրա,

- ՀՀ պետական բյուջեից մշակույթի ոլորտին 2016-2020 թթ. նախա-
տեսված և փաստացի հատկացումների կառուցվածքում անհամեմատ բարձր է
եղել արվեստի, այնուհետև թանգարանների, ցուցասրահների և
գրադարանների տեսակարար կշիռը: Մյուս ծառայությունների գծով այդ
ցուցանիշն անհամեմատ փոքր է եղել: Նշված կառուցվածքի վառ
անհամաչափությունը նախ և առաջ պայմանավորված է պետության
որդեգրած քաղաքականությամբ, ծառայությունների առկա հիմնախնդիրների
առաջնահերթությամբ և միաժամանակ վկայում է մշակութային

* Հոդվածը ներկայացվել է 04.12.2021թ., գրախոսվել՝ 06.12.2021թ., տպագրության
ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ծառայությունների զգալի մասի գծով պետական ֆինանսավորման ոչ բավարար լինելու մասին:

Հիմնաբառեր՝ մշակույթի ոլորտ, մշակութային ծառայություններ, մշակութային ծրագրեր, ֆինանսական միջոցներ, պետական ֆինանսավորման ծավալ, պետական ֆինանսավորման կառուցվածք, պետական ֆինանսավորման ձևեր:

Ներածություն

Գաղտնիք չէ, որ մշակույթի ոլորտն առանձնակի նշանակություն ունի հասարակության կենսագործունեության համար: Այն լուծում է հասարակության գաղափարախոսական և սոցիալական սպասարկման համալիր խնդիրներ, որոնք ուղղված են նրա հոգևոր զարգացմանը, մշակութային պահանջմունքների բավարարմանը: Մշակույթն առանձնակի դեր ունի հայ ժողովրդի կյանքում ոչ միայն ընդհանուր քաղաքակրթական մակարդակի, այլև ազգապահպանության առումով: Հետևաբար ներկայումս առաջնահերթ խնդիր է դարձել ազգային մշակույթի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, հատկապես մշակույթի ոլորտին պետության և մասնավոր հատվածի կողմից ֆինանսական աջակցությունը: Սակայն Հայաստանի մշակույթի ոլորտին տրամադրվող պետական և մասնավոր ֆինանսական միջոցների համեմատաբար փոքր ծավալները սահմանափակում են այդ ոլորտը կարգավորող պետական կառույցների, մշակութային կազմակերպությունների և մշակույթի գործիչների կողմից համաշխարհային մշակութային գործընթացներին համահունչ քայլեր կատարելու, դարերից ավանդած արժեքավոր պահպանելու, նորը արարելու հնարավորությունները:

Մշակույթի ոլորտի ֆինանսավորման գերակշիռ մասը բաժին է ընկնում պետական ֆինանսավորմանը, որի ներկայիս ծավալները սահմանափակում են մշակութային կազմակերպությունների ու արժեքների ըստ ամենայնի պահպանության, մշակույթի զարգացման և հասարակության մշակութային պահանջմունքների առավելագույն բավարարման հնարավորությունները: Մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորումը հիմնականում նպատակաուղղված է նշված կազմակերպությունների ու արժեքների պահպանությանը և բավարար չէ հատկապես մշակույթի զարգացման խնդրի լուծման համար: ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման առջև ծառայած են որոշակի հիմնախնդիրներ՝ կապված դրա ոչ բավարար լինելու, կիրառվող ձևերի շրջանակի սահմանափակության հետ: Այս պարագայում նշված ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման, կիրառվող ձևերի շրջանակի ընդլայնման, մշակույթի պահպանման, հատկապես զարգացման և բյուջետային միջոցների ռացիոնալ օգտագործման պահանջներին, մշակույթի զարգացման ռազմավարական նպատակներին համահունչ պետական ֆինանսավորման արդյունավետ ձևերի ընտրության ու կիրառման անհրաժեշտություն է առաջանում: Այս համատեքստում արդիականություն են ձեռք բերում ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակի վերլուծությունը և դրա բարելավման ուղիների պարզաբանումը:

ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակի վերլուծությունը

ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման հնարավորությունները կարելի է գնահատել դրա արդի վիճակի վերլուծության արդյունքում:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված մշակութային ծառայություններին հատկացումների տեսակարար կշիռն այդ բյուջեի ծախսերի ընդհանուր ծավալում կազմել է 0.93%, ՀՀ 2016, 2017 թվականների պետական

բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալում բյուջեով նախատեսված այդ հատկացումների տեսակարար կշիռն աննշան ավելին է եղել՝ կազմելով 1%, իսկ ահա 2019 և 2020 թվականների պարագայում այդ ցուցանիշը դարձյալ 1%-ից ցածր է եղել և անզամ ունեցել նվազման միտում՝ կազմելով համապատասխանաբար 0,93% և 0,88% (թեպետ մշակութային ծառայությունների տեսակարար կշիռը 2016-2020թթ.-ի պետական բյուջեներով հանգստին, մշակույթին և կրոնին նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալում եղել է կեսից ավելին՝ կազմելով համապատասխանաբար 53,1, 53,3, 50,3, 50,5% և 53,0%)¹:

Ինչպես երևում է, 2016-2020թթ.-ի ՀՀ պետական բյուջեներով նախատեսված մշակութային ծառայություններին հատկացումների տեսակարար կշիռը համապատասխան բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալում տատանվել է 1%-ի սահմաններում, որը զգալիորեն ցածր է այլ սոցիալական ոլորտների համեմատությամբ: Մասնավորապես ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության գծով ծրագրավորված ծախսերի տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմել է համապատասխանաբար 8,7%, 6,1% և 26,5%²: Համեմատության համար նշենք նաև, որ զարգացած եվրոպական պետությունների բյուջեի ծախսերի ընդհանուր գումարում մշակույթի և արվեստի բաժինը հասնում է ընդհուպ 2,5%-ի (Бондаренко, Суюпова 113):

Ինչպես երևում է, ՀՀ պետական բյուջեից մշակույթի ոլորտին հատկացումների բաժինը, որպես կանոն, բավականին քիչ է, ինչը բավարար չէ մշակույթի զարգացման հիմնախնդիրների լուծման համար: Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցները հիմնականում ուղղված են մշակութային կազմակերպությունների և արժեքների պահպանությանն ու պաշտպանությանը: Այնինչ այսօր ֆինանսավորման գերակա խնդիրը պետք է լինի մշակույթի ոչ միայն պահպանումը, այլև զարգացումը:

ՀՀ պետական բյուջեից մշակույթի ոլորտին հատկացումների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 2016-2020թթ.-ի ՀՀ պետական բյուջեներից ըստ հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի և մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի նախատեսված հատկացումների կատարման աստիճանի և յուրաքանչյուր տարի նախորդի համեմատությամբ փաստացի հատկացումների դինամիկայի վերլուծությունը: Այսպես՝ 2016 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 26.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 98.7%-ը, իսկ մշակութային ծառայությունների խմբի ծրագրերին հատկացվել է 14,4 մլրդ դրամ՝ կամ նախատեսված ծախսերի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտին ուղղված փաստացի ծախսերը նվազել են 12.4%-ով, ինչը տեղի է ունեցել ոչ ի հաշիվ մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորման ծավալների կրճատման (որոնց տեսակարար կշիռը այդ ոլորտին ծախսերի ծավալում ամենաբարձրն է եղել՝ կազմելով 54,1% կամ 14,4 մլրդ դրամ) (ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր, 28): 2017 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 26 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի

¹ Նշված ցուցանիշները հաշվարկվել են ՀՀ 2016, 2017 և 2018 թվականների պետական բյուջեների մասին ՀՀ օրենքների 2-րդ և 7-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագրի N2 աղյուսակում արտացոլված համապատասխան ցուցանիշների հիման վրա:

² Հաշվարկները կատարվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագրի N2 աղյուսակում արտացոլված տվյալների հիման վրա:


99.5%-ը: 2016 թվականի համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 2.3%-ով, որին նպաստել է նաև մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորման ծավալների կրճատումը (պայմանավորված արվեստին, գրադարաններին և թատերական ներկայացումներին ուղղված ծախսերի նվազմամբ): Ընդ որում, այդ ծրագրերին ուղղված ծախսերն ավելի մեծ չափով են նվազել 2016 թվականի համեմատությամբ (3,6%-ով՝ կազմելով 13,9 մլրդ դրամ կամ 2017 թվականի համար նախատեսվածի 99,5%-ը) (ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ *Նկարագիր*, 27): Նշված ծախսերի տեսակարար կշիռը ոլորտի ծախսերի ծավալում ևս նվազել է նշված ժամանակահատվածում (0,5%-ով և կազմել շուրջ 53,5%): 2018 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրերի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 25.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 97.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 2.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է թանգարանների, ցուցասրահների, արվեստի, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհմիությունների բնագավառի ծախսերի նվազմամբ: Մշակութային ծառայությունների խմբի ծրագրերին հատկացվել է շուրջ 13 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.3%-ը: 2018 թվականին նշված ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 6.3%-ով (պայմանավորված թանգարանների, ցուցասրահների և արվեստին ուղղված ծախսերի կրճատմամբ), իսկ դրանց տեսակարար կշիռն այդ ոլորտի ծախսերի ծավալում՝ 2,1%-ով (կազմելով շուրջ 51,4%) (ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ *Նկարագիր*, Աղյուսակ N2): Այսպիսով՝ ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումները, ըստ հանգիստ, մշակույթ և կրոն հոդվածի և դրանում ընդգրկված մշակութային ծառայությունների, 2016-2018թթ.-ին ունեցել են պարզորոշ արտահայտված նվազման միտում (նույնը վերաբերում է այդ ժամանակահատվածում նշված հոդվածի գծով ծախսերի ընդհանուր ծավալում մշակութային ծառայություններին ուղղված ծախսերի տեսակարար կշիռն): 2019 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրերի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 33,6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 94,0%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը ավելացել են 32,8%-ով, որը մասամբ տեղի է ունեցել մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորման ծավալների 30,4% աճի հաշվին (թեպետ նշված ծառայություններին ուղղված փաստացի ծախսերը կազմել են նախատեսվածի 92,9%-ը, իսկ այդ ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեից փաստացի հատկացումների ընդհանուր ծավալում 2019 թվականին նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1,1%-ով՝ կազմելով՝ 50,4%) և առավելապես հանգստին, կրոնի և սպորտին ուղղված ծախսերի աճի (34,9%) հաշվին (ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ *Նկարագիր*, Աղյուսակ N2): 2020 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծրագրերի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 33,62 մլրդ դրամ (չնչին չափով՝ 0,07 մլրդ դրամով ավելին, քան նախորդ տարի)՝ կազմելով նախատեսված ծախսերի 94,8%-ը (ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ *Նկարագիր*, Աղյուսակ N2): Իսկ ահա մշակութային ծառայություններին ուղղված հատկացումները կազմել են 20,1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94,1%-ը, որը 3,2 մլրդ դրամով ավելին է նախորդ տարվա համեմատությամբ (ինչը տեղի է ունեցել ի հաշիվ նշված ծառայությունների գրեթե բոլոր տեսակներին ուղղված հատկացումների աճի): Ընդ որում, նշված հատկացումների տեսակարար կշիռը հանգստի, կրոնի և սպորտի հոդվածին ուղղված ծախսերի ընդհանուր ծավալում այդ նույն ժամանակահատվածում ևս ավելացել է

(9,4%-ով՝ կազմելով՝ 59,8%): Այսպիսով՝ ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումները, ըստ հանգիստ, մշակույթ և կրոն հոդվածի և դրանում ընդգրկված մշակութային ծառայությունների, 2018-2020թթ.-ին ունեցել են աճի միտում:

Վերը նշված միտումներն ակնառու են ստորև ներկայացված աղյուսակ 1-ի և գծապատկեր 1-ի տվյալներից:

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փաստացի հատկացումները՝ ըստ հանգիստ, մշակույթ և կրոն հոդվածի և դրանում ընդգրկված մշակութային ծառայությունների (մլն. դրամ)¹

ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումներն ըստ հանգիստ, մշակույթ և կրոն հոդվածի և դրանում ընդգրկված մշակութային ծառայությունների (մլն. դրամ)	2016	2017	2018	2019	2020
1. Հանգիստ, մշակույթ և կրոն	26,6	26,0	25,3	33,55	33,62
2. Մշակութային ծառայություններ	14,4	13,9	13,0	16,9	20,1



Նկար 1. ՀՀ պետական բյուջեից մշակութային ծառայությունների փաստացի հատկացումների տեսակարար կշիռը հանգիստ, մշակույթ և կրոն հոդվածին հատկացումների ընդհանուր ծավալում²


Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև 2016-2020թթ. ՀՀ պետական բյուջեից մշակութային ծառայությունների և դրանց առանձին խմբերի համար նախատեսված հատկացումների կատարման աստիճանի վերլուծությունը: Վերլուծության արդյունքում պարզվում է, որ նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից մշակութային ծառայություններին ուղղված փաստացի հատկացումները յուրաքանչյուր տարի նախատեսված չափով չեն իրականացվել համապատասխանաբար 1%-ով, 0,5%-ով, 6,3%-ով, 7,1%-ով և 5,9%-ով: Դա կապված է 2016-2018թթ.-ին այդ ծառայությունների մեծ մասի, իսկ 2019 և 2020 թվականներին

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և երկրորդ աղյուսակները (N2):

² Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և աղյուսակները (N2):

բոլոր ծառայությունների գծով փաստացի հատկացումների՝ նախատեսվածից փոքր լինելու հետ¹:

ՀՀ պետական բյուջեից մշակութային ծառայություններին և դրա՝ վերը նշված խմբերին ուղղված փաստացի հատկացումների դինամիկայի (2016-2020 թթ.) մասին ակնառու պատկերացում կարելի է կազմել՝ դատելով գծապատկեր 2-ից:



Նկար 2. ՀՀ պետական բյուջեից, հանգիստ, մշակույթ և կրոն հատվածում ընդգրկված մշակութային ծառայություններին ուղղված փաստացի հատկացումների դինամիկան՝ ըստ առանձին ծառայությունների (2016-2020 թթ.)²


Մշակութային ծառայություններին ուղղված ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումները 2016-2018թթ.-ին նվազել են (կապված նշված ժամանակահատվածում գրադարանների, այլ մշակութային կազմակերպությունների, արվեստի, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով հատկացումների նվազման), իսկ 2019 և 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել (պայմանավորված այդ ժամանակահատվածում գրեթե բոլոր ծառայությունների գծով հատկացումների ավելացմամբ, բացառությամբ 2019 թվականին մշակույթի տներին, ակումբներին ու կենտրոններին, հուշարձանների ու մշակութային արժեքների վերականգնմանն ու պահպանմանը, իսկ 2020 թվականին՝ այլ մշակութային կազմակերպություններին ուղղված հատկացումների): Այլ խոսքով՝ մշակութային ծառայություններին ուղղված ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումները 2016-2020թթ.-ին ունեցել են

¹ Տվյալների համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և աղյուսակները (N2):

² Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և աղյուսակները (N2):


փոփոխական դինամիկա: Ընդ որում, նշված ժամանակահատվածում նույնպիսի դինամիկա է արձանագրվել մշակութային ծառայությունների բոլոր վերը նշված խմբերի գծով:

2016-2020թթ.-ին մշակութային ծառայություններին ուղղված ՀՀ պետական բյուջեից նախատեսված և փաստացի հատկացումների մասին մեր պատկերացումներն ամբողջացնելու առումով առանձնակի հետաքրքրություն է առաջացնում նաև ըստ նշված տարիների այդ հատկացումների կառուցվածքի և վերջինիս դինամիկայի դիտարկումը, ինչը պարզորոշ երևում է համապատասխանաբար 3-րդ և 4-րդ գծապատկերներից:



Նկար 3. ՀՀ 2016-2020թթ. պետական բյուջեներից մշակութային ծառայություններին նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալում առանձին ծառայությունների մասնաբաժինը (%)¹

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և աղյուսակները (N2):



Նկար 4. ՀՀ 2016-2020թթ. պետական բյուջեներից մշակութային ծառայություններին ուղղված փաստացի հատկացումների ընդհանուր ծավալում առանձին ծառայությունների մասնաբաժինը (%)¹

Գծապատկերներից ակնհայտ է, որ վերը նշված տարիներին մշակութային ծառայություններին ուղղված ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի հատկացումների կառուցվածքում անհամեմատ բարձր է եղել արվեստի տեսակարար

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականների պետական բյուջեների կատարման հաշվետվությունների ամփոփ նկարագրերը և աղյուսակները (N2):

կշիռը՝ կազմելով կեսից ավելին: Փաստորեն, արվեստին ավելի շատ ֆինանսական միջոցներ են նախատեսվել, քան, ասենք, գրադարաններին, թանգարաններին: Արվեստն իր բնույթով այքի է ընկնում միջոցառումների հազեցվածությամբ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեով նախատեսած և փաստացի հատկացումների տեսակարար կշռով արվեստին հաջորդել են թանգարանները, ցուցասրահները և գրադարանները, ինչին նպաստել է մասնավորապես այդ հաստատություններում վերջին տարիներին թափ ստացած նոր տեխնոլոգիաների ու նորարարությունների ներմուծումը: Մյուս ծառայությունները բնութագրվել են պետական բյուջեից հատկացումների անհամեմատ փոքր տեսակարար կշռով: Ըստ տեսակարար կշիռների՝ վերը նշված ծառայությունների խմբերին հաջորդել են այլ մշակութային կազմակերպություններին, կինեմատոգրաֆիային, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնմանն ու պահպանմանը, մշակույթի տներին, ակումբներին ու կենտրոններին վերաբերող ծառայությունների խմբերը (բացառությամբ 2018 թվականին մշակույթի տներին, ակումբներին և կենտրոններին վերաբերող ծառայությունների խմբին ուղղված ՀՀ պետական բյուջեից փաստացի հատկացումների, որոնց տեսակարար կշիռը ողջ մշակութային ծառայությունների կտրվածքով այդպիսի հատկացումների կառուցվածքում ավելին է եղել հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման ծառայությունների խմբի մասնաբաժնից՝ կապված այդ խմբի գծով նախատեսված հատկացումների՝ ավելի մեծ չափով չիրականացման հետ):

Ինչպես երևում է, մշակույթի ոլորտին 2016-2020 թթ. ծրագրավորված և փաստացի բյուջետային հատկացումները, ըստ առանձին մշակութային ծառայությունների, բնութագրվել են վառ արտահայտված անհամաչափությամբ, ինչը հատկապես պայմանավորված է մշակույթի ոլորտի ֆինանսավորման՝ պետության որդեգրած քաղաքականությամբ և այդ ծառայություններից յուրաքանչյուրին վերաբերող առկա հիմնախնդիրների առաջնահերթությամբ:

Միաժամանակ հարկ է նշել, որ թեպետ մշակութային ծառայությունների բոլոր խմբերի տեսակարար կշիռը նշված ժամանակահատվածում այդ ծառայություններին ուղղված ՀՀ պետական բյուջեով նախատեսած և փաստացի հատկացումների կառուցվածքում մերթ ավելացել է, մերթ նվազել, բայց նայնպես դա չի անդրադարձել ըստ նշված մասնաբաժնի մշակութային ծառայությունների առանձին խմբերի՝ միմյանց հաջորդելու նույն ընդհանուր պատկերի վրա:

2016-2020թթ.-ի համապատասխան տարիներին ՀՀ պետական բյուջեներով նախատեսված մշակութային ծառայություններին հատկացումների կառուցվածքի մասին մեր պատկերացումներն ամբողջացնելու առումով առանձնակի հետաքրքրություն է առաջացնում նաև այդ ծառայությունների՝ վերը նշված խմբերից յուրաքանչյուրի գծով հատկացումների կառուցվածքի ուսումնասիրումը՝ մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության հետ կապված կապիտալ ծախսերի մասով (հաշվի առնելով, որ պաշտոնապես հրապարակված վիճակագրական տեղեկատվության մեջ կապիտալ ծախսերը սահմանափակված են միայն այդ մասով): Նման ուսումնասիրությունը թույլ է տալիս այս կամ այն չափով պատկերացում կազմելու նշված հատկացումների կառուցվածքում ընթացիկ ու կապիտալ ծախսերի հարաբերակցության մասին: Այդ հատկացումների կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ մշակութային ծառայությունների մեծ մասի պարագայում մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության հետ կապված կապիտալ ծախսերը բացակայում են կամ ցածր տեսակարար կշիռ ունեն վերը նշված կառուցվածքում: Այսպես՝ գրադարանների, այլ մշակութային կազմակերպությունների և կինեմատոգրաֆիայի պարագայում նշված ժամանակահատվածի համար նախատեսված մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության հետ կապված կապիտալ ծախսերը բացակայում են մշակութային ծառայությունների՝ այդ խմբերին ուղղված պետական բյուջեից հատկացումների կառուցվածքում, իսկ

թանգարանների և արվեստի պարագայում դրանց մասնաբաժինը շատ ցածր է եղել համապատասխան հատկացումների կառուցվածքում: Այսպես՝ թանգարանների ու ցուցահանդեսների ծառայությունների խմբի պարագայում նշված ծախսերի տեսակարար կշիռը 2016, 2017, 2018 2019 և 2020 թվականներին կազմել է համապատասխանաբար 7,9%, 14,6%, 4,2% 2,3% և 1,8%, իսկ արվեստների պարագայում՝ համապատասխանաբար 6,4%, 1,2%, 0,2%, 0,5% և 3,1%: Իսկ ահա ծառայությունների առանձին խմբերի պարագայում մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության հետ կապված կապիտալ ծախսերը 2016-2019թթ.-ին գերակշռել են մշակութային ծառայություններին ուղղված պետական բյուջեից հատկացումների կառուցվածքում: Այսպես՝ մշակութային տների, ակումբների ու կենտրոնների պարագայում նշված ծախսերի տեսակարար կշիռը 2016, 2017, 2018 և 2019 թվականներին կազմել է համապատասխանաբար 77%, 88,3%, 88% և 76,8%, իսկ հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման ծառայությունների խմբի պարագայում՝ համապատասխանաբար 63,4%, 61,6%, 63,2% 58,9%¹: Ինչպես երևում է, վերը նշված կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը մշակութային ծառայությունների համապատասխան խմբերին ուղղված պետական բյուջեից հատկացումների կառուցվածքում մերթ ամօլացել է, մերթ նվազել, այսինքն՝ նկատվել են փոփոխական միտումներ՝ պայմանավորված պետության որոշեցրած մշակութային քաղաքականությամբ:

ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակի բարելավման ուղիները

ՀՀ մշակույթի ոլորտի զարգացման և դրան նպատակաուղղված բյուջետային հատկացումների արդյունավետ օգտագործման հարցում առանձնապես կարևորվում է դրանց համահունչ պետական ֆինանսավորման ձևերի կիրառումը՝ մշակույթի զարգացման ռազմավարական նպատակներին համապատասխան: Սրա հետ կապված՝ ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ մշակութային կազմակերպությունների պահպանման պարզ, նախահաշվային ֆինանսավորումը չի լուծում մշակույթի զարգացման խնդիրը: Մշակույթի զարգացմանն ուղղված բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման հարցում առանձնապես կարևորվում է ՀՀ մշակույթի նախարարության պատվերով, մրցութային կարգով իրականացվող տարեկան դրամաշնորհային մշակութային ծրագրերի ֆինանսավորման դերը: Այն կոչված է ապահովել պետական միջոցների բաշխման թափանցիկ ու մրցակցային համակարգի գործունեությունը, արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացումը, զարկ տալ ստեղծագործական ու հեռանկարային նախագծերին, նպաստել միջազգային հարթակներում հայկական մշակույթի և ժամանակակից արվեստի ըստ արժանավույն ներկայացմանը: Այդ ծրագրերի մրցութային ընտրության ոլորտային ընդգրկման շրջանակները վերաբերում են տեսա և մեդիա, կատարողական, ժողովրդական արվեստներին, գրքին ու գրչությանը, մշակութային ժառանգությանն ու կրթությանը: Վերը նշված դրամաշնորհային մշակութային ծրագրերի ֆինանսավորումը միտված է

¹ Հաշվարկները կատարվել են ՀՀ 2016, 2017 և 2018 թվականների պետական բյուջեների մասին ՀՀ օրենքների համապատասխան N1 հավելվածների N2 աղյուսակներում (08-02-01-ից 08-02-07 հատված), ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի հավելված 1-ի N2 աղյուսակում, ինչպես նաև ՀՀ 2019 թվականների պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագրի N2 աղյուսակում արտացոլված տեղեկությունների հիման վրա:

առաջնահերթությունը տալ պետության որդեգրած մշակութային քաղաքականությանն ու ռազմավարական գերակայություններին համապատասխանող, ինչպես նաև համաֆինանսավորվող, թիրախավորված և երկարատև արդյունավետություն ապահովող ծրագրերին: Ընդ որում, կախված ուղղությունից, նշված գերակայությունների հետ համապատասխանությունից և ներկայացված բյուջեի ծավալներից՝ ծրագրերը կարող են ֆինանսավորվել մասնակի կամ ամբողջապես:

Մշակութային ծրագրերի պետական ֆինանսավորման մեջ առանձնակի տեղ պետք է հատկացնել երկարաժամկետ ազգային և նպատակային-համալիր մշակութային ծրագրերի իրականացմանը (այդ թվում՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը վերաբերող, հատկապես ռազմավարական նշանակության պատմա-մշակութային հուշարձանների հիմնանորոգման պարագայում) հատուկ նպատակային փոխանցումների շրջանակներում:

Մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման ձևերը չեն սահմանափակվում միայն նշվածներով: Հաշվի առնելով առաջիկայում մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման ծավալների ավելացման սահմանափակ հնարավորությունները՝ թերևս ավելի հեռանկարային կարելի է համարել պետության մասնակցությամբ մշակույթի ֆինանսավորման, այսինքն՝ համատեղ ֆինանսավորման ձևերի կիրառումը: Խոսքը ամենից առաջ պետության և ոչ պետական, կորպորատիվ հովանավորների գործընկերային մասնակցությամբ մշակույթի ոլորտի համատեղ ֆինանսավորման, դրա խթանման մասին է: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ և՛ նշված հովանավորները, և՛ պետությունը կարող են էական օգուտ քաղել այդ համագործակցությունից: Այսպես՝ մասնավոր ընկերությունները կարող են ներգրավել բյուջետային ռեսուրսներ իրենց նախագծերում, նախագծի իրացման հետ կապված օգուտվել բանկային վարկերից և ստանալ պետական երաշխիքներ, ձևավորել ընկերության դրական իմիջ, ինչպես նաև էականորեն նվազեցնել ռիսկերը: Պետական կառավարման մարմինների նպատակը կլինի ապահովել տարածքների և դրանց ենթակառուցվածքների հետագա զարգացումը, բարձրացնել այնտեղ կյանքի որակը, ներգրավել հովանավորների միջոցները և նվազեցնել բյուջետային ծախսերը: Պետության և ոչ պետական, կորպորատիվ հովանավորների գործընկերային մասնակցությամբ մշակույթի ոլորտի համատեղ ֆինանսավորումը կարող է վերաբերել համատեղ իրականացվող մշակութային նախագծերին՝ ֆինանսավորման ընդհանուր ծավալում բյուջետային և հովանավորչական միջոցների որոշակի հարաբերակցությամբ: Նշված համատեղ ֆինանսավորման իրականացման համար առանձնապես կարևորվում է ոչ առևտրային մշակութային կազմակերպություններում մարքեթինգի ու մենեջմենթի (խոսքը հատկապես PR-ի և ֆինանսական մենեջմենթի մասին է) արդյունավետ իրականացումը, ինչը կխթանի մասնավոր, հովանավորչական միջոցների ներգրավումը:

ՀՀ մշակույթի ոլորտի պետության մասնակցությամբ համատեղ ֆինանսավորման բավականին արդյունավետ ձև կարելի է համարել նաև այդ ֆինանսավորմանը իշխանության պետական ու տարածքային մարմինների համատեղ մասնակցությունը, այսինքն՝ կենտրոնական ու համայնքային բյուջեներից համատեղ ֆինանսավորումը, որը կարող է նպատակաուղղված լինել առանձին մշակույթի կազմակերպությունների և ներդրումային նախագծերի ֆինանսավորմանը: Նման ֆինանսավորումը թույլ կտա ավելի արդյունավետ ծախսել տարբեր մակարդակի բյուջետային միջոցները, ուժեղացնել դրանց ռացիոնալ օգտագործման նկատմամբ վերահսկողությունը: Մասնավորապես պետական բյուջեի հաշվին կարող են ֆինանսավորվել գրադարանների ու թանգարանների ֆոնդերի համալրման ու պահպանման, իսկ համայնքային բյուջեների հաշվին՝ շենքերի պահպանման, կոմունալ ծառայությունների դիմաց վճարման, սպասարկող անձնակազմի վարձատրության ծախսերը:

Հաշվի առնելով հանրապետությունում մշակույթին պետական բյուջեից հատկացումների բավականին անհամաչափ տարածքային տեղաբաշխվածությունը, մշակույթի պետական ֆինանսավորման ընդհանուր ծավալում մարզերի մշակութային զարգացման ծրագրերի իրականացմանն ուղղված հատկացումների խիստ ցածր տեսակարար կշիռը՝ որպես մշակույթի պետական ֆինանսավորման հեռանկարային ձև կարելի է համարել համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրումը: Դրա հետ մեկտեղ, մարզերում մշակույթի զարգացմանը, նրա ֆինանսավորման հիմնախնդիրների լուծմանը զգալիորեն կնպաստի պետության մասնակցությամբ համաֆինանսավորման կարգով մարզերի մշակույթի զարգացման նպատակային-համալիր ծրագրերի իրականացումը:

ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման հնարավորությունները կարող են ընդլայնվել նաև դրա անուղղակի ձևերի կիրառմամբ՝ կապված մշակութային նշանակության ապրանքներ ու ծառայություններ առաջարկողների նկատմամբ հարկային արտոնությունների կիրառման հետ: Արտասահմանյան երկրներում մշակույթի ոլորտի պարագայում կիրառվող առանձին հարկային արտոնությունները գրեթե բացակայում են մեր հանրապետությունում: Նշված երկրներում մշակութային կազմակերպությունների համար ամենից տարածված հարկային արտոնությունը նրանց առաջարկած ապրանքների ու ծառայությունների ազատումն է շահութահարկից, ավելացված արժեքի հարկից, գույքահարկից կամ դրանց նկատմամբ նշված հարկատեսակների ցածր դրույքաչափի կիրառումն է: Օրինակ՝ Բելգիայում արվեստի առարկաներից գանձվող ավելացված արժեքի հարկը 19%-ից իջեցվել է մինչև 6%, իսկ ահա Իռլանդիայում գրքերի նկատմամբ նշված հարկատեսակը չի կիրառվում: Գույքահարկից ազատվում են ոչ առևտրային մշակութային կազմակերպությունների սեփականության ներքո գտնվող արվեստի ստեղծագործությունները (Шишкин 108):

Մշակույթի ֆինանսական դոնորների՝ բարեգործների, հովանավորների նկատմամբ այդ արտոնությունները դրսևորվում են հիմնականում շրջանառության հարկի, շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի արտոնությունների ձևով և այս պարագայում մշակույթի ու արվեստի զարգացման, մշակութային գործունեության աջակցման նպատակով նրանց նվիրաբերած գումարները հանվում են համապատասխանաբար շրջանառության, շահույթի և եկամուտների հարկման ենթակա գումարից (Толмасова 83):

Մեր հանրապետությունում մշակույթի ոլորտի պարագայում կիրառվող հարկային արտոնություններից թերևս կարելի է նշել ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված ավելացված արժեքի հարկի (մասնապատասխանական գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի ու գեղարվեստի ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցման պարագայում), նույն օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկի (պատմամշակութային նշանակության հողերի և այդպիսի նշանակության պետական սեփականություն հանդիսացող շինությունների պարագայում) վճարմանը վերաբերող, ինչպես նաև առհասարակ բարեգործությունների պարագայում կիրառվող արտոնությունները (ՀՀ Ազգային Ժողով, ՀՀ *հարկային օրենսգիրք*): Մինչդեռ մշակույթի ոլորտի պարագայում հարկային արտոնությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ստեղծագործական աշխատանքի յուրահատկությամբ և դրա արդյունքի առանձնահատուկ հասարակական նշանակությամբ: Բացի այդ, մշակույթի ոլորտից պետական բյուջե հարկային մուտքերի բաժինը բյուջեի այդ մուտքերի ընդհանուր ծավալում շատ փոքր է և այս պարագայում ոլորտի կազմակերպությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների նկատմամբ հարկային արտոնությունների կիրառումն (տարբեր դրսևորումներով, մասնավորապես՝ ԱՎՀ-ի կամ շահութահարկի վճարումից ազատմամբ կամ դրանց դրույքաչափերի նվազեցմամբ) էապես չի

անդրադառնա նշված ծավալի նվազեցման վրա: Դրա հետ մեկտեղ, նշված արտոնությունների կիրառումը անուղղակիորեն կընդլայնի մշակույթի ոլորտի պետական բյուջեից ֆինանսավորման հնարավորությունները:

Ինչ վերաբերում է ՀՀ մշակույթի ոլորտին պետական ֆինանսավորման կոնկրետ ծավալներով ու ուղղություններով հետազայում իրականացման նպատակահարմարությունը, ապա այն, մեր կարծիքով, պետք է որոշվի նշված ոլորտի զարգացման ռազմավարությունից ելնելով:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման արդի վիճակը բնութագրվում է դրա անբավարարությամբ, ծախսերի մասնակի, հիմնականում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմամբ: Նշված ֆինանսավորումը հիմնականում նպատակաուղղված է մշակութային կազմակերպությունների ու արժեքների պահպանությանը և բավարար չէ հատկապես մշակույթի զարգացման հիմնախնդրի լուծման համար: Այս պարագայում առանձնապես կարևորվում է մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնումը, մշակույթի զարգացմանը միտված ֆինանսավորման այլ ձևերի ընտրությունը, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործել բյուջետային միջոցները՝ մշակույթի զարգացման ռազմավարական նպատակներին համապատասխան:

Մշակույթի ոլորտի զարգացման, դրա պետական ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման հիմնախնդրի լուծումը թեկուզև հեռանկարում հնարավոր կլինի երկրի բյուջեի եկամուտների և նշված ոլորտին բյուջետային հատկացումների մասնաբաժնի ավելացման պարագայում: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ մշակույթի ողջ ոլորտի և ըստ դրա ուղղությունների երկարաժամկետ պետական ֆինանսավորման նպատակահարմարությունը որոշվում է ոլորտի զարգացման ռազմավարությունից ելնելով:

ՀՀ մշակույթի ոլորտի պետական ֆինանսավորման հնարավորությունները, ըստ իս, կարելի է ընդլայնել նաև մեր երկրում դեռևս տարածում չունեցող այլ ֆինանսավորման այնպիսի արդյունավետ ձևերի կիրառմամբ, ինչպիսիք են՝ պետության մասնակցությամբ մշակույթի համատեղ ֆինանսավորումը, երկարաժամկետ ազգային և նպատակային-համալիր մշակութային ծրագրերի ֆինանսավորումը, մշակույթի ոլորտի ֆինանսավորման անուղղակի ձևերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *հարկային օրենսգիրք*. ՀՀՊՏ 2016.11.04/79 (1259).
2. ---. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին օրենք, 09.12.2015.
3. ---. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին օրենք, 08.12.2016.
4. ---. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին օրենք, 08.12.2017.
5. ---. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենք, 22.11.2018.
6. ---. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենք, 06.12.2019.
7. ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ. *Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր*. Երևան, 2017.
8. ---. *Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր*. Երևան, 2018.
9. ---. *Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր*. Երևան, 2019.

10. ---. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր. Երևան, 2020.
11. ---. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ամփոփ նկարագիր. Երևան, 2021.
12. Шишкин, Сергей. Экономика социальной сферы. Москва, 2003.
13. Толмасова, Алла. Проблемы налогообложения некоммерческих организаций. Москва, 2003.
14. Бондаренко, Наталья, Сюпова, Марина. Формы и модели государственного финансирования культурной сферы. Электронное научное издание «Ученые заметки ТОГУ» 2016, Том 7, № 4., https://pnu.edu.ru/media/ejournal/articles-2016/TGU_7_189.pdf

Works Cited

1. HH Azgayin Jhoghov. HH harkayin o'rensgirq. [The National Assembly of the Republic of Armenia: The Tax Code of the Republic of Armenia] HHPT 2016.11.04/79 (1259).
2. ---. HH 2016 t'vakani petakan byujei masin o'renq, [The Law on the State Budget of the Republic of Armenia for 2016] 09.12.2015.
3. ---. HH 2017 t'vakani petakan byujei masin o'renq, [The Law on the State Budget of the Republic of Armenia for 2017] 08.12.2016.
4. ---. HH 2018 t'vakani petakan byujei masin o'renq, [The Law on the State Budget of the Republic of Armenia for 2018] 08.12.2017.
5. ---. HH 2019 t'vakani petakan byujei masin o'renq, [The Law on the State Budget of the Republic of Armenia for 2019] 22.11.2018.
6. ---. HH 2020 t'vakani petakan byujei masin o'renq, [The Law on the State Budget of the Republic of Armenia for 2020] 06.12.2019.
7. HH Azgayin jhoghovi byujetaryin grasenyak. Hayastani Hanrapetut'yan 2016 t'vakani petakan byujei petakan byujei katarman hashvetvut'yan amp'op' nkaragir. [Budget Bureau of the National Assembly of the Republic of Armenia: Brief description of the report on the execution of the State Budget of the Republic of Armenia for 2016] Erevan, 2017.
8. ---. Hayastani Hanrapetut'yan 2017 t'vakani petakan byujei katarman hashvetvut'yan amp'op' nkaragir. [Brief description of the report on the implementation of the State budget of the Republic of Armenia for 2017] Erevan, 2018.
9. ---. Hayastani Hanrapetut'yan 2018 t'vakani petakan byujei katarman hashvetvut'yan amp'op' nkaragir, [Brief description of the report on the implementation of the State budget of the Republic of Armenia for 2018] Erevan, 2019.
10. ---. Hayastani Hanrapetut'yan 2019 t'vakani petakan byujei katarman hashvetvut'yan amp'op' nkaragir, [Brief description of the report on the implementation of the State budget of the Republic of Armenia for 2019] Erevan, 2020.
11. ---. Hayastani Hanrapetut'yan 2020 t'vakani petakan byujei katarman hashvetvut'yan amp'op' nkaragir, [Brief description of the report on the implementation of the State budget of the Republic of Armenia for 2020] Erevan, 2021.
12. Shishkin, Sergej. Jekonomika social'noj sfery [The Economics of the Social Sphere]. Moskva, 2003.

13. Tolmasova, Alla. Problemy nalogooblozhenija nekommercheskih organizacij [Problems of Taxation of Non-profit Organizations]. Moskva, 2003.

14. Bondarenko Natal'ja, Sjupova Marina. Formy i modeli gosudarstvennogo finansirovanija kul'turnoj sfery. Jelektronnoe nauchnoe izdanie «Uchenye zametki TOGU» [Forms and models of state financing of the cultural sphere. Electronic scientific publication "Scientific notes of TOGU"] 2016, Tom 7, № 4., https://pnu.edu.ru/media/ejournal/articles-2016/TGU_7_189.pdf

CURRENT ANALYSIS OF THE STATE FINANCING OF THE RA CULTURAL SPHERE AND WAYS OF IMPROVEMENT

KAREN KHOJOYAN

*Armenian State Pedagogical University after Kh.Abovyan,
Department of Economics and Management,
Ph.D. in Economics, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia*

SUSANNA SARGSYAN

*Yerevan High School No.139 after Karen Demirchyan, Deputy Director,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to identify ways to improve the current situation of state financing of the RA cultural sphere.

The objectives of the article are to analyze trends characterizing the current situation of state financing of the cultural sphere of our republic and to identify ways to expand the possibilities of this financing and the scope of the forms used.

The article proposed approaches aimed at improving the current situation of state financing of the RA cultural sphere and expanding the above framework.

Methodological base of the article includes scientific re-equipment, comparative and graphical analysis, accumulation of historical and logical methods.

As a result of the study, the following main conclusions were drawn:

- The dynamics of actual allocations from the state budget for 2016-2020 to cultural services was characterized by variable trends, and in general it did not positively affect the expansion of opportunities for state financing of culture;

- The share of art, followed by museums, exhibition halls and libraries, is incomparably higher in the structure of the 2016-2020 and actual allocations for the sphere of culture from the State budget of the Republic of Armenia; this indicator was incomparably less in the line of other services. The striking asymmetry of this structure is primarily due to the policy pursued by the state, the priority of existing problems of services, and at the same time indicates the insufficiency of state funding for a significant part of cultural services.

Keywords: sphere of culture, cultural services, cultural programs, financial resources, volume of state financing, structure of state financing, forms of state financing.

АНАЛИЗ ТЕКУЩЕГО СОСТОЯНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ФИНАНСИРОВАНИЯ В СФЕРЕ КУЛЬТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПУТИ ЕГО СОВЕРШЕНСТВОВАНИЯ

КАРЕН ХОДЖОЯН

*доцент кафедры экономики и менеджмента
Армянского государственного педагогического университета
им. Х. Абовяна, кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

СУСАННА САРГСЯН

*завуч старшей школы № 139 им. К. Демирчяна,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является определение путей улучшения текущего состояния государственного финансирования культурной сферы РА.

В статье поставлены следующие задачи: проанализировать современные тенденции государственного финансирования в сфере культуры Республики Армения, выявить и представить круг возможностей и форм такого финансирования, а также предложить пути оптимизации современного состояния государственного финансирования сферы культуры РА и расширения указанных рамок.

В ходе работы над статьей были использованы методы научной абстракции, сравнительно-графического анализа, историко-логического параллелизма.

Подводя итоги исследования, мы пришли к следующим выводам:

– характер средств, выделенных из госбюджета на сферу культуры в период с 2016 по 2020 год, имел неустойчивую динамику, что не могло положительно повлиять на рамки государственного финансирования в этой сфере;

– из предусмотренных госбюджетом РА 2016-2020 гг. средств на сферу культуры большая часть была выделена на объекты искусства, музеи, выставочные залы и библиотеки. По отношению к другим объектам сферы культурных услуг этот показатель был неизмеримо ниже.

Такая несимметричность в распределении средств обусловлена, прежде всего, проводимой государством политикой в области культуры, ее первоочередными задачами и свидетельствует о недостаточности финансирования госбюджетом сферы культурных услуг.

Ключевые слова: *сфера культуры, культурные услуги, культурные программы, финансовые средства, объем государственного финансирования, система государственного финансирования, формы государственного финансирования.*

**ՁԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

ՀՏԴ 338.2(479.25):334.72

DOI: 10.52063/25792652-2021.4-216

ՀԱԿՈՐ ԹԱՐՓՈՇՅԱԼ

«Ամերիա» ՓԲԸ կառավարման խորհրդատվարական
ծառայության խորհրդատու,
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hakobtarposhyan@paara.am

**Սույն հոդվածի նպատակն է բացահայտել Հայաստանում
ձեռնարկատիրության ոլորտում առկա հիմնախնդիրների հիմքերը և դրանց
առաջացման պատմական պատճառները:**

**Առաջադրված խնդիրներն են վերլուծել Հայաստանում
ձեռնարկատիրական ինստիտուտի ձևավորման հիմքերը, մասնավորապես
գնահատել անկախության հռչակումից հետո ազատ շուկայական պայմանների
ձևավորման ընթացքում ձեռնարկությունների ձևավորման գործընթացը և
խորհրդային միության ազդեցությունը ձեռնարկատիրական միջավայրի վրա:
Հոդվածի խնդիրն է նաև քանակական տվյալների միջոցով վերլուծել
ձեռնարկատիրության ներկա վիճակը Հայաստանում և գնահատել
ձեռնարկությունների համար առկա ինստիտուցիոնալ խոչընդոտները:**

**Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ
խորհրդային միջավայրը թույլ ազդեցություն ունի այսօր Հայաստանում
ձեռնարկատիրական միջավայրի վրա: Վերլուծության արդյունքում պարզ
դարձավ նաև, որ Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում
առկա են շատ ավելի խորքային, ինստիտուցիոնալ խոչընդոտներ, քան
աշխարհում. Հայաստանում ձեռնարկություններն ապահովում են
արտադրողականության ցածր մակարդակը, ինչն իր հերթին հանգում է ցածր
մրցունակ արտադրանքի թողարկմանը, երկարաժամկետ ներդրումների
անկմանը, ինչն էլ հանդիսանում է արտադրողականության ցածր մակարդակի
պատճառ:**

Հիմնաբառեր` ձեռնարկատիրություն, մասնավոր հատված,
կազմակերպություն, մասնավորեցում, սկսնակ ձեռնարկատիրական
գործունեություն, ՓՄՁ, արտադրողականություն:

Ներածություն

Տնտեսության համակարգային ցնցումները՝ ինչպես, օրինակ, 2008թ.
ֆինանսատնտեսական ճգնաժամը կամ 2020թ. կորոնավիրուսային համավարակը,
բարդացնում են տնտեսական մեխանիզմների արդյունավետ աշխատանքը, մյուս
կողմից աշխարհում բնակչության թվի ընթացիկ և կանխատեսվող աճը էլ ավելի է
կարևորում ռեսուրսների արդյունավետ բաշխումը և օգտագործումը (United Nations
10):

* Հոդվածը ներկայացվել է 23.11.2021թ., գրախոսվել՝ 24.11.2021թ., տպագրության
ընդունվել՝ 25.12.2021թ.:

Սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման նախապայմանը շուկայական տնտեսությունն է, քանի որ այն արտադրողներին տալիս է տնտեսական ազատություն և ապահովում է շուկայում մրցակցությունը: Վերջինս արտադրողներին ստիպում է նվազեցնել ծախսերը՝ առավել որակյալ արտադրանք թողարկելու և մրցակիցներից էժան վաճառելու նպատակով: Սա հանգեցնում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը (Ադաշանյան 66):

Ըստ Էռնեստի, շուկայական տնտեսությունը կարելի է համարել բաղաբաղադրության ամենակարևոր ձեռքբերումներից մեկը, ինչը, ի տարբերություն ավանդական, հրամայական կամ խառը տնտեսական համակարգերի, թույլ է տալիս ռեսուրսների ազատ հոսքը ոլորտների միջև (Benedict and al. 2): Ընդ որում, այդ հոսքերը որպես կանոն ունեն ցածր արդյունավետություն ունեցող ոլորտներից դեպի բարձր արդյունավետություն ունեցող ոլորտներ ուղղությունը:

Այս առումով բարիքներ ստեղծող տնտեսական գործակալների՝ ձեռնարկությունների դերը անգնահատելի է: Ձեռնարկատիրությունը տնտեսական շարժիչի համար դառնում է կարևորագույն բաղադրիչներից մեկը, քանի որ տնտեսության մեջ բարիքների ստեղծման նպատակով արտադրական ռեսուրսների համակցությունը իրականացվում է առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկությունների) միջոցով (Naudé 17):

Ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության առանցքային ինստիտուցիոնալ անկյունաքարն է, որը մեծապես նպաստում է տնտեսության աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը և մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանը:

Ձեռնարկատիրական ինստիտուտը Հայաստանում

Հայաստանում ձեռնարկատիրական ինստիտուտի ձևավորման գործում շրջադարձային եղավ Խորհրդային Միության փլուզումն ու անկախության հռչակումը և դրան հաջորդած՝ համայնավարականից ազատ շուկայական տնտեսության անցումը:

Չնայած դրան՝ պետք է նկատել, որ Հայաստանում ձեռնարկատիրական ինստիտուտի ձևավորման արմատները սկիզբ են առնում ավելի վաղ շրջանում՝ դեռևս Խորհրդային Միության տարիներից: 1987-88թթ.-ին ընդունվեց անհատ ձեռնարկատերերի և մասնավոր «կոոպերատիվների» մասին օրենսդրությունը (Duker 95-98), որը հնարավորություն էր տալիս ձեռնարկությունների տնօրեններին ու աշխատավորական կոլեկտիվներին ստանալ անկախություն պետությունից, իսկ իրականում ձեռնարկությունների սեփականատեր դառնալ: 1990 թվականի օգոստոսին Խորհրդային կառավարությունն առաջին անգամ թույլ տվեց «ձեռնարկատերերին» վարձել և աշխատանքից ազատել աշխատողների (Joint Economic Committee 277):

Բացի դրանից, մինչ այդ Էլ, ինչպես Խորհրդային Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում առկա էր սովետային տնտեսություն՝ ապօրինի մասնավոր ձեռնարկատիրություն: Տարբեր գնահատականներով՝ դրա կշիռը հասնում էր շուրջ 20%-ի (Kim and al.17), ինչը նույնպես որոշակի հիմք դարձավ մասնավոր հատվածի ձևավորման համար:

Այնուամենայնիվ, ձեռնարկատիրության զարգացման իրական խթան հանդիսացավ ոչ թե ապօրինի ձեռնարկատիրությունը կամ Խորհրդային Հայաստանում վերջին տարիների «պրենստրոյկան», այլ դրան հաջորդած անկախության կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ մասնավորեցման գործընթացը:

Մասնավորեցումը կարելի է համարել պլանային տնտեսությունից շուկայական տնտեսությանն անցման ժամանակահատվածում իրականացվող կարևոր վերափոխումներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, որը, ըստ ՀՀ օրենսդրության,


սահմանվում է որպես «պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցում մասնավորեցման սուբյեկտներին» (հոդված 3): Դրա առաջնային նպատակն էր ձեռնարկությունների կառավարումից պետության հեռացումը և մասնավոր ձեռնարկատիրության ստեղծումը:

Այսպես՝ ի տարբերություն մյուս հետխորհրդային պետությունների, որոնց մի մասը ընտրեց արմատական (Ռուսաստան, Ղրղզստան), որոշները՝ չափավոր արմատական (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան), իսկ որոշները՝ հետաձգված (Ադրբեջան, Վրաստան, Տաջիկստան) վերափոխումների ուղին, Հայաստանը նախ՝ մինչև 1993թ.-ը, ընտրեց արմատական, իսկ հետո՝ դանդաղ տեմպով վերափոխումների ճանապարհը:

ՀՀ-ում մասնավորեցման կամ սեփականաշնորհման գործընթացն իրականացվեց երեք համապետական ծրագրերի միջոցով՝

1. հողի և գյուղատնտեսական տեխնիկայի մասնավորեցում,
2. բնակարանային ֆոնդի սեփականաշնորհում,
3. պետական գույքի մասնավորեցում:


Փաստորեն մասնավորեցման հիմքում դրվեցին գործընթացի հետևյալ հերթականությունը՝ հող, գյուղմթերք (հողի սեփականաշնորհում), մթերքի վաճառք (առևտրի օբյեկտների սեփականաշնորհում), մթերքների վերամշակում (սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններ) և ապա՝ խոշոր արդյունաբերություն:



Նկար 1. Մասնավորեցման գործընթացը 1990-1998 թվականներին (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, [1998] 153)

Երկրում ձեռնարկատիրության ստեղծման համար հիմնական դերը ունեցող հենց վերջին փուլը, որը սկսվել է 1991 թվականին փոքր օբյեկտների մասնավորեցման գործընթացով, 1994 թվականից ուղեկցվել է նաև պետական ձեռնարկությունների, անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման գործընթացով՝ հիմք ընդունելով «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքը (Պետական գույքի կառավարման կոմիտե): Այդ ընթացքում էր, որ մասնավորեցվեցին տնտեսության համար առավել կարևոր և ահռելի ավելացված արժեք ստեղծող ընկերությունները: Գործընթացի արդյունքում մասնավորեցման սկզբից մի քանի տարի անց՝ 1999թ.-ին, երկրի ՀՆԱ-ի կեսից ավելին՝ 60%, ստեղծում էին մասնավոր ձեռնարկությունները: Այդ ժամանակ ԱՊՀ երկրներում մասնավոր ոլորտի բաժինը ՀՆԱ-ում բավականին տարբեր էր. Բելառուսում՝ 20%, Ղազախստանում՝ 55%,

Ուկրանիայում՝ 55%, Ռուսաստանում՝ 70%: Վրաստանում ու Հրդգստանում ցուցանիշը հավասար էր Հայաստանի ցուցանիշին:



Նկար 2. ՀՆԱ-ում մասնավոր ոլորտի կշիռը, Հայաստանում, հետխորհրդային և այլ երկրներում, 1999թ. (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, [2000] 93)


Խորհրդային կապիտալի և ինստիտուցիոնալ սոցիալիստական համակարգի վրա հիմնված պետությունում տարիների ընթացքում ձևավորվեց ձեռնարկատիրական համակարգ: Չնայած դրան՝ 2019-2020թթ.-ին իրականացված «GEM Հայաստան» զեկույցը հիմնականում հերքում է հիպոթեզը, ըստ որի՝ հետխորհրդային միջավայրը այժմ բացասաբար է անդրադառնում Հայաստանում ձեռնարկատիրության վրա: Որպես փաստարկ ներկայացվում է սկսնակ ձեռնարկատիրության մակարդակով (մինչև 42 ամսի գործունեության փուլում գտնվող ձեռնարկություններով զբաղվողներ) Հայաստանի՝ 50 երկրի շարքում առաջատարներից մեկը լինելը և երիտասարդների առավել մեծ ներգրավվածությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Այսպիսով՝ սկսնակ ձեռնարկատիրության մակարդակով Հայաստանը բավականին բարձր դիրքում է յուրաքանչյուր 5-րդը ներգրավված է որևէ տեսակի սկսնակ ձեռնարկատիրական գործունեության մեջ (21.0%): Այդ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 7-րդ տեղը 50 երկրի շարքում և 1-ինն է Արևելյան Եվրոպայում:

Դրա հետ մեկտեղ, կայացած բիզնեսի ցուցանիշով (չափահաս բնակչության 7.8%) Հայաստանը միջին դիրքում է (23-րդը 50-ից): Սա ըստ էության փաստում է Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում ավելի շատ ինստիտուցիոնալ խոչընդոտների առկայության մասին:

Իհարկե, այն, որ Հայաստանում շատերը սկսում են զբաղվել ձեռնարկատիրությամբ, ունի դրական նախադրյալներ, ինչպիսին է, օրինակ, ավելի նպաստավոր արժեքամակարգը: Մասնավորապես՝ «բիզնեսը ցանկալի կարիերա է» և «բիզնեսի նպատակը սոցիալական խնդիրները լուծելն է» դրույթների հետ համաձայնողների կշռով Հայաստանը 4-րդն է 50 երկրների շարքում: Մյուս կողմից ծանրակշիռ են նաև բացասական նախադրյալները, օրինակ՝ հասարակության եկամուտների ցածր մակարդակը, ինչի մասին փաստում է կարիքից դրդված բիզնես

սկսելու ամենատարածված շարժառիթ լինելը: Ձեռնարկատերերի շուրջ 90%-ը համաձայն են պնդման հետ, որ ձեռնարկատիրությամբ զբաղվում են «ապրուստ վաստակելու նպատակով, որովհետև աշխատանք չկա», մինչդեռ նպատակապես դրդապատճառի՝ «աշխարհում մի բան փոխելու» ցանկությամբ բիզնես սկսելու ցուցանիշով Հայաստանը ամենացածր դիրքերում է (47-րդ՝ 50 երկրի շարքում):




Նկար 3. Ընդհանուր սկսնակ ձեռնարկատիրական գործունեությունը (բնակչության %) ըստ երկրների/տարածաշրջանների (Ամերիա ՓԲԸ, GEM 65)

Աղյուսակ 1. Հայաստանի դիրքը 50 երկրի շարքում ըստ ձեռնարկատիրությամբ զբաղվելու շարժառիթների (Ամերիա ՓԲԸ, GEM 93)


Դրդապատճառներ	դրույթին համաձայնած չափահասների %	Հայաստանի դիրքը		GEM 50 երկրի միջինը	Համաշխարհային և միջինի հետ տարբերությունը, տ.կ.
		GEM 50 երկրի շարքում	Արև. Եվրոպայի 9 երկրների շարքում		
Փոփոխություն	18.4%	47	9	46.2%	-27.8
Հարստություն	51.5%	30	4	55.2%	-3.7
Ընտանիք	35.5%	21	4	35.6%	-0.1
Ապրուստ	88.8%	8	1	63.4%	25.4

Հավանաբար նաև այս գործոնն է պատճառը, որ ի տարբերություն աշխարհի մի շարք այլ երկրների՝ Հայաստանում ձեռնարկատիրության կենտրոնացումը 2 հիմնական ճյուղում՝ գյուղատնտեսությունում և առևտրում, շատ ավելի բարձր է: Ընդ որում, ամենացածր արտադրողականությունն ունեցող ճյուղի՝ գյուղատնտեսության մասնաբաժնով Հայաստանն առաջին տեղում է, իսկ ամենաբարձր արտադրողականությունն ունեցող ճյուղի՝ բիզնես ծառայությունների մասնաբաժնով՝ վերջին տասնյակում:




Նկար 4. Ձեռնարկատիրության կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանում և այլ երկրներում/տարածաշրջաններում (Ամերիա ՓԲԸ, GEM 79)

Պաշտոնական վիճակագրությունը նույնպես ցույց է տալիս այս խնդիրը: ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» զեկույցի համաձայն՝ 2019թ.-ի ընթացքում ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների (մոտ 75.2 հազար) 62.5%-ը հանդիսանում են առևտրի ոլորտի ընկերություններ (ՀՀ ԱՎԿ ՓՄՁ 6): Հարկ է նշել, որ ըստ միջազգային մեթոդաբանության գյուղատնտեսության ոլորտը ՓՄՁ վիճակագրության մեջ ներառված չէ, սակայն այս ոլորտում գործունեություն ծավալողների թիվը ամենամեծն է:



Նկար 5. ՀՀ-ում տնտեսական գործունեությունն իրականացրած տնտեսավարողների բաշխումը տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությամբ

Այս ձեռնարկությունների գերակշիռ մասը՝ 99.8%-ը, հանդիսանում են գերփոքր, փոքր և միջին ձեռնարկություններ կամ այլ կերպ ասած՝ ձեռնարկատիրության մասին խոսելիս խոսքը մեծամասամբ գնում է ՓՄՁ ոլորտի մասին:



Նկար 6. ՀՀ-ում տնտեսական գործունեությունն իրականացրած տնտեսավարողների քանակի բաշխումը ըստ չափերի (ՀՀ ԱԿԿ, ՓՄՁ 10)

Գերփոքր և փոքր ձեռնարկությունների գրեթե 2/3-ը հանդիսանում են առևտրի ոլորտի քիչ քանակով աշխատակից ունեցող ձեռնարկություններ: Միջին և խոշոր չափի ձեռնարկությունների դեպքում դրանց քանակը զիջում է միայն մշակվող արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններին (28%-ը 21%-ի համեմատ):


Տարօրինակ չէ ասել, որ ձեռնարկությունների կեսից ավելին գործում է Երևանում, քանի որ տնտեսությունն ունի մեծ կենտրոնացում դեպի մայրաքաղաք: Բնակչության 36.8%-ը, իսկ ՀՆԱ-ի ավելի քան 54%-ը կենտրոնացած է մայրաքաղաքում:

Մարզերից քանակապես ամենաշատ ձեռնարկատիրական միավորներն ունի Կոտայքը (6 404), ընդ որում, բոլոր չորս չափի խմբերում:

Երևանը առաջատարն է ոչ միայն բացարձակ, այլ նաև հարաբերական ցուցանիշով: 1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ների քանակով Երևանը գերազանցում է բոլոր մարզերին, ինչը վկայում է աշխարհագրորեն ձեռնարկատիրական տարբեր մակարդակի ակտիվության մասին:

Գյուղական համայնքներում աղքատությամբ և զբաղվածության ցածր մակարդակով պայմանավորված՝ բավականին զարգացած է գյուղատնտեսական ուղղվածությունն ունեցող ձեռնարկատիրական գործունեությունը, ինչը չի արտահայտվում ՓՄՁ պաշտոնական վիճակագրության մեջ: Մասնավորապես՝ սկսնակ ձեռնարկատերերի մակարդակը գյուղական համայնքներում կազմում է 25.6%՝ Երևանի՝ 19.8%-ի համեմատ, իսկ կայացած ձեռնարկատերերի մակարդակը՝ 13.6%՝ Երևանի՝ 5.3%-ի համեմատ (Ամերիա ՓԲԸ 90): Այս ցուցանիշների և պաշտոնական վիճակագրության տարբերությունը փաստում է մարզերում գյուղատնտեսության բարձր դերի մասին, մինչդեռ վերջինս հանդիսանում է ցածր ավելացված արժեք ստեղծող գործունեություն, քանի որ մարզերում ստեղծվող բարիքը չի անցնում բավականաչափ վերամշակման և արտադրական փուլեր, ինչի հետևանքով դրա արժեքը մնում է ցածր: Այլ կերպ ասած՝ գյուղացին իր կողմից աճեցված միրգը, օրինակ՝ խնձորը, հանձնում է սպառողին միայն մեկ ապրանքի տեսքով՝ որպես խնձոր, մինչդեռ դրա տեսակավորման արդյունքում ստացված տարբեր խմբերից կարելի է ստանալ ասենք՝ հյուլթ, պահածո կամ վալերիանաթթու:


Այս խմբերի բացակայությամբ պայմանավորված՝ թե՛ մարզերի ձեռնարկությունների, թե՛ մարզերի դերը տնտեսության մեջ փոքրանում է: Վերջնարդյունքում վերամշակման բացակայությունը բացասաբար է անդրադառնում երկրի արտահանման զամբյուղի բազմազանության ու բարդության վրա:



Նկար 7. ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների քանակը 1000 բնակչի հաշվով՝ ըստ մարզերի


Մյուս կողմից՝ Երևանում բարձր ավելացված արժեք ունեցող ձեռնարկությունների կենտրոնացումը և Հայաստանի՝ փոքր չափեր ունենալը կարող է դառնալ նորարարական ձեռնարկատիրության Էկոհամակարգի ստեղծման հնարավորություն:

Ընդհանուր մասնավոր հատվածի ձեռնարկությունների դերը տնտեսության մեջ հասկանալու համար դիտարկենք տնտեսության մի քանի առանցքային ցուցանիշների մեջ առևտրային բնույթի անկախ տնտեսական միավորների դերը: Ձեռնարկությունների դերը զբաղվածների թվաքանակի մեջ 2019թ.-ին կազմում է 59.2%, իսկ համախառն ավելացված արժեքի (ՀԱԱ) մեջ՝ միայն 39.7%: Համեմատության համար նույն թվականին ՀԱԱ-ի մեջ առևտրային բնույթի ձեռնարկությունների կշիռը հարևան Վրաստանում (Վրաստանի վիճակագրական ծառայություն 48) մի փոքր պակաս է, քան Հայաստանում և կազմում է 37.9%:



Նկար 8. Առևտրային բնույթի անկախ տնտեսական միավորների դերը տնտեսության մեջ 2019թ.-ին

Զբաղվածության մեջ խոշոր ձեռնարկությունների դերը կտրուկ ավելանում է, չնայած նրան, որ այս ձեռնարկություններն իրենց քանակով մեծապես գիջում են մյուսներին: Սա, իհարկե, տրամաբանական է, քանի որ խոշոր ձեռնարկություններն ունեն ավելի մեծ թվով վարձու աշխատողներ (1 կազմակերպության հաշվով՝ խոշոր՝ 795, միջին՝ 97, փոքր՝ 19, գերփոքր՝ 1.1) և աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն:



Նկար 9. Առևտրային բնույթի անկախ տնտեսական միավորների շրջանառությունը 2019թ.-ին

ՓՄՁ-ների շրջանում իրականացված հետազոտությունը փաստում է, որ 2018թ.-ին ներդրումներ են կատարել գերփոքրերի 37%-ը, փոքրերի 61%-ը և միջին չափի ձեռնարկությունների 87%-ը: Չնայած 2012-ի համեմատությամբ ավելի շատ են ներդրում կատարած փոքր և միջին չափի ձեռնարկությունները, այնուհանդերձ, ի հաշիվ գերփոքրերի քանակի, ընդհանուր ՓՄՁ-ների մեջ ներդրում կատարած ձեռնարկությունների կշիռը նվազել է (Ամերիա ՓԲԸ, ՓՄՁ 67):

Ձեռնարկությունների շրջանում ներդրումների մասով մեկ այլ կարևոր խնդիր է ներդրումների որակը: Իրականացված հետազոտությունները փաստում են, որ ՓՄՁ-ներն ավելի են կենտրոնացել կարծաժամկետ արդյունք ապահովող ներդրումների վրա. գերակշռել են պաշարների ավելացման ներդրումները՝ ի տարբերություն 5-6 տարի առաջվա, երբ ավելի շատ էին մեքենա/սարքավորումների ներդրումները (Ամերիա ՓԲԸ, ՓՄՁ 68):

Երկարաժամկետ ներդրումների ցածր մակարդակը կարող է լինել աշխատանքի ցածր արտադրողականության պատճառներից մեկը, քանի որ հենց երկարաժամկետ ներդրումներն են, որոնք ապահովում են արդյունավետության բարձրացում:

Աղյուսակ 2. Աշխատանքի արտադրողականություն՝ հաշվարկված տարեկան ՀԱԱ և փաստացի աշխատած միջին ժամերի հարաբերակցությունով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (NACE rev2) և ըստ չափերի, ժամ (ՀՀ ԱՎԿ, Աշխատանք 9)


Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (NACE rev2)	Ընդամենը	այդ թվում՝		
		գերփոքր և փոքր	միջին	խոշոր
B.Հանքարդյուն.	6,905	2,245	7,384	56,733
C.Մշակող արդյուն.	3,615	5,284	5,399	5,911
D.Էլեկտր.գազ	4,971	20,923	12,394	184,274
E.Ջրամատակար	2,201	2,548	307	91,180
F.Շինարար.	4,331	11,793	6,131	532
G.առևտուր	3,227	5,736	1,811	2,075
H.Փոխադրում.	4,403	10,068	3,046	19,694
I.Կաց.և սնունդ	1,667	2,957	1,421	1,373
J.Տեղեկատվ.	3,981	7,177	2,378	10,622
L.Անշարժ գույք	4,546	8,808	1,900	-
M.Մասնագիտ.	2,047	3,408	1,338	82
N.Վարչ.	1,759	4,805	1,398	746
S.այլ ծառայ	2,790	3,968	3,614	-
Ընդամենը	3,488	5,829	3,159	5,923

Դիտարկված ձեռնարկությունների արտադրողականությունը, կամ որ նույնն է՝ դրանց կողմից 2019 թվականին ստեղծված ՀԱԱ-ն մեկ աշխատողի փաստացի աշխատած ժամերի հաշվով կազմել է մոտ 3 500 դրամ կամ մոտ \$7.1: Համեմատության համար Տնտեսական համագործակցության և զարգացման

կազմակերպության անդամ երկրներում («OECD») այս ցուցանիշը տատանվում է \$88.4-127.5-ի սահմաններում, իսկ օրինակ՝ հարևան Վրաստանում \$2.6-ով ավելի բարձր է և կազմում է \$9.7:

Արտադրողականության ցածր մակարդակից հանգում է ցածր մրցունակ արտադրանքի թողարկումը, քանի որ արտադրողականության ցածր մակարդակի պատճառով նույն արտադրանքը ստեղծելու համար Հայաստանում պահանջվում են առավել մեծ ռեսուրսներ, քան մրցակից երկրներում: Դրա հետևանքով հայաստանյան արտադրանքը կորցնում է արտադրողականությունը թե՛ տեղական, թե՛ հատկապես միջազգային շուկաներում:

Չնայած դրան՝ սկսնակ ձեռնարկատերերի գրեթե 1/3-ը ակնկալում է հասույթի մի մասը ստանալ արտաքին շուկաներից:



Նկար 10. Արտադրանքն արտասահմանում իրացնել ակնկալող ձեռնարկությունների կշիռը (%)

Այս երևույթը, իհարկե, կարելի է բացատրել ԵԱՏՄ՝ հատկապես ՌԴ շուկային համեմատաբար հեշտ հասանելիությամբ: Վերջին 5 տարիների ընթացքում ՀՀ-ից ՌԴ արտահանումը կազմում է երկրի ողջ արտահանման մոտ 1/4-ը, մինչդեռ առավել մրցունակ երկրներ արտահանումն ունի նվազման միտում: Նույն ցուցանիշը, օրինակ՝ ԵՄ երկրների դեպքում, 2017թ. 35%-ից 2020թ.-ին նվազել է 17%-ի (ՀՀ ԱՎԿ, *Ungħալ-տնտեսական*):

Այսինքն՝ այս խնդրի հիմքում թերևս ամենաառանցքային գործոնը արտադրողականության ցածր մակարդակն է, ինչն ըստ Էուբյան պայմանավորված է երկարաժամկետ ներդրումների և հատկապես նորարարական ներդրումների պակասով (Hall 18):



Նկար 11. Նորարարության, արտադրողականության և մրցունակության միջև կապ¹

Եզրակացություն

Այսպիսով՝ Հայաստանում ձեռնարկատիրական ինստիտուտը ձևավորվել է խորհրդային Հայաստանի կապիտալի մասնավորեցման և ինստիտուցիոնալ համակարգի հիման վրա, չնայած դրան՝ քանակական տվյալները փաստում են, որ հետխորհրդային միջավայրը բացասաբար չի անդադառնում Հայաստանում ներկայիս ձեռնարկատիրության միջավայրի վրա:

Տվյալները փաստում են նաև, որ Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում առկա են շատ ավելի մեծ ինստիտուցիոնալ խոչընդոտներ, քան աշխարհում: Դրա մասին փաստում է սկսնակ ձեռնարկատիրության ցուցանիշով բարձր (7-րդը 50-ից) և կայացած բիզնես ցուցանիշով միջին դիրքը (23-րդը 50-ից): Սա ըստ էության փաստում է Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում ավելի շատ ինստիտուցիոնալ խոչընդոտների առկայության մասին:

Հայաստանում մի շարք գործոններով, այդ թվում՝ կարճաժամկետ ներդրումների գերակայությունով պայմանավորված՝ ձեռնարկությունները ապահովում են ցածր արտադրողականության մակարդակ, ինչն իր հերթին հանգեցնում է ցածր մրցունակ արտադրանքի թողարկմանը: Վերջինս էլ հետևանք է դառնում երկարաժամկետ ներդրումների ֆինանսավորման բացակայության:

Օգտագործված գրականություն

1. Աղաջանյան Հովսեփ, Տնտեսագիտության տեսություն, 2009
2. Ամերիա ՓԲԸ 2019, «Փոքր և միջին ձեռնարկությունները Հայաստանում»

¹ Գծապատկերը մշակվել է հեղինակի կողմից՝ գրականության ուսումնասիրության հիման վրա

3. Ամերիա ՓԲԸ 2020, «Զեռնարկատիրության համաշխարհային գեկույց Հայաստան 2019/2020», <https://ameriaadvisory.am/wp-content/uploads/2020/08/GEM-ArmenianFinal.pdf>
4. ՀՀ ԱԺ 1997 դեկտեմբերի 17-ին ընդունված «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՕ-188 օրենք, Հոդված 3
5. ՀՀ ԱՎԿ, «Աշխատանքի շուկան Հայաստանում», 2020թ., 2021թ.
6. ՀՀ ԱՎԿ, «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում», 2020թ., 2021թ.
7. ՀՀ ԱՎԿ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» գեկույցներ՝ 2017 թ., 2018 թ., 2019 թ., 2020թ. <https://www.armstat.am/am/?nid=81>
8. Պետական գույքի կառավարման կոմիտեին Հեղինակի կողմից 18.08.2021թ. հարցմանը պատասխան գրություն
9. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), "Transition report", 1998
10. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), "Transition report", 1999
11. Վրաստանի վիճակագրական ծառայություն, «Բիզնես ոլորտը Վրաստանում» 2020թ., 2021թ.
12. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD) տվյալների բազա, <https://data.oecd.org/lprdy/gdp-per-hour-worked.htm>
13. Benedict Afful Jr., "Fundamental concepts of an economy", 2006
14. Duker D. A., "Restructuring the Soviet Economy", London and New York: 1992, pp 95-98, ISBN 9780415067614
15. Hall B, H., "Innovation and Productivity", Blue Sky II Forum on "What Indicators for Science, Technology and Innovation Policies in the 21st Century?", Ottawa, Canada, 25-27 Sept. 2006 https://www.nber.org/system/files/working_papers/w17178/w17178.pdf
16. Joint Economic Committee – US Congress, "Former Soviet Union in Transition" Washington: 199
17. Kim, Y. B. and Shida Y., "Shortages and the Informal Economy in the Soviet Republics: 1965-1989", The Institute of Economic Research, Hitotsubashi University, RRC Working Paper Series No. 43: 28, 2014, doi/abs/10.1111/ehr.12431
18. Naudé, W., "Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy", IZA Discussion Paper No. 7507, 2010 <http://ftp.iza.org/dp7507.pdf>
19. United Nations, "International Resource Panel, Resource Efficiency: Potential and Economic Implications", 2017, https://www.resourcepanel.org/sites/default/files/documents/document/media/resource_efficiency_report_march_2017_web_res.pdf

Works Cited

1. Axajanyan Hovsep, Tntesagityun tesutyun [Theory of Economics], 2009
2. Ameria PBE, Poqr yev mijin dzernarkutyunnere Hayastanum. [Small and medium enterprises in Armenia], 2019
3. Ameria PBE, Dzernarkatirutyun hamashkharhayin zekuyts, Hayastan 2019/2020 [Global Entrepreneurship Report Armenia 2019/2020], <https://ameriaadvisory.am/wp-content/uploads/2020/08/GEM-ArmenianFinal.pdf>
4. HH AJ 1997 dektemberi 17-in endunvac "Petakan guyki masin" HO 188 orenk hodvats 3 [Law 188 On State Property Privatization, Article 3]
5. HH AVK, Ashkhatanqi shukan Hayastanum [Labor Market in Armenia], 2020, 2021
6. HH AVK, Poqr yev mijin dzernarkutyunnere Hayastani Hanrapetutyunum [Small L medium enterprise in the Republic of Armenia], 2020, 2021

7. HH AVK, Hayastani Hanrapetutyunan social-ntesakan vijake [Socio-economic situation of RA], 2017, 2018, 2019, 2020, <https://www.armstat.am/am/?nid=81>
8. Petakan guyqi karavarman komitein hexinaki koxmic harcmane grutyun 18.08.2021t. [Response to the query of author to the State Property Management Committee on 18.08.2021]
9. Verakarucman yev zargacman bank (EBRD), [Transition report], 1998
10. Verakarucman yev zargacman bank (EBRD), [Transition report], 1999
11. Vrastani vichakagrakan tsarayutyun, Biznes volorte Vrastanum [Business sector in Georgia] 2020, 2021
12. Ntesakan hamagortsakcutyan yev zargacman kazmakerputyun (OECD) tvyalneri baza [Database], <https://data.oecd.org/lprdy/gdp-per-hour-worked.htm>

AN OVERVIEW OF ARMENIAN ENTREPRENEURSHIP: ITS FORMATION AND DESCRIPTION

HAKOB TARPOSHYAN

*Ameria CJSC, Management Consulting Service, Consultant;
Public Administration Academy of Republic of Armenia,
Faculty of Management, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

This article aims to reveal the sources of issues in the field of entrepreneurship in Armenia and the historical reasons for their emergence.

The tasks consist, first of all, in analyzing the foundations for the creation of entrepreneurship in Armenia, specifically, during the period of the establishment of free market conditions and the impact of the Soviet Union on the business environment. This article aims also at providing a quantitative analysis of the current state of entrepreneurship in Armenia, as well as to identify the institutional barriers to entrepreneurship.

The given study concluded that: Armenia's business environment is largely untouched by the Soviet era; In Armenia, there are far more institutional barriers for developing a business than in the world; Armenian enterprises are characterized by a low level of productivity, which in turn leads to a decrease in long-term investment, which is responsible for the low level of productivity.

Key words: *Entrepreneurship, Private sector, Organization, Privatization, Start-ups, SMEs, Productivity.*

ОБЗОР ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В АРМЕНИИ: ЕГО ФОРМИРОВАНИЕ И ОПИСАНИЕ

АКОБ ТАРПОШЯН

*консультант службы управленческого
консультирования ЗАО «Америя»,
аспирант факультета менеджмента
Академии государственного управления РА,
г. Ереван, Республика Армения*

Данная статья призвана выявить источники проблем в сфере предпринимательства в Армении и исторические причины их возникновения.

Задачи состоят, прежде всего, в анализе основ для создания предпринимательской сферы в Армении, в частности, в оценке процесса создания предприятий во время формирования условий свободного рынка после провозглашения независимости. Задачи состоят также в том, чтобы проанализировать текущее состояние предпринимательства в Армении с помощью количественных данных, чтобы оценить существующие институциональные барьеры для предприятий.

В результате исследования было сформулировано следующее заключение: бизнес-среда в Армении в значительной степени не пострадала в советскую эпоху; в Армении существует гораздо больше институциональных барьеров для развития бизнеса, чем в мире; предприятия в Армении обеспечивают низкий уровень производительности, что приводит к производству низкоконкурентной продукции, снижению долгосрочных инвестиций, что, в свою очередь, ведет к низкому уровню производительности.

Ключевые слова: *предпринимательство, частный сектор, организация, приватизация, стартапы, МСП, производительность.*

APPLICATIONS OF NATURAL LANGUAGE PROCESSING IN ECONOMICS AND FINANCE*

UDC 336, 004.5

DOI: 10.52063/25792652-2021.4-231

TIGRAN KARAMYAN

Yerevan State University,
Faculty of Economics and Management
Lecturer, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia
t.garamyan@ysu.am

Natural Language Processing (NLP) is used to extract desired patterns from unstructured data and to convert the raw data into actionable insights. This capability serves as the foundation for all AI-human interactions in the financial sector. AI systems can gather, analyze, warn, and anticipate data thanks to NLP starting from customer care to risk prevention.

This article represents some important applications of NLP in different fields of economics and finance. It is aimed to show how NLP can be beneficial for the industries. The following topics(issues) are discussed here:

- **how NLP can be helpful when predicting financial trends with stochastic time series,**
- **why financial statements analysis is extremely helpful in accounting,**
- **how to gain the general idea of the content without diving into much details and how it affects one's decision making process (on the example of FED (Federal Reserve System)),**
- **detection of language (style) change in financial reports (statements) on the example of FOMC (Federal Open Market Committee),**
- **why words can be treated like triggers in finance and what the benefits are.**

The work is written by using scientific abstraction and a combined examination of different modern applications of the methodology. The level of reliability and validity of the sources through their comprehensive study have been verified.

This article substantiates the fact that the limitations of the unstructured data can be overcome by using AI - NLP. Human and artificial intelligence, when skillfully mixed, can lead to better investment decisions and risk management and reducing human error is critical and can help expose the hidden intentions (here: trends, expectations, movements, etc.) of unstructured data.

Keyword: *natural language processing, artificial intelligence, finance, economics, unstructured data, statement analysis, decision making process.*

Introduction. Natural Language Processing (NLP) enables econometric analyses based on information included in user reviews, employee evaluations, surveys, news, and other textual sources. With this kind of information, there are no more constraints for economists to examine those phenomena where measurements on the relevant elements are already accessible, generally through thorough and often expensive or difficult-to-

* Հոդվածը ներկայացվել է 17.11.2021թ., գրախոսվել՝ 26.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

arrange research investigations or by accident of existing datasets. The capacity to deal with textual data allows economists to investigate a wider range of issues and gives a plethora of information to mine in the expanding context of online documents and behavior. Reviews and other writings may be used to examine counterfactuals (what could have been). The ability to conduct what-for studies when experiments are impossible to do is extremely important. When controlled trials are feasible but their capacity to imitate real-world settings is questioned, textual analysis can assist in determining how realistic those trials are.

It is worth mentioning that NLP can reveal whether sentiments, information, tone, or themes are associated with specific results. These hints can be utilized to build testable hypotheses about which factors influence decisions and how. When NLP technologies are paired with appropriate models, they may occasionally yield solid proof of textual beliefs that predict important events. It allows to measure information transmission on numerous characteristics of a product, person or event. NLP can offer the measures needed to determine what function the messenger of specific sorts of information plays. For example, we can investigate if evaluations written in a more informal tone are more persuasive to younger people. Even in the absence of studies, NLP tools allow us to explore relationships between information, who it originates from, and what other circumstances might magnify or lessen its influence.

Applications of NLP. In the field of finance, the vast majority of models has traditionally been based on predominantly numeric data inputs. Nevertheless, the later advancements in NLP has given the opportunity to effectively join numeric and textual data when analyzing financial questions such as stock price predictions, interest rate predictions etc. This is a true game-changer for financial markets as most of the decisions finance specialists are making heavily depend on the financial news texts they are bombarded with on a daily basis. Therefore, the value of processing the financial news texts cannot be understated. One approach Pratyush Muthukumar and Jie Zhong mention in their article “A Stochastic Time Series Model for Predicting Financial Trends using NLP” (Muthukumar and Zhong) is the way these hybrid models are constructed. Specifically, the outcomes/results of the sentiment analysis based on the textual data processing are directly utilized as an input to the numeric model. The authors consider this method as a novelty in the sphere. It is worth mentioning that they have proposed a novel architecture that applies Naive Bayes’ sentiment analysis to financial news texts and uses the learned representations alongside financial numerical data to train a Generative Adversarial Network (GAN) for time-series prediction of stock prices. Hybrid modes like this are of a high value as they are able to account for factors that would not be otherwise considered due to the lack of perspective. Therefore, being able to not only watch the numbers talk but look a closer look at the “talk” itself gives even a better understanding of what is happening and what is likely to happen next.

As mentioned above, financial analysis suffers from solely using quantitative methods which often do not provide a good approximation of reality. Such deficiencies affect not only the investment decisions of portfolio managers who are trying to predict a specific trend or stock price but also analysts who base their decisions on the scrutinization and thorough analysis of financial statements of each company of interest. The latter provides them with credit risk analysis which can then be useful in both financing and investing decisions. In particular, a lot of companies are entitled by law to publicize periodic financial statements. These statements contain a lot of numeric data related to the periodic performance of the company as well as some notes and disclosures which further explain the structure and calculations expressed in numeric terms. Besides, the textual data contains sections such as Management’s Discussion and Analysis (MDA). The latter textual data serve as basis for tone analysis and sentiment

analysis of the company. Further combination of this analysis with the accounting choices made by the company can give a better understanding of the future prospects of the entity. The need for a qualitative tool in financial statement analysis has risen from the flexibility accounting standards provide the companies with, which later results in figures that often do not faithfully depict the economic reality of the company. For example, under IFRS (International Financial Reporting Standards) there are three acceptable methods a company can use to account for depreciation of assets. Depreciation, being considered in the balance sheet of the company affects the carrying amount of inventory and PPE (property, plant and equipment) therefore the total assets and any other ratios calculated based on it. Besides, depreciation is also accounted for in the income statement through the cost of goods sold (inverse relationship), hence it affects the gross profit as well as the net income and any other profitability measures of the company. This is just one example of how flexibility of accounting methodology creates an opportunity for manipulation of numeric information. Other examples include valuation of assets through fair value vs historical cost models, capitalizing vs expensing the R&D costs as well as differences arising from various accepted accounting standards in different jurisdictions. Hence, the need to process the textual data accompanying financial statements (Ravula).

Over the course of the history of world economic development, economies of different countries and regions have become more and more interconnected and dependent. Nowadays, one of the biggest economies that affects most of the world is the U.S. economy. Several of the world financial crises have roots in the U.S. and it is evident how financial health of the U.S. economy is so vital for the world as a whole. Consequently, the U.S. economy is constantly under the radar of numerous analysts who try to gain an understanding of possible future economic developments in the U.S. and make data-driven conclusions based on these predictions. In particular, the Federal Reserve System (FED) of the U.S. has a significant role in shaping global monetary and financial conditions. Therefore, any news, reports, communications and documentation published by FED are key indicators for all of the players of the bigger financial system. Especially, when it comes to FOMC (Federal Open Market Committee) meetings and decisions that FOMC makes regarding the Federal Funds Rate, financial markets make very timely and strong reactions to whatever decision has been made. There are numerous tools in use for analyzing FOMC meetings and recently NLP has joined the toolkit. In the article “FedNLP: An interpretable NLP System to Decode Federal Reserve Communications” (Lee et al.) Jean Lee and others have used a multi-component NLP system which gives end-users the ability to gain a general idea of the course of the meeting and ability to make conclusions based on this information without the need to go through the lengthy and complex communication language of Fed communications. It is worth emphasizing that the value of the work lays on the simplicity by which the finding of the analysis is presented to the end-users. It is also important to mention that the end-users are assumed to have a background in finance and no programming skills. This quality is achieved by the extensive use of graphical interface as a means of communication of the analysis carried out. Another feature that makes the analysis more holistic is the use of different forms of communications such as reports, post-meeting minutes, members’ speeches, press releases and others. The main objective of the analysis is to predict the direction of change of FFR (Federal funds rate). Some of the methods in use are sentiment analysis, summarization, topic modeling and others. And for making predictions, the best performing model was the XGBoost with TF-IDF features which achieved an accuracy of 0.73 and F1 score of 0.66.

There are numerous papers scrutinizing FOMC statements and the Federal Reserve System itself has initiated conferences and researches on this topic in recent years. One article that is of a particular interest is named “Hanging on every word:

Semantic analysis of the FOMC's post meeting statement” (Acosta and Meade). The analysis was conducted based on the FOMC statements from 1999 to 2014. The article describes how the language of FOMC statements have changed throughout this period of time. Nowadays, an untutored eye would not see much difference in language from one statement to the other. In fact, not many words are changed in the main text of the statement. Nevertheless, much has changed in the formulation of the statements since the beginning of post meeting statements. A more detailed analysis conducted by the authors suggests that the semantic persistence of the statements differ much more than it might seem. While the early statements are written at a reading grade level of 9 to 14 years of schooling, the more recent statements are written at a reading grade level of three years beyond a 4-year college degree. The main methods used in the analysis are semantic similarity of FOMC statements (cosine similarity), TF-IDF methodology and other common NLP methods. One distinct feature of the analysis is the more thorough description analysis of the FOC statement following the 2008 Global Financial Crisis. Various NLP methods show how the 2008 December FOMC statement is so dissimilar from the receding statements.

Another intriguing article on the latter topic has recently been published by the Kansas City Federal Reserve Bank: “How You Say It Matters: Text Analysis of FOMC Statements Using Natural Language Processing” (Doh et al.). The analysis is quite unique in nature as are the findings of it. In particular, it is concluded that the quantitative decision regarding the target policy rate is as important as the assessment of the risk in the economy. Besides, the analysis identifies the tone of a post-meeting statement by quantifying how close it is semantically to alternative versions of statements, whose more or less accommodative tones can be determined based on the rationale given for each alternative in FOMC documents. The recent COVID crisis comes to prove the points made in the statement. Now we live in times when each day market participants are looking for clues to when exactly tapering will start and when exactly the Fed will raise the target policy rate. The ones who will be able to correctly predict the right moments will at least not bear the costs of it, if not benefit from it vastly. Starting from the first signs of the end of COVID recession, the Fed has been bombarded with questions regarding the start of the tapering and rate hikes, in response to which the public only gets qualitative information containing words like “sufficient levels”, “substantially improved” and so on. Therefore, now more than ever Fed-watchers are looking for clues to the Federal Reserve’s communications via natural language processing methodologies.

Conclusion. As to conclude this research raises important questions about how NLP can be used to transform large quantities of text into valuable insights for financial analysts, portfolio managers and economists as the data at this vast amount is far beyond human capabilities to process. The applications of NLP discussed in this article show that, as with robotic process automation, human error reduction is very important and can help to reveal threats or good intentions concealed in unstructured data.

Works Cited

1. Muthukumar, Pratyush and Zhong, Jie. «A Stochastic Time Series Model for Predicting Financial Trends using NLP», 2021, arXiv:2102.01290
2. Ravula, Sridhar. «Text analysis in financial disclosures», 2021, arXiv:2101.04480
3. Lee, Jean, et al. «FedNLP: An interpretable NLP System to Decode Federal Reserve Communications», 2021, arXiv:2106.06247
4. Acosta, Miguel and Meade Ellen. «Hanging on every word: Semantic analysis of the FOMC's post meeting statement», *Washington: Board of Governors of the Federal Reserve System*, 2015, <https://doi.org/10.17016/2380-7172.1580>

5. Doh, Taeyoung, et al. «How You Say It Matters: Text Analysis of FOMC Statements Using Natural Language Processing», Kansas, 2021, vol. 106, no. 1, pp. 25-40

ԲՆԱԿԱՆ ԼԵՉՎԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԱՄՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
դասախոս և ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Բնական լեզվի մշակումը (NLP) օգտագործվում է ոչ կառուցվածքային տվյալներից ցանկալի օրինաչափություններ ստանալու և չմշակված տվյալները կիրառելի դարձնելու համար: Այս հնարավորությունը հիմք է հանդիսանում արհեստական բանականության և մարդու բոլոր փոխազդեցությունների համար ֆինանսական ոլորտում: AI համակարգերը կարող են հավաքել, վերլուծել, նախագգուշացնել ու կանխատեսել տվյալներ NLP-ի շնորհիվ՝ սկսած հաճախորդների սպասարկումից մինչև ռիսկերի կանխարգելում:

Հոդվածը ներկայացնում է NLP-ի որոշ կարևոր կիրառություններ տնտեսագիտության ու ֆինանսների տարբեր ոլորտներում: Նպատակն է ներկայացնել, թե ինչպես NLP-ն կարող է օգտակար լինել տնտեսության համար: Հոդվածում քննարկվում են հետևյալ թեմաները (խնդիրները).

- ինչպես NLP-ն կարող է օգտակար լինել ստոխաստիկ ժամանակային շարքերով ֆինանսական միտումները կանխատեսելիս,

- ինչու է ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը չափազանց օգտակար հաշվապահության մեջ,

- ինչպես ստանալ բովանդակության ընդհանուր պատկերացում՝ առանց մանրամասների մեջ խորանալու, և ինչպես է այն ազդում մարդու՝ որոշումների կայացման գործընթացի վրա (Դաշնային ռեզերվային համակարգի (FED)-ի օրինակով),

- ֆինանսական հաշվետվությունների շարադրման լեզվի (ոճի) փոփոխության հայտնաբերում FOMC-ի (Դաշնային բաց շուկայի կոմիտեի) օրինակով,

- ինչու բառերը կարող են հանդես գալ որպես ֆինանսական խթաններ և որոնք են օգուտները:

Աշխատանքը գրված է գիտական վերացարկման և մեթոդաբանության տարբեր ժամանակակից կիրառությունների համակցված քննության միջոցով, և դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով ստուգվել է աղբյուրների հավաստիության ու վավերականության մակարդակը:

Աշխատանքը հիմնավորում է այն փաստը, որ ոչ կառուցվածքային տվյալների սահմանափակումները կարելի է հաղթահարել՝ օգտագործելով AI՝ NLP: Մարդկային ու արհեստական ինտելեկտը երբ հմտորեն միաձուլվում են, կարող են հանգեցնել ավելի լավ ներդրումային որոշումների ու ռիսկերի կառավարման, իսկ մարդկային սխալի նվազեցումը կարևոր է և կարող է օգնել բացահայտելու ոչ կառուցվածքային տվյալների թաքնված միտումները (այստեղ՝ միտումներ, ակնկալիքներ, շարժումներ և այլն):

Հիմնաբառեր՝ բնական լեզվի մշակում, արհեստական բանականություն, ֆինանսներ, տնտեսագիտություն, ոչ կառուցվածքային տվյալներ, հաշվետվությունների վերլուծություն, որոշումների կայացում:

ПРИМЕНЕНИЕ ОБРАБОТКИ ЕСТЕСТВЕННОГО ЯЗЫКА В ЭКОНОМИКЕ И ФИНАНСАХ

ТИГРАН КАРАМЯН

преподаватель и аспирант

факультета экономики и финансов

*Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Обработка естественного языка (NLP) используется для извлечения желаемых закономерностей из неструктурированных данных и преобразования необработанных данных в полезные идеи. Эта возможность служит основой для всех взаимодействий AI и человека в финансовом секторе. Системы искусственного интеллекта могут собирать, анализировать, предупреждать и прогнозировать данные благодаря NLP, начиная с обслуживания клиентов и заканчивая предотвращением рисков.

В этой статье представлены некоторые важные применения NLP в различных областях экономики и финансов. Цель статьи – показать, как NLP может быть полезным для промышленности. В статье рассматриваются следующие темы (вопросы):

- как NLP может быть полезным при прогнозировании финансовых тенденций с помощью стохастических временных рядов,
- почему анализ финансовой отчетности чрезвычайно полезен в бухгалтерском учете,
- как получить общее представление о содержании, не вдаваясь в подробности, и как это влияет на процесс принятия решений (на примере FED (Федеральная резервная система),
- обнаружение изменения языка (стиля) в финансовых отчетах на примере FOMC (Федеральный комитет по открытым рынкам),
- почему слова можно рассматривать как триггеры в финансах и в чем заключаются преимущества.

Работа написана с использованием метода научной абстракции и комбинированного изучения различных современных приложений методологии, а уровень надежности и достоверности источников был проверен путем их всестороннего изучения.

В этой статье обосновывается факт, что ограничения неструктурированных данных можно преодолеть с помощью AI - NLP. При умелом сочетании человеческий и искусственный интеллект может привести к более эффективным инвестиционным решениям и управлению рисками, а сокращение человеческих ошибок имеет решающее значение и может помочь выявить скрытые намерения (здесь: тенденции, ожидания, движения и т.д.) в неструктурированных данных.

Ключевые слова: *обработка естественного языка, искусственный интеллект, финансы, экономика, анализ отчетности, принятие решений.*

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES,
ВОСТОКОВЕДЕНИЕ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1991-2020 ԹԹ.-ԻՆ*¹**

ՀՏԴ 93/94:327

DOI: 10.52063/25792652-2021.4-237

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
vardanyanqrigor3@gmail.com

Խնդրո՞ւ առարկա ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու և նոր տեսանկյունից ներկայացնելու 1991-2020 թթ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) և Եգիպտոսի Արաբական Հանրապետության (այսուհետ՝ ԵԱՀ) միջև հարաբերությունների պատմությունը:

Հոդվածի հիմնական խնդիրն է ներկայացնել Հայաստանի հետաքրքրությունները և քաղաքականությունը Եգիպտոսի հետ հարաբերություններում, Եգիպտոսի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ինչպես նաև պարզել, թե որքանով է հաջող եղել Հայաստանի ռազմավարությունը և ինչ խոչընդոտների ու սահմանափակումների է բախվել:

Ուսումնասիրությունը կատարվել է մի շարք հեղինակների կողմից այդ շրջանի հայ-եգիպտական հարաբերությունների պատմության հետազոտմանն ուղղված աշխատությունների, ՀՀ ԱԳՆ արխիվային նյութերի, ինչպես նաև 2021 թ.-ի հունիսի 11-24-ը ԵԱՀ-ի մայրաքաղաք Կահիրեում հեղինակի կողմից կատարված դաշտային հետազոտության նյութերի համադիր քննությամբ և պատմավերլուծական քննության սկզբունքների կիրառման մեթոդով: Բազմաթիվ արխիվային նյութերի, փաստաթղթերի, հարցազրույցային սկզբնաղբյուրների դիտարկմամբ հնարավոր է դարձել թեման ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ՝ կիրառելով բովանդակային վերլուծության մեթոդը (կոնտենտ անալիզ):

Կատարված հետազոտության արդյունքում կարելի է պնդել, որ հայ-եգիպտական հարաբերությունները զարգացել են դինամիկ, երկու պետությունները միմյանց հետ հարաբերություններ կառուցելիս հաշվի են առել միմյանց համար կարևոր միջազգային հարցերի շուրջ փոխշահավետ համագործակցության հեռանկարը: ՀՀ-ն և ԵԱՀ-ն հետամուտ են եղել կիրառելու երկու պետությունների համար կարևոր անվտանգային ու քաղաքական շահերի իրացման հարցերում տարբեր միջազգային հարթակներում փոխադարձ աջակցության սկզբունքը:

* Հոդվածը ներկայացվել է 14.09.2021թ., գրախոսվել՝ 15.09.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ №19YR-6F060 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել նաև, որ երկու երկրները տնտեսական հարաբերությունների զարգացման ավելի մեծ պոտենցիալ ունեն, որը հնարավոր կլինի իրացնել, եթե բեռնափոխադրումների համար Հայաստան-Եգիպտոս ուղիղ տրասպորտային ուղիներ բացվեն:

Հիմնաբառեր՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Մերձավոր Արևելք, ՀՀ-ԵԱՀ հարաբերություններ, Արցախյան հակամարտություն, 44-օրյա պատերազմ, Հայկական համայնք, Կահիրե:

Նախաբան

Հայաստանի նոր ռազմավարությունը Մերձավոր Արևելքում

2010-ական թթ.-ին Մերձավոր Արևելք տարածաշրջանում և հատկապես արաբական երկրներում քաղաքական անկայունությունների ու պատերազմների նոր փուլ սկսվեց: Տեղի ունեցող զարգացումները մեծապես փոխեցին տարածաշրջանում ուժային հավասարակշռությունը, որն արտահայտվեց Եգիպտոսի ու Սիրիայի թուլացման ու Ծոցի արաբական երկրների դերի ուժեղացմամբ: 2010-ական թթ.-ի սկզբներին Հայաստանը, պայմանավորված արտաքին քաղաքական այլ առաջնահերթություններով (հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձ, Հայաստանի եվրախնտեզրացիա, անդամակցություն ԵԱՏՄ-ին, ինչպես նաև ֆինանսատնտեսական ճգնաժամի փուլ) պասիվացել էր մերձավորարևելյան ուղղությամբ: Դրա մեկ այլ պատճառն էր բուն արաբական երկրներում քաղաքական անկայունությունը, և Երևանը ձգտում էր հեռավորություն պահպանել մինչև այդ երկրներում կանխատեսելիության վերականգնումը: Արտաքին քաղաքական բարդ շրջանի հանգուցալուծումից հետո ու հատկապես 2016 թ.-ի ապրիլյան պատերազմից հետո Հայաստանը սկսեց ավելի ակտիվ աշխատել արաբական ուղղությամբ: Բացի այդ, Մերձավոր Արևելքում քաղաքական վիճակը, ինչպես նաև Հայաստանի հիմնական գործընկերների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև քաղաքական սուր առճակատումը, Թուրքիայի քաղաքականության ագրեսիվացումը և Հայաստանի վրա ճնշման մեծացումը նոր սպառնալիքներ առաջ բերեցին Հայաստանի համար:

Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականությունը սրել էր նաև տարածաշրջանի մի շարք երկրների՝ Եգիպտոսի, Իսրայելի, Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, ինչպես նաև Հունաստանի ու Կիպրոսի հետ հարաբերությունները: Այս պայմաններում Հայաստանը հնարավորություն տեսավ համագործակցության եզրեր ու ձևաչափեր փնտրելու նշված երկրների հետ: Թե՛ մերձավորարևելյան, թե՛ հարավկովկասյան տարածաշրջանում Եգիպտոսի ու Հայաստանի համար կան մարտահրավերներ, որոնք շատ դեպքերում նույն սկզբնաղբյուրն ունեն (Մխիթարյան): ՀՀ-ն փորձեր ձեռնարկեց խթանելու հարաբերությունները Եգիպտոսի հետ: ՀՀ-ի ու Եգիպտոսի վարչապետերի՝ 2019թ.-ի հունվարին Դավոսում կայացած հանդիպման, ինչպես նաև 2019թ.-ի փետրվարին Սյունիքում երկու երկրների արտգործնախարարների հանդիպման շրջանակներում բարձրաձայնվել է քաղաքական երկխոսությունն ու տնտեսական փոխգործակցությունն ակտիվացնելու երկկողմ պատրաստակամության մասին (Հովսեփյան): 2020 թ.-ի սեպտեմբերին Եգիպտոս այցելեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Չոհրաբ Մնացականյանը: Մինչ այդ Հայաստանը ընդգծված աջակցություն էր հայտնել Եգիպտոսին Լիբիայում Թուրքիայի հետ տարածայնությունների մասով: Եգիպտոս այցը ՀՀ-ի մերձավորարևելյան նոր ռազմավարությունից բխող քայլերի մեկնարկն էր (Կարապետյան): Այս նոր նախաձեռնությունը, սակայն, ընդհատվեց 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի ու Արցախի Հանրապետության դեմ սկսած նոր պատերազմի պատճառով:

ՀՀ-ԵԱՀ հարաբերությունների հաստատումը և ՀՀ-ի հիմնական նպատակներն ու հետաքրքրությունները Եգիպտոսի հետ հարաբերություններում

ՀՀ-ն արաբական պետությունների հետ հարաբերությունների հաստատման ու զարգացման ուղղությամբ առաջին հերթին քաղաքական նպատակներ է հետապնդում. ավանդաբար ՀՀ-ն միշտ սերտ հարաբերություններ է ունեցել հատկապես մի քանի արաբական երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի և Իրաքի հետ, Հորդանանի հետ հարաբերությունների զարգացումն ավելի շատ Երուսաղեմում հայկական ներկայության իմաստով է կարևորվել: Արդեն 1991 թ.-ից, երբ սկսեցինք հարաբերություններ զարգացնել այս երկրների հետ, մենք քաղաքական խնդիր ունեինք. Ղարաբաղի հիմնահարցը առկա էր ու ի սկզբանե դարձել էր մեր քաղաքականության կարևոր մասը այդ պետությունների հետ աշխատելու համար: Ոչ միշտ է, իհարկե, հաջողվել այդ հարցի նկատմամբ ապահովել տվյալ երկրների դրական վերաբերմունքը, բայց խնդիրը միշտ ներկայացվել է, և ինչ-որ ձևով առաջին իսկ օրից այդ հարցում միասին գործող Արդրբեջանի ու Թուրքիայի կողմից վարած հակահայկական քաղաքականությունը հնարավորինս մեղմվել է: Դա տեղի է ունեցել վերոնշյալ բոլոր երկրներում այս կամ այն չափով՝ կախված նաև տվյալ երկրում գործող հայկական համայնքների՝ երկրի ներքին կյանքում ունեցած քաղաքական ազդեցության չափից: Եգիպտոսի պարագայում հավասարակշռված մոտեցում է որդեգրվել, մշտապես այս հարցի լուծումը տեսել են խաղաղ, առանց ուժի կիրառման կարգավորման ուղիով, բայց միևնույն ժամանակ մշտապես նշվել է, որ Եգիպտոսը կողմ է միջազգային իրավունքի շրջանակում հարցի լուծմանը: Նույնը չենք կարող ասել, օրինակ, Հորդանանի մասին, որը, մինչև վերջերս թուրքական գործոնով պայմանավորված, հստակ պրոադրբեջանական դիրքորոշում ուներ: Դրա պատճառը նաև Հորդանանի իշխող ընտանիքի և Ադրբեջանի ղեկավարության միջև ստեղծված անձնական կապերն էին: Բայց վերջին տարիներին նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել, հետաքրքրություն է ցուցաբերվել Հայաստանի նկատմամբ, թեկուզ ռազմական տեսանկյունից թագավորի այցը Հայաստան, որն աննախադեպ էր (Գրիգորյան):

1991 թ.-ի սեպտեմբերի 21-ին ՀՀ-ի անկախության հռչակումից հետո ԵԱՀ-ն արաբական երկրներից առաջինն էր, որ ճանաչեց Նորաստեղծ հանրապետության անկախությունը: Հայաստանը բացեց իր դեսպանությունը Կահիրեում 1992 թ.-ի սեպտեմբերին, իսկ 1993 թ.-ի ապրիլին Եգիպտոսն իր դեսպանատունը բացեց Երևանում (ՀՀ ԱԳՆ): Հայաստանի ու Եգիպտոսի հարաբերությունների զարգացման վերաբերյալ արարողակարգային հայտարարություններից անդին կային մի շարք քայլեր, որոնք իրապես վկայում էին Կահիրեի համար հայ-եգիպտական հարաբերությունների կարևորության մասին: Եգիպտոսը հետխորհրդային երկրներից առաջինը դեսպանատուն բացեց Երևանում ու Կինում: Եգիպտոսը Երևանում դեսպանատուն բացեց հուլիսի 23-ին՝ երկրի ազգային տոնի օրը, ինչը բարձր գնահատվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից (ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, Էջ 127): ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն առաջին պետական այցերից մեկն իրականացրեց Եգիպտոս՝ ջերմ ընդունելության արժանանալով այդ երկրում և ստորագրելով մի շարք միջպետական փաստաթղթեր: Եգիպտոսը Հայաստանի արտաքին քաղաքականությունում նշանակալի կարևորությունն ունեցող երկրներից մեկն է՝ հաշվի առնելով նրա առաջատար դերն ու հեղինակությունը արաբական ու մուսուլմանական աշխարհում, ինչպես նաև արաբական, աֆրիկյան ու իսլամական կառույցներում նրա անդամակցությամբ պայմանավորված քաղաքական մեծ ազդեցությունը (Թերզեան 16-19):

1992 թ.-ի մարտին ՀՀ արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը մեկնեց Եգիպտոս, հանդիպումներ ունեցավ քաղաքական մի շարք գործիչների հետ:

Հանդիպումների արդյունքներով 1992 թ.-ի մարտի 9-ին կնքվեց «ՀՀ և ԵԱՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» համաձայնագիրը: Այս այցին նախորդել էր 1992 թ.-ի հունվարին Եգիպտոսի փոխվարչապետ Քամալ ալ-Գանգուրիի այցը Հայաստան:

1992 թ.-ի մայիսին Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պետական այցով մեկնեց Եգիպտոս, հանդիպեց նախագահ Հոսնի Մուբարաքի, արտգործնախարար Ամր Մուսայի և, իհարկե, Եգիպտոսի համայնքի ներկայացուցիչների հետ: Պաշտոնական այցի շրջանակներում 1992 թ.-ի մայիսի 27-ին կնքվեց «ՀՀ և ԵԱՀ միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը: Այսպիսով՝ նորանկախ Հայաստանի ու Եգիպտոսի միջև բուռն համագործակցություն է սկսվում քաղաքական, տնտեսական, մշակութային ու գիտական ոլորտներում՝ շարունակվելով նաև հետագա տարիներին:

Տնտեսական առումով Եգիպտոսը Հայաստանին հետաքրքիր էր իր մեծ շուկայով և ներդրումներ ներգրավելու հնարավորությամբ: Անկախության առաջին տարիներին պայմանավորված տնտեսական կարգի փոփոխությամբ և շուկայական տնտեսությանն անցնելով՝ Հայաստանի տնտեսությունը արագ տեմպերով զահավիժում էր: Եգիպտոսը և արաբական այլ երկրներ եղել են խորհրդային տնտեսության տարբեր ոլորտների ապրանքների լայն սպառող, և հայկական արդյունաբերությունն ու նրա թողարկած արտադրանքը կարող էին հետաքրքրել Եգիպտոսին: Անկախության առաջին տարիներին ներդրումների առումով Երևանի սպասումները Եգիպտոսից որոշակիորեն չափազանցված էին՝ հաշվի առնելով Եգիպտական տնտեսությունում այդ շրջանում առկա դժվարությունները:

Հայ-եգիպտական հարաբերությունների հաստատման շրջանում Հայաստանի համար առանցքային հարցերից էր Ղարաբաղյան հակամարտության հարցում Եգիպտոսի դիրքորոշումը: 1992 թ.-ին Եգիպտոս կատարած այցի ժամանակ ՀՀ արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը այդ երկրի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ հանդիպմանը նշում է, որ հակամարտությունը կրոնական բնույթ չունի, ինչպես նաև ակնկալում է Եգիպտոսի միջնորդությունը: 1992 թ.-ին այս հարցը քննարկվեց նաև ՀՀ-ի փոխվարչապետ Հրանտ Բազրատյանի և Եգիպտոսի փոխվարչապետ Քամալ ալ-Գանգուրիի հանդիպմանը: Ավելի ուշ թեման Մուբարաքի հետ քննարկեց նաև ՀՀ-ի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Եգիպտական մամուլի հետ զրույցում Տեր-Պետրոսյանը նշեց, որ Հայաստանը չպետք է կռվախնձոր դառնա իսլամի ու քրիստոնեության միջև (ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, էջ 14-55):

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Եգիպտոսը 1996-1999 թվականներին կողմ է քվերակել Ադրբեջանի առաջարկած «Nagorno Karabakh Region of Azerbaijan» ձևակերպմանը:

Արաբական երկրները նաև խանդով ու դժգոհությամբ էին վերաբերվում Իսրայելի հետ Հայաստանի շփումներին: Նման դժգոհության պատճառ դարձավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի այցն Իսրայել, որը քննադատեցին նաև հայկական կառույցների մի մասը: ՄԱԿ-ում քվերակություններից մեկի ժամանակ Հայաստանի չեզոք դիրքորոշումը լուրջ դժգոհություն առաջացրեց Եգիպտոսում: Կահիրեն զգուշացրեց Երևանին, որ դա կարող է ազդել հայ-եգիպտական հարաբերությունների, ինչպես նաև Ղարաբաղյան հարցում Եգիպտոսի չեզոք ու հավասարակշռված դիրքորոշման վրա: Դա էր պատճառներից մեկը, որ հայ-իսրայելական հարաբերությունները ստորադասված էին հայ-արաբական հարաբերություններին՝ չնայած Երուսաղեմում հայկական կրոնական ու մշակութային խոշոր ժառանգությանը, հայ համայնքին ու Մերձավոր Արևելքում Իսրայելի դերին:

1997 թ.-ից սկսած յուրաքանչյուր տարի կողմերի միջև տեղի են ունեցել պարբերական դիվանագիտական խորհրդակցություններ փոխարտգործնախարարների մակարդակով: Դիվանագիտական խորհրդակցությունները մեծապես

Նպաստել են կողմերի միջև քաղաքական համագործակցության զարգացմանը, ինչը հատկապես դրսևորվել է միջազգային կազմակերպություններում, որտեղ երկու երկրներն աջակցություն են ցուցաբերում տարբեր հարցերում միմյանց դիրքորոշումներին, ինչպես նաև տարբեր հանձնախմբերի ընտրություններում միմյանց թեկնածուներին:

2006 թ.-ին ԵԱՀ-ի ԱԳՆ-ն խորը մտահոգություն հայտնեց Նյու Յորքում Նոյեմբերի 28-ին ՄԱԿ-ի ԳԱ-ի 61-րդ նստաշրջանի ընթացքում օկուպացված տարածքներում Պաղեստինի ժողովրդի ու այլ արաբների մարդու իրավունքների հետ կապված բանաձևին Հայաստանի՝ ձեռնպահ քվեարկելու կապակցությամբ: ԵԱՀ-ի ԱԳՆ-ից Հայաստանին զգուշացրին, որ եթե պաղեստինյան ու արաբական դատի պաշտպանության հարցում Հայաստանի դիրքորոշման մեջ տեղի է ունեցել փոփոխություն, ապա Եգիպտոսը կվերանայի դարաբաղյան հարցում իր հավասարակշռված դիրքորոշումը, և հետևաբար այն իր բացասական ազդեցությունը կունենա գոյություն ունեցող բարձր մակարդակի երկկողմ հարաբերությունների վրա (ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, Էջ 97) :

Կահիրեում է գտնվում «Արաբական պետությունների լիգա» կազմակերպության (ԱՊԼ) կենտրոնակայանը: Հայաստանն ակտիվացրեց իր համագործակցությունն այդ կազմակերպության հետ 2005 թ.-ից, երբ հուլիսին ստորագրվեց ՀՀ ԱԳՆ-ի և ԱՊԼ-ի միջև, իսկ 2008 թ.-ից Եգիպտոսում ՀՀ-ի դեսպանն առաջին անգամ համատեղության կարգով նշանակվեց ԱՊԼ-ում ՀՀ-ի լիազոր ներկայացուցիչ: Արաբական այդ միակ ու հեղինակավոր կազմակերպությունում դեսպանի մակարդակով ՀՀ ներկայացվածությունը կարևոր քայլ էր Հայաստան-Արաբական աշխարհի հարաբերությունների հետագա ծավալման ու խորացման ուղղությամբ: Այն նոր որակ ու մակարդակ ապահովեց արաբական երկրների հետ ՀՀ երկկողմ ու բազմակողմ համագործակցության համար՝ հնարավորություն ընձեռնելով ԱՊԼ-ի շրջանակներում տարբեր բնույթի քաղաքական, տնտեսական ու մշակութային նախաձեռնություններով հանդես գալու, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ու միջազգային կարևոր այլ հիմնախնդիրների վերաբերյալ մեր պետության դիրքորոշումները ներկայացնելու ու պարզաբանելու համար (Կարապետյան, *Արաբական երկրների պատմություն* 472): Հայաստանի ու Եգիպտոսի միջև առևտրատնտեսական համագործակցությունը խթանելու ուղղությամբ ամենակարևոր իրադարձությունը 2005 թ.-ի դեկտեմբերին ՀՀ վարչապետի պաշտոնական այցելությունն էր Եգիպտոս: Այցը լուրջ նախադրյալներ ստեղծեց հայ-եգիպտական տնտեսական համագործակցության հետագա զարգացման ու խորացման համար: Այցելության ընթացքում ստորագրվեց տնտեսական կարևորագույն համաձայնագրերից մեկը՝ «Կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագիրը»: Նույն թվականին ՀՀ Սահմանադրական դատարանը վերանայեց դեռևս 1996 թ.-ին իր կայացրած որոշումը, որի համաձայն կասեցվել էր ՀՀ և ԵԱՀ-ի միջև ստորագրված «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագրի» վավերացման գործընթացը: 2005 թ.-ի մայիսին ՀՀ Սահմանադրական դատարանը, հիմնվելով Եգիպտոսում ՀՀ դեսպանությունից ստացված կյուբերի ու պարզաբանումների վրա, դրական որոշում կայացրեց: Դրանով վերացվեց հայ-եգիպտական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման և համագործակցության հետագա խորացման իրավական հիմնական խոչընդոտը (Կարապետյան, *Արաբական երկրների պատմություն* 473):

Եգիպտոսի հետաքրքրություններն ու շահերը Հայաստանի հետ հարաբերություններում

Եգիպտոսը Հարավային Կովկասի երկրների հետ տնտեսական ծանրակշիռ շահեր չունի, գոնե Հայաստանի հետ չկան այդպիսի ուղղություններ, որոնք ռազմավարական նշանակություն ունեն երկու երկրների համար: Հայաստանի հետ

առևտրաշրջանառության ծավալը 5-6 մլն ԱՄՆ դոլարը չի գերազանցում: 2020 թ.-ին ավելի քիչ թվով հայ տուրիստներ են այցելել Եգիպտոս՝ կապված կորոնավիրուսային համավարակով, բայց այդ տուրիստների քանակն էլ մեծ չէ, մոտ 18-20 հազարի սահմանում է: Եգիպտոսի նման համաշխարհային խոշոր տուրիստական կենտրոնի համար այս թիվը շատ փոքր է, բայց ամեն դեպքում այս խիստ սահմանափակումների պայմաններում էլ փոքր ծավալի հոսքը միշտ եղել է: Տնտեսական իմաստով Եգիպտոսը կարող է այլընտրանք դառնալ թուրքական արտադրանքին, որը 2020 թ.-ի 44-օրյա կրցախյան պատերազմից հետո արգելվեց ներկրել Հայաստան: Այս իմաստով բավականին հետաքրքիր շուկա կա Հայաստանում պահանջվող սպարանքների համար, ինչ որ մենք հիմա հիմնականում ներմուծում ենք Թուրքիայից՝ շինարարական ներկեր, կյուլթեր, կերամիկա, տեքստիլ, գյուղմթերքներ: Եգիպտոսը ունի այդ սպարանքները արտահանելու հնարավորությունները: Իհարկե, կան շատ բարդություններ՝ լոգիստիկ խնդիրները, որոնք գործարարների համար շատ դժվարություններ են ստեղծում: 2019 թ.-ին ստեղծվել է հայ-եգիպտական բիզնես ասոցիացիան, բայց առանձնապես ակտիվություն չունի, նաև համավարակի պատճառով: Հիմա ծրագրեր կան, նախատեսվում է գումարել միջկառավարական հանձնաժողովի նիստ, որը հայկական կողմի առաջարկությամբ պետք է տեղի ունենար 2021 թ.-ի սեպտեմբերին, իսկ եգիպտական կողմը ցանկանում է 2022 թ.-ի հունվարին:

Միջկառավարական նիստը, չնայած ընդգրկում է հարաբերությունների բոլոր ոլորտները, բայց հիմնական շեշտը դրվելու է տնտեսականի վրա: Հայաստանի գլխավոր նպատակն այս նիստի շրջանակներում պետք է լինի բիզնես ֆորումի անցկացումը: Եթե դա չստացվի, նիստի արդյունավետությունը շատ ցածր կլինի: Առանց այդ էլ չի կարելի ասել, որ միջկառավարական հանձնաժողովները, շատ արդյունավետ գործիք են, բայց այդ պարագայում Եգիպտոսի հետ սա միակ ուղին է, որով կարելի է սկսել: Հուսով ենք՝ բիզնես ֆորումների միջոցով մարդիկ կկարողանան իրար հետ ուղղակի կապեր ստեղծել, շփումների մեջ մտնել: Ճիշտ է՝ կարևոր է մշակութային, կրթական ոլորտներում համագործակցությունը, բայց սա մեր այսօրվա իրավիճակում շատ կարևոր է, եգիպտական կողմն էլ հիմնական շեշտը դնում է հենց տնտեսական համագործակցության վրա: Փոխշահավետ համագործակցություն կարելի է իրականացնել այս ոլորտում: Հայ ներմուծողները պետք է տեղում շփվեն, ծանոթանան եգիպտական շուկային, տարբեր արտադրանքներին, որը լուրջ հնարավորություններ կբացի: Հայաստանից Եգիպտոս արտահանվել են գյուղատնտեսական վերամշակված սպարանքատեսակներ, որոշ ժամանակ այստեղ ներմուծվել են մրգեր, չրեր, տարբեր պահածոներ, բայց հետո հետաքրքրությունը դադարել է, քանի որ բավականաչափ եկամտաբեր չի եղել:

Տնտեսական իմաստով ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանը փորձում է մեծացնել համագործակցության դաշտը Եգիպտոսի հետ: Եգիպտոսի և ԵԱՏՄ երկրների կողմից կա շահագրգռվածություն այս հարցում: Եգիպտոսի համար սա լավ հնարավորություն է մտնելու մեծ շուկա, իսկ ԵԱՏՄ-ի համար՝ Եգիպտոսի միջոցով աֆրիկյան շուկաներ մտնելու, որոնց հետ եգիպտական կողմը ազատ առևտրի համաձայնագրեր ունի, իսկ սա արդեն կարող է շատ հեռանկարային դառնալ: Եգիպտացիները Ռուսաստանին տրամադրել են Պորտ Սայիդի շրջանում բավականին մեծ տարածք՝ «Suez Canal Economic Zone»՝ ազատ տնտեսական գոտի կառուցելու համար, սակայն ռուսները առաջարկում են այդ ծրագիրն իրականացնել ոչ երկկողմ՝ ռուս-եգիպտական, այլ ԵԱՏՄ շրջանակներում: ԵԱՏՄ-ի ու Եգիպտոսի միջև ազատ առևտրի պայմանագիր ստորագրելու հարցը քննարկման փուլում է, սկզբնական շրջանում երկու կողմն էլ շատ լավատես էին, նույնիսկ նախատեսում էին մեկ տարվա ընթացքում ամփոփել ամեն ինչ, բայց համավարակի պատճառով հնարավորություն չէրավ ուղղակի հանդիպումներ իրականացնելու, քննարկումներն ու բանակցությունները տեղի էին ունենում հեռավար կարգով, որը ավելի շատ

ինֆորմացիայի փոխանակում էր, քան առարկայական քննարկում: Եզիպտացիները քննարկումների ընթացքում սկսեցին կոշտացնել իրենց դիրքերը, որը հասկանալի է, քանի որ պետք է իրենց շահերը պաշտպանեն: Այս հասկանալի հանգամանքների բերումով դեռ չի հաջողվում վերջնական տեսքի բերել պայմանավորվածությունները (Գրիգորյան):

Թուրք-եգիպտական հարաբերությունների բարելավման կամ վատթարացման ազդեցությունը հայ-եգիպտական հարաբերությունների վրա

Տարածաշրջանային խնդիրներում Հայաստանի ու Եգիպտոսի միջև ըստ Եուլթյան լիակատար համաձայնություն կա: Նույն տեսակետներն ենք կիսում Լիբիայում, Արևելյան Միջերկրականում, Սիրիայում ու Իրաքում տեղի ունեցող գործընթացների ու ճգնաժամների նկատմամբ: Եգիպտական կողմը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան ձևակերպումներ է հնչեցնում Հարավային Կովկասում հակամարտությունների լուծման համար: 2020 թ.-ի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո եգիպտական կողմում կոնկրետ ըմբռնում կա, որ Ադրբեջանն ու Թուրքիան բոլոր ուղղություններով գործում են միասնական ճակատով: Եգիպտացիները կարծում են, որ եթե սա բացահայտ ցուցադրվեց Հարավային Կովկասում, մասնավորապես Հայաստանի դեմ պատերազմում, ապա որոշ իմաստով քողարկված տեղի է ունենում նաև այլ հակամարտային տաք կետերում: Արցախում թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից սանձազերծված պատերազմը թուրքական էքսպանսիոնիզմի արտահայտումն էր, որը Եգիպտոսի համար անընդունելի է ինչպես և մյուս շրջաններում: Եգիպտացիները շատ լավ հասկանում են, որ սա փորձ էր, որի միջոցով կուտակվեցին ինչ-որ հմտություններ մյուս տարածաշրջաններում կիրառելու համար: Թուրքիայի կողմից գայթակղիչ առաջարկություններ են արվել Եգիպտոսի հետ հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Բանակցությունները երկար ժամանակ դադարեցված էին, սակայն 2021 թ.-ի մայիսի սկզբին Թուրքիայի ԱԳՆ-ի ներկայացուցիչները այցելեցին Կահիրե՝ քաղաքական խորհրդակցությունների: Չնայած հայտարարվեց, որ եգիպտական կողմն է իրենց հրավիրել, բայց դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ հանդիպման նախաձեռնությունը թուրքական կողմինն է եղել: Թուրքերը ձգտում են իրենց հիմնական նպատակներին հասնել՝ ընդգրկվելով Արևելյան Միջերկրականի գազային ֆորումի կազմ: Եգիպտացիները բացահայտ նշում են, որ այս ֆորումը բաց է, սակայն անդամագրվողը պետք է համապատասխանեցնի իր քաղաքականությունը ֆորումի պահանջներին, օրինակ՝ ճանաչի միջազգային ծովային իրավունքը, որը, սակայն, Թուրքիան չի անում: Մյուս հարցը Թուրքիա-Լիբիա ծովային շելֆի բաժանման հարցն է, որ չեն ընդունում ֆորումի անդամ երկրները: Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտու խնդիրն է, որը Թուրքիան պետք է հարգի: Այսինքն՝ այնպիսի պահանջներ են ամրագրված ֆորումի խարտիայի մեջ, որոնք Թուրքիան չի կատարի և չի ընդունի: Մյուս կողմից էլ Եգիպտոսի համար շատ զգայուն հարց է թուրքական միջամտությունը երկրի ներքին քաղաքական կյանքում «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժման, ինչպես նաև Թուրքիայում գործող հակաեգիպտական հեռուստատալիքների միջոցով: Կարելի է ենթադրել, որ որևէ արդյունք չեն ունեցել 2021 թ.-ի մայիսին սկսված թուրք-եգիպտական հաշտեցմանն ուղղված քննարկումները: Ի դեպ, երբ խոսում ենք Եգիպտոս-Թուրքիա հարաբերությունների մասին, պետք է ընդգծել, որ թուրքերը հայտարարեցին բարեկամության խմբի ստեղծման մասին՝ որպես հարաբերությունների կարգավորմանն ուղղված առաջնահերթ խնդիր: Պաշտոնական Կահիրեն այդ առաջարկը բավականին սառը ընդունեց, և դեռևս նման քայլ չի ձեռնարկվել: Եգիպտոսը զգում է, որ Թուրքիան շատ մեծ ամբիցիաներ ունի, սա միայն Լիբիայով չի պայմանավորված: Թուրքիան ամենաներկայացված երկրներից

մեկն է Աֆրիկայում, նրա ազդեցությունը Աֆրիկյան Մահիկի տարածաշրջանում շատ մեծ է, ինչ-որ տեղ նույնիսկ Ֆրանսիան է դուրս մղվում այս շրջաններից: Թուրքիայի ներկայությունը Սուդանում, Ջիբութիում և այլն, Եգիպտոսի համար շատ զգայուն թեմա է: Եթե Թուրքիան սկսի որևէ տեղ ամրապնդվել, իր ազդեցության շրջանակը գնալով ավելի կընդլայնի: Բացի դրանից, ինդիո է նաև թուրքական հասարակության ընկալումը: Իրենց համար սա պետության ձեռքբերում է, պետության հաջորդ ղեկավարը այս կետում եթե փոխի քաղաքակարողությունը, չի ընկալվելու, ընդունվելու է որպես դավաճանություն: Հասարակությունը գնալով պահանջելու է ավելին, հետքայլը համարվելու է դավաճանություն: Թուրքիան միշտ էլ հեղաշրջումներով հայտնի երկիր է եղել, երկրի ներսում կսկսվեն անկարգություններ: Գլխավոր ինդիոն այն է, թե Թուրքիայի տնտեսությունը ինչքան ժամանակ է ի գորու սպասարկել այս քաղաքականությանը: Եթե գա չափավոր իշխանություն, միանշանակ չի ընկալվի հասարակության կողմից, և տնտեսության ռեսուրսները պետք է ուղղվեն երկրի ներքին ինդիոները սպասարկելուն:

Եգիպտոսի հայկական համայնքը՝ որպես կարևոր գործոն ՀՀ-ԵԱՀ հարաբերություններում

Հայ-եգիպտական հարաբերությունների կարևոր բաղադրիչ է հանդիսանում Եգիպտոսում հայկական համայնքը, որը փաստում են ինչպես հայ, այնպես էլ Եգիպտացի դիվանագետները (ԵԱՀ ԱԳՆ ներկայացուցիչ): Եգիպտոսում այժմ բնակվում է շուրջ 6000 հայ, որոնք կենտրոնացած են Եգիպտոսի երկու խոշոր քաղաքներում՝ մայրաքաղաք Կահիրեում ու Ալեքսանդրիայում: Մերօրյա Եգիպտահայերը հիմնականում ծնված ու քաղաքացիություն ունեցող հայեր են: Գործում են հայկական դպրոցներ, ակումբներ, եկեղեցիներ, սպորտ ակումբներ և այլն: Հայկական համայնքը Եգիպտոսում համարվում է կրոնական համայնք, որտեղ գործում է համայնքային օրենսդիր մարմին՝ Եգիպտահայ Թեմական Ժողովի Համագումար (Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովներ): Օրենսդիր մարմինը պետության կողմից վավերացվել է 1946 թ.-ի հունիսի 29-ին, այն բաղկացած է 24 պատգամավորներից: Համայնքի գործադիր մարմինը բաղկացած է 7 անդամներից, որոնք ընտրվում են թեմական ժողովի անդամներից: Թեմական առաջնորդն այժմ Աշոտ Եպիսկոպոս Մնացականյանն է, որը նշանակվում է Ամենայն հայոց Կաթողիկոսի կողմից: Հայ Կաթողիկե Թեմի առաջնորդը, որը նշանակվում է Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկե Պատրիարքի կողմից, Գրիգոր Եպիսկոպոս Օգոստինոս Գուսանն է: Եգիպտահայ համայնքում գործում են Հայոց առաքելական եկեղեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովվապետության ներքո, ինչպես նաև Հայոց կաթողիկե եկեղեցին: Կան որոշ հայեր, որոնք Հայ Ավետարանչական եկեղեցու անդամներ են: Գործում են Հայ Առաքելական 5 եկեղեցիներ՝ երկուսը Ալեքսանդրիայում, երեքը Կահիրեում: Եգիպտահայ համայնքն իր բնականոն կյանքով ապրում է, չնայած համայնքի թիվը գնալով նվազում է՝ հիմնականում պայմանավորված լինելով երիտասարդների՝ արտասահմանում կրթության գնալով, ինչպես նաև խառն ամուսնություններով («Հայերը Եգիպտոսում»): Համայնքն իր օրենսդիր ու գործադիր մարմիններով բավականին գործնական ու օրինակելի որոշումների կայացման շնորհիվ կարողացել է արդյունավետ կառավարել իր կյանքը: Այդպիսի օրինակ է անցյալ դարի երկրորդ կեսերին Եգիպտոսի Չազազիգ քաղաքում գործող հայկական եկեղեցու շենքի վաճառքը տեղի դպրոցական համայնքին: Զանի որ Չազազիգում Կամսարական հայկական ընտանիքին պատկանող ծխախոտի գործարանի փակմամբ պայմանավորված՝ հայության թվաքանակը նվազել էր, 1970-ական թվականներին համայնքը որոշում է կայացրել հայկական եկեղեցու շենքը վաճառել տեղի դպրոցական համայնքին: Այս որոշումը լավագույն օրինակ է համայնքի ղեկավար մարմինների

կողմից համայնքային ռեսուրսների արդյունավետ կառավարման մասին (Մազլումեան և ուրիշներ):

44-օրյա պատերազմի ընթացքում ԵԱՀ-ի դիրքորոշման մասով

Եգիպտական մեդիադաշտն ամբողջովին պրոհայկական էր Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, հասարակական ընկալման մեջ բավականին մեծ էր համակրանքը դեպի Հայաստանը: Նաև պետք է նշել շատ կարևոր հանգամանք՝ մենք միշտ ունեցել ենք ինդիոյր այն միջազգային կառույցների հետ, որտեղ մենք ներկայացված չենք՝ Չմիավորման Շարժում, Իսլամական Համագործակցության Կազմակերպություն: Վերջին շրջանում Չմիավորման Շաժման մեջ այնպիսի երկիր, ինչպիսին է Սաուդյան Արաբիան, որի հետ դիվանագիտական հարաբերություններ չունենք, հայկական շահերի օգտին հանդես եկավ: Այդ դիրքորոշումն ունեին նաև ԱՄԷ-ն, Եգիպտոսը և այլն: Կոնկրետ Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Եգիպտոսը Չմիավորման Շարժման նախարարական հանդիպման ժամանակ շատ կոնկրետ հայտարարություն է արել: Ադրբեջանցիները հարց էին բարձրացրել պատերազմի ժամանակ հայկական կողմի իրականացրած ռազմական հանցագործությունների մասին, սակայն Եգիպտական պատվիրակությունը հակադարձել էր՝ ընդօժեյով, որ Չմիավորման Շարժման հարթակն այդ հարցի քննարկման համար աննպատակահարմար է, իսկ նախարարական հանդիպման եզրափակիչ փաստաթղթում ԼՂ-ի հակամարտության վերաբերյալ պարբերության ներառումը կասեցվեց: Այսինքն՝ Եգիպտական հասարակական ընկալումն իր ազդեցությունն ունեցավ նաև վերին օղակներում: Սա նաև հայկական դիվանագիտության հաղթանակն է, դրական օրինակ դիվանագիտական երկար ու հետևողական աշխատանքի, որը կարելի է ավելի արդյունավետ դարձնել մյուս երկրների հետ տարվող աշխատանքներում:

Չնայած ԵԱՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցչի հետ մեր քննարկումը Կահիրեում անցավ դիվանագիտական ավանդական ձևակերպումների վերահաստատմամբ, սակայն մի շարք հետաքրքիր մտքեր հայ-եգիպտական հարաբերությունների վերաիմաստավորման առումով արտահայտվեցին: Այն հարցին, թե ռազմավարական ինչ ուղղություններով կարելի է զարգացնել երկու երկրների հարաբերությունները, մեր գրուցակիցը պատասխանեց, որ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանը, բնականաբար, նոր արտաքին քաղաքական ու տնտեսական խնդիրների լուծման առաջ է կանգնած և օրինակ՝ հումանիտար ոլորտում Եգիպտական կողմը, միջնորդելով ադրբեջանական կողմին, կարող է աջակցել բարեկամ Հայաստանին հայ գերիների վերադարձման առումով (ԵԱՀ ԱԳՆ ներկայացուցիչ): Ըստ մեր գրուցակցի՝ կարևոր զարգացման հեռանկարային հարթակ է ԵԱՏՄ-ի շրջանակներում ապագա համագործակցությունը՝ ըստ Էուբյան նշելով երկկողմ հարաբերությունների զարգացման այն նույն կարևոր ուղղությունները, որոնք կարևորեց նաև ԵԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը:

Եզրակացություն

Եգիպտոսի հետ հարաբերությունների հաստատումն ու զարգացումը մի շարք առումներով անհրաժեշտ էր նորանկախ Հայաստանին մի շարք միջազգային, քաղաքական հարցերի լուծման համար: Քաղաքական առումով Եգիպտոսը կարևորագույն երկիր է արաբական ու իսլամական աշխարհում, և պաշտոնական Կահիրեի աջակցությունը կարող էր հնարավորություն ընձեռել քաղաքական շփումներ հաստատել և զարգացնել թե՛ արաբական, թե՛ աֆրիկյան երկրների հետ: Այդ է վկայում Կահիրեում ՀՀ դեսպանատան գործունեության ընդարձակ աշխարհագրությունը (ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Էջ 47-48): Հաջորդ հանգամանքն Արցախյան հակամարտությունն էր, իսկ իսլամական երկրների հարևանությամբ գտնվող ՀՀ-ին անհրաժեշտ էր ապահովել այդ երկրների առնվազն չեզոքությունը Արցախյան

հակամարտության նկատմամբ: Երրորդ գործոնը հայ համայնքի առկայությունն էր, որը չնայած նախորդող տասնամյակներում նույնպես էր և կորցրել էր բեմնի տնտեսական դիրքը, սակայն իր կազմակերպվածության ու ազգային կառույցների շնորհիվ զգալիորեն նպաստում էր հայ-եգիպտական հարաբերությունների զարգացմանը: Հայ-եգիպտական քաղաքական հարաբերությունները 1991-2020 թթ.-ի ընթացքում զարգացել են դրական դինամիկայով, սակայն նույնը չի կարելի ասել երկու պետությունների միջև տնտեսական կապերի հաստատման ու զարգացման մասին: Հայաստանն ու Եգիպտոսը տնտեսական բավարար պոտենցիալ ունեն, որը տրանսպորտային տնտեսապես նպատակահարմար ուղիների բացակայության հետևանքով չի իրացվում: Երևան-Կահիրե հաղորդակցային ուղիղ կապի հաստատման ուղղությամբ երկու կողմերը պետք է բավարար քայլեր ձեռնարկեն ավիափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալները մեծացնելու նպատակով: 44-օրյա պատերազմից հետո երկու պետությունների հարաբերություններում կարող է ավելանալ նաև հումանիտար համագործակցության բաղադրիչը, որտեղ արաբական այս առաջատար երկիրը կարող է ծանրակշիռ ներդրում ունենալ հայկական մարդասիրական խնդիրների լուծման ուղղությամբ: Որպես առաջատար արաբական պետություն՝ Եգիպտոսը կարող է կարևոր ու որոշիչ դեր ունենալ Արբեջանում պահվող հայ ռազմագերիների՝ հայրենիք վերադարձի կազմակերպման հարցերում: Եգիպտոսի հայկական համայնքը վայելում է եգիպտական իշխանությունների անվերապահ վստահությունն ու աջակցությունն իր ձեռնարկումներում, իսկ համայնքի նկատմամբ այդպիսի վերաբերմունքն արդեն իր ազդեցությունն է ունենում Հայաստան-Եգիպտոս պետական հարաբերությունների որակի վրա:

Օգտագործված գրականություն

1. «Հայերը Եգիպտոսում». Եգիպտոսում Հայաստանի դեսպանության պաշտոնական կայքէջ, <https://egypt.mfa.am/hy/community-overview-eg>
2. Գրիգորյան, Կարեն. Հարցազրույց ԵԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան հետ, Կահիրե, 16 Հուն. 2021:
3. ԵԱՀ-ի ԱԳՆ-ի Հայաստանի հետ հարաբերությունների պատասխանատու խորհրդական. Հարցազրույց, Կահիրե, 16 Հուն. 2021թ.: Դիվանագետի անունը չի հրապարակվում վերջինիս ցանկությամբ:
4. Թերզեան, Պերճ. ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը, Ակնարկ Թասնամեայ Հեռախոսակցություն, Գահիրե, 2012:
5. Կարապետյան, Ռուբեն. Արաբական Երկրների Նոր եւ Նորագույն Պատմություն. Բուհական Դասագիրք, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2019:
6. Կարապետյան, Ռուբեն. Հարցազրույցը «Լուրեր» հաղորդաշարին, ՀՀ ԱԳՆ կայքէջ, 10 Սեպտ. 2020, <https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/09/10/int/10436>:
7. ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, Երկկողմ հարաբերությունների բաժին, Եգիպտոս, Ընդհանուր տեղեկություններ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eg>,
8. ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, գործ 106, ցուցակ 13:
9. ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, գործ 267 ցուցակ 1:
10. Հովսեփյան, Արփինե. «Հայաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը 2019-ին», ՕՐԲԵԼԻ վերլուծական-հետազոտական կենտրոն, 27 Դեկտ. 2019, <https://orbeli.am/hy/post/343/2019-12>

D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8+2019-%D5%AB%D5%B6:
Հասանելի է՝ 10 Օգս 2021:

11. Մազլումեան, Արմեն և ուրիշներ. *Հարցազրույց Եգիպտոսի Հայ Ղառի
Հանձնախմբի ղեկավարի, Կահիրեի ԶԲԸՄ-ի պատվո ատենապետի և Եգիպտոսի
հայկական համայնքի Զաղաքական ժողովի ատենապետի հետ*, 23 Հուն. 2021:

12. Մխիթարյան, Լիլիթ. «Հայ-եգիպտական համագործակցությունը մեծ ներուժ
ունի. մասնագետի գնահատականը», *Արմենայրես*, 17 Մեպտ. 2020,
<https://armenpress.am/arm/news/1028034.html>: Հասանելի է՝ 10 Օգս 2021:

Works Cited

1. Grigoryan, Karen. Hartsazruyc YEAH-um HH artakarg yev liazor despani het, Kahire, 16 Hun. 2021: [Interview with Ambassador Extraordinary and Plenipotentiary of Armenia in Egypt Karen Grigoryan, 16 June 2020:]

2. Hayery Yegiptosum, Yegiptosum Hayastani despanutyan pashtonakan kayqej, <https://egypt.mfa.am/hy/community-overview-eg> [Armenians in Egypt, Official Website of the Embassy of Armenia to Egypt, <https://egypt.mfa.am/hy/community-overview-eg>]

3. HH AGN pashtonakan kayqej, Yerkkoghm haraberutyunneri bajin, Yegiptos, Yndhanur teghekyunner, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eg>, [Official Website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, Section of Mutual Relations, Egypt, General Information, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eg>.]

4. HH AGN patmadivanagitakan arkhiv, gorts 106, tsutsak 13: [Historic-Diplomatic Archive of the MFA of RA, Work 267, list 13]

5. HH AGN patmadivanagitakan arkhiv, gorts 267, tsutsak 1: [Historic-Diplomatic Archive of the MFA of RA, Work 267, list 1]

6. Hovsepyan, Arpine. «Hayastani Merdzavorarevelyan qaghaqakanutyuny 2019-in», *ORBELI verlutsakan=hetazotakan kentron*, 27 Dekt. 2019, <https://orbeli.am/hy/post/343/2019-12>

27/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A
B+%D5%B4%D5%A5%D6%80%D5%B1%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A1
%D6%80%D6%87%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6+%D6%84%D5%A1
%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%
D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8+2019-%D5%AB%D5%B6:
Hasaneli e 10 Ogs. 2021: ["Armenia's Middle Eastern policy in 2019, Orbeli Analytic-
Research Center, 27 December, 2019, <https://orbeli.am/hy/post/343/2019-12>
27/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A
B+%D5%B4%D5%A5%D6%80%D5%B1%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A1
%D6%80%D6%87%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6+%D6%84%D5%A1
%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%
D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8+2019-%D5%AB%D5%B6:
Available 10.08.2021]

7. Karapetyan, Rouben. Hartsazruyc «Lurer» haghordasharin, HH AGN kayqej, 10
Sept. 2020, [https://www.mfa.am/hy/interviews-articles-and-
comments/2020/09/10/int/10436](https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/09/10/int/10436) [Interview to "Lurer" TV program, Official website of the
Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 10 September, 2020, ,
<https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/09/10/int/10436>]

8. Karapetyan, Rouben. Arabakan Yerkrneri Nor yev Noraguyn Patmutyun, Buhakan dasagirq, YEPH hratarakchutyun, Yerevan, 2019: [New Era and Contemporary History of Arab States, University Textbook. Publishing of YSU, Yerevan, 2019]

9. Mazloumyan, Armen. Terzyan, Perch. Platyan, Vahe. Hartsazruycs Yegiptosi Hay
dati handznakhmbi ghekavari, Kahirei HBYM-I patvo atenapeti yev Yegiptosi haykakan

hamajnqi Qaghaqakan Joghovi atenapeti het, 23 Hun. 2021: [Interview with Armen Mazloumyan, Perch Terzyan and Vahe Bladean, head of Armenian National Committee, Honorary Chairman of Egypt's AGBU branch and the Chariman of political council of Armenian community of Egypt respectively, 23, June, 2021]

10. Mkhitaryan, Lilit. «Hay-Yegiptakan hamagortsaktsutyuny mets neruj uni. masnageti gnahatakany», *Armenpress*, 17 Sept. 2020 <https://armenpress.am/arm/news/1028034.html>: [Armenia-Egypt relations have big potential, Expert's View". *Armenpress*, 17 Sept. 2020 <https://armenpress.am/arm/news/1028034.html>:]

11. Terzean, Perch. HH Yegiptosi despanatan Tsndotsy, Aknark Qsanamya Heravorutyune, Gahire, 2012: [The Birth of the Embassy of Armenia in Egypt, Overview from 20 year Distance, Cairo, 2012]

12. YEAH-I AGN-I Hayastani het haraberutyunneri pataskhanatu khorhrdakan, Hartsazruyc, Kahire, 16 Hun. 2021: Divanageti anuny chi hrparakvum verjinis tsankutyamb: [Interview with an Egyptian diplomat responsible for relations wioth Armenia, Cairo, 16, June, 2021. His name is not cited according to his wish]

RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ARAB REPUBLIC OF EGYPT FROM 1991 TO 2020

GRIGOR VARDANYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Oriental Studies, Senior Researcher,*

Ph.D. in History;

Yerevan, the Republic of Armenia

This article aims at revealing the multilayered relations between the Republic of Armenia and the Arab Republic of Egypt from 1991 to 2018. This research was done based on the archival materials of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia; other studies of subject matter experts contributed to our study as well. Most importantly we have conducted field studies in Egypt's capital Cairo where we had multiple discussions and debates on the topic with Armenian and Arab diplomats and people in charge from Armenian community of Egypt. In the article we try to reveal the details of Armenia – Egypt relations, Egypt's policy towards Armenia. In this perspective we find out to what extent Armenia succeeded in implementing its Middle Eastern strategy and what kind of challenges were faced and obstacles were overcome. In our conclusions we introduce also the chances and potential directions of development of mutual relations in spheres such as international trade, humanitarian dimension and also the potential of cooperation within the framework of Eurasian Economic Union which two states must unleash in future.

Keywords: *Arab Republic of Egypt, Republic of Armenia, Middle East, Armenia-Egypt relations, Artsakh conflict, Armenian community, Cairo.*

ОТНОШЕНИЯ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И АРАБСКОЙ РЕСПУБЛИКОЙ ЕГИПЕТ С 1991 ПО 2020 ГГ.

ГРИГОР ВАРДАНЯН

*старший научный сотрудник Института Востоковедения НАН РА,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Данная статья изучает отношения между Республикой Армения и Арабской Республикой Египет в 1991-2018 гг. Исследование было проведено на основе архивных материалов Министерства иностранных дел Республики Армения, а также других экспертных исследований.

Для сбора материала автор работал в Каире, где провел интервью с египетскими и армянскими дипломатами и представителями армянской общины Египта. В данной статье делается попытка раскрыть все уровни армяно-египетских отношений и представить политику Египта в отношении Армении. В этом контексте мы пытаемся представить, в какой мере Армении удалось осуществить свою ближневосточную политику и какие препятствия были на этом пути. В заключении мы представляем также возможности и потенциальные направления развития взаимоотношений в таких сферах, как международная торговля, гуманитарное измерение, а также потенциал сотрудничества в рамках Евразийского экономического союза, который два государства должны раскрыть в будущем.

Ключевые слова: *Арабская Республика Египет, Республика Армения, Ближний Восток, отношения между РА и АРЕ, карабахский конфликт, армянская община, Каир.*

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐՑԱՆՅԱՆ 2020 Թ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԴԵՄ ԱՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ*

ՀՏԴ 316.354.2 (479.22)

DOI: 10.52063/25792652-2021.4-250

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԻ առաջատար գիտաշխատող,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
a_pashayan@hotmail.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ներքին լսարանում Հայաստանի դեմ Ադրբեջանի քարոզչության և հակազդեցության մեջ իսլամական գործոնի նշանակությունը, դրա տեսական ու գործնական կողմերը:

Ուսումնասիրության խնդիրն է վեր հանել 2020 թ. Արցախյան պատերազմի համատեքստում ներքին լսարանում իսլամական հռետորաբանության կերպափոխման ընթացքը, պատճառներն ու հեռանկարը, ինչպես նաև պատերազմում Ադրբեջանի կողմից իսլամական ջիհադական ռեսուրսի օգտագործման կրոնաքաղաքական շարժառիթները:

Ուսումնասիրությունը ներառում է կոնտենտ վերլուծության, դիսկուրս վերլուծության գործիքակազմերը: Վերլուծության միջոց են ինչպես տեքստային, այնպես էլ տեսապատկերային նյութերը:

Նյութի ուսումնասիրությունը ի ցույց է դնում, որ Ադրբեջանի իշխանությունները Արցախյան պատերազմի համատեքստում լավագույնս օգտագործեցին արտաքին իսլամական լսարանում հայկական աշխարհի դեմ իրենց իսկ կողմից գեներացված այլատյացության և քարոզչության փորձն ու գործիքակազմը: Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) հակամարտության սկզբնավորումից ի վեր առաջին անգամ իսլամական գործոնն առավել մեծ նշանակություն ձեռք բերեց պատերազմի համատեքստում հասարակությանը ընդհանուր թշնամու դեմ համախմբելու և վարչակարգին աջակցություն ապահովելու հարցում:

Հիմնաբառեր՝ Հայաստան, Արցախ, Ադրբեջան, իսլամ, մզկիթ, ազան, այլատյացություն, ԻՀԿ, ջիհադ, սհաբեկիչ:

Ներածություն

Արցախյան հակամարտությունը Էթնոքաղաքական ու տարածքային բնույթ ունի: Սակայն կրոնական գործոնը միշտ էլ որոշակի դեր է խաղացել թե՛ քրիստոնյա հայերի և թե՛ մուսուլման ադրբեջանցիների փոխադարձ ընկալումների, միմյանց դեմ հակազդեցության, ի վերջո՝ հերոսանալու, նահատակվելու և դրանց առնչվող այլևայլ պատկերացումների ձևավորման հարցում: Հակամարտության սկզբնավորումից ի վեր Էթնիկությունը, նաև կրոնը ընդհանուր դիսկուրսի մաս են կազմել (Tonoyan, Artyom 17):

Մասնավորապես Ադրբեջանում միշտ էլ եղել են կրոնական և հասարակական գործիչներ ու քաղաքացիական ակտիվիստներ, որոնք համարել են, որ Հայաստանի

* Հոդվածը ներկայացվել է 19.10.2021թ., գրախոսվել՝ 20.10.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

դեմ պետք է պայքարել բոլոր միջոցներով, այդ թվում՝ ռազմական՝ հավատարիմ մնալով պատերազմի ու նահատակության իսլամական (թե՛ շիայական և թե՛ սուննիական) սկզբունքներին: Արցախյան հարցի դիսկուրսում կրոնական գործոնը լրացուցիչ ազդակ է դարձել քաղաքական ու հասարակական գործընթացների խթանման համար՝ ապահովելով բոլոր կողմերի՝ թե՛ աշխարհիկ ու կրոնական էլիտաների և թե՛ ընդդիմության օրինակարգությունը: Սակայն Յ. Ալիևի (1993-2003) և Ի. Ալիևի նախագահության շրջանում (2003 թ.-ից մինչ օրս) իշխող վարչակարգը հիմնականում խուսափել է ներքին լսարանում Արցախյան հիմնահարցի հետ կապված իսլամական գործոնի շահարկումներից՝ բացառությամբ առանձին դեպքերի:

Ի տարբերություն ներքին դաշտի՝ Ադրբեջանի Յանապետության արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունն անկախությունից ի վեր հետևողականորեն ու հարաճուն ձևով ծառայել է Արցախի հարցում Հայաստանի դեմ միջազգային իսլամական օրակարգ ձևավորելու և իսլամական համերաշխության գաղափարները պետության ազգային շահերին ծառայեցնելու խնդրին: Մուսուլմանական աշխարհին ներկայանալով որպես իսլամական Ումմայի անդամ և յուրահատուկ իսլամական ինքնությամբ աչքի ընկնող պետություն՝ Ադրբեջանն ամեն կերպ ձգտում էր Արցախյան հակամարտությունը ներկայացնել որպես իսլամական աշխարհի օրակարգային թեմա՝ համարելով, որ հարցի լուծման համար անհրաժեշտ են մուսուլմանական աշխարհի ջանքերն ու աջակցությունը: Ի տարբերություն արտաքին լսարանի՝ Բաքուն հիմնականում խուսափում էր ներքին լսարանում Ղարաբաղյան խնդրին իսլամական հնչեղություն տալ: Սակայն 2020 թ.-ի Արցախյան պատերազմի շրջանում նախագահ Ի. Ալիևը Նոր թափ հաղորդեց իսլամական հռետորաբանությանը: Իսլամական գործոնը կարևոր նշանակություն ունեցավ ընդհանուր թշնամու դեմ հասարակության համախմբման և վարչակարգին աջակցելու հարցում: Մյուս կողմից շարունակվեց իսլամական աշխարհում հիմնականում Թուրքիայի ու Պակիստանի օգնությամբ մուսուլմանական Ադրբեջանի վարկանիշն ամրապնդելուն ուղղված քայլերը:

Լեռնային Ղարաբաղի հարցը իսլամական աշխարհի օրակարգում.

Իսլամական համագործակցություն կազմակերպության դիրքորոշումը

1991 թ.-ին Ադրբեջանը նախկին խորհրդային մուսուլմանական երկրների մեջ դարձավ առաջին պետությունը, որը, ունենալով աշխարհիկ բնույթ, Թուրքիայի աջակցությամբ անդամակցեց իսլամական աշխարհի բարձրագույն կրոնա-քաղաքական մարմնին՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը (2002 թ.-ից՝ Իսլամական համագործակցություն կազմակերպություն՝ ԻՀԿ): ԻՀԿ-ն իսլամական աշխարհի շահերն ու հետաքրքրությունները ներկայացնող միջազգային կազմակերպություն է, որի հիմքում ընկած են իսլամական համերաշխության ու համագործակցության, ինչպես նաև իսլամական արժեքների պահպանման ու պաշտպանության գաղափարներ (Charter, OIC 2-5): Թե՛ Հեյդար Ալիևի, թե՛ Իլիամ Ալիևի իշխանության օրոք Ադրբեջանի իշխանությունները, ճնշելով սեփական երկրում խոսքի ազատության, կրոնական ու քաղաքացիական ակտիվության, իսլամի քաղաքականացման ու կրոնական լուսավորչականության ընթացքը, մեծ թափ հաղորդեցին արտաքին քաղաքականության իսլամական ուղղությանը: Հատկանշական է, որ աշխարհիկ հիմքեր ունեցող Ադրբեջանն իրեն անվերապահորեն ներկայացրեց իսլամական Ումմայի բաղկացուցիչը՝ ձգտելով իսլամական աշխարհը ներկայացնող պետությունների հետ սերտ ու համապարփակ համագործակցության հաստատմանը («Addresses by the Minister...»): Ադրբեջանը նպատակ ուներ ԻՀԿ հարթակն օգտագործել Հայաստանի դեմ հակաիսլամական տրամադրություններ ձևավորելու խնդրին և, կարելի է ասել, հաջողեց: Մոտ երեսուն տարի Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց պետության համար առավելություններ ստեղծել ԻՀԿ-

ում: Հենվելով բացառապես միակողմանի, այսինքն՝ աղբբեջանական տեղեկատվության վրա, և հիմք ընդունելով իսլամական համերաշխության գաղափարը՝ Իսլամական համագործակցությունը կազմակերպությունը մասնավորապես քարոզչական ու քաղաքական դաշտում անվերապահ աջակցություն ցույց տվեց Աղբբեջանին: Երեք տասնամյակի ընթացքում կազմակերպությունն ընդունել է հայ-աղբբեջանական հակամարտության մասին մի քանի տասնյակ բանաձևեր, բայց բովանդակային առումով դրանք միմյանցից զրեթե չեն տարբերվել: Որպես կանոն, ԻՀԿ-ն կոշտ քննադատության թիրախ է դարձրել հայկական աշխարհը՝ համարելով, որ ՀՀ-ն «ազրեսոր պետություն» է, «հանցագործություն է իրականացրել մարդկության դեմ», «քանդել» է իսլամական հուշարձաններն ու մզկիթները Լեռնային Ղարաբաղում և Նրա շուրջը: Իր հերթին ԻՀԿ-ն կոչ է արել անդամ պետություններին և միջազգային հանրությանը՝ զերծ մնալ ՀՀ-ին սպառազինություններ, զենք ու զինամթերք վաճառելուց:

Արդյունքում Ղարաբաղյան հարցի աղբբեջանական մեկնաբանությունը ԻՀԿ-ի միջոցով իսլամական աշխարհում որոշակի ճանաչում է ձեռք բերել, իսկ ՄԱԿ-ում ԻՀԿ անդամ պետությունները հիմնականում քվեարկել են Աղբբեջանի օգտին՝ փաստելով իսլամական համերաշխության գաղափարի կենսունակությունը: Մինևույն ժամանակ Աղբբեջանին այդպես էլ չի հաջողվել Արցախյան հարցը դարձնել իսլամական աշխարհի կարևորագույն հարցը կամ հարցերից մեկը: Երեսուն տարվա ընթացքում ԻՀԿ-ի՝ տարբեր մակարդակի հանդիպումներին Արցախյան հարցի հետ կապված ելույթները, կարելի է ասել, հազվադեպ բնույթ են կրել: Աղբբեջանի օգտին ելույթ են ունեցել հիմնականում Թուրքիայի, Պակիստանի ու Բանգլադեշի ներկայացուցիչները:

Փաստացիորեն, չնայած Արցախի շուրջ հայ-աղբբեջանական հակամարտության սկզբնավորումից ի վեր թե՛ Հայաստանի և թե՛ Աղբբեջանի քաղաքական ու կրոնական էլիտաները նշում էին, որ հակամարտությունը կրոնական բնույթ չունի և պետք է փորձել խուսափել խնդրին կրոնական երանգավորում հաղորդելուց, այնուամենայնիվ դեպքերի ծավալմանը զուգընթաց՝ նման միտումներ դրսևորվեցին երկու կողմից էլ՝ թե՛ հայկական, թե՛ աղբբեջանական: Սակայն Աղբբեջանի կողմից նման մոտեցումները պետական՝ ինստիտուցիոնալ բնույթ ստացան՝ տեղափոխվելով Իսլամական համագործակցության կազմակերպության հարթակ: Հատկանշական է, որ Բաքու ն ժամանակի ընթացքում դարձավ կազմակերպության ակտիվ դերակատարներից մեկը: ԻՀԿ տարբեր մակարդակի հանդիպումները սկսեցին բավական հաճախ տեղի ունենալ Աղբբեջանում: Բաքվի իշխանությունները նույնիսկ ԻՀԿ անդամ պետությունների առողջապահության, գյուղատնտեսության, զբոսաշրջության և առևտրի նախարարների հանդիպումներին խոսում էին Արցախյան հարցի մասին, վարկաբեկում Հայաստանի Հանրապետությունը, Արցախի հայ ազգաբնակչությանը, ամբողջ հայկական աշխարհը: 2017 թ.-ին Աստանայում ԻՀԿ հերթական գագաթաժողովներից մեկի ժամանակ Աղբբեջանի նախագահ Ի. Ալիևը հայտարարեց, որ որևէ մուսուլմանական պետություն չպետք է բարեկամ լինի աղբբեջանական մզկիթ քանդող պետության, այսինքն՝ Հայաստանի հետ («Ilham Aliyev...»): Նրա խոսքով՝ հայաստանյան իշխանությունների հրահանգով՝ «մեր բոլոր մզկիթները քանդվել են», ինչը «հայկական վանդալիզմի» ապացույցն է («Ilham Aliyev...»):

Իսլամական համագործակցությունը կազմակերպության դիրքորոշումը 2020 թ.-ի Արցախյան պատերազմի համատեքստում

Թուրքիայի և Աղբբեջանի սանձազերծած 2020 թ.-ի պատերազմի հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով «Հայաստանի զինված ուժերի կրկնվող սադրանքներն ու ագրեսիան» Աղբբեջանի դեմ: ԻՀԿ-ն իր համերաշխությունը հայտնեց Աղբբեջանին, Հայաստանից պահանջեց ամբողջովին և առանց

Նախապայմանների դուրս բերել գործերը գրավյալ տարածքներից, երկու պետություններին կոչ արեց քաղաքական լուծման հասնել՝ հարգելով Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը («OIC condemns...»):

2020 թ.-ի դեկտեմբերի վերջին ԻՅԿ արտգործնախարարների 47-րդ համաժողովին ընդունվեց «Իսլամական սրբավայրերի պաշտպանության» մասին բանաձևը, որում դատապարտվեց «հայ ագրեսորների կողմից բարբարոսական գործողությունների իրականացումը, որոնք նպատակաուղղված են եղել իսլամական պատմական ու մշակութային ժառանգության ամբողջական ոչնչացմանը» («OIC expresses concern...»): ԻՅԿ-ն «իր խոր մտահոգությունն է արտահայտել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ գտնվող պատմական հուշարձանների ոչնչացման և կողոպտվելու կապակցությամբ, որոնք իսլամական ժառանգության անբաժան մասն են, մասնավորապես վերջերս ազատագրված Կուբաթլուի շրջանի Մամար գյուղի ավերված մզկիթը» («OIC expresses concern...»):

Եթե գրավյալ տարածքներում մզկիթները իսկապես ոչնչացվել են, ապա ինչպե՞ս բացատրել Շուշիում հայկական հիմնադրամների կողմից հիմնովին վերանորոգված Գոհար տիկնոջ Վերին մզկիթի և մեդրեսեի գոյության փաստը (Շուշիում վերականգնվել է...) և հակառակը՝ պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած տարածքներում բարբարոսաբար վնասվող և անարգվող բազում հայկական քրիստոնեական հուշարձանների, դրանք այբանական ժառանգությանը վերագրելով՝ Ադրբեջանի սադրիչ քաղաքականության փաստերը («ՀՀ ԳԱԱ հայտարարությունը...»): Ինչպե՞ս բացատրել Շուշիի գրավումից անմիջապես հետո բարեկարգ մզկիթում հնչեցված ազանն ու տեղի ունեցած իսլամական աղոթքը: Հատկանշական է, որ ի հակադրություն Արցախում մզկիթների վիճակի մասին ադրբեջանական կեղծիքների՝ իրանական բլոգերներից մեկը, հղում անելով Շուշիի մզկիթը, նշում էր, որ Արցախում մզկիթներն ավելի լավ վիճակում են, քան Բաքվում (...ایران تکشف):

Նշենք նաև, որ պատերազմի ավարտից մեկ տարի անց ԻՅԿ գլխավոր քարտուղարության անունից Ադրբեջանին ջերմագին շնորհավորական նամակ էր ուղարկվել պատերազմում հաղթանակ տոնելու կապակցությամբ: Դրանում նշված էր, որ ԻՅԿ-ն Հայաստանի դեմ պայքարում մշտապես աջակցել է Ադրբեջանին («OIC congratulates...»): Հատկանշական է, որ պատերազմի ավարտից հետո Ադրբեջանին իրենց աջակցությունը հայտնեցին զգալի թվով հեղինակավոր մուսուլման աստվածաբաններ ու հոգևորականներ աշխարհի տարբեր կողմերից: Նրանք պատերազմի ավարտից հետո ջերմորեն շնորհավորում էին Ադրբեջանի նախագահին հաղթանակի առիթով (Փաշայան, Արաքս և Նավասարդյան, Նազելի Էջ 111-112):

Արցախյան հարցի իսլամական դիսկուրսը ներքին լսարանում

